ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ
## Հասարակական-քաղաքական հայացքներն ու գործունեությունը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ARCH. MESROB ASHJIAN
ՄԱՏԵՆԱՇԱՐ BOOK SERIES
197 197

ԵՐԵՎԱՆ 2019

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝

Դավիթ Ամիրյան
Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան
Ծրագրերի գծով փոխտնօրեն
Էլ. փոստ՝ adavid@osi.am

Կարինե Ղազարյան
Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան
Քաղաքացիական հասարակություն ծրագրի պատասխանատու
Էլ. փոստ՝ karine@osi.am

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 854

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագիր՝ պ.գ.դ. Սուրեն Սարգսյան

**Հովհաննիսյան Գեղամ**
Հ 854 Արփիար Արփիարյան. Հասարակական-քաղաքական հայացքներն ու գործունեությունը/ Գ. Հովհաննիսյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019.- 265 էջ:

Աշխատությունը նվիրված է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ, գրող, հրապարակախոս Ա.Արփիարյանի (1851-1908թթ.) հասարակական-քաղաքական հայացքների ու գործունեության լուսաբանմանը: Մենագրության մեջ օգտագործված սկզբնաղբյուրների, մամուլի, արխիվային նյութերի և ժամանակակիցների հուշերի հիման վրա համակողմանիորեն ներկայացվել է Ա.Արփիարյանի հրապարակախոսական, ազգային-հասարակական և կուսակցական գործունեությունը:

Գիրքը նախատեսված է պատմագիտական շրջանակների և ընթերցող լայն հասարակության համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-86-2

©ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն ..................................................5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
*Ա) Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությունը 19-րդ դարի վերջին քառորդում* ..................................................*18*
*բ) Արփիար Արփիարյանի կրթական-մշակութային գործունեությունը* ..................................................*28*
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
*ա) Արփիարյանը հոգևորականության և եկեղեցու մասին* ..................*64*
*բ) Արփիարյանը արևմտահայերի ազգային մարմինների մասին*.....*72*
*գ) Արփիարյանը արևմտահայ ունևոր խավերի մասին*........................*91*
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ..................................................*99*
*ա) Արփիարյանը Եվրոպական պետությունների քաղաքականության մասին*.................................................. *105*
*բ) Արփիարյանը Ռուսաստանի քաղաքականության մասին* .......... *113*
*գ) Արփիարյանը արևմտահայերի փրկության ուղիների մասին* .... *128*
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ..................................................157
Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն .................................................. 223
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .................................................. 228
ARPIAR ARPIARIAN: HIS PUBLIC-POLITICAL VIEWS AND ACTIVITIES_SUMMARY .................................................. 234
АРПИАР АРПИАРЯН: ОБЩЕСТВЕННО_ПОЛИТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ И ДЕЯТЕЛЬНОСТЬ_РЕЗЮМЕ .................................................. 237
ՀԱՎԵԼՎԱԾ .................................................. 240



ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ
1851-1908թթ.

# ԱՌԱՋԱԲԱՆ

19-րդ դարի վերջին քառորդում նոր թափ ստացավ հայ ժողովրդի ազգային-ազատագրական ու լուսավորական-դեմոկրատական շարժումը, որը պայմանավորեց նաև ազատագրական գաղափարախոսության վերելքը: Հայ առաջադեմ մտավորականությունն ուղիներ էր փնտրում թուրքական տիրապետությունից հայության արևմտյան հատվածին ազատագրելու համար: Արևմտահայ իրականության մեջ ազատագրական պայքարի ականավոր գաղափարախոսներից մեկն էր նշանավոր գրող, հրապարակախոս Արփիար Արփիարյանը:

Ժամանակաշրջանի հայ մտավորականության, այդ թվում և Արփիարյանի հասարակական-քաղաքական հայացքների վրա հսկայական ազդեցություն էին թողել 19-րդ դարի հայ լուսավորական-դեմոկրատական շարժման առաջնորդների Խ.Աբովյանի, Մ.Նալբանդյանի, Րաֆֆու, Մ.Խրիմյանի և այլոց գաղափարները, որոնք արտացոլվեցին նրա ինչպես գրական-հրապարակախոսական, այնպես էլ հասարակական-քաղաքական գործունեության մեջ:

Ավելի քան մեկ դար անց, մտորելով հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրների ու դրանց լուծման ձևերի մասին, տեսնում ենք, որ Արփիարյանի գնահատականների և առաջարկած ուղիների մեծ մասը սթափ էին և իրատեսական: Նա իր ամբողջ գործունեության ընթացքում առաջնահերթ նշանակություն էր տալիս ընդհանուր նպատակի շուրջ ազգային ուժերի համախմբմանը: Արփիարյանը ժողովրդի մեջ ազատագրական գաղափարների ամրապնդման խնդրի կարևոր բաղկացուցիչ մաս էր համարում կրթության, լուսավորության տարածումը, դարերով ճնշված հայ մարդու ստրկամտու-

թյան հաղթահարումը: Նա համոզված էր, որ պետականազուրկ ժողովրդի համար եկեղեցու և հոգևորականության առջև դրված կարևոր խնդիրներից մեկը՝ կրոնի միջոցով ազգային ինքնագիտակցության պահպանումն է: Ազգապահպանության գործում հոգևոր գործոնի դերին կարևոր տեղ հատկացնելով՝ Արփիարյանը միևնույն ժամանակ խարազանում էր հայ հոգևորականության շրջանում գոյություն ունեցող արատավոր երևույթները և պահանջում, որ նրանք իրենց կոչմանը բարոյական բարձր նկարագիր ունենան: Նա հանդես էր գալիս հայ եկեղեցու միասնականության պահպանման օգտին: Նույն հետևողականությամբ նա կարևորում էր ազգային մարմինների դերը հասարակական կյանքում: Արփիարյանն արևմտահայոց Ազգային ժողովի երեսփոխաններից պահանջում էր վերջ տալ ներքին տարաձայնություններին և լրջորեն զբաղվել ժողովրդի առջև ծառացած խնդիրների լուծմամբ: Այս ուղղությամբ նա համարձակ քայլեր է կատարել 1880-ական թթ., երբ ընտրվել էր Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի երեսփոխան:

Իր հասարակական հայացքներով Արփիարյանը դեմոկրատ էր և կղերա-պահպանողական հոսանքի գաղափարական հակառակորդ, սակայն դրանով հանդերձ նա գտնում էր, որ ինչպես ազատականությունն, այնպես էլ պահպանողականությունը հայ հասարակական կյանքի բաղկացուցիչ մասերն են, և ազգային շահերը պահանջում են չանտեսել որևէ կողմը:

Ազգային ազատագրության, սոցիալական արդարության, շահագործումից և ապականված բարքերից զերծ հասարակության մասին Արփիարյանի գաղափարներն իրենց գլխավոր արտացոլումը գտան գրողի «Երազի մը գինը», «Կատակ մը», «Դատապարտյալը», «Ասյուշը», «Ոսկի ապարանջան» և այլ պատմվածքներում ու «Կարմիր ժամուց» վիպակում: Արփիարյանը հանդես էր գալիս հայ հասարակության համերաշխութ-

յան և միասնության քարոզով, իսկ նրա կողմից ուննոր խավերի քննադատությունը նպատակ ուներ նյութապես կարող ուժերին մղելու ազգօգուտ գործունեության: Իհարկե, նա տեսնում էր արևմտահայության սոցիալական շերտավորումն ու նրա համակրանքն անշուշտ, աշխատավոր խավերի կողմն էր, այնուհանդերձ, նա մերժեց հայ հասարակության մեջ դասակարգային պայքարի քարոզչությունը, որովհետև ճիշտ էր ըմբռնել իրականությունը՝ այն, որ տիրապետող թուրքն իրականում նույն դիրքորոշումն ունի թե՛ հայ մշակի և թե՛ հայ ամիրայի նկատմամբ:

Իր գրական-հրապարակախոսական ու հասարակական գործունեությունից զատ, 19-րդ դ. վերջին Արփիարյանը մտավ քաղաքական պայքարի հորձանուտ, և ոգևորվելով հնչակյանների գաղափարներով, անդամագրվեց այդ կուսակցությանը՝ մեծապես նպաստելով արևմտահայության շրջանում քաղաքական այդ ուժի հեղինակության և ազդեցության աճին:

Այդ շրջանում (1890-ական թ.թ.), ազատագրական պայքարի մարտավարության հարցերի շուրջ Արփիարյանը տարաձայնություններ ունեցավ Հ. Ց. Դ. Կ. Պոլսի ղեկավար գործիչների հետ: Դրա հետ մեկտեղ նա քննադատության ենթարկեց նաև հնչակյանների հախուռն գործելակերպն ու հատկապես սոցիալիզմի քարոզչությունը, արևմտահայ իրականության պայմաններում՝ դա համարելով ոչ միայն վաղաժամ ու անիրատեսական, այլև վտանգավոր:

Հնչակյան կուսակցության նորովի վերակառուցման, ազատագրական պայքարի մարտավարության փոփոխման մասին նրա տեսակետներն ընկան Արփիարյանի նախաձեռնությամբ ստեղծված Վերակազմյալ հնչակյան կուսակցության ծրագրի հիմքում: Հրաչիկ Սիմոնյանն անդրադառնալով Արփիարյանի կուսակցական գործունեությանը՝ գրում է. «Իր արածի ճշմար-

տացիության նկատմամբ ունենալով անկոտրում հավատ, Արփիարյանը սուր գրչի ուժով, գաղափարական մարտիկի կրքով, բարձրացնում էր հայկական կյանքի ամենասուր, ամենացավոտ հարցերը, երևան հանում դաժան իրողություններ՝ վաստակելով նորանոր թշնամիներ Հ.Յ. Դաշնակցության և Ս.Դ. հնչակյան կուսակցության շարքերից»[1]:

Արփիարյանի կուսակցական գործունեությունն ունեցավ թե՛ վերելքի և թե՛ վայրէջքի շրջաններ: Այս մասին խոսելիս պետք է ընդգծել այն իրողությունը, որ Արփիարյան-կուսակցական գործիչը երբեք չունեցավ այն հաջողությունը, ինչ Արփիարյան-տեսաբանն ու հրապարակախոսը:

Արփիարյանի հասարակական-քաղաքական հայացքների համակարգում առանցքային տեղ էր գրավում Հայկական հարցը: Նա այդ հարցի լուծումը չէր կապում որևէ սուլթանի բարի կամեցողության հետ և համոզված էր, որ այն երբեք չի կարող թուրքերի կողմից լուծվել, որովհետև, ըստ Արփիարյանի, Օսմանյան կայսրությունում գերիշխող թուրք տարրը պատրաստ չէր համակերպվելու հպատակ քրիստոնյաների իրավունքները մահմեդականների հետ հավասարվելուն: Այս հարցում Արփիարյանի համոզմունքն ավելի ամրապնդվեց, երբ ծանոթացավ երիտթուրքական շարժման մի քանի գործիչների ու նրանց գաղափարախոսության հետ: Նա հանգեց այն հետևությանը, որ դա հայերի համար վտանգավոր հետևանքներ է ունենալու: Թեպետ Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցի լուծումը նա կապում էր եվրոպական միջամտության հետ, բայց միաժամանակ բարձրաձայնում էր, որ տե-

[1] Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3-րդ, Եր., 2009, էջ 275:

րությունների քաղաքականության առաջմղիչ ուժը ոչ թե հումանիզմն է, այլ տնտեսական ու քաղաքական շահը: Այս տրամաբանությամբ էր նա բացատրում նաև տերությունների միջև հակասությունները: Դեռևս 19-րդ դարի վերջին Արփիարյանը մատնացույց էր անում օրըստօրե հզորացող Գերմանիայի ռազմական ու տնտեսական աջակցությունը Օսմանյան կայսրությանը՝ դրանում ապագա սպառնալիքներ կանխատեսելով հայերի համար: Նա գերմանաթուրքական խորացող հարաբերություններով էր պայմանավորում նաև Անտանտի ստեղծումը, որն ըստ Արփիարյանի թուրքահպատակ ժողովուրդների համար դրական նշանակություն էր ունենալու: Նա հայ ժողովրդի շահերի տեսանկյունից նպաստավոր էր համարում Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Մերձավոր Արևելք և, ի տարբերություն հայ դեմոկրատների զգալի մասի՝ գտնում էր, որ Ռուսաստանի արտաքին քաղաքական անհաջողությունները բացասական հետևանքներ են ունենալու հայ ժողովրդի համար:

Կարևորելով մեծ պետությունների դերը՝ Արփիարյանը միաժամանակ գտնում էր, որ Հայկական հարցի լուծման համար եվրոպական ազդեցությունն ու միջամտությունը դեռևս բավարար չեն: 18-19-րդ դարերի հայոց պատմության օրինակներով նա ցույց էր տալիս, որ բավարարվելով միայն արտաքին միջամտությամբ և չկազմակերպվելով, ազգային ազատագրության հարցում հայ ժողովուրդը հաջողության չի հասել: Այս համատեքստում Արփիարյանն անդրադարձել է նաև թուրքահպատակ ժողովուրդների համագործակցության հարցին՝ կարևորելով հատկապես քրդական գործոնի դերը: Նա գտնում էր, որ ընդդեմ հայերի, թուրքական իշխանությունների ձեռքին գործիք դառնալով, քրդերը մեծ սխալ են գործում, քանի որ հայերից հետո հենց իրենք են դառնալու թուրքական կառա-

վարության թիրախը: Ներկայիս թուրք-բրդական հարաբերություններն առավել քան երբեք Արփիարյանի կանխատեսման վառ ապացույցն են:

Իր ողբերգական մահվանից քիչ առաջ նա հանգեց այն եզրակացությանը, որ ռուս-թուրքական հակասություններն ի վերջո հասցնելու են պատերազմի, և այդ դեպքում թուրքերը ձեռնամուխ են լինելու հայության ոչնչացման իրենց դիվային ծրագրի իրականացմանը: «Լուսաբերի» իր վերջին հոդվածում Արփիարյանը հորդորում էր ազգային կուսակցություններին համախմբվել և շուտափույթ կերպով մշակել արևմտահայերի ինքնապաշտպանության ծրագիրը[1]:

Արևմտահայերի ազգային ազատագրության իրականացումը հայրենասեր գործչի դավանանքն էր, և այդ նպատակին ծառայեցին նրա գեղարվեստական ստեղծագործությունները, բեղմնավոր ու մարտաշունչ հրապարակախոսությունը, ակտիվ հասարակական-քաղաքական գործունեությունը:

* * *

Արփիար Արփիարյանի կյանքն ու գործունեությունը ներկայացնելու, արևմտահայ ազատագրական շարժման մեջ նրա տեղն ու դերը գնահատելու առաջին քայլը կատարեց Վահան Մալեզյանը[2]:

Արփիարյանի կյանքին ու գրական գործունեությանն է անդրադարձել Սիմոն Երեմյանը[3]:

Ա. Արփիարյանի մասին առաջին ամբողջական ուսումնասիրության հեղինակը Սիմոն Հակոբյանն է: Գրակա-

---

[1] «Լուսաբեր», Կահիրե, 1908, N 485:

[2]Յուշարձան ողբացեալ Արփիար Արփիարեանի մահարձանին բացման առթիվ, Գահիրէ, 1911:

[3] Երեմեան Ս., Ազգային դեմքեր-գրագետ հայեր, Վենետիկ, 1913:

նագիտական բնույթ կրող այս աշխատության մեջ հեղինակը քննում և բարձր է գնահատում Արփիարյանին «իբրև գրագետ-գեղարվեստագետ», սակայն առաջ է քաշում մի տեսակետ, որի հետ չենք կարող համաձայնվել: Նա մասնավորապես գտնում է, որ արժեքավոր են Արփիարյանի գրական գործերը, իսկ հրապարակախոսությունը մնայուն չի, այդ պատճառով այն չի դարձել իր ուսումնասիրության առարկան[1]:

Գառնիկ Ստեփանյանն Արփիար Արփիարյանին նվիրված գրականագիտական ուսումնասիրության մեջ նշում է, որ իր նպատակն է «քննության առնել Արփիարյանի ոչ թե ամբողջ գործունեությունը, այլ հիմնականում շարադրել նրա կենսագրությունը, ներկայացնել նրան որպես գրող, որպես քննադատական ռեալիզմի խոշոր ներկայացուցիչներից մեկը»[2]: Գ.Ստեփանյանի ուսումնասիրությունն իհարկե, չէր կարող չկրել ժամանակի հասարակական-քաղաքական գաղափարախոսության դրոշմը: Օրինակ, չափազանցված է ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության դերն ու նշանակությունը արևմտահայերի ազատագրության գործում: Նրա աշխատությունից դուրս են մնացել «Շիրակ» հանդեսում տպագրված Արփիարյանի հոդվածները, իսկ «Լուսաբերի» հոդվածներն այնքանով են քննարկվել, որքանով որ վերաբերվել են ռուսական հեղափոխությանը: Այնուհանդերձ, Գ. Ստեփանյանի աշխատությունն ունի գիտական մեծ արժեք: Հեղինակը շրջանառության մեջ է դրել մի շարք նոր փաստեր և հանգամանորեն ուսումնասիրել է Արփիարյանի գրական, հրապարակախոսական գործունեությունը: Նշանավոր հրապարակախոսի և ազգային գործչի մասին արժեքավոր աշխա-

---

[1] Յակոբեան Ս., Արփիար Արփիարեան, Վիեննա, 1922, էջ 63:
[2] Ստեփանյան Գ., Արփիար Արփիարյան, Եր., 1955, էջ 8:

տություն գրեց սփյուռքահայ գրող, իրավաբան Ստեփան Շահ-բազը[1]: Աշխատության մեջ հեղինակն առաջին անգամ ուսում-նասիրության առարկա է դարձրել Արփիարյանի դեմ ուղղված մեղադրանքները: Շահբազը լինելով նաև հմուտ իրավաբան, կարողացել է ապացուցել դրանց միտումնավորությունն ու կեղծ լինելը: Անկասկած, Շահբազը ստեղծել է արժեքավոր աշխատություն, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ հեղինակը հիմնականում ուսումնասիրել է Արփիարյանի արտասահմանյան գործունեությունը և շատ համառոտ է ներ-կայացրել Կ.Պոլսում ծավալած նրա հեղափոխականական գոր-ծունեությունը, հրապարակախոսությունը «Մշակում» և արևմ-տահայ պարբերականներում: Շրջանցվել է նաև Արփիարյանի լուսավորական գործունեությունը:

Գրականագետ Լաուրա Մուրադյանն իր արժեքավոր աշ-խատության մեջ լուսաբանել է Արփիարյանի գրական գործու-նեությունը: Պարզաբանելով իր առջև դրված խնդիրը՝ հեղի-նակը գրում է. «Սույն ուսումնասիրությամբ մենք փորձել ենք ընդլայնել գրողի կյանքի ու գործի հետազոտության շրջանակ-ները, հնարավորին չափ ամբողջական ընդգրկելով նյութը և քննելով այն գրական-պատմական պրոցեսի ներքին միա-նությամբ»[2]: Գրքում մանրակրկիտ վերլուծության են ենթարկ-վել Արփիարյանի գրական ստեղծագործությունները և լուսա-բանվել Արփիարյան-գրական քննադատի հայացքները: Հեղի-նակը սակայն հպանցիկ է անդրադարձել մի կարևոր խնդրի, որն ըստ երևույթին, դուրս է եղել նրա հետազոտության շրջա-

---

[1] Շահպազ Ստ., Արփիար Արփիարեան, Պէյրութ, 1988:

[2] Մուրադյան Լ., Արփիար Արփիարյան, կյանքը և ստեղծագործությունը, Եր., 1991, էջ 8:

նակներից: Դա վերաբերում է Արփիարյանի հասարակական և կուսակցական գործունեությանը:

Արփիար Արփիարյանի հասարակական քաղաքական հայացքների լուսաբանման գործում կարևոր նշանակություն ունեցավ Ազատ Համբարյանի «Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին» աշխատությունը: Այստեղ հեղինակը հանգամանորեն լուսաբանում է արևմտահայերի ազատագրության ուղիների մասին հայ հասարակական հոսանքների ու կուսակցությունների տեսակետները և այս համատեքստում անդրադառնում է նաև Արփիարյանի հայացքներին[1]:

Արփիարյանի կյանքին ու գործունեությանը համառոտ անդրադարձել է նաև Հրաչիկ Սիմոնյանն իր «Ազատագրական պայքարի ուղիներում» արժեքավոր աշխատության երրորդ գրքում[2]: Հեղինակը բարձր է գնահատել նրա բեղմնավոր գրական ու հրապարակախոսական ժառանգությունը: Լուսաբանելով Արփիարյանի կուսակցական գործունեությունը՝ Սիմոնյանն ընդգծել է ՀՅԴ և ՍԴՀԿ մի շարք հայտնի գործիչների հետ Արփիարյանի գաղափարական տարաձայնությունները: Նա համակարծիք է այն հեղինակների հետ, ովքեր հիմնավոր փաստերով հերքել են ազգանվեր այդ գործչի դեմ ուղղված մեղադրանքները՝ դրանք համարելով Արփիարյանի համարձակ քննադատություններն ու մեծ ժողովրդականությունը չեզոքացնելու միջոց:

Վերջին շրջանում Ա. Արփիարյանի գրական, ազգային ու քաղաքական գործունեությանն անդրադարձել է նաև Հակոբ

---

[1]Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայերի ազատագրության ուղիների մասին, Եր., 1990:

[2]Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3-րդ, Եր., 2009:

Վարդիվառյանն իր ՌԱԿ-ին նվիրված աշխատության մեջ[1]: Հեղինակը խորամուխ չի եղել Արփիարյանի հասարակական-քաղաքական հայացքների և հրապարակախոսության մեջ, այլ ընդհանուր գծերով ներկայացրել է նրա անցած ուղին ու ծավալած գործունեությունը:

Թեպետ Արփիար Արփիարյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ գրվել են մի շարք աշխատություններ, սակայն տակավին հրապարակի վրա չկա նրա հասարակական-քաղաքական հայացքներն ու գործունեությունն ամբողջացնող ուսումնասիրություն: Այս ուղղությամբ մեր կողմից կատարված հետազոտական աշխատանքներն ամբողջացվել էին «Արփիար Արփիարյանի հասարակական-քաղաքական հայացքները» վերնագիրը կրող ատենախոսության մեջ[2]: Սակայն հետագա պրպտումների արդյունքում ի հայտ եկած նոր փաստերն անհրաժեշտություն առաջացրին լրացնել և որոշ փոփոխություններ կատարելուց հետո այն մենագրության տեսքով ներկայացնել ընթերցողի դատին: Մասնավորապես վերամշակվել է Արփիարյանի կուսակցական գործունեությանը վերաբերող գլուխը: Աշխատության մյուս բաժիններում ևս կատարվել են բովանդակային, կառուցվածքային ու ծավալային փոփոխություններ: Աշխատությունում համակողմանիորեն ներկայացվել և վերլուծվել է 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի

---

[1] Վարդիվառեան Յ., Մեծ երազի ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն ռամկավար ազատական կուսակցութեան, Բ հատոր, Նիւ Ճըրզի, 2016:

[2] Հովհաննիսյան Գ., Արփիար Արփիարյանի հասարակական-քաղաքական հայացքները, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Եր., 1997:

հայ ազգային-ազատագրական պայքարի ու հասարակական-քաղաքական կյանքի խնդիրների վերաբերյալ Արփիարյանի հայացքները և գործունեությունը: Թեման կարևորվում է հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության և հասարակական մտքի պատմության ուսումնասիրության ու համակողմանի մշակման անհրաժեշտության տեսանկյունից: Նրա ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորվում է նաև այն հանգամանքով, որ հայ հասարակական-քաղաքական կյանքի խնդիրների վերաբերյալ Արփիարյանի հայացքները քննություն են բռնում նաև մեր օրերում: Ներկայումս, հայ ժողովրդի ու պետության առջև ծառացած խնդիրների լուծման ճիշտ ուղիների ընտրության հարցում արժեքավոր ու օգտակար է անցյալի պատմական փորձի վերաիմաստավորումը, նրա դասերը, որոնք զարգացման և ապագա զնալու ճշմարիտ ուղենիշներն են:

Ուսումնասիրության մեջ արծարծվել են հետևյալ ենթահարցերը՝

ա. Արփիարյանն արևմտահայերի սոցիալ–տնտեսական կացության մասին.

բ. Արփիարյանի լուսավորական գործունեությունն Արևմտյան Հայաստանում.

գ. Արփիարյանն արևմտահայերի ազգային իշխանությունների դերի ու գործունեության մասին.

դ. Արփիարյանի գործունեությունը Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովում.

ե. Արփիարյանը հայ հոգևորականության և եկեղեցու մասին.

զ. Արփիարյանի վերաբերմունքն արևմտահայ տարբեր խավերի նկատմամբ.

է. Թուրքական կառավարության հայակործան քաղաքականության քննադատությունն Արփիարյանի կողմից.

ը. Արփիարյանը Հայկական հարցում եվրոպական սյեռու-թյունների դիրքորոշման մասին.

թ. Արփիարյանն Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների համագործակցության մասին.

ժ. Արփիարյանը երիտթուրքական շարժման մասին.

ի. Արփիարյանի կուսակցական գործունեությունը.

լ. Արփիարյանի դեմ ուղղված մեղադրանքների հարցը.

խ. Արփիարյանի ընդհարման պատճառները ինչակյան առաջնորդների հետ.

ծ. Արփիարյանը որպես համազգային միասնության ակտիվ քարոզիչ.

Նշված խնդիրների լուծման համար օգտագործել ենք արխի-վային վավերագրեր, մամուլի նյութեր, ժամանակակիցների հուշեր և Արփիարյանի մասին հրապարակի վրա եղած գրա-կանությունը: Հիմնական սկզբնաղբյուրը Արփիարյանի հա-րուստ ու բազմնավոր հրապարակախոսությունն է: Նրա հոդ-վածները տպագրվել են ժամանակի առաջադիմական պարբե-րականներում՝ «Մշակում», «Արևելքում», «Մասիսում», «Հայրե-նիքում», «Մարտում», «Նոր կեանքում», «Լուսաբերում», «Շի-րակում»:

Արփիարյանի գործունեության լուսաբանման, նրա հա-յացքների ուսումնասիրության համար աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողո-վի ատենագրությունները, որոնք չնայած անցել են թուրքական գրաքննության մամլիչի միջով, այնուամենայնիվ, որոշակի տեղեկություններ տալիս են Արփիարյանի երեսփոխանական գործունեության մասին:

Արփիարյանի մասին ուշագրավ տեղեկություններ կան նրա մտերիմների ու ժամանակակիցների հուշերում:

Նշանավոր գրողի ու հրապարակախոսի կյանքի, գործունեության, հասարակական-քաղաքական հայացքների լուսաբանման գործում հատկապես կարևոր նշանակություն ունեցավ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում գտնվող Արփիարյանի ֆոնդի ուսումնասիրությունը[1]: Արժեքավոր արխիվային վավերագրեր են պահպանվել նաև Հայաստանի ազգային արխիվում[2]:

---

1 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (այսուհետև - ԳԱԹ) արխիվ: Ա. Արփիարյանի ֆոնդ N 23, 24, 25, 46, 51, 67, 71, 114, 115, 120, 121, 138,150, 167, 168, 376, 378, 502, 874:

2 Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), Ապահ Պետրոսյանի ֆոնդ. 453, Վաղինակ Բյուրատի ֆոնդ. 314; Հայկական Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան Կուսակցության փաստաթղթերի հավաքածու 1456:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## *Ա) Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությունը 19-րդ դարի վերջին քառորդում*

19-րդ դարի երկրորդ կեսին, Օսմանյան կայսրությունը տնտեսապես քայքայված ու հետամնաց ռազմա-ավատատիրական երկիր էր: Սուլթանների վարած տնտեսական ու ազգային հետադիմական քաղաքականությունը փաստորեն արգելակում էր արտադրողական ուժերի զարգացումը: Օսմանյան կայսրությունը անօրինականության, կամայականության ու հալածանքների երկիր էր: Այնտեղ խոսք անգամ լինել չէր կարող հպատակների կյանքի ու գույքի ապահովության մասին: Թուրքական բռնապետությունն իր ողջ ծանրությամբ ընկած էր աշխատավոր զանգվածների վրա, որոնք վճարում էին բազմաթիվ հարկեր ու տուրքեր ինչպես կառավարությանը, այնպես էլ ֆեոդալներին ու կրոնական հաստատություններին:

Երկրում ամենավատթարը քրիստոնյաների վիճակն էր, որոնք բացի սոցիալական ճնշումներից, ենթարկվում էին նաև ազգային ու կրոնական հալածանքների:

Իր հզորության բարձրակետին հասնելով 16-17-րդ դարերում, Օսմանյան կայսրությունն այնուհետև սկսեց քայքայվել: 19-րդ դարում սուլթանները փորձեցին կանխել այդ անկումը բարենորոգումների իրականացման ուղիով: 1839թ. սուլթան Աբդուլ Մեջիդը հրապարակեց հրովարտակը (Գյուլխանեի հաթթը շերիֆը), որը Թուրքիայի պատմության մեջ սկիզբ

դրեց Թանզիմաթի շրջանին: Հրովարտակն ազդարարում էր կայսրության բոլոր հպատակների անձի և գույքի անձեռնմխելիություն, հարկերի արդարացի բաշխում, զինվորական ծառայության կրճատում և այլն և այլն: 1856թ. հրատարակված հրովարտակով (Հաթթը հումայուն) իրավահավասար էին ճանաչվում կայսրության բոլոր ժողովուրդները անկախ կրոնից, ազգությունից: Սակայն թանզիմաթները մնացին թղթի վրա և քրիստոնյաների կացությունը գնալով ավելի վատթարացավ: Դրությունը սրվեց հատկապես սուլթան Աբդուլ-Համիդ 2-րդի օրոք, որն իշխանության գլուխ անցավ 1876թ. տեղի ունեցած պետական հեղաշրջման հետևանքով: Իշխանության առաջին տարում նա նույնիսկ սահմանադրություն հռչակեց: Այստեղ նույնպես երաշխավորվում էին պետության բոլոր հպատակների իրավահավասարությունը, դեմոկրատական մի շարք ազատություններ: Բայց իշխանության ամրապնդումից հետո սուլթանը ոչ միայն չկենսագործեց սահմանադրությունը, այլև սկսեց դաժանորեն հետապնդել նրա կողմնակիցներին: Աբդուլ-Համիդի օրոք Թուրքիայում գործածությունից հանվեցին այնպիսի բառեր ինչպիսին էին «ազատություն», «հեղափոխություն», «սահմանադրություն», «առաջադիմություն», «հավասարություն» և այլն: Իր բռնություններով նա գերազանցեց նախորդներին, այդ պատճառով ստացավ «արյունարբու» անունը:

Չնայած ծանր դրությանն, այնուամենայնիվ, Թուրքիայի տնտեսական կյանքում քրիստոնյաները մեծ դեր էին խաղում: Նրանք զբաղվում էին երկրագործությամբ, արհեստներով ու առևտրով: Առանձնապես ազդեցիկ էր արևմտահայ առևտրական բուրժուազիան, որը Կ.Պոլսում և այլ քաղաքներում հիմնել էր առևտրական տներ: Արևմտահայ առևտրաարդյունաբերական դասի գործունեությանը և նրա հետագա

բարգավաճմանը մեծապես խոչընդոտում էր Եվրոպական պետությունների զաղութային քաղաքականությունը: Եվրոպական առևտրականները մեծ արտոնություններ ունեին Թուրքիայում, իսկ եվրոպական արդյունաբերական ապրանքների թափանցումը Թուրքիա, դուրս էր մղում տեղական մանուֆակտուրային ու տնայնագործական ապրանքները: Արևմտահայ առևտրաարդյունաբերական դասի համար նոր և լուրջ խնդիրներ առաջացրեց թուրք ազգային բուրժուազիայի զարգացումը 19-րդ դարի վերջին տասնամյակներին:

Կառավարությունը տագնապով էր հետևում քրիստոնյաների տնտեսական հաջողություններին: Թուրքական իշխանությունները լուրջ մտավախություն ունեին, որ տնտեսական ասպարեզում նրանց գերազանցությունը հետագայում կարող էր վտանգի տակ դնել իրենց թուրքերի վարչական ու ռազմական մենաշնորհը: Այդ պատճառով կառավարությունը հայերի առջև ստեղծում էր բազմաթիվ դժվարություններ: Այդ կապակցությամբ Արփիարյանը գրում էր. «Հարկ է՞ ըսել, թե ինչպիսի օրենքներով կը կաշկանդէ թիւրք կառավարութիւնը երկրին նիւթական բարգավաճումը, զի վաճառականութիւն և արհեստք քրիստոնեից ձեռքն են, թիւրքերը չեն ուզեր, որ մնան և հայերն, որոնք իրենց աշխատասիրութեան և ընդունակութեան զաղափարը աշխարհի տված են, այսօր թշվառ վիճակի մեջ են գրեթէ»[1]:

Թեև սուլթանները թանզիմաթով հայտարարել էին բոլոր ազգությունների իրավահավասարության մասին. բայց գլխավոր պաշտոններում առաջվա նման շարունակում էին նշանակել մահմեդականներին: Կառավարությունը հայերի դեմ էր տրամադրում տեղական թուրք և քուրդ կառավարիչնե-

[1] «Մշակ», Թիֆլիս, 1880, N 178:

րին։ Օրինակ՝ սուլթան Աբդուլ-Համիդը 1890-ական թվականներին իրագործեց քրդական ցեղապետների ղեկավարությամբ «համիդեական գնդերի» կազմակերպումը, որոնք կատարյալ պատուհաս դարձան հայ բնակչության համար։

Հայ ժողովրդի նկատմամբ թուրքերի վարած ձուլման քաղաքականության արտահայտություններից մեկն էր Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում թուրք, քուրդ, չերքեզ և այլ մահմեդական տարրերի վերաբնակեցումը։ Միայն երեք տարվա ընթացքում՝ 1879-1882 թվականներին, կառավարությունը հայաշատ մի շարք վայրերում բնակեցրեց ավելի քան 78 հազ. թուրք[1]։ Այդ քաղաքականությունը հանգեցնում էր հայերի ու մահմեդական վերաբնակիչների միջև թշնամության, ինչի հետևանքով տեղի էին ունենում ազգամիջյան սուր ընդհարումներ։ Կառավարությունն էլ հենց այդպիսի նպատակ էր հետապնդում՝ ցանկացած միջոցով խոչընդոտել հայերի ազգային, տնտեսական ու քաղաքական առաջադիմությանը։

Այնուամենայնիվ, 19-րդ դարի վերջին քառորդում արևմտահայերի տնտեսական կյանքում կատարվեցին որոշ տեղաշարժեր։ Արհեստների ու առևտրի կարևոր կենտրոններ էին դարձել Կարինը, Վանը, Բաղեշը, Մուշը, Խարբերդը։ Մեծ հռչակ էին ձեռք բերել Վանի ոսկերիչներն ու արծաթագործները, Խարբերդի գորգագործները, Եվդոկիայի պղնձագործները։ Կարինը աչքի էր ընկնում խմիչքների արտադրությամբ։ Արևմտյան Հայաստանում զարգանում էր կահույքագործությունը, դերձակությունը և այլ արհեստներ։

Արփիարյանը մի շարք օրինակներով ցույց էր տալիս, որ հայերն առաջնակարգ դիրքեր ունեին քաղաքային արհես-

---

[1]Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914թթ.), Եր., 1965, էջ 33։

տագործության մեջ։ «Պոլսում ոսկերչութեան արհեստը բացառապես հայերի ձեռքում է, - գրում էր նա, - և բազմաթիվ մարդիկ ապրում են շնորհիվ այդ արհեստի»[1]։

Թուրքիայի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որը գտնվում էր ծայրահեղ հետամնաց վիճակում։ Երկրում ամենախոշոր հողատերը սուլթանն էր։ Նրանից հետո հողային ընդարձակ տիրույթներ ունեին կառավարության բարձրաստիճան պաշտոնյաները։ Սրանք բոլորը ֆեոդալ-հողատերերի հետ միասին կազմում էին բնակչության ընդամենը 5 տոկոսը, բայց իրենց ձեռքում էին կենտրոնացրել Օսմանյան կայսրության ողջ հողերի 65,5 տոկոսը։ Գյուղացիությունը, որ կազմում էր բնակչության 87 տոկոսը, տիրում էր հողերի միայն 31,4 տոկոսին։ Գյուղացիության 8 տոկոսը բոլորովին հողազուրկ էր[2]։

Բոլոր սուլթաններն էլ ամեն կերպ պաշտպանում և ամրապնդում էին ավատատիրական հողատիրությունը, քանի որ այն սուլթանի հուսալի հենարանն էր։ Հողատերերի մեծ մասը քրդերն էին, հետո թուրքերը։ Հայ և ասորի հողատերերը աննշան տոկոս էին կազմում։

Հողօգտագործման ձևերից Արևմտյան Հայաստանում գերակշռում էր աղայական-ավատական հողատիրությունը։ Գյուղատնտեսության մեջ գերակշռում էր հողի վարձակալման ձևը։ Հիմնական արտադրողը գյուղացին էր, որը ոչ թե սեփականատեր էր, այլ վարձակալ։ Հողի գերագույն տերը պետությունն էր, չնայած փաստացի այն գտնվում էր աղաների ձեռքին։ Թեև Թուրքիայում հրատարակվում էին հողային սեփականությանը վերաբերվող օրենքներ, բայց քանի որ բռնու-

---

[1] «Մշակ», 1881, N177։

[2] Համբարյան Ա., Ագրարային..., էջ 35։

թյունն ու կամայականությունը տարածված երևույթ էին, ապա շատ հաճախ հայ աշխատավորը զրկվում էր նաև հողից: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանում մասսայական երևույթ էր թուրք և քուրդ ֆեոդալների կողմից հայերի հողերի բռնազրավումը:

Արևմտահայ գյուղացու համար կատարյալ չարիք էին բազմապիսի հարկերն ու տուրքերը, որ նրանք վճարում էին պետությանն ու ավատատերերին:

Ռուս-թուրքական պատերազմից հետո կառավարությունն ավելացրեց բոլոր տեսակի հարկերի ու տուրքերի վճարման չափը և չբավարարվելով դրանով, սահմանեց նոր հարկեր ու տուրքեր:

Գավառահայության վիճակը խորապես հուզում էր Արփիարյանին: Նա ցույց էր տալիս, որ հայ աշխատավոր գյուղացին շատ էր տուժում Թուրքիայի տնտեսական հետամնացության պատճառով: «Երկրագործութիւնը ամենաողորմելի դրութեան մէջ է և երկրին օրենքներն ու սովորութիւններն ի մահ կդատապարտեն զարգացման, - գրում էր նա: - Պետք է հոս լինել, որ համոզվիմք, թե ինչպես ամենափոքր գործի մէջ խարդախութիւն և գողութիւն կտիրէ»[1]:

Արծարծելով հայ գյուղացիության ծանր վիճակը՝ Արփիարյանը ցույց էր տալիս, որ թուրքական իշխանությունների, քրդական աղաների շահագործումից բացի հայ գյուղացին մեծապես տուժում էր նաև հայ վաշխառուներից: Արփիարյանը դատապարտեց այդ երևույթը՝ այն անվանելով չարիքի աղբյուր գյուղացիության համար[2]: Նույնիսկ դաժան շահագործման պայմաններում հայ աշխատավորը կարողանում էր ոչ միայն

---

[1] «Մշակ», 1879, N 69:

[2] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1892, N 214:

գոյատևել, այլև առաջադիմել: Արփիարյանը նշում էր, որ Թուրքիայում հայերը հսյատակ մյուս ժողովուրդների հետ վճարում են ամենածանր տուրքերը և մեծ մասամբ նրանց աշխատասիրության շնորհիվ է, որ դեռևս երկիրն ապրում է[1]:

Արփիարյանը կոչ էր անում թե՛ արևմտահայերին, և թե՛ արևելահայերին ամեն կերպ օգնել արևմտահայ գյուղացիությանը, հատկապես այն գավառներին, որտեղ բնակչությունը հայտնվել է սովի ճիրաններում[2]:

Եթե քաղաքական հարցերում Արփիար Արփիարյանը չէր պատկերացնում որևէ համաձայնություն հայերի ու թուրքերի միջև, ապա այլ կարծիք ուներ տնտեսական համագործակցության վերաբերյալ: Նա իրավացի էր, նշելով, որ Թուրքիայի տնտեսության մեջ եվրոպական օրեցօր հզորացող գերիշխանության արդյունքում տուժելու են թե՛ թուրքերը, թե՛ հայերը: Արփիարյանը գրում էր, որ թուրքերը, լինելով կայսրության տիրապետող ժողովուրդ, բիրտ ուժից բացի «բան մը ալ չունին», հետևաբար տնտեսական մրցակցության մեջ երբեք չեն կարող հաջողության հասնել: Սրա վրա հիմնվելով Արփիարյանը տեսականորեն հնարավոր էր համարում հայ-թուրքական տնտեսական համաձայնությունը[3]:

Արփիարյանը գտնում էր, որ արևմտահայ մտավորականությունը պետք է աշխատի միջոցներ գտնել հայ գյուղացուն հաղորդակից դարձնելու համար գյուղատնտեսության բնագավառի գիտության և տեխնիկայի նվաճումներին, որպեսզի այդ ձևով ինչ որ չափով թեթևացնի նրա աշխատանքը և բարձրացնի նրա արտադրողականությունը[4]:

---

[1] «Մշակ», 1881, N 243:

[2] Նույն տեղում, 1889, N 19:

[3] «Լուսաբեր», Կաhիրե, 1906, N 296:

[4] «Հայրենիք», 1892, N 267:

Անհրաժեշտ է նշել սակայն, որ խոսելով տնտեսության մասին՝ Արփիարյանը չի անդրադառնում այնպիսի մի կարևոր խնդրի, ինչպիսին հողային հարցն էր: Կարելի է ենթադրել, որ հողային հարցի լուծումը նա կապում էր արևմտահայերի ազգային ազատագրության հարցի լուծման հետ:

Թուրքական կառավարության հայահալած քաղաքականությունը, ապաների դաժան շահագործումը, անբերրիությունն ու սովը արևմտահայ գյուղացիության շարքերից նորանոր զանգվածներ էին արտամղում, որոնք ճարահատյալ բռնում էին քաղաքի ճամփան: Աղքատացած զանգվածները, թողնելով իրենց հայրենի երկրամասերը, աշխատանք էին որոնում Կ. Պոլսում և Թուրքիայի արևմտյան քաղաքներում:

Արփիարյանը տեսնում էր պանդուխտ դարձած հայ գյուղացու ողբերգական վիճակը և խորապես կարեկցում: Պատկերավոր է հատկապես Կ. Պոլսի ազգային հիվանդանոցում տառապող, հյուծված ու վնասվածքներից խեղանդամ դարձած պանդուխտ հայերի վիճակի նկարագրությունը. «Ամէն օր պատզարակի մեջ փրկութեան կբերեին հոս խեղճ հայեր: Քանիներ շենքերէն ինկած, ջաղջախուած, քանիներ բեռ տարած ժամանակ ճզմուած, որքան առոյգ պատանիներ խոնավ խաներու մէջ հիւծուած ու մաշուած. իրականութիւն է, տխուր իրականութիւն»[1]:

Արփիարյանը գտնում էր, որ պատրիարքարանը և հայ երևելիները պետք է կազմակերպեին պանդուխտների օգնության, իսկ դժբախտ պատահարների դեպքում նաև նրանց ընտանիքներին նյութական օժանդակություն ցույց տալու գործը: Նրա առաջարկով երիտասարդ գրող Մելքոն Կյուրճյանը (Հրանդ), մտավ պանդուխտների միջավայրը, ուսումնասիրեց

[1] «Մշակ», 1882, N 59:

նրանց չարքաշ կյանքի մանրամասները և հանդես եկավ «Պանդուխտ կեանքեն» ակնարկաշարով, որը մեծ ընդունելություն գտավ ժամանակակիցների կողմից և հեղինակին բերեց համընդհանուր ճանաչում[1]:

19-րդ դարի վերջին պանդխտության հետ մեկտեղ աճում էր նաև երկրից արտագաղթողների թիվը: Չդիմանալով տնտեսական դաժան շահագործմանը՝ գյուղացիության մի մասը զաղթում էր հարազատ վայրերից ուրիշ երկրներում աշխատանք գտնելու հույսով:

Անդրադառնալով այս երևույթին, Արփիարյանը ոչ առանց հիմքի գտնում էր, որ գաղթական հայությանը սպառնում է ազգային ձուլման վտանգը, որին չեն կարող արգելք հանդիսանալ «ոչ կրոնք, ոչ լեզու, ոչ ազգային զգացում»: Նա խորապես համոզված էր, որ յուրաքանչյուր ազգ միայն իր հողի վրա կարող է ամբողջությամբ պահպանել իր ազգային դեմքը, կրոնն ու լեզուն: Որոշ ընդդիմախոսների Արփիարյանն ապացուցում էր, որ կրոնը ևս ի վիճակի չէ պահպանել գաղթականությանը ազգային ձուլումից: Այդ կապակցությամբ նա գրում էր. «Այդ ամեն հայերը, երբ ելան իրենց երկրեն, սրտով ալ հայ էին, հոգով ալ, կրոնամոլ էին: Եվ սակայն ոչ կրոնքը զիրենք պահպանեց իբր հայ: Նախապաշարում է հավատալ, թե կրոնքը ազգութեան մը պահապանն է ամենուրեք»[2]: Ո՞րն է ելքը: Ըստ Արփիարյանի «եթե հայ գաղթականութիւններու բեկորները պահպանել կուզենք, միակ միջոց մը կա. աշխատիլ զանոնք վերադարձնել հոն ուսկից մեկնած են»[3]: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ եթե Արփիարյանը տեսնում էր գաղթակա-

---

[1] «Մասիս», Կ. Պոլիս, 1888, N 3919:

[2] Նույն տեղում, 1890, N 3941:

[3] Նույն տեղում:

նության առաջացման պատճառները, ճշգրտորեն կանխատեսում էր նրա հետագա ճակատագիրը, ապա գաղթական հայությանն իր հայրենիքում պահելու նրա մատնանշած միջոցը իրական չէր: Թուրքիայից մեկնող հայ գաղթականներն ինչպիսի երկրում էլ որ հաստատվեին, ինչպիսի դժվարությունների էլ որ հանդիպեին, միևնույնն է, դա համեմատելի չէր թուրքական այն դաժան իրականության հետ, որից նրանք հեռացել էին:

Ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ սուլթանական կառավարությունը վերջնականապես որդեգրեց արևմտահայության ֆիզիկական բնաջնջման քաղաքականությունը, հայ դեմոկրատ գործիչներից շատերը հասկացան, որ արևմտահայության ազատագրությունը թուրքական դարավոր բռնապետության լծից հնարավոր է միմիայն համաժողովրդական ապստամբության միջոցով: Ազատագրական զարթոնք ապրող հայ մտավորականները հանդես եկան ազգային ուժերի միավորման և ազատագրական պայքարի գաղափարախոսություն ստեղծելու պահանջով: Այդ մտավորականների թվում էր նաև Արփիար Արփիարյանը:

### *բ) Արփիար Արփիարյանի կրթական-մշակութային գործունեությունը*

Հայության մեջ լուսավորություն տարածելու Արփիարյանի ձգտումը արտահայտվեց դեռևս պատանի հասակում: 1864թ. Կ. Պոլսի Թարգմանչաց վարժարանի սան Ա. Արփիարյանը մի քանի ընկերների հետ հիմնում են վարժարանի «Սանուց ընկերությունը», որի նպատակն էր գրագիտության տարածումը Կ. Պոլսի հայ պանդուխտների շրջանում: Ընկերություն կազմելու գաղափարը հուշում է վարժարանի տեսուչ Կարապետ Ճիզմեչյանը: «Սկսանք աշխատիլ, ամէն կիրակի օր և ամէն հինգշաբթի գիշեր դպրոցն էինք, - վերհիշում է Արփիարյանը, - ու երեսունի չափ բեռնակիր, ջրկիր, ապասաւոր կուզային մենէ բան սորվիլ»[1]: 1867թ. Արփիարյանի Վենետիկ մեկնելուց հետո ընկերությունը ցրվեց, սակայն վերադառնալով Պոլիս, Մուրադ-Ռափայելյան վարժարանն ավարտած Արփիարը նորից նետվում է հանրային ակտիվ գործունեության մեջ: Խորհրդակցելով «Սանուց ընկերության» իր եռանդուն գործընկերներից Զաքար Համբարձումյանի հետ նա ձեռնամուխ է լինում նոր ընկերության հիմնադրմանը: Կարճ ժամանակում նա իր շուրջն է համախմբում մի քանի կրթված և գործին նվիրված երիտասարդների, այդ թվում և Մկրտիչ Փորթուգալյանին: Ուշագրավ է Արփիարյանի և Փորթուգալյանի հանդիպման նկարագրությունը: Արփիարյանը, որ Փորթուգալյանին անձամբ չէր ճանաչում, այլ գիտեր որպես կրակոտ հրապարակախոս և «յեղափոխականի համբավ ստացած անձնավորութեան», զարմանքով գրում էր. «զամուած տեղս մնացի...

[1] «Նոր կեանք», Լոնդոն, 1899, N13, էջ 197:

կարճահասակ, խարտեաշ, զառնուկի նման մէկը դեմս էր իբր Փորթուգալեան»[1]: Սակայն առաջին իսկ հանդիպումից Փորթուգալյանը Արփիարյանի առջև կանգնում է որպես ամուր համոզմունքների ու գաղափարների տեր մի մարդ, որին Արփիարյանը համակրում է:

1876թ. ապրիլին տեղի է ունենում ընկերության հիմնադիրների ժողովը, որտեղ Փորթուգալյանն ընտրվում է ատենապետ, իսկ Արփիարյանը գործադիր ժողովի ատենադպիր[2]: Նա ցանկանում է ընկերության անունը «Նալբանդյանց» դնել, որովհետև իր վկայությամբ «յեղափոխական բանաստեղծը գրաված էր մեր պատանեկութեան սրտերը»: Կարծիքները, սակայն տարբերվում են, և մեծամասնության առաջարկությամբ ընդունվում է «Արարատեանե անունը: Այսպես «Արարատեան ընկերութիւնը» կազմված հռչակվեցավ 1876թ. ապրիլի 15-ին», - գրում էր Արփիարյանը: Ընդունվում է 10 հոդվածից բաղկացած կանոնադրություն: Ընկերության անմիջական նպատակն էր «Հայաստանում ձրիաբար ուսում և արհեստ տարածել», - ասված էր ընկերության տեղեկագրում[3]: Սակայն ընկերության հիմնադիրների հեռավոր նպատակն էր կրթության տարածման միջոցով արթնացնել գավառահայության ազգային ինքնագիտակցությունը, ժողովրդի մեջ սերմանել ինքնապաշտպանության գաղափարը: Տարիներ անց, խոսելով ընկերության հիմնադրման դժվարությունների մասին, Արփիարյանը Լեոյին գրում էր. «Ձեզի ըսեմ, որ հիմնելով Արարատեան ընկերութիւնը մեր նպատակն էր կրթութիւնը Հայաստան տարածել, բայց ի սկզբան չէինք համարձակեր մեծ ծախ-

---

[1] «Նոր կեանք», Լոնդոն, 1899, N 13, էջ 197:

[2] Տեղեկագիր «Արարատեան ընկերութեան». Գ, Կ. Պոլիս, 1879, էջ 6:

[3] Նույն տեղում, էջ 1:

քի դուռ բանալ ու կուզէինք, որ մեր ձեռքովը Պոլիս տղաք կրթենք, Հայաստանի տղաք և զանոնք հետզհետե խրկենք Հայաստան»[1]:

Շուտով Փորթուգալյանը հանձն է առնում մեկնել գավառ և հիմնադրել ընկերության առաջին դպրոցը: Որոշվում է սկսել Վանից, ուր և «Արարատեան ընկերութեան» կրթական տեսուչի պաշտոնով մեկնում է Փորթուգալյանը «հոն գտնելու Զաքար Համբարձումեանը և Ալիւր գիւղին մեջ բանալու Արարատեան առաջին նախակրթարանը: Փորթուգալեանը ընդարձակ տեղեկութիւններով Վանեն մեզի կծանոթացնէր Հայաստանի գեղերուն իրական կացութիւնը և մենք շատ բան կսորւէինք Պոլիս»: Կարճ ժամանակում դպրոցներ են բացվում նաև Կեմ, Խարակոնիս, Կյուսնենց, Գործոթ և այլ գյուղերում: Մկրտիչ Փրթուգալյանից հետո ընկերության ընդհանուր ժողովի ատենապետ է ընտրվում Մինաս Չերազը[2]:

«Արարատեան ընկերութեան» ծավալած կրթական-լուսավորական գործունեությունը Արփիարյանը լուսաբանում էր «Մշակի» էջերում, և դրանով նպաստում էր այդ գործի քարոզչությանը արևելահայերի շրջանում:

Արփիարյանը գտնում էր, որ պետք է օգնություն ցույց տալ «Արարատեան ընկերութեանը», որը դպրոցների բացման լուրջ ու դժվարին գործունեություն էր ծավալել Տավրոսի լեռներում, ուր հայությանը քրդերի հետ ձուլվելու վտանգ էր սպառնում[3]: Նա նկարագրում էր, թե ճնշված ու հալածված գյուղացին ինչպիսի ըմբռնումով էր մոտենում ընկերության ծավալած գործունեությանը, «որովհետև խեղճ գիւղացին տգէտ, բայց

---

[1] ԳԱԹ, Ա.Արփիարյանի ֆոնդ, N 121, թ.1:

[2] Ալպոյաճեան Ա., Մինաս Չերազ, Կահիրե, 1927, էջ 25: Տե՛ս նաև «Նոր կեանք», 1899, N 14, էջ 211:

[3] «Մշակ», 1879, N 81:

բնազդում մը ունիր, թէ դպրոցն ասլազայ մը կը պատրաստէ իրեն»[1]: Ոգևորված Փորթուգալյանի այն նկարագրությունից, թե ինչպես էր Վանա լճի մոտ գտնվող Դատվան գյուղի բնակչությունը ցնծությամբ ընդունում ընկերության կողմից դպրոցի բացումը, Արփիարյանը գրում էր. «Այն ժողովուրդը, որ երբէք դպրոց չէ տեսած, բայց գիտէ փառք տալ Աստուծոյ, իւր գիւղին մէջ դպրոց մը տեսնելուն առթիւ և զոհողութիւններ անել դպրոց կանգնելու համար, այդպիսի ժողովուրդ յուսահատելու չէ»[2]:

«Արարատեան ընկերութեան» ծավալած գործունեության ընթացքում Արփիար Արփիարյանը հանգում է այն համոզմանը, որ «գիւղական դպրոցները բաւական պիտի չըլլային հայրենիքին մտաւորական և բարոյական վիճակը հիմնովին բարեփոխելուն, այդ պատճառով նա նպատակ է դնում կրթությունը ծավալել նաև քաղաքներում, որպեսզի «երկիրը իր մտաւորական ղեկավարութիւնը միայն Պոլսէն չսպասեր»[3]: Սակայն Արփիարյանի այս գաղափարը դիմադրության է հանդիպում Չերազի կողմից, որի կարծիքով ընկերության բոլոր ուժերն ու միջոցները միայն գյուղերի կրթությանը պիտի նվիրվեին: Վեճը լուծվում է հօգուտ Արփիարյանի, այն բանից հետո, երբ Փորթուգալյանը պաշտպանում է Արփիարյանի տեսակետը: Որոշվում է Վանում դպրոց բացել: Այս ձեռնարկին մեծապես օգնում և քաջալերում է Խրիմյան Հայրիկը: Նախատեսվում էր դպրոցը դարձնել ոչ միայն Վասպուրականի, այլև ողջ Արևմտյան Հայաստանի կրթության ու զարգացման կենտրոնը[4]: «Վարժապետանոցը վերածնության կեդրոն մը պիտի ըլ-

---

[1] Նույն տեղում, 1879, N 69:

[2] Նույն տեղում:

[3] «Նոր կեանք», 1899, N15, էջ 230:

[4] Նույն տեղում, էջ 232:

լար ամբողջ հայ աշխարհի համար, - գրում էր Արփիարյանը: Հայաստանի և Կիլիկիո ամեն քաղաքե աշակերտներ պիտի ընդունվեին ձրիաբար, որոնք վանեցիներուն հետ կրթվելով Վանը պիտի ըլլար մտավորական կեդրոն մը, ուրկե մեկնող աշակերտները սերտ կապեր պիտի ունենային իրարու հետ»[1]:

Խոսելով «Արարատեան ընկերութեան» դպրոցական գործունեության մասին, Համբարձում Առաքելյանը գրում է. «ընկերութիւնը իրեն պարագլուխ ունենալով այնպիսի անձինք, որոնք նոր, թարմ, բէալական ուղղութեան ներկայացուցիչ կարող են համարուել, առաջինն էր, որ հասկացաւ, թէ որևիցե ազգի վիճակը բարւոքելու համար պէտք է գործը սկսել այն տարրի մէջ, որ ազգի էական մասն է կազմում, պէտք է գիւղական ժողովրդի մէջ սկսել գործունեությունը: ...Փոխանակ Ակադէմիա հիմնելու «Արարատեան ընկերութիւնն» աւելի խոհական համարեց գիւղական, ժողովրդական դպրոցներ հիմնել և հէնց այդ է նորայ առջադիմութեան պատճառը»[2]: Ընկերության անդամները կապեր հաստատեցին «Մշակի» խմբագրության հետ, որը օգնում էր թե՛ նյութապես և թե՛ բարոյապես: Ընկերությունը Արևմտյան Հայաստանում տարածում էր «Մշակը»:

Վանի վարժապետանոցը բացվեց 1878թ. աշնանը: Ընկերության գործադիր ժողովը խնդրանքով դիմում է մի շարք քաղաքների ազգային մարմիններին, որպեսզի իրենց ընդունակություններով աչքի ընկնող պատանիներին ուղարկեն Վան՝ սովորելու: Ընկերության ծրագիրը բացառում էր ազգային-կրոնական որևէ սահմանափակում աշակերտների ընտրության հարցում, որովհետև «Արարատյան ընկերությունը»

---

[1] Լեո, Գրիգոր Արծրունի, հատոր 3, Թիֆլիս, 1905, էջ 102:

[2] «Մշակ», 1880, N 7:

Արփիարյանի վկայությամբ «Հայաստանի բոլոր ցեղերուն մեջ համերաշխութեան գաղափարը հաստատելու նպատակ ուներ», չնայած որ ընկերության հիմնադիրները գիտակցում էին այդ խնդրի ողջ բարդությունը:

Անհրաժեշտ է նշել նաև այն կարևոր հանգամանքը, որ ընկերությունը նպատակ էր դրել աշակերտների մտավոր զարգացումից բացի նպաստել նաև նրանց ֆիզիկական պատրաստվածության ամրապնդմանը: Աշակերտներին սովորեցնում էին լող, մարմնամարզություն, ձիավարություն: Ծրագրում ֆիզիկական զարգացմանն այնքան մեծ տեղ էր տրվում, որ Արփիարյանի վկայությամբ, եթե «ուսումի մեջ տկարութիւնը ներելի պիտի ըլլար մինչև աստիճան մը, բայց մարմնամարզի մէջ ոչ»[1]:

Վանի վարժապետանոցի գործունեության ընթացքում առաջ են գալիս մի շարք բարդություններ: Քաղաքի ունևոր խավը փորձում է միջամտել դպրոցի գործերին: Նրանցից շատերը դեմ են դուրս գալիս այն բանին, որ իրենց երեխաները սովորում են համատեղ, ինչպես աղքատ ընտանիքի երեխաների, այնպես էլ այլազգի աշակերտների հետ: Սակայն Արփիարյանը վճռականապես դիմադրում է, համոզված լինելով, որ «խտրութիւնը հայ հարուստի եւ հայ աղքատի միջեւ ամենամեծ վտանգը պիտի ըլլար ընկերութեան խորհուրդներուն առջև»: Ինչպես Արփիարյանը, այնպես էլ ընկերության մյուս ղեկավարները ճիշտ կերպով գտնում էին, որ պետք է առաջնորդվել «ոչ թե նիւթականի, այլ մտաւորականի քննութեամբ»[2]: Նրանք աշխատում էին այն անխախտ սկզբունքով, ըստ որի «ամէն հայ տղայ իր ծնողքին զաւակն ըլլալէ առաջ իր ազգին

---

[1] «Նոր կեանք», 1899, N.15, էջ 232:

[2] Նույն տեղում, N16, էջ 244:

զաւակն է, եւ իր ազգին ապագան: Այդ տղուն դաստիարակու-թիւն տալով ոչ միայն ազգային մարդասիրական պարտակա-նութիւն մը կատարած կըլլանք, այլեւ ազգային շահերը ապա-հոված»[1]:

Ընկերության գործունեության ընթացքում Արփիարյա-նը Կ. Պոլսում հանդիպում է Գարեգին Սրվանձտյանցի հետ, որն իր օգտակար խորհուրդներով մեծապես օգնում է ընկե-րության ձեռնարկումներին: «Այդ օրերէն յետոյ Սրուանձ-տեանցի հետ բազմաթիւ խորհրդակցութիւններ կատարեցինք, - գրում էր Արփիարյանը, - ու իրեն ցույց տուած ուղղութեամբը յատակագիծ մը պատրաստեցինք»[2]: «Արարատեան ընկերու-թեան» գործունեությունը խրախուսում էր նաև Գր.Արծրունին, որը բարոյական օգնությունից բացի «Մշակի» միջոցով կազմա-կերպեց ընկերության համար կովկասահայության նվիրատ-վությունների հավաքման գործը:

Այդ նույն ժամանակաշրջանում արևմտահայերի շրջա-նում գործում էին նաև կրթական ուրիշ ընկերություններ՝ Դպ-րոցասիրաց Արևելյանը, Ուսումնասիրաց, Ասիական, Ազգան-վեր Հայուհյաց, Դպրոցասեր Տիկնանց և Կիլիկյան ընկերու-թյունները: Արևմտահայերի կրթության և զարգացման գործն ավելի ամուր հիմքերի վրա դնելու համար որոշվում է միավո-րել գործող ընկերությունները: Այս գաղափարը պաշտպանում է նաև Արծրունին և խոստանում, որ միավորվելու դեպքում աշխատելու է մեծացնել Կովկասի հայության նյութական օգ-նությունը: Առաջինը միավորվեցին երեք ընկերություններ՝ «Դպրոցասեր Արևելյանը», «Արարատյանը» և «Կիլիկյանը»: «Հիշեալ երեք ընկերութիւնք 1880 հունիսի 1 է սկսեալ ձուլուե-

---

[1] Նույն տեղում, էջ 243:

[2] Նույն տեղում, էջ 246:

ցան «Միացեալ ընկերութիւնք հայոց» անվան ներքո», - ասվում է ընկերութեան տեղեկագրում[1]: Ընկերության հովանավորներն էին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 4-րդը, Կ.Պոլսի հայոց պատրիարք, արքեպիսկոպոս Ներսես Վարժապետյանը: Ընկերության պատվավոր անդամների թվում էին Հովհ.Այվազովսկին, Գր.Արծրունին, անգլիական պառլամենտի անդամ Ջեյմս Բրայսը[2]:

«Միացեալ ընկերութեան» վարժարանները բաժանված էին 4 շրջանների՝ Վասպուրական, Տուրուբերան, Տավրոս, Կիլիկիա: Ընկերության ջանքերը իգական վարժարանների ստեղծման ուղղությամբ պսակվեցին հաջողությամբ: Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում բացվում են իգական դպրոցներ: «Ներկա տարվո մեջ Քղիի և Հաճնո վարժարանաց վրա ավելացավ նաև Մշո աղջկանց վարժարանը, որ առաջինն է այս քաղաքին մէջ», - ասված է ընկերության տեղեկագրում[3]: Ընկերությունը նվիրատվություններ էր ստանում ինչպես արևմտահայերից, այնպես էլ արևելահայերից: Արփիարյանի վկայությամբ ընկերության գանձարանը 1000 ոսկի դրամ ուներ:

Վանի «Կեդրոնական վարժարանին» վիճակված չէր սակայն երկար կյանք ունենալ: 1883թ. այն փակվեց Մինաս Չերազի և ընկերության մի շարք անդամների համաձայնությամբ: Բայց շատ չանցած Փորթուգալյանի կողմից կրկին վերաբացվեց և գործեց շուրջ երկու տարի: 1885թ. լրիվ զրկվելով ընկերության աջակցությունից Փորթուգալյանը ստիպված էր փակել դպրոցը և հեռանալ երկրից[4]: Չնայած վարժապետանոցի փակման համար Արփիարյանը մեղադրում էր Չերազին, բայց պետք է նշել,

---

[1] Տեղեկագիր Միացեալ ընկերութեանց հայոց, Կ. Պոլիս, 1880-1882, էջ Ա:

[2] Նույն տեղում:

[3] Տեղեկագիր Միացեալ..., 1882-1883, էջ Դ:

[4] Նույն տեղում, N18, էջ 275:

որ նրա մեղադրանքները չափազանցված էին։ Այս հարցում ավելի hակված ենք Ա. Ալպոյաճյանի տեսակետին, որի համաձայն վարժապետանոցի փակումը ուներ զուտ քաղաքական շարժառիթներ։ Ալպոյաճյանը գրում է, որ Փորթուգալյանը Վանում ծավալել էր հակաթուրքական ուժեղ գործունեություն և վարժապետանոցի վրա հրավիրել կառավարության ուշադրությունը։ Զգտելով խուսափել կառավարության հնարավոր բռնություններից՝ Ն.Վարժապետյանի գիտությամբ Չերազը փակում է այն, ձգտելով վտանգից փրկել կրթական մյուս հաստատությունները[1]։ Արփիարյանն ինքը, խոսելով վարժապետանոցի փակման մասին շեշտում էր, որ այդ ժամանակ «քաղաքական հանգամանքներն ալ սկսած էին աննպաստ ըլլալ»[2]։ Այնուամենայնիվ, իր կարճատև գոյության ընթացքում Վանի վարժապետանոցը մեծապես նպաստեց Վասպուրականի հայության մտավոր ու բարոյական առաջադիմությանը և ազգին տվեց ազատասեր երիտասարդների մի ողջ սերունդ, որոնցից Արփիարյանն առանձնացնում է Մկրտիչ Թերլեմեզյանին (Ավետիսյանին)։ Տարիներ անց «Նոր կեանքում» խոսելով այս մասին Արփիարյանը գրում էր. «Հայ ազգը պիտի իմանար թէ քանի տարի առաջ Հայաստան ու Պոլիս երիտասարդութիւն մը որպիսի մտածութիւններէ առաջնորդուած ազգին ապագան պատրաստել կուզէր։ Փորթուգալեան ազատութեան շունչ մը փչեց ամբողջ Վանի վրայ։ Առանց երբեք «Յեղափոխութիւն» բառն արտասանելու, ինչպէս կը հաւաստեն իր աշակերտները, պատրաստեց յեղափոխական սերունդ մը, որուն ազդեցութիւնը հզօր եղաւ Վասպուրականի մէջ»[3]։

---

[1] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 105։

[2] «Նոր կեանք» 1899, N18, էջ 275։

[3] Նույն տեղում։

Վանի վարժապետանոցի փակումը ծանր հետևանքներ ունեցավ ընկերության համար: Նրա հեղինակությունը նկատելիորեն խախտվեց Կովկասում: Չերազի տված բացատրությունները Արծրունուն չեն գոհացնում: Սկսում են պակասել դրամական նվիրատվությունները, մինչև որ «օր մ'ալ բոլորովին դադրեցան»:[1] Չերազը հրաժարական է տալիս ընկերության գործադիր ժողովի ատենապետի պաշտոնից: Դժբախտաբար կրթական ընկերություններին տխուր հեռանկար էր սպասում: Արփիարյանի վկայությամբ Ազգային ժողովում, Նուրյանի վարչության օրոք 1885-1987թթ. այդ ընկերությունները զրկվում են ինքնուրույնությունից և դրվում են պատրիարքարանի ենթակայության տակ: Դարի վերջին, ազգային պահպանողականների ճնշման պատճառով կրթական ընկերությունները դադարեցին գոյություն ունենալուց: Խոր ափսոսանքով ու ցավով էր Արփիարյանը գրում, որ «Օրմանեանի պատրիարքութեան և Տատեան Արթին փաշայի վարչապետութեան օրով այլևս գոյութիւն չունին ոչ Միացեալը, ոչ Ազգանուէր Հայուհեացը, Հայաստանի կրթութեան համար ոչ մէկ ընկերութիւն»[2]:

Սակայն Արփիար Արփիարյանի, Մկրտիչ Փորթուգալյանի և արևմտահայերի լուսավորության գործի մյուս նվիրյալների ջանքերն ապարդյուն չանցան: Նրանց անմիջական ազդեցության շնորհիվ աճեց նվիրյալների նոր սերունդ, որը ձեռնամուխ եղավ այդ գործի շարունակմանը:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 276:

* * *

19-րդ դարի 80-ական թթ. արևմտահայ իրականության մեջ լուսավորական-դեմոկրատական գաղափարները միաձուլվում էին ազգային-ազատագրական պայքարի խնդիրների հետ: Բեռլինի վեհաժողովից Խրիմյանի պատվիրակության խոր հիասթափությունը, Թուրքական կառավարության կողմից հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման փաստացի մերժումը արևմտահայ առաջավոր մտավորականությանն ավելի ու ավելի էին համոզում, որ ազգի փրկության համար առաջին հերթին հույսը պետք է դնել սեփական ուժերի վրա: Հնարավորություն չունենալով բացահայտորեն քարոզել ազատագրական գաղափարներ, այդ մտավորականներն իրենց առջև խնդիր դրեցին՝ ա) լուսավորության տարածման միջոցով ամրապնդել ժողովրդի հոգևոր զորությունը, բ) արթնացնել նրա ազգային ինքնագիտակցությունն ու վառ պահել նրա պատմական հիշողությունը, գ) պայքարել օտարամոլության դեմ, որպեսզի հայ գրողների առաջնահերթ խնդիրը դառնա հայ իրականության համակողմանի ուսումնասիրությունն ու նրա արտացոլումը իրենց ստեղծագործություններում:

Մտավորականության այդ շարժումը հայտնի է «արևմտահայ ութսունականներ» անունով: Ութսունականների գլխավոր ու հիմնական միտումն էր իրապաշտական մոտեցումը: Արփիար Արփիարյանը դարձավ այդ շարժման ոչ միայն ակտիվ մասնակիցն, այլև նրա գաղափարական առաջնորդը: Նոր ու առաջավոր նպատակադրումների իրականացման գործում հիրավի խոշոր նշանակություն ունեցավ 1884թ. հունվարի 2-ին «Արևելք» թերթի հրատարակությունը Կ. Պոլսում: Տարիներ անց անդրադառնալով «Արևելքի» հիմնադրմանն ու իր դերին Արփիարյանը գրում էր, որ թերթը հրատա-

բանկվում էր վեց անդամից բաղկացած վարչական խորհրդի հսկողութեան ներքո, որոնց շուրջն հավաքվեցին երիտասարդ գրողները[1]: Հ. Մարգարյանը նշում է, որ «Արևելքի» լույս ընծայման առաջին տարիներին այն դեռևս չուներ իր աշխատակիցների կայուն խումբը և նրա հիմնական դեմքը Արփիարյանն էր, որն իր պատմվածքներով, հրապարակախոսական ու գրական հոդվածներով ապահովում էր նրա մասսայականացումը[2]: Թերթում միմյանց կողքի տպագրվում էին Գր.Օտյանի, Կ.Ութուճյանի, Ռ.Պերպերյանի, Ա.Արփիարյանի և հասարակական տարբեր հոսանքների պատկանող այլ անձանց գրական, պատմական ու հրապարակախոսական հոդվածներն ու ստեղծագործությունները: Ա.Ալպոյաճյանը գրում էր, որ «Մինչև 1880-ական թվականները թրքահայերն ունեին տաղանդավոր գրողներ, բայց անոնք անհայտներ էին միայն, անկապ ու անհարիր գործունեութեամբ և առանց որևէ նոր շարժում հատկանշելու»[3]:

Գալով գրողների նոր սերնդին Ալպոյաճյանը կարևորում էր այն հանգամանքը, որ նոր սերունդը «հավաքական ուժ մըն էր և իր որոշ դրոշմը կդներ հայ կեանքին վրա»[4]:

Ռեալիստների գրական խումբը հրապարակ ելավ ժողովրդին ծառայելու ձգտումով: Արփիարյանն ու իր համախոհները ժամանակի առաջնահերթ խնդիր էին համարում գրականության հասարակական բովանդակությունը և «օգտակարության» գաղափարը: Իրենց հասարակական ըմբռնում-

---

[1] «Նոր կեանք», 1900, N 22, էջ 344:

[2] Մարգարյան Հ., Տիգրան Կամսարական, Եր., 1964, էջ 45:

[3] Ալպոյաճեան Ա., Գրիգոր Զոհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 72:

[4] Նույն տեղում:

ներն արմատավորելու նպատակամղումով նրանք ձգտում էին իրենց ետևից տանել երիտասարդությանը[1]:

«Արևելքում» Արփիարյանը գրում էր, որ գրականությունը պիտի կորով ու զորություն տա հասարակ ժողովրդին, իսկ դա կարող է տալ միայն այն գրականությունը, որն արտահայտում է այդ կյանքը[2]: Նա երիտասարդ գրողներին կոչ էր անում համարձակորեն մուտք գործել հասարակ ժողովրդի միջավայրը, ուսումնասիրել նրա ցավերը և իրենց ստեղծագործությունների նյութը վերցնել այնտեղից[3]: «Ներկայացնել իրական կեանքը և յեղափոխել մեր բարքերը», - սա էր ութսունական թվականներին Արփիար Արփիարյանի պահանջը երիտասարդությունից:

Նա քննադատության է ենթարկում Գ.Չիլինկիրյանի «Ուղևորութիւն ի Կ.Պոլիս» հուշագրությունը, որովհետև ըստ Արփիարյանի «Պարոն Չիլինկիրեանի կողմէ ոչ փիլիսոփայի մտքով, ոչ քաղաքագետի աչքով, ոչ տնտեսագետի խոհերով քննուած չեն Պոլսոյ հայերը»[4]: Այսինքն, գիրքը ամբողջության մեջ չի արտացոլում ժողովրդի կյանքը, որը Արփիարյանի համար առաջնային է: Նա իրավացիորեն գտնում էր, որ հայ մարդը, գրչի մարդը չպետք է բավարարվի միայն մարդկային զգացմունքները նկարագրելով ու գովերգելով, որովհետև «ուրիշ եղանակներ մեզի աւելի պիտոյ են»: Այս առումով նա վկայակոչում է Ալիշանին, Րաֆֆուն ու Պատկանյանին, որոնք «կրցած են ազգի սրտի բաբախմանցն բանաստեղծները լինել»[5]:

---

[1]Ասմարյան Լ., Հայ գրական քննադատությունը 19-րդ դարի 70-80-ական թթ., Եր., 1979, էջ 251:

[2] «Արևելք», Կ.Պոլիս, 1884, N 3:

[3] «Հայրենիք», 1892, N 261:

[4] «Արևելք», 1884, N 39:

[5] Նույն տեղում, N 170:

Ինչպես «Մշակում» այնպես էլ «Արևելքում» Արփիարյանի հրապարակախոսության բնորոշ հատկանիշներից մեկը թեմատիկայի բազմազանությունն էր: «Արևելքում» անդրադառնալով մամուլի դերին, Արփիարյանն այն դիտում է որպես հին նախապաշարումների տապալման, նոր ու առաջադիմական գաղափարների պրոպագանդման, լեզվի, գրականության տարածման, ժողովրդի կենսական կարիքների ուսումնասիրման հզոր միջոց: Այս առումով նա հատկապես բարձր է գնահատում «Մշակի» դերը[1]:

Արփիարյանը գտնում էր, որ կրթության գործը չպետք է գտնվի միայն հոգևորականների ձեռքում: Նա առաջնային էր համարում ոչ թե հոգևոր բարձր կոչում ունենալու, այլ ուսուցչի, մանկավարժ լինելու հանգամանքը: Օրինակ Էջմիածնի սինոդի կողմից արևմտահայ կրոնական գործիչներ Օրմանյանին, Ճերմակյանին Գևորգյան ճեմարանի տեսչությանը հանձնելու վերաբերյալ նա գրում էր. «Հարգելի եկեղեցականներն, որոնց անունները յիշատակեցինք, արդարև բանաստեղծի, քարոզչի և աստվածաբանի համբավ կվայելեն, բայց կճանաչվի՞ն իբր մանկավարժք»[2]:

Հակադրվելով հին ու արմատացած նախապաշարումներին՝ Արփիարյանը բարձրացրեց հայ կանանց ու աղջիկների կրթության անհրաժեշտության խնդիրը[3]:

Ուսուցիչների կողմից առաջադրված ծրագրային դրույթներին համապատասխան 1884-86թթ. Արփիարյանը գրում է մի շարք նովելներ, որոնք հրատարակվում են «Արևելքում»՝ «Կյանքի պատկերներ» ընդհանուր վերնագրով: Նրա

---

[1] «Արևելք», 1884, N 129:

[2] Նույն տեղում, N 176:

[3] Նույն տեղում, N 166:

գրական ստեղծագործությունները դառնում են արևմտահայ ռեալիստական արձակի արժեքավոր նմուշներ: Արփիարյանին հատկապես մեծ համբավ բերեցին «Արևելքում» լույս տեսնող «Օրվան կեանքը» խորագրով ակնարկները, որոնք կոչվում էին քրոնիկներ: Գրական բարձր ճաշակով գրված Արփիարյանի քրոնիկները արտացոլում էին 19-րդ դարի 80-ական թվականների արևմտահայ ազգային-քաղաքական կյանքը, հայ մեծատուների վարքն ու բարքը[1]:

Արփիարյանը հստակ գիտակցում էր, որ ժողովրդի ստրկական հնազանդությունը երբեք հաջողության չի հասցնի: Նա ձգտում էր արթնացնել ժողովրդի հայրենասիրական ոգին: Այս մտայնությամբ առաջնորդվելով՝ Արփիարյանը սկսում է «Արևելքում» հրատարակել Րաֆֆու ստեղծագործությունները: Արտատպելով «Խամսայի մելիքությունները»՝ հրապարակախոսը նպատակ էր հետապնդում արևմտահայության մեջ տարածել հայոց անկախության և ազատագրության գաղափարները: Եվ դա այնպիսի մի շրջանում, երբ դպրոցներում արգելված էր ազգային պատմության ուսուցումը: Մյուս կողմից անցյալի պատմության վերհանումով հրապարակախոսը միտում ուներ ցույց տալ, որ անցյալում հայ ժողովուրդը ունեցել է պետականություն: Արփիարյանի նպատակներից մեկն էլ այն էր, որպեսզի անուղղակի կերպով ցույց տա, որ ազգի ազատագրական պայքարի հաջողությունը սերտորեն շաղկապված է անցյալի պատմության դասերի ուսումնասիրման ու գնահատման հետ: Նա իրավացիորեն նշում էր, որ պատմության դասերը չպետք է մոռանալ, դասեր, որոնք ուղենիշ են դառնալու ճիշտ ազգային քաղաքականության կառուցման գործում[2]:

---

[1] Հայ նոր գրականության պատմություն, Եր., 1979, հտ. 4, էջ 378:

[2] «Արևելք», 1885, N 305:

Այս ամենի հետ մեկտեղ Արփիար Արփիարյանն աշխատում էր առաջ տանել և արևմտահայերի մեջ արմատավորել հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը: Նա շեշտում էր այն հանգամանքը, որ իր ազգային-ազատագրական պայքարի ընթացքում հայ ժողովուրդը միշտ ձգտել է ստանալ «ռուսաց հզօր կայսեր» հովանավորությունը[1]:

Արփիար Արփիարյանի ողջ գործունեության ընթացքում ազգի պահպանության խնդիրը մշտապես գտնվում էր նրա ուշադրության կենտրոնում: Այս մտայնությամբ առաջնորդվելով՝ նա նշում էր, որ հատկապես փոքր ժողովուրդները միշտ պետք է «ամուր բռնեն ազգութեան դրոշակը»[2]: Եվ դա Արփիարյանը չէր պատկերացնում առանց ջերմ, նվիրական սիրո զգացմունքի հանդեպ սեփական ժողովուրդը: Պատահական չէ, որ խոսելով ազգային մոլեռանդության երևույթի մասին, նա գրում էր. «Եվ սակայն եթե աշխարհիս վրա կա մոլեռանդութիւն մը, զոր պետք է պաշտել, այդ ազգութեան սերն է, որ օտարոց համար ազգային մոլեռանդութիւն կկոչվի»[3]:

«Արևելքի» ծրագրային նպատակներից մեկն էլ արևելահայության հետ կապերի ամրապնդումն էր: Այդ նպատակով թերթում տպագրվում էին Թիֆլիսից, Պետերբուրգից ստացվող թղթակցություններ: 1884թ. ապրիլին Արփիարյանը «Արևելքի» վարչական խորհրդի կողմից գործուղվում է Կովկաս՝ կաթողիկոսական ընտրությունների ընթացքին ծանոթանալու և այն լուսաբանելու նպատակով: Բացի դրանից նա պետք է ծանոթանար նաև արևելահայերի տրամադրություններին, մոտիկից շփվեր արևմտահայերի հարցով զբաղվող անձնավորություն-

[1] Նույն տեղում, 1884, N 239:

[2] Նույն տեղում, N 219:

[3] Նույն տեղում:

ների հետ. «Կովկաս գնալու մէջ մեր խմբագրութեան փափագներն մին էր, որ ի մօտոյ լավ տեղեկութիւններ ստանամ ոչ միայն ռուսահայոց գործերու մասին, այլ նաև գիտնամ թե ի՞նչ են իրեն համոզումներն մեր խնդրո մասին, նոցա կարծիքն Թիւրքիոյ հայոց զանազան անձնավորութեանց վրա», - գրում էր Արփիարյանը[1]:

«Մշակի» թղթակցություններով արդեն ճանաչված հրապարակախոսը ջերմ ընդունելության է արժանանում Կովկասում: Նրա պատվին մեծ ճաշկերույթներ են կազմակերպում Երևանում ու Թիֆլիսում: Շատ հուզիչ է «Մշակի» խմբագրատան հետ նրա առաջին ծանոթության նկարագրությունները: Տարիներ շարունակ Արփիարյանը աշխատակցել էր թերթին, դարձել «Մշակի» Հայկակը, իսկ հիմա 7 տարի անց, հրապարակախոսը մուտք է գործում նրա խմբագրատուն:

Գնահատելով «Մշակի» դերը հայոց լեզվի տարածման, ժողովրդի կյանքի ու կենցաղի ուսումնասիրման, առաջադիմական գաղափարների քարոզման գործում, Արփիարյանը ընդգծում էր նաև նրա աննախընթաց նշանակությունը հայության երկու հատվածների մերձեցման գործում: «Նորա միջոցով զիրար ճանչցան Թիւրքիո և Ռուսիո հայք», - գրում էր Արփիարյանը «Արևելքում»[2]: Արփիարյանը մեծ գործ կատարեց «Մշակի» գաղափարներն արևմտահայերի շրջանում տարածելու համար: «Արևելքում» Արփիարյանն իր շուրջը համախմբեց երիտասարդ գրողներ Հր. Ասատուրին, Տ. Կամսարականին, Մ.Կյուրճյանին, Զոհրապին, Բաշալյանին և կազմելով ութսունականների գրական խմբակը զարգացման նոր մակարդակի բարձրացրեց արևմտահայ գրականությունը: Նա

---

[1] «Արևելք», 1884, N 139:

[2] Նույն տեղում, 1886, N 128:

անզնահատելի դեր կատարեց հատկապես Զոհրապի տաղանդը երևան հանելու, նրան ուղղություն ցույց տալու գործում: «Երիտասարդ Զոհրապը Արփիար» քաջալերուած, կերպով մը գերուած, նվաճուած անոր ծրագիրեն և կկրեր անուղղակի անոր ազդեցութիւնը, ինքն ալ ձգտելով մշակել այն գրականութիւնը, զոր Արփիար կուզեր զարգացնել», - գրում էր Զոհրապի կյանքի ու գործի ուսումնասիրող Արշակ Ալպոյաճյանը[1]:

Վերհիշելով «Արևելքի» մասին Հր.Ասատուրը գրում էր, որ թերթում լույս էին տեսնում «ժողովրդական բարքերու ուսումնասիրութիւններ, միջավայրեն ներշնչված և ազգային պետքերուն ըմբռնումով գրված հոդվածներ, որոնք առողջ ու նուրբ գրականութեան մը նախախայրիքը կբերեին հոն»[2]:

«Արևելքը» բարձր գնահատականի արժանացավ ժամանակի առաջավոր մտավորականության կողմից: Գր. Արծրունին իր «Պոլսի «Արևելք» նոր լրագիրը» հոդվածում արժևորելով «Արևելքի» դերը նշում էր. «իր կենդանի բովանդակութեամբ «Արևելքը» նորութիւն է Կ.Պոլսի հայոց լրագրութեան մեջ»[3]:

Սակայն «Արևելքի» վարչական խորհրդի անդամների միջև գոյություն ունեին խոր տարաձայնություններ: Պատճառն այն էր, որ վարչական խորհրդի անդամները ունեին տարբեր հայացքներ: Արփիարյանի համարձակ ու քննադատական հոդվածներն՝ ուղղված պահպանողական գաղափարախոսության դեմ, հարուցում էին ազգային պահպանողական ուժերի թշնամանքը, որոնք ձգտում էին հեռացնել Արփիարյանին «Արևելքի» խմբագրությունից: Միաժամանակ վարչական

---

[1] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 65:

[2] Ասատուր Հրանտ, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 47:

[3] «Մշակ», 1884, N 8:

խորհրդի անդամներ Կարապետ Սվաճյանի, Բուզանդ Քեչյանի հաշտվողական ընթացքը չէր ընդունվում Արփիարյանի կողմից։ Որպեսզի բացահայտ խզում տեղի չունենա ընդունվում է փոխհամաձայնեցված որոշում՝ Արփիարյանին է հանձնվում «Մասիսի» խմբագրությունը[1]։

Արփիարյանը նոր թափով ձեռնամուխ է լինում ուսուցանականների առաջադիմական շարժման, նրա ծրագրային նպատակադրումների զարգացմանը։ Հանդեսում հրատարակվում են Գրիգոր Զոհրապի, Լևոն Բաշալյանի, Տիգրան Կամսարականի և առաջավոր ուրիշ գրողների ստեղծագործությունները։ Բարձրացված հարցերի սրությամբ ու արդիականությամբ հատկապես աչքի էին ընկնում Արփիարյանի «Օրվան կեանքը» ընդհանուր վերնագրով քրոնիկները և «Ազգային տեսութիւնները»։

Արփիարյանի ու նրա շուրջը հավաքված գրողների առաջնահերթ նպատակներից մեկն էլ աշխարհաբար լեզվի տարածումն էր։ Ընդհանրապես, ազգային կրթության դժվարին խնդրի կարևոր կողմերից մեկը գրաբարի ու աշխարհաբարի փոխհարաբերության հարցն էր։ Նա պայքարում էր պահպանողականների դեմ՝ հիմնվելով այն մշտնջենական ճշմարտության վրա, որ կյանքը հարատև գոյափոխություն է, ուր և «հինացած ոչ մեկ բան կդիմանա ժամանակին առջև, ոչ մարդը, ոչ լեզուն, ոչ գաղափարը»[2]։ Նա ցույց է տալիս, որ իր բարդության պատճառով գրաբարը արգելակում էր մատաղ սերնդի կրթության զարգացմանը։ Բայց Արփիարյանը, ընդհանրապես դեմ չէր գրաբարին և գտնում էր, որ նրա դասավանդումը

---

[1] 1884թ. հունիսին «Մասիս» թերթի արտոնատեր Կ. Ութուճյանը թերթի հրատարակության իրավունքը վաճառում է «Արևելքի» վարչական խորհրդին, որն էլ այն վերածում է գրական շաբաթաթերթի։

[2] «Հայրենիք» 1894, N 938։

պետք է պահպանվի բարձրագույն դպրոցներում[1]: Ըստ Արփիարյանի «գրողները պետք է նկատեն գրաբարն իբր հին կյանքի գանձարան մը, ուրկէ կրնան առնել շատ մը նիւթեր, զորս յղկելով ու պատշաճեցնելով կմտցնեն նոր լեզուին մեջ: Գրաբարն նոր լեզուի շինութեան մեջ աջակից մը պետք է ըլլա ժողովրդին խոսացած լեզուին»[2]: Գրաբարի ու աշխարհաբարի հարցը Արփիարյանի համար սոսկ լեզվական խնդիր չէր: Աշխարհաբարի տարածման մեջ նա հեռուն գնացող նպատակներ էր տեսնում: Արփիարյանը խորապես համոզված էր, որ լեզվի մատչելիությունը ժողովրդին կգրավի դեպի հայ մատենագրությունը և հեռու կպահի օտարամոլությունից: Նա գտնում էր, որ ազգային մատենագրության գոհարները մատչելի լեզվով ժողովրդի մեջ տարածելը լավագույն միջոցներից մեկն է արթնացնելու համար նրա ինքնագիտակցությունն ու ազգային արժանապատվությունը[3]:

Օսմանյան տիրապետողներն ահով ու դժկամությամբ էին հետևում հպատակ քրիստոնյա ժողովրդների, հատկապես հայերի մտավոր վերելքին և փորձում էին արգելել այն: «Թրքաց շատ դժուար է մտաւոր յառաջադիմութիւնը, - գրում էր Արփիարյանը, - ուստի մեզ արգելք լինելն իրենց շահաւոր կը համարին»[4]: Հայրենասեր գործիչը հպարտությամբ և ոգևորությամբ է շեշտում հայ մանուկների ու երիտասարդների ընդունակությունները, շնորքն ու օժտվածությունը, հակումը դեպի կրթությունը, մյուս կողմից ցավով ու ափսոսանքով է խոսում նրանց ապագայի մասին գտնելով, որ ինչպիսի փայլուն կրթություն էլ որ նրանք ստանան միևնույնն է, կառավարու-

---

[1] «Մասիս», 1890, N 3943:

[2] «Հայրենիք», 1892, N 261:

[3] «Մասիս», 1890, N 3937:

[4] «Մշակ», 1880, N 51:

թյան վարած հայահալած քաղաքականության հետևանքով մեծ մասամբ անգործ են մնալու: «Եւ թե դուք հոս ըլլայիք ձեր սրտէն ալ արիւն չը պիտի երթար տեսնելով այդ երիտասարդութիւնը, որ կը խամրի, կը թոռմի, - գրում էր Արփիարյանը: - Եվ ի՞նչ երիտասարդութիւն: Մենք կը կարծենք թե չկայ տեղ մը, նոյնիսկ Շուշի, որ առաջ բերէ բնականէն ընդունակ այնքան տղաներ որչափ Պոլիս: Մտիր հոս ոևէ դպրոց. տես աշակերտները ամէնուն դեմքին վրայ շնորհք մը կայ, երեսնուն վրայ կը փայլի ընդունակութիւնը: Խիստ սակաւաթիւ են անընդունակ ծնած պոլսեցի տղաներ: Պոլսեցի հայ տղան յաղթանակ տարած է ամեն օտար դպրոցներու մէջ»[1]: 1868թ. Կ. Պոլսում հիմնադրված լիցեյի իրավաբանական բաժնում, որտեղ դասավանդումը կատարվում էր ֆրանսերեն լեզվով, 1875թ. 52 ուսանողից 45-ը հայեր էին: Այստեղ հայերի շարունակական մեծամասնություն կազմելը պատճառ դարձավ, որպեսզի 1881թ. սուլթան Աբդուլ Համիդի հրամանով այն փակվի: Բժշկական ուսումնարանին ուղղակի ցուցում էր արված հայեր չընդունել, որովհետև մինչ այդ, բոլոր սովորողները հայեր էին[2]:

Խոչընդոտելով հայերի մտավոր առաջադիմությանը՝ թուրքերը միջամտում էին նաև հայկական դպրոցների գործերին, ցանկանալով խափանել ազգային գաղափարախոսության, ազգային ոգու ցանկացած դրսևորումը: Արփիարյանը գրում է, որ այդ նպատակի գործադրման համար թուրքերն աշխատում էին, որպեսզի «Ռուսիայէ եկած դասատուներ եւ դասագրքեր մեր դպրոցներու մէջ չը գործածվին»[3]: «Դուռը այժմ կուզէ, որ բոլորովին իր ձեռքի մէջ առնէ մեր դաստիարակու-

[1] Նույն տեղում, 1882, N 154:
[2] Հայ ժողովրդի պատմություն, հատոր 6, Եր., 1981, էջ 131:
[3] «Մշակ» 1883, N 30:

թեան գործը, - զայրույթով գրում է Արփիարյանը: - Ինչպէս՝ որ մենք բոլոր մեր ներքին գործերը մենք տնօրինելու ազատ ենք, ասանք ալ մեր դպրոցներու ոչ-ոք խառնուելու իրավունք չունի»[1]: Արփիարյանը գտնում էր, որ ազգովի պետք է դեմ կանգնել թուրքերի այն պահանջին, թե հայկական դպրոցների ծրագրերը, ուսուցիչների վկայագրերը և դասագրքերը պետք է ներկայացնել կառավարության քննությանը: Նրա կարծիքով թուրքական տիրապետության տակ գտնվող ժողովուրդների համախմբման համար կարևոր էր քուրդ, եզդի և ասորի ժողովուրդների ընդգրկումը «Միացյալ ընկերության» ծավալած կրթության տարածման գործի մեջ: Արփիարյանը գտնում էր, որ կրթության գործը պետք է առաջ տարվի ընդգծված ազգային ոգով: Եվ պատահական չէ, որ 1881թ. Վանի վարժապետանոցի փակումը մեծ վիշտ է պատճառում նրան: Արփիարյանը տեսնում էր, որ այդ հանգամանքը ազատ գործելու հնարավորություն է տալիս օտարերկրյա կաթոլիկ միսիոներներին:

«Ճիզուիթներն արդեն Վան հասած են, - գրում է Արփիարյանը: - Մեծ վարժարան մը բանալու կաշխատին և մեր վարժապետանոցի փակմամբը իրենց գործը շատ կդիւրանայ: Արդէն ամերիկացի միսիոնարք ալ երկար ատեն է Վան են և անոնք ալ կարողութեան տեր մարդեր են: Ներելի՞ է մեզ անտարբեր կենալ և թողուլ, որ Հայաստանի սրտին մէջ, օտարազգիները կրթեն մեր ապագայ սերունդը. ինչ բարձր կրթութիւն ալ տան, անշուշտ ազգային ոգով չէ, և մի՞թէ մենք կարող չենք ուժերնիս միացնելով այդ կրթութիւնը մենք մեր ձեռքովը պատրաստենք և չէ թէ թողունք օտարներուն»[2]:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, 1881, N 205:

Կարևորելով ազգային կրթության զարգացումը Արփիարյանը միաժամանակ տեսնում էր, որ այդ գործում կան լուրջ թերություններ, և որ անհրաժեշտ է կրթության համակարգում կատարել բարեփոխումներ:

Նա գտնում էր, որ ոչ Պոլսի և ոչ էլ գավառների հայկական դպրոցների կրթության եղանակները չեն համապատասխանում ժամանակի պահանջներին: Խոսելով դպրոցներում հայ մանուկների կրոնական դաստիարակության մասին, Արփիարյանը ցույց էր տալիս նրա ծայրահեղությունները, կյանքում նրա անպետքությունը. «Ու երբեմն, երբ կհիշեմ այն բոլոր ընկերակիցներս, որոնց հետ Օրթագեղի վարժարանին մէջ ենթարկվեցանք կրոնական այդ դաստիարակութեան, չեմ տեսներ անոնցմէ գեթ փոքրամասնութիւն մը, որ ինքնաբերաբար կատարէ այն պարտականութիւնները, զոր դպրոցը սորվեցուց, չեմ հանդիպիր մարդերու, որոնք իրենց սորուած վարդապետութիւններէն մեծ օգուտ մը քաղած ըլլան իրենց կեանքին մէջ»[1]: Նա գտնում էր, որ կրոնական բազմաթիվ գրքեր պետք է իրենց տեղը զիջեն դասագրքերին: «Եվ արդարև ի՞նչ կուզեք, որ հասկընան փոքրիկ տղաքները Նարեկէն ու գրաբար աղոթքներէն. ինչպե՞ս կուզեք, որ «եկեղեցիի խորհուրդները» անոնց մտքին մէջ կարենան տեղ ընել»[2]: Այս առումով Արփիարյանը դառն հիշողություններ ուներ Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանի ուսումնառության տարիներից:

Նա մերժում էր հայկական դպրոցներում գոյություն ունեցող տեր-թոդիկյան մեթոդը և մեղադրում հին սերնդի հայ վարժապետներին, որոնք մանկավարժության գլխավոր միջոց էին դարձրել գավազանը, իսկ սկզբունքը՝ «Որ ոչ լուիցէ ուն-

---

[1] «Հայրենիք», 1894, N 917:

[2] Նույն տեղում:

կամբք, յուիցէ թիկամբք»: Վերհիշելով իր ուսումնառության տարիները Թարգմանչաց վարժարանում Արփիարյանը սարսուռով է հիշում Ավետիս վարժապետին, որը «իր հարիւր տարեկան հասկին մէջ անճառելի հաճոյք կը զգար խեղճ տղաքները վայրենաբար խոշտանգելով»[1]:

Կրթության գործում Արփիարյանը մեծ տեղ էր հատկացնում այն մանկավարժներին, որոնք հայրենասեր են, իրենց գործին նվիրված և կարող են ազգային ոգով դաստիարակել մատաղ սերնդին: Նա մի առանձին սիրով ու ակնածանքով է խոսում իր թվաբանության ուսուցիչ Գաբրիել Ներշապուհի մասին. «Թեպետ Ներշապուհ պաշտոնապես թվաբանութեան վարժապետ էր, բայց անպաշտոն կերպով ալ քարոզիչ մըն էր: Ներշապուհ կուգար ժամ առաջ, իմաստասիրութիւն, պատմութիւն, տնտեսագիտութիւն, ժողովրդական վարդապետութիւններ կը քարոզեր...»[2]:

Նորի, առաջադիմականի մասին արփիարյանական պատկերացումը առաջին հերթին ազգային գաղափարախոսությամբ առաջնորդվելն էր և նվիրվածությունը ազգային իղձերին: Այս համոզմունքով էր նա գրում. «Նորութիւ՞ն մը Ներշապուհը, պիտի հարցնեն զարմանքով շատերը, նորութիւ՞ն մը երեսուն տարին ի վեր աշխատող ուսուցիչ մը: - Բայց կը պատասխանեմ՝ գաղափարի տէր մարդը, իտեականին ծառայողը միշտ նորութիւն մըն է ամէն տեղ և ամէն ատէն»[3]:

Մերժելով հետամնացն ու իր դարն ապրածը, Արփիարյանը մատնացույց է անում Եվրոպական առաջավոր կրթական համակարգը: Ազգային կրթության զարգացման գործում

---

[1] Նույն տեղում, 1891, N 166:

[2] «Հայրենիք», 1892, N 231:

[3] Նույն տեղում:

նա կարևորում է հետևյալ պահերը՝ գավառահայության կրթական գործի բարելավում, օտար լեզուների ուսուցում, շնորհալի հայ երիտասարդներին Եվրոպա գործուղում՝ ուսում ստանալու և վերադառնալու պայմանով:

Լինելով ազգային կրթության ու հայեցի դաստիարակության ջատագով՝ այնուամենայնիվ, այդ համոզմունքը Արփիարյանի մոտ դոգմատիկ բնույթ չի կրում, որովհետև ըստ նրա կարևորը ոչ թե ձևն է, այլ՝ բովանդակությունը: «Չե՞ն ներկայանար այնպիսի պարագաներ, հորս լավագույն է տղաքները խրկել օտար դպրոց քան թե ազգային, - գրում էր Արփիարյանը: - Երբ միևնույն թաղին մէջ երկու դպրոց կան, մին մերինը, իսկ մյուսը օտարինը, ու մերինն անկարգ ու անկանոն ըլլայ և օտարինը բարեկարգ վիճակի մէջ գտնուի, ինչ պետք է ընել: Անկարգ ու անկանոն դպրոց մը ավելի վնասակար չէ՞ քան այլադաւան, բայց բարեկարգ դպրոց մը»[1]: Արփիարյանը զանազանում էր սակայն օտար դպրոցների երկու տեսակ՝ կրոնոր և աշխարհիկ: Եթե աշխարհիկ դպրոցների նկատմամբ նրա վերաբերմունքը դրական էր, ապա հակառակն էր կրոնոր դպրոցների նկատմամբ: «Ճիզուիթներու և ֆրերներու դպրոցներէն պետք է խորշիլ, - գրում էր Արփիարյանը, - վասնզի անոնց դպրոցները ոչ թե մեր տղաքը կրնան կաթոլիկ ընել կամ պաղեցնել իրենց ազգէն, այլ ավելի գեշը կրնեն ուղեղները կթմրեցնէն»[2]:

Արփիարյանը խորապես համոզված էր, որ ազգային ակունքներին հավատարիմ մնալը լեզվի ու գրականության զարգացման գլխավոր պայմանն է: Բարձր գնահատելով Թլկատինցու «Գիւղական նամակները»՝ նա գրում էր. «Գիւղա-

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, 1891, N 40:

կան նամակները» և ուրիշ այս օրինակ քանի մը գրվածքներ բավական են ջախջախելու համար տգիտութեան, եսականութեան վրա հիմնուած այն իմաստականութիւնը, թէ լեզուն հին գրքերուն մէջ փտրելու, գրականութիւնը օտարազգիներու կեանքէն առնելու է, թէ նոր բան չունինք, ուստի ոչ տոհմային մատենագրութիւն, ոչ իմաստասիրութիւն, ոչ բանաստեղծութիւն կրնանք ունենալ»[1]:

Կարևորելով ազգային կրթության քարոզումը, Արփիարյանը ցույց էր տալիս, որ արևմտահայ ոչ բոլոր թերթերն էին հետևում այս նպատակներին, իսկ որոշ խմբագիրներ մամուլն օգտագործում էին սոսկ շահադիտական նպատակների համար: «Պոլսոյ մէջ հայ խմբագիրը ըլլալու կենսական պայմանը փոքր ինչ դաստիարակութիւն ունենալը չէ, - գրում էր Արփիարյանը, - հայ թերթը խանութ մ'է, որուն տէրը զայն բացած է լոկ ապրելու համար, ոչ թէ բարոյական ունէ նպատակ մ'ալ միասին ունենալով»[2]:

Նա քննադատում, միաժամանակ ողջախոհություն էր կոչում օտարամոլությամբ տարված հայ մտավորականներին և հատկապես երիտասարդներին: Արփիարյանը որպես ոգեշնչման աղբյուր վկայակոչում էր հայոց պատմության նշանավոր անհատներին. «Մեզնից ի՞նչ փոյթ, որ Վիկտոր Հիւկոն խիստ մեծ մարդ է Ֆրանսիայի համար: Ի՞նչ ընենք, որ Կարիպալտին Իտալիան ազատեց, իսկ Ժան Դ'Արկ Ֆրանսայի պարծանքն է: Մի՞թէ հայեր են նոքա, որ ամէն տողի մէջ անոնց վրայ կը խօսենք, անոնց անուններով կը հիանանք: ...Մի՞թէ ցաւ կը լինի ձեր լեզուին, երբ դնէք Կարիպալտիի անուան մօտ Վարդանի, Ռուբէնի, Թաթուլի, Վահանի գործերն ալ: ...Գուցէ

[1] «Հայրենիք», 1891, N 40:
[2] «Մշակ», 1883, N 15:

դուք կսէք թե անոնց անունները և գործերը կարող են բարի նախանձ ներշնչել մերայնոց։ Ես կարող էի համաձայնել այդ գաղափարի հետ այն ժամանակ, երբ հայերս ունենայինք ազգային ինքնաճանաչութիւն, երբ իւրաքանչիւր ոք մեզմէ իմանար իր ազգի պատմութիւնը և մեծ մարդերը, այդ ժամանակ խոսել Կարիպալտիներու և Հիւկոներու անունով թերևս բարի նախանձ յառաջ բերէր»[1]։

Լինելով առաջադիմության ջերմ պաշտպան՝ Արփիար Արփիարյանը խարազանում էր հետամնաց նահապետական շատ բարքեր։ Նա հանդես եկավ մանավանդ գավառահայ կնոջ ծանր, ստրկական վիճակի դեմ։ Արփիարյանը ցույց էր տալիս, որ հայ կնոջ արժանապատվության ոտնահարումը հասարակության բացասական երևույթներից մեկն էր։

Խոսելով հին, իրենց դարն ապրած հետամնաց բարքերի կործանիչ ազդեցության մասին՝ Արփիարյանը գրում էր. «Չարաչար աշխատանքը, որ ապրելու կենսական պայմանն է նամանավանդ, գավառացիին համար, կրնայ վնասաբէր ըլլար առողջութեան, սակայն բարոյական անկում առաջ չի բերեր. այդ նահապետական բարքերն են, որ կը ստեղծեն ստորացման միջավայր մը ուսկից կը բխի բարոյական տկարութիւնը։ Անհատին սրտին մէջ կխեղդէն արժանապատվութեան զգացումը, որ մարդու հզօրագոյն զորաւիգն է անկումին դէմ»[2]։ Արփիարյանը գտնում էր, որ կինը չպետք է մեկուսացած մնա հասարակական կյանքի եռուզեռից։ Դրա նախապայմաններից մեկը նա համարում է կանանց ու աղջիկների կրթության գործի զարգացումը, որին ինքը մեծ ուշադրություն էր դարձնում։ Արփիարյանին ոգևորում էր հատկապես Կ. Պոլսի «Անձնուէր

---

[1] Նույն տեղում, 1882, N 163։

[2] «Հայրենիք», 1894, N 759։

հայուհեաց ընկերութեան» և «Միացեալ ընկերութեան» բացած իգական վարժարանների գործունեությունը:

Արփիարյանը պայքարում էր ազգի բարոյական նկարագրի անաղարտության համար և այս առումով նա մեծ տեղ էր տալիս ժողովրդի բարեկրթության խնդրին: «Բարեկրթութեան պակասը մեզի շատ չարիքներ կը պատճառէ, - գրում է նա, - կխանգարէ մեր ընտանեկան կեանքը, կվնասէ մեր հանրային կեանքին, թոյլ չը տար, որ իրարու բարեկամանանք: Առաջին տարիներէն սկսեալ ապականութեան կը վարժվին մեր մանուկները և մեր կիներն ալ իրենք - զիրենք չը հարգելը և հարգել չը տալը շատ բնական բան մը կը համարին»[1]: Նա առաջ էր քաշում այն միտքը, որ ազգային վարչական գործերում պետք է մեծ տեղ տալ երիտասարդությանը, հանդես էր գալիս այն հին նախապաշարման դեմ, թե միայն հարուստ ու տարիքն առած անձինք կարող են և պետք է զբաղեցնեն առաջնակարգ տեղերը, ազգային պաշտոնները: Նա գրում էր. «Բայց պետք է ընդունինք թէ երիտասարդները բնականաբար ավելի զարգացած են, ավելի գիտակ են իրենց ժամանակի պահանջներուն և իրենց եռանդը մարած չէ»[2]:

Արևմտահայության ազգային իդեալների իրականացման ճանապարհին Արփիարյանն առանձնահատուկ դեր էր վերապահում մամուլին: Ըստ նրա մամուլի նպատակը պիտի լինի «զարգացնել հանրութեան միտքը, լավ ու օգտակար գաղափարներ յաղթանակել տալու միջնորդ մը ըլլալ»[3]: Արևմտահայ մամուլը պետք է զերծ մնա «աստվածաբանական խնդիրներով զբաղուելուց»: Նրա առաջնահերթ խնդիրը պետք է լինի

[1] Նույն տեղում, 1892, N 298:

[2] Նույն տեղում, 1893, N 446:

[3] Նույն տեղում:

արևմտահայ կյանքի համակողմանի լուսաբանումը: «Անոր համար է, որ մամուլը ուզեցինք խորհող ու քննող ըլլալ - անոր համար է, որ նոր գրողները կը խորշին թարգմանութենէ և կուզին գրել միայն մեր կեանքին վրայ»[1]: Դառնալով խմբագրի դերին, նա գրում էր, որ խմբագիրը իրավունք չունի համոզմունքի զոհողություն կատարել: Արփիարյանի համար համոզմունքը մնում էր առաջնային, որը չէր կարելի զիջել բարեկամությանը, ընկերությանը, առավել ևս անձնական շահին[2]: Այս չափանիշով էր նա ապրում և աշխատում, այս չափանիշով էր խմբագրում արևմտահայ մամուլի այնպիսի առաջադիմական օրգաններ, ինչպիսիք էին «Մասիսն» ու «Հայրենիքը»:

Նա դատապարտում էր այն խմբագիրներին, որոնք ինչ-ինչ պայմանների դիմաց կարող էին հրաժարվել իրենց համոզմունքներից. «Այդպիսի խմբագիր մը բնավ չտարբերիր այն խմբագիրներեն, ույք իրենց գրիչն ի վաճառ կհանեն»[3]: Արփիարյանը ցույց էր տալիս, որ «Մասիսի» ու «Հայրենիքի» բռնած շիտակ ուղղությունը շատ և շատ թշնամիներ հանեց իրենց դեմ, նույնիսկ մտերիմ անձնավորությունների հեռացման պատճառ դարձավ, այդուհանդերձ, նա երբեք չի զղջում իր համոզմունքների անխախտությունը պահելու համար[4]:

Իր ողջ կյանքի ու գործունեության ընթացքում Արփիար Արփիարյանի ուշադրության կենտրոնում էին գտնվում լուսավորության ու առողջապահության հարցերը: Կյանքի վերջին տարիներին նա այսպիսի հարցեր էր բարձրացնում Կահիրեի «Լուսաբեր» թերթում: Այստեղ նա պարբերաբար արծարծում էր Եգիպտահայ ուսուցիչների նյութական ապահովության

[1] «Հայրենիք», 1892, N 272:

[2] Նույն տեղում, N 191:

[3] «Մասիս», 1887, N 3866:

[4] «Հայրենիք», 1892, N 273:

հարցը, իրավացիորեն գտնելով, որ «կրթական մարմնին շնորհքով ամսական տալու, ուսուցիչը մարդու տեղ դնելու» գաղափարի գործադրությունը «վաղուան մեծ ազգի, նոր հայի» կերտման գլխավոր պայմաններից մեկն է[1]:

Արփիարյանին ոգևորում էր Հայկական ընդհանուր բարեգործական միության հիմնադրումը, որն ընդարձակ ազգանպաստ գործունեության ծրագիր էր մշակել: Նա կոչ էր անում եգիպտահայությանը սատար կանգնել միությանը և օժանդակել նյութապես ու բարոյապես[2]:

Խոսելով Կահիրեում հիմնադրված «Վասպուրականի դպրոցասիրաց ընկերության մասին, որի նպատակն էր Արևմտյան Հայաստանում կրթության գործին աջակցելը, Արփիարյանը համոզված էր, որ «հայոցմե տրված ամսական չնչին երկու դուրուշը անդին ամբողջ ժողովուրդ մը կ՛ոգևորե, կքաջալերե, կխանդավառե և անոր ինքնապահպանումի կորովը կզորացնե»[3]: Կրթությամբ զորացած այդ կորովը հրապարակախոսն իրավացիորեն համարում էր ազգի պահպանման հզոր ու ապահով երաշխիքներից մեկը»[4]:

Մեծ էր ժողովրդին օգնելու Արփիարյանի ձգտումը: Հասարակական-քաղաքական, մշակութային հարցերից բացի նրան մտահոգում էր նաև ժողովրդի առողջության խնդիրը: Այդ պատճառով «Հայրենիքում» նա հանդես էր գալիս «Առողջապահական դասեր» շարքով, ուր բազմաթիվ խոր-

---

[1] «Լուսաբեր», 1905, N 134:

[2] Նույն տեղում, 1906, N236: 1913թ. հուլիսին Կ.Պոլսում կայացած ՀՄՌԿ Բ համագումարում Վահան Թեքեյանը նշել է, որ ՀԲԸՄ ստեղծման գաղափարը պատկանում է Արփիարյանին: Տե՛ս Արտակ Դարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 233:

[3] «Լուսաբեր», 1906, N 295:

[4] Նույն տեղում:

հուրդներ կամ տարբեր հիվանդությունների բուժման և կանխարգելման վերաբերյալ: Արփիարյանը զգուշացնում էր հեռու մնալ ինքնակոչ հեքիմներից, որոնց տգիտության հետևանքով շատ հիվանդներ են մահանում[1]: Արփիարյանը լրջորեն մտահոգվում էր նաև ազգային հիվանդանոցի բարենորոգման խնդրով: Նա գտնում էր, որ ազգային հիվանդանոցի պատմությունը կազմում է պոլսահայության կյանքի բաղկացուցիչ մասը: Նկարագրելով հիվանդանոցի աղետալի վիճակը Արփիարյանը գրում էր. «Ազգային հիւանդանոցը կէս դար է հաստատուած է, սակայն Թիւրքիոյ հայք, որ այդ կէս դարուն մէջ փճացուցած են այնքան հարստութիւններ կարող չեն եղած կառուցանել կանոնաւոր շէնք մը և պատրաստել հիվանդանոցի համար եկամուտներու ապահով աղբիւրներ»[2]: Ջոհրապի, Արփիարյանի կատարած ուսումնասիրությունները և հավաքած փաստերը բացահայտում են հիվանդանոցի բարձիթողի վիճակը և մերկացնում պոլսահայ վերնախավին, որի հոգածության տակ էր այդ հաստատությունը[3]: Արփիարյանը փորձում է օգնել հիվանդանոցին. «Հայրենիքի» միջոցով կազմակերպում է դրամի հանգանակություն հիվանդանոցի մատակարարումը բարելավելու համար: Հայրենասեր գործչի ջանքերը տալիս են որոշակի արդյունք: Մամուլի միջոցով նա հասնում է այն բանին, որ հասարակական միտքը սկսում է հուզվել այդ խնդրի շուրջը և պահանջում է բարեփոխումներ: Աշխատանքները բարելավելու և հիվանդանոցում տիրող բավական ծանր բարոյական մթնոլորտը թարմացնելու համար, Արփիարյանը գտնում էր, որ աշխատող անձնակազմը պետք է

---

[1] «Հայրենիք», 1894, N 784:

[2] «Մշակ», 1886, N 44:

[3] Մուրադյան Լ., նշվ.աշխ., Եր., 1991, էջ 123:

տարբեր դասերից բաղկացած լինի. «ինչու՞ զանազան դասակարգէ անձինք չգտնուին անոնց մէջ: Չզոհանալ եղածովը, հետզհետէ նորանոր բարեփոխութիւններ պահանջել բարեգործական և կրթական հաստատութեանց համար»[1]:

Արփիար Արփիարյանի հրապարակախոսական գործունեության համար նոր ասպարեզ բացվեց, երբ 1891թ. հունվարին ճանաչված հրապարակախոս Հովհաննես Շահնազարի հրավերով ստանձնեց «Հայրենիք» օրաթերթի խմբագրապետի պաշտոնը: Նա կրկին իր շուրջը համախմբեց արևմտահայ մի շարք առաջադեմ մտավորականների և նոր եռանդով ձեռնամուխ եղավ «Մշակի», «Արևելքի» ու «Մասիսի» դեմոկրատական ավանդույթների շարունակման գործին: «Գ.Զոհրապ, Ա.Չոպանյան, Լ.Բաշալյան, Ռ.Զարդարյան, Ա.Արփիարյան, Հ. Շահնազար - ահա թերթերի խմբագիրների ու աշխատակիցների ոչ լրիվ կազմը: «Այսչափ հին ու նոր տաղանդներու բոլորումը «Հայրենիքի» շուրջը այս թերթին տված էին ժողովրդականութիւն մը, որուն ոչ մեկ թերթ արժանացած է», - գրում էր Ե.Օտյանը[2]:

«Հայրենիքի» առաջին համարի առաջնորդող հոդվածում Արփիարյանը պարզաբանում է թերթի ծրագրային նպատակը, ըստ որի «ապարանքին թերթը» լինելուց բացի այն պիտի լինի «նամանավանդ խրճիթին թերթը»[3]: Գ.Ստեփանյանը նշում էր, որ «Հայրենիքի» գլխավոր տարբերությունը 80-90-ականների հրատարակվող մյուս թերթերից այն էր, որ թերթի թղթակիցները բավական լայն ցանց էին ստեղծել գավառներում և լուսաբանում էին իրենց հուզող հարցերը. «որքան այդ

---

[1] «Հայրենիք», 1891, N 60:

[2] Օտյան Ե., Երկերի ժողովածու, հտ. 4, Եր., էջ 23:

[3] «Հայրենիք», 1891, N 1:

թոյլ էր տալիս ցենզորական խստութիւնը»[1]: «Հայրենիքը» ժողովրդական թերթ էր բառի բուն նշանակությամբ, - գրում էր Սարուխանն իր հուշերում: - Նա չէր խոնարհվում մեծամեծերի առջև, ինչպես Կ.Պոլսի մյուս բոլոր հայ լրագիրները, չէր շողոքորթում նրանց, այլ թարգման էր հաստատ համոզմունքների որոշ ուղղութեան»[2]:

«Հայրենիքի» ու նրա խմբագրի որդեգրած ժողովրդական ուղղությունը բազմիցս իր դեմ հանեց Կ. Պոլսի պահպանողական «ազնվաշուքներին»: Մի կողմից կառավարության ուղղված նրանց լրտեսագրերի, մյուս կողմից թուրքական ուժեղացող գրաքննության պատճառով «Հայրենիքը» մի քանի անգամ փակվեց: Բայց ամեն անգամ Շահնազարն ու Արփիարյանը կարողանում էին վերաբացել թերթը: Այդպես շարունակվեց մինչև 1896թ., երբ համիդյան սաստկացող բռնություններից խուսափելով՝ Արփիարյանը ստիպված էր դադարեցնել իր գործունեությունը «Հայրենիքում» և հեռանալ արտասահման:

1896թ. սկզբին բավական երկարատև արգելումից հետո վերաբացված «Հայրենիքի» գործունեությունը շարունակվեց մինչև հուլիս: 1896թ. հուլիսին այն վերջնականապես արգելվեց:

Չիրավի մեծ էր «Հայրենիքի» դերն ու նշանակությունը արևմտահայերի հասարակական կյանքում: Իր հնգամյա գործունեության ընթացքում թերթը բարձրացրեց հարցեր, լուրջ խնդիրներ, որոնց արևմտահայ և ոչ մի թերթ չէր անդրադարձել, և որոնց կարևորությունը թելադրված էր ժամանակի արևմտահայ իրականության կողմից:

«Այս հիմքը զոր «Հայրենիք» ունեցավ Թիւրքիոյ հայ ժողովրդին մէջ աննախընթաց էր և նմանը չունեցավ ետքն ալ,

---

[1] Ստեփանյան Գ., նշվ. աշխ., էջ 216:

[2] Սարուխան, Արփիարի հիշատակին, «Մշակ», 1908, N 31:

- գրում էր Ա. Ալպոյաճյանը: - Հոն խորացում մը կար ոյժերու: Միևնոյն գաղափարականովը խանդավառուած երիտասարդներ, որ ժողովրդինն էր և անոր համար կը հրատարակուէր»[1]:
Լ.Բաշալյանի կյանքի և գործի ուսումնասիրող Ս.Մանուկյանը անդրադառնալով այս հարցին գրում էր. «80-ականների գրական շարժման ներկայացուցիչները՝ Արփիարյան, Զոհրապ, Կամսարական, Բաշալյան, Օտյան, Ասատուր, Չոպանյան, Կյուրճյան, Թլկատինցի, Երուխան և այլն, արևմտահայ գրականության և լրագրության մեջ բերին նոր և թարմ հոսանք, որն առավել ցայտուն կերպով դրսևորվեց Արփիարյանի խմբագրած «Արևելք», «Մասիս» և «Հայրենիք» պարբերականներում, որոնք կարճ ժամանակամիջոցում ձեռք բերին մեծ ժողովրդականություն»[2]:

Արփիար Արփիարյանի հրապարակախոսական գործունեությունը բարձր գնահատվեց թե՛ իր ժամանակին և թե՛ իրենից հետո: Այն արժանացավ Րաֆֆու, Արծրունու և շատերի բարձր գնահատականին: Լեոն գրում էր. «Հայկակի պես անխոնջ, լավատեղյակ, տաղանդավոր թղթակից երբեք ոչ մի հայ թերթ չէ ունեցել: Տարիների ընթացքում նա տիրում էր ընթերցողների մտքի վրա: Գրիգոր Արծրունուց և Րաֆֆուց հետո երրորդ ուժը Արփիար Արփիարեանն էր, որի վրա հենվում էր «Մշակի» հեղինակութիւնն ու ժողովրդականութիւնը:... Իր երկար, բեղմնավոր գործունեութեամբ, համակրելի մշակական գաղափարներով Հայկակն այն աստիճան գրավեց ռուսահայերի սերն ու համակրանքը, որ երբ 1884թ. կաթողիկոսական ընտրության ժամանակ եկավ Կովկաս, Թիֆլիսում ու Երևա-

---

[1] Ալպոյաճեան Ա., Գր. Զօհրապ, էջ 99:
[2] Մանուկյան Ս., Լևոն Բաշալյան, Եր., 1969, էջ 23:

նում, նրան ընդունեցին խանդավառ ոգևորութեամբ»[1]: Գրիգոր Զոհրապը նրա մասին գրում էր. «Իր մշտնջենական պատիւը պիտի ըլլայ մէր մէջ իր «Օրուան կեանքերովը» առաջին ինքը տանելը, մօտեցնելը գրականութիւնը ժողովրդին: Իրմով սկսած ու քաջալերած է միշտ այն երիտասարդ գրողներու շարքը, որ մեր հրապարակագրութեան այժմու ռամիկ, թէ որ կուզեք, բայց հասկանալի ու սրտի մօտիկ հանգամանքը տուած են»[2]:

«Իր ժամանակակից մի շարք հրապարակագիրների համեմատութեամբ Արփիարյանն անկասկածելի առավելութիւններ ունէր, - գրում էր Սիմոն Յակոբյանը: - Ավելի նոր էր, կենդանի, ուժեղ խառնուածք ունէր, ժողովրդական էր, համարձակ էր, շեշտակի էր: Այդպես էր նա «Արևելքի» 80-ական թվականներին, այդպես էր մանավանդ «Հայրենիքի» մեջ 90-ական թվականներին, այդպես էր նաև «Նոր կեանքի», մեջ իր բոլոր պաշտոնակիցների բաղդատութեամբ»[3]:

Հրանտ Ասատուրն Արփիարյանի մասին գրում էր. «Կծու քննադատ մըն էր, հանդուգն համարձակոտ մը, անգութ ճայթող մը, ոչ սպառնալիքներէ կը վախենար, ոչ բամբասանքէ»[4]: Ստեփան Շահպազը գտնում է, որ Արփիարյանն իր շրջանի ամենամարտնչող ու առաջադիմական հրապարակախոսն էր արևմտահայության շրջանում, շեշտելով, որ այդ ասպարեզում ոչ ոք չունեցավ նրա «անհատական անկախութիւնը»: Նա գրում է. «Հակառակ անոր, որ տակաւին կտիրէին խաւարամիտ, սարկական մտայնութիւնները, այնուամենայնիվ Արփիարյանն միշտ ալ մերժեց վաղուց արդեն գործածական

[1] Լեռ, Գրիգոր Արծրունի, էջ 96:
[2] Զօհրապ Գ., Ծանօթ դեմքեր ու պատմվածքներ, Փարիզ, 1932, էջ 49:
[3] Յակոբեան Ս., նշվ. աշխ., էջ 3:
[4] Հայրապետեան Ս., Հրանտ Ասատուր, Լոս-Անջելես, 1979, էջ 21:

դարձած շողշողուն տիտղոսները տալ «բարձր դասու» անձնաւորության. բառամթերքին մեջ երբեք չուզեց մտցնել «վսեմաշուք», «վսեմափայլ», «ազնուաշուք» յորջորջումները: Գիտէր և սակայն, որ իր այս մերժումները կը վնասեին իրեն անձնապէս, բայց տեղի չտուաւ»[1]:

Արփիարյան–հրապարակախոսի ինքնատիրությունը մեծապես պայմանավորված էր նրանով, որ նա քայլում էր ժամանակի հետ համաքայլ, իր հրապարակախոսությունն արծարծում էր կյանքի բազմակողմանի, միաժամանակ հրատապ խնդիրները: Արփիարյանի նպատակն էր առաջադիմական գաղափարների, լուսավորության տարածման միջոցով նպաստել արևմտահայերի նվիրական իղձի՝ ազգային ազատագրության իրականացմանը: Արփիարյանը շարունակեց Հ. Սվաճյանի, Հ. Պարոնյանի դեմոկրատական ավանդույթները, նրանց մղած պայքարը հետադիմական հոսանքների, պահպանողական գաղափարախոսության դեմ: Նա դարձավ քննադատական ռեալիզմի սկզբնավորողներից մեկը և ռեալիստական գրական շարժման նախաձեռնողը: Արփիարյանը աճեցրել և ուղղություն է տվել գրական մի ամբողջ սերնդի՝ Գր.Զոհրապ, Տ.Կամսարական, Լ.Բաշալյան, Ե.Օտյան և ուրիշներ, որոնց հետ է կապվում արևմտահայ ռեալիստական արձակի բուն զարգացումը[2]:

Արփիար Արփիարյանը մեծ ավանդ ներդրեց արևմտահայության մեջ լուսավորության տարածման գործում:

---

[1] Շահպազ Ստ., նշվ. աշխ. էջ 424:

[2] Հայ նոր գրականության պատմություն, հտ. 4, Եր., 1972, էջ 374:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## *ա) Արփիարյանը հոգևորականության և եկեղեցու մասին*

Դարերով պետականությունից զրկված հայ ժողովրդի համար եկեղեցին էր ստանձնել պետության գործառույթները: Այս տեսանկյունից ելնելով Արփիարյանը կարևորում էր եկեղեցու ազգապահպան գործոնի նշանակությունը ժողովրդի համար:

Նա գտնում էր, որ եկեղեցու և հոգևորականության առջև դրված է թերևս ամենակարևոր խնդիրներից մեկը՝ կրոնի միջոցով ժողովրդի ազգային ինքնագիտակցության պահպանումը. «Եկեղեցին մեզի համար կմնա միութեան կապը, պատմութեան շարունակութիւնը, ընդհանուր լեզուն», - գրում էր Արփիարյանը[1]: «Հատուածներ հայրենասիրութեան և հայոց պատմութեան մասին» հոդվածում նա բացառիկ կարևոր տեղ էր հատկացնում եկեղեցու դերին[2]: Ընդգծելով հոգևորականների առաքելությունը ժողովրդի հանդեպ, Արփիար Արփիարյանը միաժամանակ մերկացնում ու քննադատում էր նրանց արատավոր կողմերը: Նա իրավացիորեն գտնում էր, որ ժողովրդին առաջնորդելու կոչված անձինք պետք է ունենան բարոյական բարձր նկարագիր: Արփիարյանը ցասումով էր խոսում նրանց մասին, ովքեր գրավելով բարձր պաշտոններ Ազգային վարչության մեջ, պատրիարքարանում և այլուր, ըստ

---

[1] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆոնդ, N 25, թ.1:

[2] Նույն տեղում, N 24, թ.3:

էությամ ոչ մի օգուտ չեն տալիս ազգին: Միննույն ժամանակ նա նշում էր, որ կան շատ «ընտիր քահանաներ», որոնք բարձր են խելքով ու բարոյականով, բայց ցավոք անտեսված են: Արփիարյանն անարգանքի սյունին էր գամում բոլոր նրանց, ովքեր սեփական շահի համար զոհում են ամեն ինչ: Նա ընդվզում էր սոցիալական արդարության խախտումների դեմ, առավել ևս այն դեպքում, երբ դա կատարվում էր այն պաշտպանելու կոչված հայ հոգևորականների կողմից: Նկարագրելով, թե ինչպես աղքատ ընտանիքի զավակի թաղումը ոչ մի կրոնավոր չէր ուզում իր վրա վերցնել, քանզի անվարձ էր մնալու, Արփիարյանը զայրույթով գրում էր. «Կրոնքն իր նպատակն կշեղէ: Թշուառները մխիթարել, տառապեալներին սփոփել, սրտերն ազնուացնել. այս է կրոնքի կոչումը. իսկ այժմ կրոնքը ապրելու միջոց մը եղած է, առևտրական ֆիրմա մը. բնականաբար զթութեուն, կարեկցութեուն, ազնիվ զգացումներ կը արտաքսուին առևտրական գործերէ. մաթեմատիկական շահը միայն կը փնտրուի»[1]: Խարազանելով հոգևորականների դրամասիրությունը՝ նա գրում էր. «Այն օրը, որ հայ եկեղեցիները դրամէ խորշին, այն օրն է, որ եկեղեցիին համար պիտի սկսի երջանկութեան թվականը»[2]: Արփիարյանը պահանջում էր Ազգային վարչությունից, որ յուրաքանչյուր հոգևորական գնահատվի ըստ արժանվույն, և եկեղեցուց դուրս մղվեն տգետներեն ու շահամոլները[3]:

Տարիներ անց, վերհիշելով կաթողիկոսական ընտրությունների առթիվ իր այցը Երևան, Արփիարյանը «Տխուր յիշատակներ» հոդվածում ցույց էր տալիս, որ արևելահայ գյուղա-

---

[1] «Մասիս», 1890, N 3934:

[2] «Հայրենիք», 1892, N 325:

[3] «Մասիս», 1887, N 3858:

ցիները նույնպես կեղեքվում էին հոգևոր տերերի կողմից: Հողվածում նա հույս էր հայտնում, որ միգուցե իր տպավորությունները կազդեն բոլոր նրանց վրա, ովքեր կոչված են ընտրելու հայոց նոր հայրապետին: «Մեզ պէտք է կաթողիկոս մը, - գրում էր Արփիարյանը, - սրտի մեծութեան միացուցած ըլլա արի կամք մը և բավական ուժեղ ձեռք մը ունենա Քրիստոսի մտրակը ձեռքն առնելու և Լուսավորչի Տաճարը մաքրելու»[1]: Նա իրավացիորեն գտնում էր, որ ժողովրդի հոգևոր առաջնորդները պետք է վայելեն նրա հարգանքն ու վստահությունը, որը նրանց միասնության գրավականն է, այլապես, ժողովրդի կողմից չսիրված առաջնորդը չի կարողանա պաշտպանել ոչ եկեղեցու շահերը, ոչ էլ ազգից որևէ բան հուսալ: Հակառակ դեպքում, երբ նա սիրված ու հարգված է ամենքի կողմից, Արփիարյանը չի տարակուսում, որ երկրի իշխանություններն էլ ստիպված կլինեն նրան վերաբերվել ոչ թե իբրև մի սովորական պաշտոնյայի, այլ «իբրև եկեղեցվո պատկառելի պետի մը հետ», «Հայոց ազգը կսլաղի իր եկեղեցականներէն», - գրում էր Արփիարյանը,- «Ինչպե՞ս կուզեն, որ ժողովուրդը չը զայրանա, քանի որ եկեղեցականը միայն իր անձը մտածէ և երբեք իր ժողովուրդը»[2]:

Արփիարյանն առաջ էր քաշում այն միտքը, որ ժողովրդի հոգևոր առաջնորդները չպետք է սահմանափակվեն միմիայն հոգևոր խրատներով և որ «հոգևոր խրատներէն զատ քիչ մըն ալ նյութական կեանքի խրատներ տան»[3]: Այնուհետև նա ուշադրություն էր հրավիրում օտարերկրյա կրոնավորների գործելակերպի վրա, ընդգծելով այն հանգամանքը, թե ինչպես

---

[1] «Հայրենիք», 1891, N 83:

[2] Նույն տեղում, N 146:

[3] Նույն տեղում, 1892, N 121:

էին նրանք աշխատում զրավել ժողովրդի վստահությունը. «Աչքէ չվրիպենք, թէ օտար կրոնաւորներեն ինչ միջոցներով կուզեն շահիլ մեր ժողովուրդը: Ամերիկայի միսիոնարը, Եվրոպայի ճիզուիթը միայն քարոզիչներ չեն, այլև բան գիտցող, աշխարհի վիճակէ հասկացող մարդեր են: Կերթան, կմտնեն ժողովրդին մէջ, անոր նիւթական կեանքին վերաբերեալ շատ մը գործերու կը միջամտեն և անով կը սիրաշահին անոնց սիրտը: Բժշկութիւն կընեն, արհեստի վերաբերյալ բաներ կը սորուրեցնեն և կը տեսնեն, որ կամաց-կամաց ժողովուրդը վարժած է իրենց, կը սիրէ զանոնք և օր մըն ալ անոնց յետեւէն կերթա»[1]: Ահա այս էր Արփիարյանին մտահոգություն պատճառում, որ օտար կղերը չկարողանա տիրել հայի հոգուն ու սրտին: Այս կապակցությամբ նա գրում էր. «Երբ դպրեվանքեր կունենանք, արդեոք միայն բնազանցական, լեզուագիտական, քաղաքագիտական ուսումներ սորուեցնելու է, և քիչ մըն ալ սորուեցնելու չէ՞ այն բաները, որ գործնական են և կրնան ժողովրդին օգտակար ըլլալ նիւթական կեանքի կողմէ»[2]:

Հասկանալով կրոնի, եկեղեցու նշանակությունը ժողովրդի կյանքում, թուրքերը գործադրում էին ամեն միջոց թուլացնելու եկեղեցու ազդեցությունը, խախտելու նրա հեղինակությունը: Արփիարյանը նշում էր, որ հայության ներքին միասնությունը քայքայելու, ազգի ինքնուրույնության ձգտումները չեզոքացնելու համար Բ.Դուռն իր պաշտպանության տակ էր վերցնում հայ կաթոլիկներին և նրանց տրամադրում հայության մնացած մասի դեմ[3]: Արփիարյանին խորապես մտահոգում էր հայ ժողովրդի կրոնական բաժանման փաստը:

---

[1] «Հայրենիք», 1892, N 121:

[2] Նույն տեղում:

[3] «Մշակ», 1879, N 44:

«Երկու երևոյթները» հոդվածաշարում նա ընդգծում էր այն միտքը, որ չնայած հայ իրականության մեջ եղած կրոնական տարբեր ուղղություններին, այնուամենայնիվ հայութեան շահերը պահանջում են մերժել անհանդուրժողականությունը[1]: Նա անթույլատրելի էր համարում դավանաբանական վեճերի պատճառով իրար հետ թշնամանալը: Նա համոզված էր, որ ստեղծված պայմաններում անհրաժեշտ էր համակերպվել իրականութեան հետ և համախմբվել «հայ ազգայնութեան գաղափարին մէջ»[2]: Ելնելով դրանից, նա մերժողական վերաբերմունք էր դրսևորում արևմտահայ իրականության մեջ գոյություն ունեցող հատունյան և հակահատունյան կրոնական վեճի նկատմամբ: Կարինում տեղի ունեցած այդպիսի վեճի կապակցությամբ, որը հասցրել էր ընդհարման, Արփիարյանը վրդովմունքով գրում էր, որ բազմաթիվ ուրիշ ցավերը բավական չե՞ն մեզ «խելքը գլուխնիս հաւաքելու», կրոնական հարցում իրարից չբաժանվելու, և որ ամենավատն է «իրար չհարուածելու համար»[3]:

Բացի ազգային ու կրոնական միասնության քայքայման վտանգից Արփիարյանն այդ վեճերի մեջ տեսնում էր նաև ուրիշ վտանգ: Ըստ նրա, հայերը, որ կամա թե ակամա հայտնվել էին եվրոպական կաթոլիկ ու բողոքական պետությունների դիվանագիտության ոլորտում, պետք է շրջահայաց լինեն և ձեռնպահ մնան դավանաբանական այդ ուղղություններին խիստ քննադատելուց: Ճիշտ է, տերությունների քաղաքական հաշվարկներում դավանաբանական գործոնը չէր վճռորոշ դեր խաղացողը, և դա գիտեր Արփիարյանը, այնուհանդերձ նա

---

[1] «Նոր կեանք», 1899, N 20, 21, 22:

[2] Նոյն տեղում, N 22, էջ 347:

[3] «Մշակ», 1880, N 122:

գտնում էր, որ ձեռնտու չէր «յարձակումներ ընել կաթոլիկ և բողոքական հայոց դէմ ճիշտ այն պահուն, երբ կաթոլիկ և բողոքական կառավարութեանց պաշտպանութիւնը կխնդրեմք»[1]: Այդ խնդրի կարգավորման գործում նա կարևոր էր համարում Կ.Պոլսի բարձրաստիճան հոգևորականության ու Էջմիածնի համագործակցությունը:

Համիդյան հետադիմության հերթական արտահայտություններից մեկը դարձավ թուրքերի այն պահանջը, ըստ որի հայ եկեղեցու պատմությունը պետք է հանձնվեր իրենց քննությանն ու վերանայմանը:

Ընդվզելով դրա դեմ՝ հայրենասեր գործիչը «Մշակում» գրում էր. «Բաւական չէր, որ դատապարտեցին հայ պատմութիւնը, բաւական չէր, որ լռեցուցին հայ երգերը, բաւական չէր, որ «Հայաստան» բառը իբր ժանտախտ հալածեցին, այժմ իրենց ձեռքերը կերկնցեն մինչև մեր եկեղեցին: Թուրքերը կը պահանջեն, որ մեր եկեղեցւոյ պատմութիւնը մոլլաներու քննութեանը ենթարկուի... Այժմ յանուն խղճի ազատութեան է, որ պէտք է ձայն բարձրացնենք: Եկեղեցինիս չը կրնար ո՛նէ օտարի ճիրաններուն մէջ անցնիլ»[2]: Թուրքերի կողմից եկեղեցուն և ժողովրդի սպառնացող փորձերն առաջացնում էին վերջինիս ուժեղ հակազդեցությունը, և ժողովուրդն ավելի էր ձգտում դեպի եկեղեցին, թեկուզև նորանոր զրկանքների գնով: Դա հաստատում էր և Արփիարյանը՝ գրելով. «Մենք ազգութեան հաւած ըլլալով կսիրենք նաև կրոնքնիս ու էս մեծ զոհողութիւնն է, զոր կընենք: Ապագա տարիներուն մեջ անկարելի պիտի ըլլա ըմբռնիլ ինչ տառապանքներ է զոր մենք կկրենք մտքերնիս հա-

---

[1] Նույն տեղում, N 178:

[2] Նույն տեղում, 1883, N 80:

մար: Թիւրքերի վերջին հալածանքներից հետո ավելի և հարե-ցանք կրոնքի»[1]:

Ս. Երեմյանը գրում էր, որ Արփիարյանը hազվադեպ էր այցելում եկեղեցի, սակայն կրոնական խնդիրները միշտ նրա ուշադրության կենտրոնում էին: Նա նշում էր, որ հատկապես խիստ էին Արփիարյանի պահանջները հոգևորականության նկատմամբ, որոնց նա ցանկանում էր տեսնել «զթած, ներողա-միտ ու խոնարհամիտ, նման քրիստոնեութեան վարդապետ-տի»[2]:

Հոգևորականության արատների քննադատությամբ Արփիարյանը միակը չէր արևմտահայ իրականության մեջ: Դեռևս նրանից առաջ և ոչ պակաս կրքոտությամբ աչքի էր ըն-կել Գարեգին Սրվանձտյանցը[3]: Բայց ինչպես Սրվանձտյանցի, այնպես էլ Արփիարյանի քննադատությունը ոչ թե ինքնանպա-տակ էր, կամ մերժում էր հոգևորականությանը, այլ նրանց ձգտումն էր, որպեսզի հոգևորականությունը ձերբազատվի արատներից ու ժողովրդի աչքում միշտ բարձր մնա նրա բարո-յական նկարագիրը: Ինքը` Արփիարյանը, բարձր գնահատելով Սրվանձտյանցի ազգանվեր գործունեությունը, հատկապես շեշտում էր Սրվանձտյանցի կողմից գավառահայության նկատմամբ ցուցաբերած ուշադրությունը. «Ինք մին եղաւ այն գրողներէն, որք ամենն առաջ ըմբռնեցին, թէ գավառները պետք է ուսումնասիրել իրենց բազմակողմանի երևույթներուն մէջ: Սրվանձտեանց գրագետ ըլլալէ աւելի ուրիշ մեծ արժանիք ունեցաւ: Շատ կանուխէն ըմբռնեց, թէ հայ վարդապետի մը

---

[1] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆոնդ, N 25, թ 2:

[2] Երեմեան Ս., Ազգային դեմքեր. գրագետ հայեր, էջ 220:

[3] Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց, Եր., 1979, էջ 148:

պարտականութիւնն էր մտածել նաև խեղճ, տգետ ժողովրդին սրտին համար»[1]:

«Շիրակում» և «Լուսաբերում» քննադատելով արևմտահայ մի շարք բարձրաստիճան հոգևորականների հետադիմական հայացքները, Արփիարյանը մատնանշում էր այն կարևոր հանգամանքը, որ նրանց հարուցած բազմաթիվ վեճերն ու հակասությունները Էջմիածնի կաթողիկոսության հետ, առաջին հերթին ձեռնտու էին թուրքերին, որոնք միշտ աշխատել են պառակտում մտցնել հայության երկու հատվածների՝ արևելահայերի և արևմտահայերի միջև[2]: Քննադատելով հետադիմականներին, Արփիարյանը ոգևորությամբ էր խոսում այն հոգևորականների մասին, որոնք մի կողմ թողնելով աստվածաբանական, դավանաբանական խնդիրները, սկսեցին լրջորեն մտահոգվել հայրենի երկրի ու ժողովրդի ճակատագրով: Բարձր գնահատելով հայրենասեր հոգևորականների ծավալած ազգանվեր գործունեությունը Արփիարյանը գրում էր. «Եղան վարդապետներ, որ սկսան մտմտալ, թե ո՞ւր կերթա վերջը մեր այս աստվածաբանական բծախնդիր մանրախոհութեանց, երբ անդին մեր հայրենիքը ձեռքէ կերթա: Եվ էհ, ջուրն է տարեր ջաղացքը, մենք կփնտրենք ջախջախը, - հեծկլտաց օր մը Հայրիկ ժամուն բեմէն: Ջաղացքը պետք էր փրկել, ու Վարժապետեան Ներսես, Իզմիրլեան Մատթեոս, Խաքախանեան Ներսես, տերտեր, տիրացու, սարկավագ, վարդապետ, Բարթուղեմիոսներ ու Դանիելներ իրենց միտքը, սիրտը, արիւնը բերին խառնեցին ժողովրդին մտքին, ժողովրդին սրտին ու արիւնին, որպեսզի ջաղացքը փրկէն»[3]:

---

[1] «Հայրենիք», 1892, N 306:

[2] «Լուսաբեր», 1905, N 140:

[3] «Շիրակ», 1905, N1, էջ 30-31:

Արփիար Արփիարյանի համար որպես հայրենասեր հոգևորականի տիպարներ, եղել ու մնում էին Ղևոնդ Ալիշանն ու Մկրտիչ Խրիմյանը: Խոսելով Խրիմյանի մասին՝ նա ընդգծում էր Հայրիկի մեծ ժողովրդականությունը: Արփիարյանի համար Խրիմյանը լոկ առաջնորդ չէր, այլ «ժողովրդի մեծագոյն ներկայացուցիչ, որի անձին մէջ նվիրագործուած էր հայ հայրենիքի ու հայ ազգութեան գաղափարը»[1]: Ի դեմս Խրիմյանի նա տեսնում էր այն անձնավորությանը, որը 1903թ. հունիսի 12-ի ցարական հրամանագրի նկատմամբ բռնած իր անհաշտ դիրքով, համառ ու հետևողական պայքարով կարողացավ վերականգնել հայ եկեղեցու իրավունքները և դրանով անխախտ պահել հայ մշակույթի ու կյանքի սյունը[2]: Խրիմյանի մահը խոր վիշտ պատճառեց Արփիարյանին: «Լուսաբերում» խոսելով նոր կաթողիկոսի հավանական թեկնածուների մասին՝ Արփիարյանը հույս էր հայտնում, որ «հայոց նոր հայրապետը չը հեռանայ ու հավատարիմ մնա Հայրիկի վարած ուղղութեանը»[3]:

Գալով Ղևոնդ Ալիշանին, Արփիարյանը գրում էր, որ նրա անհատականության մեջ ամփոփված էր գիտնականն ու հոգևորականը: Սակայն Արփիարյանի համար կարևորը, դա իր մեծ ուսուցչի անսահման հայրենասիրությունն էր, որով պետք է առաջնորդվեին ժողովրդին ղեկավարելու կոչված հայ հոգևորականները[4]:

### *բ) Արփիարյանը արևմտահայերի ազգային մարմինների մասին*

---

[1] «Նոր կեանք», 1898, N 10, էջ 156:

[2] «Լուսաբեր», 1906, N 238:

[3] Նույն տեղում, 1907, N 458:

[4] «Մասիս», 1887, N 3875:

Արփիար Արփիարյանը մեծ դեր էր վերապահում ազգային մարմինների գործունեությանը, որոնք պետք է ձգտեին համախմբել ազգային բոլոր ուժերին արևմտահայության գերխնդրի՝ ազգային ազատագրության իրականացման ճանապարհին: Այս տեսանկյունից ելնելով՝ նա կարևորում էր ազգային իշխանությունների դերը: «Այսօր Թիւրքիո հայը շատ դժուար վիճակի մէջ է, - գրում է Արփիարյանը: - Կառավարութիւնը մեզ թշնամի և գործող թշնամի: Մեր միակ օրինաւոր ազգային իշխանութիւնն այսօր մեր ազգային ժողովն է, ինչ ալ ըլլան իր թերութիւնները, մենք չենք կրնար վերջապէս առանց ազգային իշխանութիւն մնալ»[1]: Գնահատելով արևմտահայերի Ազգային ժողովի դերը՝ Արփիարյանը չէր կարող անտարբեր մնալ նրա թերությունների նկատմամբ: Նա Ազգային ժողովի երեսփոխաններից պահանջում էր վերջ տալ ներքին գժտություններին, անարդյունք վեճերին, կոչ էր անում Ազգային ժողովի աշխարհիկ և հոգևոր ուժերին համախմբվելու և լրջորեն զբաղվելու Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրով: «Փոխանակ մեր գործերուն և Հայաստանի բարեկարգութեանց հարցերովը զբաղուելու զիրար կը պատառենք», - գրում էր Արփիարյանը[2]: Նրան լրջորեն մտահոգում էին ազգային մարմինների և Ներսես պատրիարքի միջև եղած տարաձայնությունները, որոնք բացասաբար էին անդրադառնում ազգային գործերի վրա: Արփիարյանը գրում էր. «Պատրիարքը և երեսփոխանական ժողով գժտեալ կը մնան, մէր գործերն անգլուխ, ոչ ոք ունինք որ մեզի համար խոսի: Հայրենասիրական ոգի, առողջ մտածութիւնք, խելացի կերպով գործելու փա-

[1] «Մշակ», 1882, N 168:

[2] Նույն տեղում, 1883, N 110:

փազ բոլորուին բացակա են։ Կիրք ու նենգութիւնք կը կառավարեն զմեզ»[1]։

Արփիարյանը գտնում էր, որ պատրիարքի ու արևմտահայերի Ազգային ժողովի միջև գժտությունների հիմնական պատճառը Ներսես Վարժապետյանի մեծ ժողովրդականությունն էր, որը հարուցում էր ժողովի մեծամասնությունը կազմող հայ մեծահարուստ էֆենդիների ատելությունը։ «Եթէ մեզի համար ցաւալի հարաբերութիւններ կան Ազգային ժողովի ու պատրիարքի, գլխաւոր պատճառն է, որ պատրիարքը ունի ազգին մէջ շատ բարձր դիրք մը, իսկ ժողովի անդամներէն շատերը հեռուեն իրենք այդ դիրքին մօտենալ է. համեմատութեան պակասութիւն»[2]։ Չնայած Արփիարյանի համակրանքը պատրիարքի կողմն էր, այնուամենայնիվ նա դժգոհ էր այդպիսի ընթացքից և գտնում էր, որ դա ավելի է խորացնում անհամաձայնությունը և կարող է ծանր հետևանքներ ունենալ ազգի համար։ Նա դժգոհ էր, որ արևմտահայերի ներկայացուցչական մարմինը թողնելով առաջնայինը՝ քննարկման նյութ էր դարձրել երկրորդական խնդիրները։ «Մշակում» նա գրում էր. «Մեր թշնամին վայրենի և չարութեան մէջ հանճարեղ մեր արիւնը կծծէ և արթուն կիսկէ մեր ամեն մեկ քայլին ու մենք ի՞նչ կընենք. քերականութիւնը ինչպես շինելու և եպիսկոպոսի մը վեղարը ի՞նչ գոյն ըլլալուն վրա կվիճենք»[3]։

Դժգոհության մյուս պատճառը հետևյալն էր. ազգային ժողովի երեսփոխան Բեզյանի համարձակ ելույթները նրա դեմ էին հանել երեսփոխանների մի մասին և «կարգազանց երեսփոխանի» հարցը ամիսներ շարունակ զբաղեցնում էր Ազգա-

---

[1] Նույն տեղում։

[2] Նույն տեղում, N 129։

[3] Նույն տեղում, 1881, N 27։

յին ժողովի նիստերը։ Արփիարյանը այդ կապակցությամբ գրում էր. «Տեսնենք մինչև երբ այս խնդիրն Ազգային ժողովոյ ժամերն պիտի գրավէ։ Եւ սակայն մեր սրտէն արիւն կերթայ։ Երբ Բեռլինի վեհաժողովն մեր փափագներն չը պսակեց, այն օրէն յետոյ կը սպասէինք, որ պատրիարքը իր բոլորը ժողովելով երեսփոխանք լրջորեն հայ ազգի և աշխարհի փրկութեան վրա մտածեն և ազգային եռանդեան ուղղութիւն մը տան։ Բայց չորս ամիսներ են և տակաւին մի Պէկեյանով կը զբաղի հայ ազգի ներկայացուցիչ ժողովն և պիտի զբաղի յետոյ»[1]։

* * *

Արփիար Արփիարյանի կյանքում գործունեության նոր շրջան սկսվեց, երբ Բաղեշի գավառական ժողովի կողմից 1884թ. մայիսին ընտրվեց Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի երեսփոխան։ Արփիարյանի նման ժողովրդական անձնավորության ընտրությունը իրարանցում առաջացրեց երեսփոխանների զգալի մասի շրջանում։ «Ազնվաշուքների» ճնշման տակ նրա թեկնածությունը մերժվում և ետ է ուղարկվում, սակայն վերընտրության ժամանակ ընտրողների բացարձակ մեծամասնությունը կրկին իրենց ձայնը տալիս է Արփիարյանին։ Վ. Մալեզյանը այս առիթով գրում էր. «Արփիար իբրև ժողովրդական ներկայացուցիչ իր հետ ուներ ամբողջ ժողովուրդը և ամբողջ մտավորականութիւնը։ Մեծ դեպք մը նկատուեցավ ժամանակին, երբ առաջին անգամ Ազգային ընդհանուր ժողովին մէջ գրավեց երեսփոխանական աթոռ մը, որ մինչև այն ատեն տիտղոսակիրներու մենաշնորհը եղած էր»[2]։

---

[1] «Մշակ», 1878, N 196։

[2] Մալէզեան Վ., Ճամբուս ծայրը, հատոր Ա, Փարիզ, 1954, էջ 273։

Արփիարյանի թեկնածությունը հաստատվեց 1884թ. հունիսի 22-ի Ազգային ժողովի նիստում[1]:

Իր երեսփոխանական գործունեության հենց սկզբից Արփիարյանն ակտիվորեն մասնակցում է Ազգային ժողովի աշխատանքներին: Նա արծարծում է ազգային ներքին կյանքին վերաբերվող բազմաթիվ ցավոտ խնդիրներ և պահանջում մասնէրի արանքով չնայել ազգային գործերին[2]: Արփիարյանն իսկական ժողովրդական պատգամավոր էր, նրա շահերի արտահայտիչը: Նա պահանջում էր անպատասխան չթողնել գավառահայությունից ստացված բողոքներն ու տեղեկագրերը և փորձել լուծումներ գտնել դրանց համար:

Օրինակ նա պնդում էր, որ Հաճնում տեղի ունեցած բռնի ամուսնության դեպքը չդիտվի որպես երկրորդական հարց ու պատժվի այդ գործում մեղսակից եպիսկոպոսը[3]: Իր հետևողականության ու համարձակության պատճառով նա ստիպված էր բազմիցս ընդհարվել Ազգային ժողովի բարձրաստիճան երեսփոխանների հետ: Դրա վկայություններից է հետևյալը. Ազգային ժողովի նիստում Տաճատ վարդապետ Ոսկանյանը ընթերցում է Նիկոմեդիայի թեմի Ատաբազար քաղաքի հայ բնակչության դիմում-բողոքը, ըստ որի իրենց առաջնորդը կամայական կերպով փակել էր տեղի հայկական դպրոցները: Վրդովված բնակչությունը բազմիցս հեռագրեր էր ուղարկել պատրիարքարան, որոնք սակայն մնացել էին անպատասխան: Դա բնակչության շրջանում արդարացիորեն հուզումների տեղիք էր տվել: Առիթը ձեռքից բաց չէին թողել հայ կաթոլիկները, որոնք պատրիարք Ազարյանի միջոցով

---

[1] Ատենագրութիւնք ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1884, Ե նիստ, էջ 98:

[2] Նույն տեղում, 1890, Գ նիստ, էջ 24:

[3] Ատենագրութիւնք..., 1885, Է նիստ, էջ 415:

կրոնական գործիչներ էին ուղարկել «երկու հազար տուն պատուական հայութիւն մը ի կաթոլիկութիւն հրավիրելու համար»: Երբ ժողովի ատենապետ Հարություն Թիրաքյանը, Ստեփան փաշա Ասլանյանը, Հովհ. Նուրյանը և իրենց կողմնակից «վսեմաշուքները» փորձում են տեղեկագիրն ընդունել լոկ ի գիտություն, այդ ժամանակ Արփիարյանը բողոքում է նրանց անտարբերության դեմ բացականչելով. «Այս բեմէն հաղորդուած տեղեկութիւններն արձագանք պիտի գտնեն և ամենուրեք ցավ ու զայրոյթ պիտի պատճառեն: Ո՞վ է պատասխանատուն, որ գավառներու ազգային գործերն այսպես լքեալ կը մնան: Եվ միայն Ատաբազար չէ, շատ գավառներէ այսպիսի տեղեկութիւններ կհասնին - ուստի ինչպես կուզեք այնպես նկատեցէք Տ.Տաճատ վարդապետի խոսքերը, բայց իրողութիւնը չանտեսեք»[1]:

Արփիար Արփիարյանը քննադատում էր Ազգային ժողովի պահպանողական երեսփոխանների ստրկամտությունը, հարմարվողականությունը, որոնք ձգտելով հաճոյանալ սուլթանին, փորձում էին հայ ժողովրդին ներկայացնել որպես իր վիճակից գոհ և սուլթանին երախտապարտ մի ժողովրդի: Ազգային ժողովում նա մի խումբ առաջադեմ երեսփոխանների թվում պաշտպանում էր այնպիսի անձնավորությունների երեսփոխանական թեկնածությունը, որոնք մերժված էին սուլթանի կողմից: Դա հարուցում է ժողովի պահպանողական երեսփոխանների բարկությունը: Հովհաննես Նուրյան Էֆենդին վիրավորանքներ է տեղում Արփիարյանի վրա և փորձում է նրան իջեցնել ամբիոնից: Արփիարյանը դավաճաններ է համարում նրանց և մի ուժգին ապտակ հասցնում Նուրյանին[2]:

---

[1] Նույն տեղում, 1889, Ե նիստ, էջ 106:

[2] Ստեփանյան Գ., նշվ. աշխ. էջ 116:

«Ազգը Արփիարեանի ձեռքով ապտակէր է զինքը» - գրում էր Գրիգոր Զոհրապը[1]: Իսկ Վ.Մալեզյանը, որը ներկա էր եղել այդ նիստին գրեց հետևյալը. «Մեր ազգային սահմանադրական կեանքին մեջ պատմական է իր շառաչուն ապտակը մեծագոր Նուրեան Էֆենտիի, երբ Ազգային ժողովին մեջ այս թրքաբարո էֆենտին փորձեց ծաղրանքով տեղը դնել ժողովրդանուէր տրիբունը»[2]:

Արփիարյանը քննադատում էր այն երեսփոխաններին, ովքեր կրոնական և աստվածաբանական հարցեր են դարձնում որպես ելույթի թեմա: Նա գտնում էր, որ Ազգային ժողովը պետք է ավելի գործնական հարցերի լուծմամբ զբաղվի, ուր առաջնահերթ պետք է լինեն բարենորոգումների խնդիրը, գավառահայության վիճակը, և «Ազգային ժողովը պետք է ազատ պահել կրոնական բեմ մը ըլլալէ»[3]:

1890թ. Ազգային ժողովի նիստերում քննարկվում էր կաթողիկոսական ընտրություններին Թուրքիայի հայերի մասնակցության հարցը, որը սուր վեճերի առիթ է տալիս: Պահպանողական երեսփոխանները ձգտում են հակադրվել Էջմիածնի կաթողիկոսությանը: Արփիար Արփիարյանը արտահայտվում է արևելահայերի հետ համաձայնության օգտին, գտնելով, որ ընդհարումը հղի է եկեղեցու պառակտման վտանգով: Նա առաջարկում է. «Թիւրքիոյ հայոց մասնակցութեան եղանակին վրա համաձայնութեան մը գալ մեր Ռուսահայ եղբարաց հետ կաթողիկոսի միջոցով»[4]: Նա խարազանում էր Ազգային ժողովի երեսփոխանների ցուցամոլությունը, կեղծավորությունը. «Ամենուրեք ատենաբաններու նպատակն է տպաւորութիւն ընել

---

[1] Զոհրապ Գր., նշվ. աշխ., էջ 29:

[2] Մալեզյան Վ., նշվ. աշխ., էջ 279:

[3] «Մասիս», 1889, N 3959:

[4] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, Կ. Պոլիս, 1890, ԺԴ նիստ, էջ 319-320:

ունկնդիրներու մտաց վրա, - գրում էր Արփիարյանը, - կարծես ատենաբանը չունի ուրիշ կետ նպատակի, բայց եթե ուժով ներգործել լսելեաց վրայ»[1]: Ծաղր, բայց և ցավ կա նրա այն հաղորդման մեջ ըստ որի Ազգային ժողովը կազմել է մի հանձնաժողով, որի նպատակը ոչ այլ ինչ է, քան որոշելը, թէ «Թիւրքիոյ մէջ բնակվող իւրաքանչիւր հայ ի՞նչ ածականի պիտի արժանանայ ...Վսեմափայլ, Ազնուաշուք, Յարգելի ... »[2]:

Արփիարյանի բոլոր ելույթներն Ազգային ժողովում աչքի էին ընկնում բարձրացված հարցերի հրատապությամբ, սուր քննադատություններով, համարձակությամբ և իհարկե, նաև հռետորական վարպետությամբ:

Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի 1880-90-ական թթ. արձանագրությունները հրատարակվելիս ենթարկվել են կրճատման թուրքական գրաքննության կողմից, ուստի այնտեղ ամբողջությամբ չէր կարող արտահայտվել Արփիար Արփիարյանի երեսփոխանակման գործունեության լրիվ պատկերը: Ազգային ժողովում նրա գործունեությունը շարունակվում է մինչև 1891 թ.: Նույն թվականի հունիսի 28-ի նիստին մասնակցած երեսփոխանների ցուցակում վերջին անգամ ենք կարդում Արփիարյանի ազգանունը[3]:

Ազգային ճիշտ քաղաքականություն մշակելու համար Արփիարյանն անխուսափելի պարտականություն էր համարում ոչ վաղ անցյալի արևմտահայերի ազգային իշխանության վարած քաղաքականության համակողմանի ուսումնասիրությունը, մի իշխանություն, որտեղ պատմական որոշակի ժամանակահատվածում վճռական դեր էին խաղում ազգային

---

[1] «Արևելք», 1884, N 176:

[2] «Մշակ», 1889, N 10:

[3] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1891, Բ նիստ, էջ 62:

պահպանողականները: Դրան էր նվիրված Արփիարյանի «Ժամանակակից պատմութեան էջեր» ուսումնասիրությունը, որը ժամանակագրական առումով ընդգրկում է 1870-1894թթ. ընկած արևմտահայ հասարակական քաղաքական կյանքի ընթացքը[1]: Ուսումնասիրությունը բաղկացած է մի շարք հոդվածներից, որոնք կրում են «Կ.Պոլսո պահպանողական վարչութիւնները» վերնագիրը: Առաջին իսկ հոդվածում հրապարակախոսը պարզում է իր նպատակը. «Ազգութեան ճամբան ապահով շարունակելու համար միշտ նայինք ետեւնիս, ուր թողած ենք մեր հանրային իմաստութեան կամ տխմարութեան արձանագրութիւնները կրող յիշատակարաններ»[2]:

Գաղափարական առումով լինելով պահպանողական հոսանքի հակառակորդ, այնուամենայնիվ Արփիարյանը հարցերը լուսաբանում է անաչառ ուսումնասիրողի դիրքերից, երևույթը դիտարկում է պատմական կոնկրետ ժամանակահատվածում, իրավացիորեն նշելով, որ պահպանողականությունը նույն արևմտահայ իրականության ծնունդն է, որն ուներ իր որոշակի տեղն ու դերը այդ կյանքում. «Պահպանողականութիւն և յեղափոխութիւն միևնոյն ազգային կեանքի մը երևոյթներն են, ոչ մին կրնանք արհամարել, ոչ մյուսը առանց մեծապէս տուժելու»[3]: Արփիարյանը գրում է, որ 1884թ. պատրիարք Ներսես Վարժապետյանի մահից հետո «Եւրոպական միջամտութեամբ Հայաստանը բարեկարգելու ջանքերը գրեթէ ապարդիւն մնացած էին եւ ապազայ վատթարացումի երկիւղը կը տիրեր» հայութան մեջ[4]: Այդ պայմաններում (Կ.Պոլսի

---

[1] Ուսումնասիրությունը հարտարակվել է «Նոր կեանքի» 1898թ. N 1,2,3,5,6,9,10,11,12,13,15-ում, 1899թ. N 10,11,12,14,16,17-ում:

[2] «Նոր կեանք», 1898, N1, էջ 3:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

ազգային շրջաններում) պոլսահայությունը հակվում է այն մտայնությանը, թե «Դրան հետ հաշտարար քաղաքականութիւն մը Հայաստանի համար թերևս ավելի նպաստաւոր արդիւնքներ արտադրե քան թե սնանկացեալ 61-րդ հոդուածին վրա ունէ հուսադրութիւն»[1]: Այս խորհուրդն իրագործելու նպատակով Ազգային ժողովը 1885թ. պատրիարք է ընտրում Հարություն եպիսկոպոս Վեհապետյանին, որը «օսմանեան կառավարութեան առջև հայկական խնդրին առթիվ կասկածելի անձնաւորութիւն չէր»[2]: Միաժամանակ Ազգային ժողովին են անդամակցվում Բ.Դռան հայ պաշտոնյաներ և մի քանի խոշոր վաճառականներ, որոնց թվում էր Հովհաննես Նուրյան Էֆենդին, որը և դառնում է Ազգային վարչության ղեկավարը:

Արփիարյանը գտնում էր, որ որդեգրած քաղաքականության հաջող իրականացման համար անհրաժեշտ էր ընտրել այնպիսի անձնավորության, որը գոնե «ազգին ատելի չլիներ»: Ինչ վերաբերվում էր Նուրյանին, ապա «Դրան հայ պաշտոնատարներեն ան ատենն այլ ոչ մեկը Նուրեան Էֆենտիին չափ ազգին հակակրութեանը առարկան էր»[3]: Նուրյանը թողել էր տխուր հիշատակներ իր գործունեության մասին: Դեռ 1876թ. նրան արտաքսել էին Ազգային ժողովի պատգամավորները, այն բանի համար, որ խեղաթյուրելով ժողովի մի շարք խորհրդակցությունների նպատակն ու որոշումները, հայտնել էր կառավարությանը և դրանով «Պատրիարք, քաղաքական ժողով Օսմանեան պետութեան դէմ իբր դավաղիր ներկայացուցած էր»[4]: Նուրյանի ընտրությունը Արփիարյանը համարում էր Հայոց Ազգային ժողովի աններելի սխալներից մեկը: Դառ-

---

[1] Արփիարեան Ա., Ժամանակակից պատմութեան էջեր, Պոստոն, 1879, էջ 4:
[2] Նույն տեղում, էջ 5:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

նալով Ազգային վարչության նախագահ Նուրյանը ձգտում է սահմանափակել պատրիարքական ընտրության ազգային իրավունքը և վերանայել արևմտահայերի ազգային սահմանադրությունը: Հատկապես սուր պայքար է ծավալվում սահմանադրության (կանոնադրության) շուրջը: Արփիարյանը նշում է, որ դեռ Համիդի գահակալության սկզբում սուլթանը խիստ անբարյացակամ դիրք էր բռնել արևմտահայերի ազգային սահմանադրության նկատմամբ, դրա մեջ տեսնելով թե՛ արևմտահայերի ինքնուրույնության ամրապնդման վտանգ, և թե՛ Թուրքիայի մահմեդականների համար որպես «չար օրինակ»[1]:

Շարունակելով այս միտքը՝ Արփիարյանը ցույց է տալիս, որ սուլթանի ցանկությանը ընդառաջում և Նուրյանին պաշտպանում էին կառավարության պաշտոնյա հայ էֆենդիները, կառավարական շրջաններին մոտ մի խումբ խոշոր հայ վաճառականներ[2]: Հրապարակախոսը մանրամասն վերլուծության է ենթարկում սահմանադրության վերաքննության հետևանքները: Նա ցույց էր տալիս, որ դրանից հետո պատրիարքը դառնալու էր սովորական կառավարական մի պաշտոնյա, պատրիարքական թեկնածուների ցուցակը նախապես հաստատվելու էր Բ. Դռան կողմից, որից դուրս էին մնալու սուլթանի վստահությունը չվայելող, այսինքն՝ ժողովրդական անձնավորությունները: Արփիարյանը նշում էր, որ հայ պահպանողական հոգևորականությունը «Բարդուղիմեոսները, Մեսրոպները, բոլոր նրանց նմանները» ևս ձգտում էին վերացնել պատրիարքական ընտրության ազգային իրավունքը, այն նպատակով, որ հեշտացնեն իրենց պատրիարք դառնալու

---

[1] «Նոր կեանք», 1898, N2, էջ 17:

[2] Նույն տեղում, էջ 18:

հնարավորությունը[1]: Այս ճնշումների տակ ընկրկում են պատրիարքներ Հ.Վարդապետյանը, Խ.Աշըյանը, սակայն Արփիարյանի վկայությամբ անհողդողդ է մնում Մատթեոս Իզմիրլյանը: Հրապարակախոսն արդար բողոքի ձայն է բարձրացնում, գրելով, որ «եթե հայ ազգը իր նիւթական կեանքը տնօրինելու ազատ չէ, սակայն գոնէ իր մտաւորական ու բարոյական զարգացումին տէրն է շնորհիւ սահմանադրութեան: Սահմանադրութիւնը ազգային ինքնավարութեան կետն է. անոր ձեռք դպցնել չըլլար»[2]:

Նուրյանի դեմ ըմբոստանում են Ազգային ժողովի մի խումբ երիտասարդ երեսփոխաններ, այդ թվում և Արփիարյանը: Նրանք, հավաքվելով ազգային շրջաններում հարգանք վայելող բժիշկ Հ. Թիրաքյանի շուրջը, հակահարված են տալիս Նուրյանին ու նրա գործակիցներին և աշխատում են թույլ չտալ սահմանադրության վերանայումը[3]: Արփիարյանն ընդգծում է այն հանգամանքը, որ Նուրյանի վարչության շրջանում էլ ավելի սրվեցին հարաբերությունները կառավարության և ժողովրդի միջև:

1887թ. Նուրյանին փոխարինում է Սիմոն Մաքսուդ բեյը: Շատ տիպական է Արփիարյանի հետևյալ բնութագրությունը տրված Սիմոն Մաքսուդին. «Նորընտիր վարչապետը աղմուկի թշնամին էր. իր քաղաքականութիւնը եղած էր միշտ ու շարունակեց ըլլալ, լռութեան մէջ խեղդել ազգային ցաւերը»[4]: Սիմոն Մաքսուդը շարունակում է Նուրյանի հակաժողովրդական, սուլթանամետ քաղաքականությունը: Նա ձգտում էր պատրիարքական աթոռին նստեցնել թուրքական կառավարության

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

[3] Արփիարյան Ա., նշվ. աշխ., էջ 9:

[4] Նույն տեղում, էջ 16:

վստահությունն ու պաշտպանությունը վայելող Բաբգուլեմիրյա եպիսկոպոսին, սակայն պատրիարքական ընտրություններն ժամանակ Սիմոն Մաքսուդի պահպանողական թևը պարտություն կրեց և շատ չանցած «ինքն ալ քաշուեցաւ առանց Նուրյան Էֆենտիէն աւելի բախտաւորութեան», - գրում էր Արփիարյանը[1]։

Հրապարակախոսը հանգում է այն մտքին, որ ցանկացած կուսակցություն կամ հոսանք «հետադիմական ըլլայ թէ ազատական, մեզի միշտ աղետաբեր է, երբ իր վարիչները խղճամիտ անձնաւորութիւններ չեն։ Ոչ պահպանողականութեան վերագրենք մեր կորուստները, ոչ յեղափոխութեան, այլ պարզապէս անոնց առաջնորդներուն անպարկեշտութեանը»[2]։

Պահպանողական վարչությունների մասին խոսելով հրապարակախոսը ցույց էր տալիս, որ նրանց մեծագույն թերությունը ժողովրդից կտրված լինելու հանգամանքն էր։ Անդրադառնալով Սիմոն Մաքսուդ բեյին նա գրում էր, որ եթե «վարչապետը կը ճանչնար թրքական շրջանակները, սակայն տգէտ մըն էր հայ ժողովրդին հոգեբանական ուսումնասիրութեանը մէջ. ոչ ազգին ձգտումը ծանոթ էր իրեն, ոչ ալ նոր սերունդին ու անոր ուժը»[3]։

«Յուլիսի 15-ի ցույցը և հետևանքները» հոդվածում Արփիարյանը դրսևորում է պատմաբանի, քննադատի իր կարողությունները։ Գում-Գափուի ցույցը կարևորություն էր ստանում մի քանի նկատառումներով։ Նախ և առաջ նա նշում է, որ ազգային ղեկավար մարմինների, այդ թվում և քաղաքական կուսակցությունների համար նման իրադարձությունները

---

[1] Նույն տեղում, էջ 20։

[2] Նույն տեղում, էջ 15։

[3] Նույն տեղում, էջ 20։

պետք է դաս լինեն, որից նրանք պարտավոր են օգտվելու և հետագայում խուսափելու նախորդում թույլ տված սխալների կրկնությունից: Մյուս կողմից նա կարևոր էր համարում ցույցի հոգեբանական նշանակությունը. «Գում-Գաբուի ցույցը հակակառավարական հանգամանք ունենալով, իսլամները խորապես հուզուեցան, մանավանդ այն պատճառով, որ մայրաքաղաքին մէջ իշխանութեան դեմ քրիստոնեաներու շարժում մը առաջին անգամն էր որ կը պատահէր, ու երբ այդ «պատահումը» կը կատարուէր հայերէն, իսլամներն անկարող էին ըմբռնել թե դարերեն ի վեր գլուխը կախ ժողովուրդ մը կրնար մեկէն ի մեկ կառավարութեան դէմ շարժելու հանդգնիլ առանց օտար պետութեան մը քաջալերանքին»[1]:

Այսպիսով, որպես հոգեբանական գործոն հրապարակախոսը կարևորում էր ժողովրդի ստրկական հնազանդությունը հաղթահարելու դրսևորումը և Եվրոպական որևէ պետության կողմից հովանավորության բացակայությունը: Հոդվածում նա դատապարտում է Կ.Պոլսի բարձրաստիճան հայ կղերականության և հայ էֆենդիների թրքասիրությունը, ցույց է տալիս, որ հանուն անձնական շահի ու հանգստության նրանք պատրաստ էին տապալելու ցանկացած ժողովրդական նախաձեռնություն, ձախողելու ցանկացած շարժում[2]:

Սահակ Ղազարոսյանի վարչության շրջանը (1889-1891) Արփիարյանը բնորոշում է որպես ներքին սուր բախումներից ազատ մի շրջան, որը զգալի չափով կապում է Ղազարոսյանի չափավոր հայացքների հետ: Քիչ այլ է վիճակը, երբ ցույցից հետո այդ պաշտոնը ստանձնում է Աբիկ էֆենդի Ունճյանը: Աբիկ Ունճյան անձին, նրա հայացքներին ու գործունեությանը Ար-

---

[1] Նույն տեղում, էջ 45:

[2] Արփիարյան Ա., նշվ. աշխ., էջ 45:

փիարյանը տալիս է երկակի գնահատական՝ դրական և բացասական: Ըստ հրապարակախոսի ո՞րն էր դրականը: Չնայած Աբիկ էֆենդին խոշոր առևտրական էր, մեծ կապեր ու ազդեցություն ուներ կառավարական բարձր շրջաններում, այնուհանդերձ «ազգին ալ ատելի չէր եղած Աբիկ էֆենդի և կարելի էր մինչև իսկ ժողովրդական համարել զինքը»[1]: Աբիկ Ունճյանը մեծ բարերար էր: Նրա նյութական աջակցության շնորհիվ Արևմտյան Հայաստանում գործում էին կրթական ու բարեգործական մի շարք կազմակերպություններ. «Նա Հայաստանի «ավելոց համձնաժողովին» անդամ էր, Կենդրոնական վարժարանին հիմնադիրներեն մին, Արմաշի Դպրեվանքին գրեթէ միակ ստեղծողը...»[2]: Արփիարյանը նշում է նաև այն հանգամանքը, որ Աբիկ էֆենդին ջերմեռանդ քրիստոնյա էր: Նա սարսափելի զայրույթի պոռթկում է ցուցաբերում, երբ ոմն Կարապետ Շահպազ էֆենդի ընդունում է իսլամը: Արփիարյանի վկայությամբ Ունճյան էֆենդին բարձր է պահում իր արժանապատվությունը, երբ 1896-ին քաղաքական մեղադրանքով կանգնում է օսմանյան դատարանի առաջ: Չնայած իր նվիրվածությանը Օսմանյան տերությանը և սուլթանին, այնուամենայնիվ Արփիարյանն առանձնացնում է նրան կառավարության այն հայ պաշտոնյաներից, «որոնց աչքին ազգին դէմ դավաճանութիւնը իրանց ամենէն գնահատելի տիտղոսը կը համարուի թրքական շնորհներու վայելումին համար»[3]: Նա վարում էր սուլթանին հանգստացնելու, սիրաշահելու քաղաքականություն, միաժամանակ ձգտում էր հանդարտացնել հնչակյանների կրքերը: Սրա հետ մեկտեղ Ունճյանը և պատրիարք Աշըյա-

---

[1] Նույն տեղում, էջ 64:

[2] Նույն տեղում, էջ 67:

[3] Նույն տեղում , էջ 69:

նը բավական խիստ վերաբերմունք են ցուցաբերում հայ մամուլի նկատմամբ։ «Մինչև Աբիկ Էֆենդիի դիկտատորութեան սկզբնաւորութիւնը Կ. Պոլիս հայ մամուլը ազգային խնդիրներու մէջ բավական անկախօրէն կը գրեր։ Կառավարական նախարգել գրաքննութիւնը գրեթէ չէր խառնուեր մէր ներքին գործերու վերաբերող ուղղութեան, - գրում էր Արփիարյանը։ Այս էր աւանդութիւնը, զոր ջնջեցին Աբիկ Էֆենտի և Խորեն պատրիարք»[1]։ Հրապարակախոսը սուր քննադատության է ենթարկում նրանց, որոնցից մեկն ազատամիտ հոդվածների դեմ պայքարում էր «Դռանը թազրիր գրելով», իսկ մյուսը՝ «Անձամբ դուռը երթալով և օրագրութեան դէմ խիստ տնօրինութիւններ պահանջելով»[2]։ Արփիարյանի վկայությամբ այդ շրջանից սկսած խստորեն սահմանափակվեց ազգային խնդիրների վեր հանելը և խորացավ գրաքննությունը, «որը ամենայիմար հսկողութեամբ կշլատէր ոևէ կարծիքի արտահայտութիւն»[3]։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է սակայն նշել, որ գրաքննության սաստկացումը սուլթանի վարած հայահալած քաղաքականության դրսևորումներից էր։ Իսկ ինչ վերաբերվում է ազգային պահպանողականների այս ուղղությամբ թափված ճիգերին, ապա այն, ինչ խոսք, ունեցավ իր բացասական հետևանքները։

Աբիկ Ունճյանի վարչության շրջանն Արփիարյանն անվանում է դիկտատորության շրջան, այն պատճառով, որ նրա ջանքերով Ազգային ժողովի թափուր տեղերը լրացվեցին պահպանողական հաճոյակատար երեսփոխանների ընտրու-

---

[1] Նոյն տեղում, էջ 72։

[2] Նոյն տեղում, էջ 77։

[3] Նոյն տեղում։

թյամբ, որի արդյունքում «պատրիարքը և Ունճյան Աբիկ Էֆենտի ունեցան հլու հպատակ Ազգային ժողով մը»[1]:

Պահպանողականների և ազատականների բախման մյուս պատճառը դարձավ նոր կաթողիկոսի թեկնածության հարցը: Սիմոն Մաքսուդը, որը 1891 թ. երկրորդ անգամ էր եկել պաշտոնավարության, Խորեն Աշըքյան պատրիարքն ու նրանց կողմնակիցները, որոնք առաջադրել էին Աշըյանի թեկնածությունը, պարտվեցին: Էջմիածնում տեղի ունեցած ընտրության ժամանակ արևելահայերի հետ մեկտեղ արևմտահայերի ներկայացուցիչներն իրենց ձայնը տվին Մկրտիչ Խրիմյանին և նոր կաթողիկոս ընտրեցին Արփիարյանի բնորոշմամբ «աքսորեալ մեծ եկեղեցականը»[2]:

Հանրագումարի բերելով պահպանողական վարչությունների գործունեությունը, Արփիարյանը գրում է, որ նրանք «ոչ մի պատեհութինից չկարողացան օգտուել Հայաստանի վիճակի մէջ բարելաւութիւն ներմուծելու համար»[3]: Դրա փոխարեն ավելի սրեցին հայ-թուրքական հարաբերությունները: Նա դառնությամբ էր նշում, որ Սիմոն Մաքսուդի օրոք գավառահայությունից ստացվող տեղեկագրերը, բողոքագրերը լրիվ կոծկվում էին և անտեսվում էին ժողովրդի շահերը: Այդպիսի ընթացքը շարունակվեց մինչև 1894թ, մայիսը, երբ ահաբեկչի գնդակից ընկավ Սիմոն Մաքսուդ բեյը[4]: Ո՞րն էր պահպանողականների գործունեության ձախողման հիմնական պատճառը: Այս հարցին Արփիարյանը պատասխանում է՝ «Քաղաքական

---

[1] Նույն տեղում, էջ 78:

[2] Նույն տեղում, էջ 85:

[3] Նույն տեղում, էջ 81:

[4] Արփիարյան Ա., նշվ. աշխ., էջ 101:

ժողովականները սխալէ-սխալ գլտորեցան, վասնզի ժամանակի ոգին ու ձգտումը չը ճանչցան»[1]:

Սիմոն Մաքսուդի սպանությունից և Խորեն Աշըյանի հրաժարականից հետո Ազգային ժողովը պատրիարք ընտրեց Մատթեոս Իզմիրլյան եպիսկոպոսին: Այստեղ Արփիարյանը կանգ է առնում՝ ավարտելով ազգային վարչության 10 տարվա պատմության շարադրումը: Նա վաղ է համարում Իզմիրլյանի պատրիարքության մասին գրելը և բավարարվում է նախորդ տասնամյա շրջանի արդյունքների ամփոփմամբ: Հրապարակախոսը նշում է, որ պահպանողական վարչությունների գործունեությունը չնայած իր թուրքամետ բնույթին, այնուամենայնիվ, տվեց սպասվածին հակառակ արդյունքները՝ կաթողիկոս և պատրիարք ընտրվեցին Օսմանյան իշխանությանն ատելի Մկրտիչ Խրիմյանը և Մատթեոս Իզմիրլյանը, որը նույնպես կառավարության համար վստահելի անձնավորություն չէր: Արևմտահայերի Ազգային Սահմանադրությունը, որի արգելմանը հետամուտ էր կառավարությունը և որը դադարեցված էր 1891 թ., վերսկսեց գործադրվել 1894 թ.: Պատրիարքարանի ժողովներից վտարվեցին կառավարությանը ծառայող հայ պաշտոնյաները: Նորից առաջ քաշվեց և պատրաստվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ծրագիրը:

«Նոր կեանքի» էջերում Արփիարյանն արժևորում է արևմտահայ կյանքի բոլոր նշանավոր դեմքերի կատարած գործը: Եվ եթե նա բարձր է գնահատում Գրիգոր Օտյանին, Նահապետ Ռուսինյանին, նրանց համարելով արևմտահայ կյանքի վերածննդի «նախակարապետ ռահվիրաններ»[2], ապա խիստ քննադատության է ենթարկում հատկապես Հով-

---

[1] Նույն տեղում, էջ 81:

[2] «Նոր կեանք», 1900, N 4, էջ 61:

հաննես Նուրյանին, որը լինելով «հզօր նկարագրի տէր անձնաւորութիւն» դժբախտաբար չծառայեց իր ժողովրդին: Նուրյանի հետ մեկտեղ նա խարազանեց նաև Սիմոն Մաքսուդին, որը «փարուեց խլամներուն» և իր ազդեցությունն ու եռանդը վատնեց ազգադավ գործերի:

Մերժելով կառավարության հայ պաշտոնյաների հակաազգային ընթացքը, Արփիարյանը համոզված էր, որ պատմությունը չի ներելու նրանց և «երբէք զիրենք հանգիստ պիտի թողու»[1]:

Պետք է նշել սակայն, որ ազգային պահպանողականների նկատմամբ Արփիարյանը տարբերակված մոտեցում էր դրսևորում: Եթե նա դատապարտում էր Նուրյանին ու Սիմոն Մաքսուդին, ապա դրվատանքի էր արժանացնում Պալյան գերդաստանին,[2] Գրիգոր Աղաթոնին, որոնք ազգանպաստ մեծ գործեր են կատարել[3]:

Չնայած պահպանողականների հետ ունեցած տարաձայնություններին ու քննադատությանը, այնուամենայնիվ, Արփիարյանը կարողանում է վեր բարձրանալ զուտ գաղափարական, աշխարհայացքային պատնեշներից և գնահատել նրանց մեջ եղած մեծություններին: Օրինակ, նա գովեստով էր խոսում Ռեթեոս Պերպերյանի մասին[4]: Արփիարյանը երախտագիտության խոսք էր ուղղում Հովհաննես Տերոյենցին և ցավում, որ նրա հետ ընդամենը մեկ անգամ է հանդիպել: «Հայոց ամենէն մեծ աստուածաբանը, որուն հարգը սակայն շատ չէն գիտեր, - գրում էր Արփիարյանը Տերոյենցի մասին: - Թուրքահայերն այն մեծ դեմքով կրնան հպարտանալ: Ռուսահայերն

[1] Նույն տեղում, N 6, էջ 85:
[2] Նույն տեղում, N 2, էջ 28:
[3] Նույն տեղում, N 18, էջ 275-279:
[4] «Մասիս», 1887, N 3867:

նման բազմաբեղուն դեմք մը չէն ունեցած, անոր ինքնագիր և թարգմանած ստուար հատորները գրատուն մը կը կազմեն»[1]: Արփիարյանն ափսոսանք էր հայտնում, որ Տերոյենցի գործերի մեծ մասն անտիպ է մնացել:

*գ) Արփիարյանը արևմտահայ ունևոր խավերի մասին*

Արփիար Արփիարյանը սուր պայքար էր մղում հայ էֆենդիների քաղքենի բարքերի դեմ: Նա խստորեն դատապարտում էր նրանց այն բանի համար, որ արհամարում էին գավառահայությանը, նրա լեզուն ու սովորույթները: Արփիարյանը ցույց էր տալիս, որ նրան սպառնում է ազգային դեմքն ու մտածողությունը կորցնելու վտանգը: Պաշտպանելով հասարակ աշխատավոր հային, նա գրում էր. «Մի զարմանաք նան, երբ լսեմ, թէ մեր կառապանները, մեր դռնապաններն ու բեռնակիրներեն ալ հայ են ու այնպես լավ, որ շիտակը կվարանիմ անոնց մեկ հատը ձեզի պեսներուն հետ փոխանակել»[2]:

Քննադատելով Կ. Պոլսի հայ ունևոր խավերի շրջանում տիրող այն մտայնությունը, թե «ազգային պաշտոն մը հանձն առնելը միմիայն բեռ մըն է», Արփիարյանը գտնում էր, որ նման մտածելակերպի տեր մարդիկ միայն խոչընդոտելու էին ազգային առաջադիմությանը: Ազգային վարչական պաշտոններում այնպիսի մարդկանց թեկնածությունը պետք է առաջադրել, որոնք անկեղծորեն նվիրված լինեն իրենց գործին և մտահոգված ազգի ճակատագրով[3]: «Հանրային գործի մը մեջ դուք պիտի գտնեիք ընդհանրութեան օգտակար ըլլալու զորացնող ու

---

[1] Երեմեան Ս., նշվ. աշխ., էջ 384:

[2] «Հայրենիք», 1894, N 758:

[3] «Հայրենիք», 1892, N 286:

կենդանացնող տպաւորութիւն մը, - գրում էր Արփիարյանը, - մինչդեռ կփնտրեք հոն համբաւի, անունի, հռչակի մը զգուանքները, որոնք երբ ձեզ կմերժվին, կկարծեք թե ձեր գրպանէն պարզապես ստակ վերուցեր են»[1]:

Արփիարյանին խորապես հուզում է ու վշտացնում պոլսահայ հարուստների եսասիրությունն ու անտարբերությունը, որոնք չեն խրախուսում, չեն նպաստում ազգի տաղանդավոր մարդկանց առաջքաշմանը: Նա ցավով էր գրում, որ «մեր դրամատերերը գրեթե միշտ պաղ կերպով վարուած են անոնց հետ, որոնք աշխարհիս մէջ չունին ուրիշ հարստութիւն, բայց եթէ իրենց տաղանդը»[2]:

Ա. Երեմյանը գրում էր. «Արփիարյանը կիմացնէր հարուստներուն, որ պետք է հրատարակչական գործին ձեռնտու ըլլալ, թէ գեղջուկին համար ծրի գրքեր պետք է հայթհայթել և առանց հարուստներու դրամական աջակցութեան կարելի չէ: Գրագետներու մեկենաս ըլլալու հինավուրց ամիրայական հատկութիւնը պոլսեցի հարուստը շուտով կորսնցուց և ալ չը գտավ: Այս անտարբերութիւնը բնականաբար այպանելի է, Արփիար կհուզէ այդ խնդիրը, բայց բնաւ բարիք մը չի յուսար»[3]:

Արփիար Արփիարյանի կողմից ունևոր խավի քննադատությունը ժամանակի նշանավոր գործիչների կողմից տարբեր ձևով ընկալվեց: Երե. Օտյանը, Շահնազարը, Բաշալյանը Արփիարյանի գաղափարակիցներն էին, ապա Արշակ Չոպանյանը այլ կարծիք ուներ: «Անահիտ» հանդեսում նա գրում էր. «Իր մեծ սխալներէն մեկ եղավ անհաշտ, մոլեգին կռիվ մը մղել ամբողջ հարուստ դասակարգին դէմ. եթէ «Հայրենիք» հա-

---

[1] Նույն տեղում:

[2] Երեմեան Ս., նշվ. աշխ., էջ 222:

[3] Նույն տեղում:

րուստներուն մեջէն բռնուելիք կողմեր ունեցողներուն նկատմամբ բարեկամական քննադատութեան անթոյն խորհրդատւութեան մեթոտները գործածած ըլլար, անոնցմէ մեկ կարևոր մասը իր բանակի մէջ պիտի ունենար և անոնցմով պիտի կարենար իրագործել ծրագիրներ, որոնք միմիայն կծու քրոնիկներով չէ որ կրնան իրագործուիլ»[1]:

Արփիարյանի ուսումնասիրողներից Սիմոն Հակոբյանը Ա.Չոպանյանի նման պատկերացումը ճիշտ չէր համարում: Նա գրում էր, որ «Հայրենիքի» չափավոր ծրագիրը, որը համիդյան բռնապետության խստացման տարիներին, մոլեգնող գրաքննության պայմաններում չէր էլ կարող արմատական հարցեր ընդգրկել նույնիսկ այդ ծրագիրն անգամ «մեծ հակառակութիւն կը գտնէր Պոլսի վաճառականներու շրջանակների մէջ»[2]: Խոսելով այս հարցի մասին՝ Կարլեն Դալլաքյանը գրում է. «Արշակ Չոպանյանը «Հայրենիքի» արմատական դեմոկրատական ուղղությունը քննադատում էր աջից: Դա էլ հենց նրա աշխարհայացքի սահմանափակվածության արդյունքն էր»[3]: Սակայն Արփիարյանի կողմից «ազնվաշուքների ու վաճառաշուքների» արատների քննադատությունը միակողմանի ու ինքնանպատակ չէր: Նա տեսնում էր նաև այնպիսի հարուստներ, ովքեր ցուցաբերում էին ուշադրություն և հոգատար վերաբերմունք ազգային գործերի նկատմամբ ու մամուլի միջոցով խրախուսում էր նրանց և դրվատանքի արժանացում: «Պ. Կարապետ Տ. Հակոբյան սեղանավոր մըն է և մեծ ալ հարստութեան տեր չէ, սակայն այդ մարդը անդադար ստակ կուտա եկեղեցիի, դպրոցի, բարեգործական ձեռնարկներու, - գրում էր

[1] Անահիտ, Փարիզ, 1901, N 2:
[2] Հակոբեան Ս., նշվ. աշխ., էջ 9:
[3] Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան, Եր., 1987, էջ 37:

Արփիարյանը: - Արդ այս մարդ մին է այն անձնավորութիւննե-րէն (զոր կսիրենք ու կհարգենք), որ մեծ ուսմունք չունին և սա-կայն անկեղծորեն կսիրեն իրենց ազգն ու եկեղեցին, որոնց զարգացման համար ինչ որ կարելի է ընել կընեն և իրենց սնա-տուցած ծառայութեան փոխարեն ազգին մտքին վրա տիրա-պետելու հավակնութիւնը չունին, բացառիկ պատիւներ չէն պահանջեր, գովեստներ լսելու հետամուտ չէն ըլլար...»[1]:

Պոլսահայ որոշ շրջանների կողմից հայ առևտրական-ներին նեղություններ տալու կապակցությամբ «Հայրենիքը» գրում էր, որ ազգի ընդհանուր շահերը պահանջում են, որ պաշտպանվեն ժողովրդի բոլոր խավերի շահերը. «երբ մեր էս-նաֆը, խանութպանը, վաճառականը կպաշտպանենք, մեր ընդհանուր օգտին տեսակետուն է: Վերջապես ո՞վ է մեր դպրո-ցը, մեր եկեղեցին, մեր գրականութիւնը, մեր բարեգործական հաստատութիւնները հոգացողը. կոշկակարն է, մանուֆաթուրա-ճին է, ձկնավաճառն է, պանքիրն է, վարժապետն է, ոսկերիչն է, ամենքն են: Ուրեմն դասակարգի հաջողութիւնը կնպաստէ ամե-նուս հաջողութեանը, մեկուն վնասէն բաժին ունին ամենքն ալ»[2]: Սա ակնառու վկայությունն է այն բանի, որ Արփիար Ար-փիարյանը ազգի բոլոր խավերի միասնության մեջ էր տեսնում առաջադիմության ու հաջողության գրավականը: Այս տե-սանկյունից էլ հարուստ վերնախավերի արատների քննադա-տությունը նպատակ ուներ սևեռել նրանց ուշադրությունն ազ-գային խնդիրների վրա, մտահոգել նրանց իրենց ժողովրդի ճակատագրով, որովհետև Արփիարյանը ելնում էր այն մտայ-նությունից, որ «ընկերական արդի կազմակերպութեան մէջ ժո-ղովրդի մը ունևոր դասակարգերը իրեն զորավիգներեն են. երբ

---

[1] «Հայրենիք», 1891, N 101:

[2] Նույն տեղում, 1892, N 307:

անուն խելացի աջակցութիւնը կը սլակսի, առաջադիմութիւնն ալ կը կաղա»[1]:

Արևմտահայ հասարակության ունևոր խավերի արատների բացահայտումն ու քննադատությունը բացի հրապարակախոսությունից արտահայտվել է նաև Արփիարյանի գեղարվեստական գործերում: Իր «Ազգին բարերարները», «Օրհնեալ գերդաստանը» և այլ ստեղծագործություններում նա սուր ծաղրի ու քննադատության է ենթարկում կեղծ ազգային բարերարներին, շահամոլ, ազգուրաց ու ստրկամիտ հայ էֆենդիներին: Սոցիալական շեշտադրում կրող իր ստեղծագործություններում, ինչպես օրինակ «Դերասանուհին», «Հաճոյքի համար», «Կատակ մը», «Դատապարտեալը» և այլն արտահայտվում է Արփիարյան – գրողի խոր համակրանքն ու կարեկցանքը հասարակ մարդկանց նկատմամբ: Նա միաժամանակ ընդգծում է, որ այդ մարդիկ անօգնական են հասարակության հետամնացության, վերնախավի մարդկանց անհոգության ու այլասերված բարքերի, ազգային հաստատություններում իշխող անարդարության ու հոգևորականության կողմնապահության նկատմամբ: Գրողը ցույց է տալիս, որ նրանցից շատ շատերը դառնում են այդ հասարակության զոհը[2]:

Իհարկե, Արփիար Արփիարյանը տեսնում էր արևմտահայության սոցիալական շերտավորումը և նրա համակրանքը աշխատավոր մարդու կողմն էր: Սակայն այդուհանդերձ, նա մերժեց հայ հասարակության մեջ դասակարգային պայքարի գաղափարը, մերժեց, որովհետև ճիշտ էր ըմբռնել ժամանակի ոգին, այն, որ տիրապետող թուրքի համար «բանքիր Մկրտիչը նույնքան ստրուկ է, որքան բեռնակիր Մրտոն»:

[1] Նույն տեղում, 1893, N 557:

[2] Արփիարյան Ա., Երկեր, Եր., 1987:

Ինչ վերաբերվում է ուննոր դասերի քննադատությանը, ապա պետք է ընդգծել, որ Արփիարյանի նպատակը վերջիններիս առջև իրականության բացահայտումն էր և նյութապես զոբեղներին մղելը ազգօգուտ գործունեության: Նա ազգային համաձայնության գաղափարի դրոշակակիրն էր:

Արփիարյանի քննադատությունները, Ազգային ժողովում նրա համարձակ ելույթներն իր դեմ են լարում բարձրաստիճան հոգևորականությանը, ազգային ժողովի մեծահարուստ էֆենդիներին: Պահպանողականները օրըստօրե ավելի ու ավելի են ուժեղացնում իրենց ճնշումը «Արևելքի» վարչական խորհրդի վրա՝ պահանջելով հեռացնել Արփիարյանին «Մասիսի» խմբագրի պաշտոնից: Ինքը՝ Արփիարյանն այդ մասին գրում էր. «Քաղաքական ժողովն հուզէալ կերևի նաև ինչ-ինչ քննադատութիւններէ և դիտողութիւններէ, զոր ըրած ենք Ազգային ժողովի նկատմամբ և կսպառնա դիմել օրինական միջոցներու մեզ դեմ»[1]: Վերջապես թերթի վարչությունը տեղի է տալիս և 1887թ. հունիսին «Արևելքի» վարչական խորհրդի որոշմամբ նա թողնում է «Մասիսի» խմբագրությունը հինգ ամիս խմբագրելուց հետո: Հունիսի 13-ի համարի առաջաբանում Արփիարյանը համառոտակի շարադրում է այն նպատակները, որոնց նա հետամուտ էր իր խմբագրության շրջանում: Նա գրում է. «Մասիս» շաբաթաթերթը կատարելապես ազգային թերթ մը ըլնելու հետամուտ եղած եմ: Վեպ, թղթակցութիւն, խմբագրական, ամէն կարգի յոդուած ուրիշ նպատակ չունեցան, բայց եթէ Պոլսոյ, Հայաստանի, ռուսական հայոց կեանքի ամէն երևոյթներն ուսումնասիրել»[2]:

---

[1] «Մասիս», 1887, N 3869:

[2] Նույն տեղում:

Տարիներ անց Արփիարյանը բացատրում է իրեն «Մասիսից» հեռացնելու պատճառները. «Արևելքի» վարչական խորհրդի անդամներէն ոմանք պաշտոն ունեին ազգային գործերու մէջ, գործիչներ էին: Բայց ամէնքս միևնոյն գաղափարներուն ծառայող չէինք, հետևաբար անհամաձայնութիւնը կը տիրեր: Մյուս կողմէն գործերու գլուխ գտնվողները կուզեին, որ իրենց կարծիքներն արձագանք գտնեն «Արևելքի» մէջ և իրենց գործերն անխտիր պաշտպանուեին առանց բացառութեան»[1]: Սակայն հրապարակախոսը չենթարկվեց պատրիարքարանի և ազգային վարչության բարձրաստիճան անդամների կամքին և ինչպես ինքն էր գրում. «Առանց որևէ նկատողութեան սկսած էի անկախ կերպով համոզում հայտնել օրուան խնդիրներուն վրայ: Մեր վարչական անձինք (թերթի ղեկավարութիւնը, պատրիարք Հարութիւն Սրբազան, Նուրեան Էֆենդի, Հարութիւն Մերեեմզուլի և այլն) շատ չէին ախորժեր «Մասիս» ընթացքէն և զայն «Արևելքի» վարչական խորհրդին միջոցով դադարեցնել տալու հետամուտ էին»[2]: Սակայն հակառակորդները չէին սահմանափակվում միայն այդքանով: Ցանկանալով օր առաջ ազատվել իրենց վտանգավոր ախոյանից, Արփիարյանի հակառակորդները համխյան շրջանի համատարած կասկածի ու անվստահության մթնոլորտում լրտեսագրեր էին ներկայացնում կառավարությանը[3]: Ավելին, նրանք կաշառքի կամ բարոյական ազդեցության միջոցով Արփիարյանի դեմ էին հանում որոշ հայկական թերթերի խմբագիրներին:

Այս առումով ուշագրավ է 1885թ. դեկտեմբերին Արփիարյանի նամակը Գր. Արծրունուն, ուր նա գրում է. «Ստոյգ է,

---

[1] «Հայրենիք», 1893, N 355:

[2] Նույն տեղում:

[3] Ստեփանյան Գ., նշվ. աշխ. էջ 112-113:

որ մի քիչ այժմ կացութիւնս ծանր է, ամեն կողմէ ուշադրութիւն կա: Պոլիս և Իզմիր այնքան հայերեն թերթեր կան ամենն ալ առանց խտրութեան իմ անձիս դէմ կը շարժին և շատ տարօրինակ կը թուի եթէ անցնի շաբաթ մը հորում ինձ դեմ բանը մը չը հրատարակուի: Իհարկէ «Մշակի» թղթակցութիւններս նիւթ պիտի ընեն իրենց, որպեսզի զիս մատնեն կառավարութեան»[1]:

Սակայն գործադրված հալածանքները չվհատեցրին նրան: Հայ էֆենդիների ու բարձրաստիճան կղերականության հոռի բարքերի, ապազգային մտածելակերպի ու գործելակերպի քննադատությունը, կղերականության արատների բացահայտումն ու ձաղկումը Արփիարյանը նոր ուժով շարունակեց «Մասիսից» դուրս գալուց հետո՝ «Հայրենիքի» խմբագրության տարիներին:

Ինչ վերաբերվում է «Մասիսին», ապա Արփիարի դուրս գալուց հետո այն կորցրեց ոչ միայն իր արդիականությունն ու բարձրացված հարցերի հասարակական սրությունը, այլև իր տաղանդավոր աշխատակիցներին՝ Գր.Զոհրապին, Հր.Ասատուրին, Ե.Տեմիրճիպաշյանին, Լ.Բաշալյանին, որից հետո էլ ընթերցողների մեծ մասին: Այդ պատճառով 1888թ. հունվարին «Մասիսի» խմբագրությունը նորից հանձնվեց Արփիարյանին, բայց ընդամենը մի քանի ամիս անց նորից արգելվեց նրա հրատարակությունը: Պատճառը դարձյալ նույնն էր. Ազգային վարչությունը չհանդուրժեց Արփիարյանի բռնած դիրքը և նա վերջնականապես հեռացավ «Մասիսից»: 1890թ. կրկին վերաբացված «Մասիսի» խմբագրությունն անցավ Հրանտ Ասատուրի և Գրիգոր Զոհրապի ձեռքը[2]:

---

[1] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ., N 120, էջ 45:

[2] «Հայրենիք», 1893, N 355:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

19-րդ դարի վերջին քառորդում Արևելյան հարցի սրումը հանգեցրեց 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմին: Այն ավարտվեց 1878թ. փետրվարին Սան-Ստեֆանոյում կնքված պայմանագրով: Նրա 16-րդ հոդվածը վերաբերվում էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացմանը, որի վերահսկողությունը դրվում էր Ռուսաստանի վրա: 16-րդ հոդվածը միջազգային դիվանագիտության մեջ մտավ «Հայկական հարց» անունով և դարձավ Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը: Սակայն Եվրոպական տերությունների ճնշման տակ, 1878թ. հունիսին Բեռլինի կոնգրեսում վերանայվեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: 16-րդ հոդվածի փոխարեն ընդունվեց 61-րդ հոդվածը, որը արևմտահայերի համար բարենորոգումների իրականացման իրական երաշխիք չէր ստեղծում:

Կոնգրեսից հետո հայ-թուրքական հարաբերությունները բարդացան: Հայերին տրվելիք ինքնավարության մտքից կատաղած՝ Բ. Դուռը ուժեղացրեց քաղաքական ու կրոնական ճնշումները: Լեոն գրում էր. «Թուրքական կառավարությունը լսել անգամ չէր ուզում հայերին տրվելիք բարենորոգումների մասին: Բայց դա բավական չէր: Պետք էր արմատախիլ անել հայերին, նրանց պահանջներն էլ արմատախիլ անելու համար»[1]: Սուլթանը դիմում է երկդիմի ու խորամանկ քայլի. առերես ընդունելով հայերին բարենորոգումներ տալու պահանջը իրականում ձեռնամուխ է լինում իր հայակործան ծրագրի

---

[1] Լեո, նշվ. աշխ., էջ 115:

իրականացմանը՝ դրանով փորձելով լուծել Թուրքիայի համար այդ կնճռոտ խնդիրը:

Բեռլինի վեհաժողովից հետո, 1878թ. նոյեմբերին Արփիարյանը գրում էր, որ հարստահարությունները ավելի սաստկացան, որպեսզի հայերը կամ հեռանան իրանց բնակութեան վայրերից, կամ անհնարին լինի նրանց կողմից ազգային շարժման բարձրացումը[1]: «Սուլթանի և նախարարների հանդիսաւոր խոստումները մնացին անկատար: Օրեցօր բարեկարգութեանց հարցը ավելի հետաձգումութիւն կը ընէ, քան առաջադիմութիւն»[2]:

Հայերի հանդեպ թշնամություն էր բորբոքում նաև թուրքական մամուլը, որը օրեցօր ավելի անսանձ էր դառնում: Ի պատասխան հայերի կողմից բարենորոգումների կիրառման պահանջի՝ թուրքական «Օսմանլը», «Հազիզաթ», «Վագըթ» թերթերը պահանջում էին դժգոհ տարրերին արտաքսել երկրից, սուլթանին խորհուրդ էին տալիս հայերի կոտորածներ սարքել[3]: Արփիարյանը գրում էր. «Թիւրք թերթերու նպատակն է տաճիկ ժողովուրդը հայոց դէմ գրգռեալ պահել, զի կդիտեն թէ մենք Հայաստանի մէջ հայերն ու թիւրքերը համաձայն պահելու կաշխատեմք»[4]: Թուրքերի նենգադավ քաղաքականության էության գիտակցումով է Արփիարյանը գրում, որ կառավարությունը քուրդ ցեղապետերին (Օբեյդուլլա, Բահրի բեյ և այլն) խրախուսում է, պարգևներ տալիս և տրամադրում հայոց դեմ: «Մի բարեկամ, որ Բասէնի կողմերը կը ճանապարհորդէ, կը գրէ մեզ, թէ թրքաց լրտեսներ կը շրջագայեն քիւրդերու մէջ,

---

[1] «Մշակ», 1878, N 206:

[2] Նույն տեղում, 1883, N 30:

[3] Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը. Եր., 1980, էջ 42: Տե՛ս նաև «Մշակ», 1880, N 160:

[4] «Մշակ», 1880 , N 158:

կը զրզռեն զանոնք ընդդէմ հայոց, հաւատացնելով նոցա, որ հայերն ֆրէնկներու կը դիմեն եւ անոնցմէ զորք ուստակ կու-զեն, որ քիւրդերը ջնջեն»[1]: 1880-ական թ.թ. «Մշակի» էջերը լի են արևմտահայերի հարստահարությունների մասին նյութերով: Արփիարյանի թղթակցությունները լրացնում են այդ շարքը: Նա խոր վշտով է գրում իր հայրենիքի թշվառ վիճակի մասին. «Գավառներէն եկած լուրեր շատ ցաւալի են: Այնպիսի սոսկա-լի նկարագրութիւններ կը լինեին սովու և աղէտից, որ մարդ կմտածէ, թէ արդեօք տասնևիններորդ դարուն վերջն ենք թէ միջին դարու»[2]: Բռնությունների սաստկացման հետ ուժեղա-ցավ նաև գրաքննությունը: 1880-ական թվականների կեսերից սուլթան Աբդուլ Համիդի կասկածամտությունը մամուլի հան-դեպ հասավ ծայրահեղ չափերի: Գրաքննության պաշտոնյա-ները կարող էին ցանկացած պահի մտնել խմբագրատները և հանել կասկածելի նյութերը: Ե. Օտյանը գրում էր. «Ինչ որ ան-տանելի էր այդ թվականին գրաքննական խստութիւնն էր: Ամեն անմեղ գրութեան մը մեջ վտանգաւոր ակնարկութիւն-ներ կտեսնեին ու ամբողջ հոդվածը կջնջեին»[3]: Նա վկայում էր, որ բավական էր նույնիսկ որևէ թուրք պաշտոնյայի անվան մեկ տառը սխալ գրել, որպեսզի այդ թերթը փակվեր իսկ խմբա-գիրն աքսորվեր: Գրաքննության խստության պատճառով ինչ-պես թուրքական այնպես էլ կայսրության մյուս ժողովուրդնե-րի մամուլի առվար մասը կորցրեց իր հասարակական ակտի-վությունը` քողարկվելով բարոյախոսության մշուշապատ բնա-գավառում[4]:

---

[1] Նույն տեղում, N 135:
[2] Նույն տեղում, 1888, N 31:
[3] Օտյան Ե., Երկերի ժողովածու, հտ. 4, Երևան, 1962, էջ 34:
[4]Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Եր., 1939, էջ 258:

Սուլթանի վարած քաղաքականության մի ուղղությունն էլ նպատակ ուներ պակասեցնել հայերի թիվը մուսուլմանական տարրի ավելացման հաշվին: Այդ նպատակով Բ. Դուռը Եվրոպական Թուրքիայից գաղթած մուհաջիրներին վերաբնակեցնում էր հայկական նահանգներում: Արփիարյանը զայրույթով գրում էր. «թող ալ Հայաստանի բոլոր հայերն ուրախանան, աչքներիս լույս, բարեկարգութեանց սկզբնավորութիւնն է: Մենք արդեն գտնուած քյուրդերու ու չերքեզներու դեմ կբողոքեինք, մեզ նոր հիւրեր կխրկեն»[1]: Լեոն այդ առթիվ գրում էր. «Ստորագրելով Բեռլինում պարտավորություն պաշտպանելու հայերին քրդերի ու չերքեզների դեմ, թուրքած կառավարությունը հայաբնակ տեղերի վրա էր բաց թողնում տասնյակ հազարներով չերքեզներ, որոնք գաղթել էին Բուլղարիայից և ավելի մեծ քանակությամբ թուրքեր, որոնք գաղթել էին Կարսի և Արդահանի կողմերից: Ճակատագրի որքան անողորմ ծաղր: Եվրոպայից իբր թե քաղաքական իրավունքներ ստացած դժբախտ գյուղացիությունն ավելի ևս փոքրանում, նսեմանում էր նորեկ գազանների ճնշման տակ: Ներսես պատրիարքը դեսպանատնից դեսպանատուն էր վազում, բողոքում, խնդրում հանել, հեռացնել գաղթականներին հայաբնակ տեղերից, բայց ով ինչ կարող էր անել: Լայարդը ամենաազդեցիկը դեսպանների մեջ, պատասխանում էր, որ Թուրքիան իբրև մահմեդական երկիր ապաստան է տալիս իր կրոնակից փախստականներին»[2]:

Ի հակակշիռ հայկական բարենորոգումների ծրագրի, թուրքերը ձգտում էին ոտքի հանել քրդերին: Բարձր դուռը սի-

---

[1] «Մշակ», 1878, N 193:

[2] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հտ. Ա, Եր., 1994, էջ 114:

բաշախում էր քուրդ ռազմական ավազանուն և, իբրև պարգև, երբեմն նրանց էր տրամադրում հայկական բնակավայրերի հարկազանձման իրավունքը՝ առավել ուժեղացնելով երկու ժողովուրդների միջև եղած հակասությունները[1]։ Թուրքերը նույնիսկ քրդերի անունից կազմակերպում են շեյխ Օբեյդուլլահի ապստամբությունը, որը գալիս է Պոլիս, իբր քուրդ ժողովրդի պահանջներով։ Արփիարյանն այդ կապակցությամբ գրում էր. «Շեյխը դեսպանաց պիտի հասկացնէ եղեր, թե քիւրտ ժողովուրդը երբէք չը պիտի կրնայ ներել, որ Եւրոպիոյ շնորհիվ հայք առանձնաշնորհեալ դիրք մը ստանան Հայաստանի մէջ, որոյ հետևութիւնը ուրիշ բան չը պիտի ըլլայ, բայց եթէ քիչ ժամանակի մէջ քիւրդերու ոչնչանալը. հետևաբար ինչ որ ալ ըլլայ իրենք պիտի դիմադրեն և տաձկած դաշնակցութիւնը իրենց հետ է»[2]։

Հասկանալով Բ. Դռան նենգամտությունը, շեյխ Օբեյդուլլան թուրքերի ձեռքին կույր գործիք չդարձավ և այդ պատճառով շուտով աքսորի ճանապարհին սպանվեց։

Բռնությունների ալիքը տարածվում է նաև հոգևորականության վրա։ Արփիարյանը գրում էր, որ տարբեր պատրվակներով բազմաթիվ հայ կրոնական գործիչներ ենթարկվել են բռնությունների, բանտարկվել կամ աքսորվել են։ «Կառավարութիւնը կաշխատի խորտակել մեր հոգևոր իշխանութեան ազդեցութիւնը, որոյ վերջին ապացոյցներն ալ ունեմք»[3]։

Արփիարյանը ցույց էր տալիս, որ Բ. Դուռը փորձում էր արևմտահայությանը պառակտել նաև ներսից, այդ նպատակով նա պատրիարքի դեմ էր գրգռում նաև կաթոլիկ հայերին։

---

[1] Հայոց պատմություն, հտ. 3, գիրք առաջին, Եր., 2010, էջ 458։
[2] «Մշակ», 1881, N 109։
[3] «Մշակ», 1879, N 70։

Թուրքական բռնությունների ալիքը տարածվեց նաև հայ մշակույթի վրա: Մելիքսեդեկ եպիսկոպոս Մուրադյանի «Պատմութիւն Հայաստանեաց եկեղեցվոյ» գրքի առթիվ, որն արգելվել էր գրաքննության կողմից, Արփիարյանը գրում էր. «Գաղտնիք մը չէ, թէ ինչ կընէ Դուռը Հայաստանը նիւթապէս տկարացնելու համար, այժմ բարոյական հարվածները կը սկսի տալ աւելի ընդարձակ սահմանի մը մէջ: Առաջին հարվածը հայոց պատմութեան դէմ է, իբր գլուխ չարեաց: «Հայաստան չը կայ, այլ Քիւրդիստան կայ, հայ ազգութիւն չը կայ, այլ կրոնական ժողովուրդ մը կայ, ուրեմն ի՞նչ պատմութիւն պիտի գրէք», - այսպէս կը պատասխանէր տպագրական վարչութիւնը հայ տպագրիչներուն»[1]:

Թուրքական բռնությունները հարուցում են պատրիարք Ներսես Վարժապետյանի հրաժարականը. «Պատրիարքը սուլթանին ևս յայտարարած է, թէ ինքն կարող չը պիտի ըլլայ կառավարել իր ազգը, քանի որ ոչ միայն բարեկարգութիւններէն մէրն չը գործադրուիր, այլ հետզհետէ խստութիւնները կը շատանան ընդդէմ հայոց»[2]: Սակայն սուլթանը մերժում է պատրիարքի հրաժարականը, որովհետև չէր ուզում հարուցել Եվրոպական դեսպանների միջամտությունը, քանի որ պատրիարքը իր հրաժարականը բացատրում էր 61-րդ հոդվածի իրականացման ձգձգումով և արևմտահայության վիճակի վատթարացմամբ: Դրան հակառակ Բ. Դուռը պատրիարքի հրաժարականը փորձում էր ներկայացնել իբրև հայերի ներքին հարց:

---

[1] Նույն տեղում, 1881, N 33:

[2] Նույն տեղում, 1883, N 129:

*ա) Արփիարյանը Եվրոպական պետությունների քաղաքականության մասին*

Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և դրանից օգուտներ ստանալու նպատակով եվրոպական տերությունները Հայկական հարցը դարձրին շահարկման առարկա, որը նրանք քողարկում էին հայերի պաշտպանությանն ուղղված կեղծ ճառերով ու թուրքական կառավարությանը հղած և ոչինչ չտվող նոտաներով:

Բեռլինի կոնգրեսից հետո մի որոշ ժամանակ արևմտահայ մտավորականությունը դեռ ոգևորության մեջ էր և տարված էր Անգլիայի կողմից հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման պատրանքով: Սակայն ակնկալիքները տեղի տվեցին հիասթափության, երբ Անգլիան դիմեց գործնական քայլերի: Ակնհայտ էր դառնում, որ տերություններին բոլորովին չէր մտահոգում հայության ճակատագիրը: «1881թ. Ֆրանսիայի կողմից Թունիսի գրավումը և անգլիացիների կողմից Եգիպտոսի օկուպացումից հետո անգլիական քաղաքականության վարիչներն առժամանակ փակեցին հայոց հարցի դավթարը», - շատ դիպուկ նշում է Ջոն Կիրակոսյանը[1]:

Թուրքիայի պաշտպանի դերում քրիստոնյա Անգլիայի հանդես գալը ցասում, միաժամանակ զարմանք է հարուցում արևմտահայերի շրջանում: Այն հատկապես մեծ արձագանք է գտնում Արփիար Արփիարյանի մոտ, որը 1878 թվականից թղթակցելով «Մշակին» հաճախակի էր լուսաբանում Անգլիայի դիրքորոշման հարցը իր հոդվածներում: Այսպես, լորդ Սոլսբերիի մի հեռագրի կապակցությամբ, որտեղ ասված էր, թե թուր-

[1] Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 144:

քական կառավարության ծանր ֆինանսական դրության պատճառով ասիական Տաճկաստանի բարենորոգումների հարցը շուտ չի լուծվի, Արփիարյանը գրում էր. «Զարմանալի է, որ Անգլիա այսքան յամառութեամբ ուզէ իրմէն ցրտացնել Արևելքի քրիստոնեաներն:... Յուսամք, թէ հայ ժողովուրդը այսքան արհամարհանաց արժանի չէր»[1]:

Արփիարյանի համար շատ պարզ դարձավ, որ Անգլիայի կողմից բարենորոգումների իրագործումը խաբկանք է: Բեռլինի կոնգրեսից արդեն մեկ տարի անց նա գրում էր. «Երբ ձեզ կը գրէի, թէ Անգղիոյ ձեռքով Հայաստանի բարեկարգութիւն յուսալն utopie է, շատերը չը հաւատային»[2]:

Իրադարձությունները մեկ մյուսի հետևից ավելի ու ավելի էին ամրապնդում Արփիարյանի այն համոզմունքը, որ Անգլիան խաբում է հայ ժողովրդին՝ բարենորոգումների ուշացման վերաբերյալ նրանց բողոքներին կեղծավորաբար պատասխանելով, թե վիճակը շուտով կլավանա:

Արփիարյանը գտնում էր, որ Անգլիան ամեն կերպ ջանում է խեղդել Հայաստանի ինքնավարության խնդիրը[3]: Անգլիական նենգադավ քաղաքականության քննադատությամբ հանդես էին գալիս նաև արևելահայերը: Գր. Արծրունին գրում էր. «Հայոց խնդրի հարուցվելու րոպեից մինչև այսօր ոչ մի պետութիւն չէ խաղացել Հայաստանի վերաբերութեամբ այնպիսի կեղծավոր ու երկդիմի դեր, ինչպես Անգլիան»[4]:

«Թուրքաց հայերի տնտեսական դրութիւնը» աշխատության մեջ Արծրունին գրում է, որ անգլիացիների թրքասիրութիւնը և հայերի պաշտպան չդառնալը մեզ զուշակել է տա-

---

[1] «Մշակ», 1879, N 69:

[2] Նույն տեղում, N 2:

[3] Նույն տեղում, N 102:

[4] Նույն տեղում, N 97:

լիս, որ Մեծ Բրիտանիայի նպատակն է ոչ թե օգնել քրիստոնեաներին, այլ ձեռք գցել հարուստ երկիրը[1]:

Պետք է նշել այն հանգամանքը, որ Արփիարյանը Անգլիայի վարած քաղաքականությունը չէր կապում այդ երկրի այս կամ այն քաղաքական կուսակցության կամ գործչի հետ: Նա գտնում էր, որ հայկական հարցի նկատմամբ այն գրեթե չի փոփոխվում անկախ այն բանից թե ով էր նրա իրականացնողը: Այդ կապակցությամբ «Մշակում» նա գրում էր. «Էլիօթ, Լէյարդ կուգան կերթան, այլ Անգլիոյ քաղաքականութիւնը անփոփոխ կը մնայ Տաճկաստանի և հայ ազգի նկատմամբ»[2]: Արփիարյանի աշխատակցությունը «Մշակին» մեծապես նպաստեց նրա աշխարհայացքի ընդլայնմանը: Տարիների ընթացքում նա դարձավ ճանաչված հրապարակախոս, ձեռք բերեց փորձ: Խորապես մտահոգված իր ժողովրդի ճակատագրով Արփիարյանի առաջնահերթ նպատակը դարձել էր հայկական բարենորոգումների խնդրի և նրա նկատմամբ եվրոպական տերությունների քաղաքականության լուսաբանումը: Այդ հարցերն են շոշափված 80-ական թվականների սկզբի «Մշակի» նրա գրեթե բոլոր թղթակցություններում, ուր հրապարակախոսը առաջ էր տանում այն գաղափարը, որ «Եւրոպական տէրութիւնները 61-րդ յօդուածը գրած ժամանակնին անշուշտ զմեզ չեն մտածած եւ հաւանորէն զմեզ սիրելնուն համար չէ, որ այդ յօդուածը դրին, այլ օգտակար սեպած են դուռ մը աւելի բաց ունենալ Թիւրքիոյ գործոց միջամտելու»[3]:

Բացահայտելով մեծ պետությունների քաղաքական նպատակները, Արփիարյանը ցույց էր տալիս, որ միջպետա-

---

[1] Արծրունի Գր., Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 35:

[2] «Մշակ», 1879, N 26:

[3] Նույն տեղում, 1883, N 63:

կան հարաբերություններում վճռորոշ են տնտեսական ու քաղաքական օբյեկտիվ նախադրյալները: Ինչ վերաբերվում է սուբյեկտիվ գործոններին, ապա դրանք նա ճիշտ կերպով համարում էր քաղաքական լուրջ պատճառների օժանդակությունը[1]:

Խոսելով դարավերջին Եվրոպական տերությունների միջև հարաբերությունների սրման մասին՝ Արփիարյանը նրանց հակամարտության հիմքում նախ և առաջ տեսնում էր տնտեսական պատճառներ: Վիլհելմ կայսեր նպատակն է «Գերմանիոյ վաճառականական եւ ծովային զօրութիւնը հաստատել, - գրում էր նա «Քաղաքական ծրագիրներ» հոդվածում[2]: - Արգելքը Անգլիան է, որ աշխարհիս վրա շատ տեղ կբռնէ: Կայսրը չուզեր, որ այդ տեղն աւելի ընդարձակի: Արեւելեան խնդրին մէջ բնականաբար անգլիական քաղաքականութեան բոլորովին հակառակ ընթացքի պիտի հետեւէր»[3]:

Հրապարակախոսը տալիս է նաև թուրք-գերմանական հարաբերությունների օբյեկտիվ գնահատականը. «Գերմանիայի գլխավոր շահը Թուրքիո երկարատեւութիւնն է, որպեսզի ուրիշ պետութիւն մը անոր կողոպուտին մեջ իր ուժերուն աճեցումը չգտնէ: Այդ պատճառով Գերմանիո կայսրը Օսմանեան կայսեր եթե ոչ նիզակակիցը, գէթ բարեկամն է: Այս մտերմութիւնը արծարծուն կպահվի այն իրողութեամբ, որ գերման սպաները օսմանեան բանակին մարզիչներեն են»[4]: Նա շեշտում էր այն հանգամանքը, որ Թուրքիայի աշխարհագրական դիրքը այնքան մեծ ազդեցություն ունի «Եվրոպայի քանի

---

[1] «Նոր կեանք», 1898, N 6, էջ 82:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

մը պետութեանց կյանքի վրա, որ չեն կարող թիւրք իշխանութեան բմահաճոյքին թողուլ իրենց ապագային վճիռը»[1]:

Արփիարյանը միաժամանակ ցույց էր տալիս, որ բացի Գերմանիայից Թուրքիայում իրենց շահերն ունեն նաև Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, որոնք բացահայտ դժգոհ են, Թուրքիայում աճող գերմանական ազդեցությունից: Այդ հողի վրա նա ուրվագծում էր ապագա Եռյակ դաշինքը (Անտանտան) և Գերմանիայի հետ նրանց բախման անխուսափելիությունը:

Հրապարակախոսը համոզված էր, որ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ճակատագիրը տերություններին չի մտահոգում: Ճիշտ է, նա չէր անտեսում Եվրոպական միջամտությունը, բայց նաև նա ճիշտ չէր համարում Եվրոպային չափից դուրս վստահելը: Նա գտնում էր, որ հայ ժողովուրդը չպետք է զբաղվի ինքնախաբեությամբ, հավատա պատրանքներին, այլ պետք է աշխատի հմտորեն օգտվել այն հանգամանքներից «զոր կստեղծեն երկու կամ երեք պետութեան ընդդիմամարտ քաղաքականութիւնները»[2]:

Արփիարյանը խոր հեգնանքով էր արտահայտվում Եվրոպական կառավարությունների հայապաշտպան ճառերի մասին, դիմակազերծում էր այդ քողի տակ թաքնված կեղծիքը. «Երբ հայ ժողովուրդը պաշտպանելու խօսքեր կը դառնան Եւրոպայի մէջ, չե՞նք գիտեր, թե մեզի նկատմամբ արտայայտուած հոգածութիւնը քիչ շատ կը նմանի – ավելի շատ քան քիչ այն կարեկցութեան, զոր կենդանիներու համար ցույց կու-

[1] Նույն տեղում, 1899, N 20, էջ 333:

[2] Նույն տեղում, 1898, N 6, էջ 82:

տան անասնապաշտական ընկերութիւնները սա տարբերութեամբ միայն, որ մենք նուազ բաղդաւոր ենք»[1]:

Բացահայտելով եվրոպական քաղաքականության էությունը, Արփիարյանը միաժամանակ գտնում էր, որ Եվրոպային անտեսելը և՛ անհնարին էր և՛ անթույլատրելի՝ այն պարզ պատճառով, որ Եվրոպան ուներ տնտեսական, ռազմական, դիվանագիտական զորություն: «Եւրոպական համակրանքը կամ հակակրանքը արհամարհելու համար կամ հիմար պէտք է ըլլալ, կամ դավաճան մը», - գրում էր նա «Եւրոպան» հոդվածում: Ռուս-թուրքական պատերազմի օրինակով նա ցույց էր տալիս, որ Ռուսաստանի հաղթանակը իր շահերին անհամապատասխան գտնելով, եվրոպական պետությունները զգալիորեն սահմանափակեցին նրա հաղթանակի պտուղները[2]:

«Լուսաբերում» և «Շիրակում» խոսելով հայկական հարցի լուծման ուղիների մասին, Արփիարյանը գտնում էր, որ այն կապված է Եվրոպական պետությունների օգնության հետ: Այս տեսանկյունից հայկական հարցի լուծման համար նա խիստ նպաստավոր էր համարում դարասկզբի անգլո-ֆրանս-ռուսական մերձեցումը, որը ըստ նրա «հաճելի շատ անակնկալներ կվերապահէ Արևելքի բազմաչարչար ժողովուրդներուն»[3]:

«Հայաստան և Ռուսիա» հոդվածում Արփիարյանը գրում է. «Հայաստանի խնդիրը Ռուսիոյ, Անգղիոյ և Թիւրքիոյ խնդիրն է. մեր ուշադրութիւնը այս երեք պետութեանց շրջանակեն դուրս շատ չտատանենք»[4]: «Լուսաբերի» մի շարք հոդվածներում առաջ էր քաշում այն միտքը, որ «Փոքր Ասիոյ վի-

---

[1] Նույն տեղում, էջ 90:

[2] Նույն տեղում, N 16, էջ 242:

[3] «Շիրակ», 1906, N 1, էջ 60:

[4] Նույն տեղում, 1905, N 4, էջ 299:

ճակը Եւրոպական պետութեանց միջև պիտի վճռուի, մասնաւորապես անգլո-ռուս համաձայնութեամբ»[1]:

Հրապարակախոսի կարծիքով, եթե Եվրոպան լուծեց Կրետեի խնդիրը, Մակեդոնիայի խնդիրն է լուծում Բեռլինի կոնգրեսից 25 տարի հետո, ուրեմն տեղիք չկա տարակուսելու, որ Հայաստանի հարցն էլ կլուծվի[2]: Իսկ Ինչպե՞ս էր պատկերացնում Արփիարյանը հարցի լուծումը: Նրա կարծիքով պետք է գործադրել 1895թ. մայիսի 11-ի ծրագիրը որոշ փոփոխություններով. «բարեկարգութեանց վերահսկիչը եւրոպացի մը ըլլայ եւ Եւրոպային պատասխանատու»: Արփիարյանը միաժամանակ ընդգծում էր այն կարևոր հանգամանքը, որ եվրոպացի կառավարիչը պետք է անպայման զինվորական զորամաս ունենա իր խնդիրների իրականացման համար, որովհետև «առանց զինվորական ուժի կրթնելու, եւրոպական քոմիսեր մը Պատրիարքէ մը աւելի իշխանութիւն չի կրնար վայելել, ուստի և օտար զորախումբ մը իր տրամադրութեանը ներքև պիտի դրուի»[3]:

Առաջ քաշելով եվրոպացի կոմիսարի հարցը, Արփիարյանի համոզմամբ արևմտահայության շահերին օգտակար կլիներ, եթե նա լիներ ազգությամբ ռուս: «Շիրակի» ընդարձակ մի հոդվածում կարդում ենք. «Մենք հայերս ալ մեր դատին օգտաւէտ քաղաքականութեան մը հետևած կըլլանք, փափագ հայտնելով, որ Հայաստանի եվրոպական քոմիսերը պատկանի ռուս ազգութեան»[4]:

Այսպիսով, Արփիարյանը Հայկական հարցի լուծումը կապում էր տերությունների, հիմնականում Ռուսաստանի

---

[1] «Լուսաբեր», 1907, N 352:

[2] Նույն տեղում, N 380:

[3] Նույն տեղում, 1905, N 143:

[4] «Շիրակ», 1905, N 7, էջ 29:

հետ: Սակայն «Շիրակում» և «Լուսաբերում» վերլուծելով Ռուսաստանի քաղաքական կացությունը գտնում էր, որ բուրժուադեմոկրատական հեղափոխության բոցերի մեջ գտնվող երկիրը դժվար թե մոտակա տարիներին կկարողանա ակտիվ գործողություններ ձեռնարկել Արևելքում: Այդպիսի պայմաններում նա հայության շահերի տեսանկյունից նպաստավոր էր համարում ակտիվ գործողություններից ժամանակավորապես հրաժարվելը: Նա աննպաստ, նույնիսկ վտանգավոր էր համարում մեծ պետությունների կառավարություններին հայերի դիմումները բարենորոգումների իրագործման մասին, գտնելով, որ այդ դիմումները բորբոքելով սուլթանին կարող են նոր ջարդերի առիթ դառնալ: Չնսեմացնելով «հայ դատի համար աշխատող անհատների» դերը Արփիարյանը քննադատում էր նրանց (խոսքը մասնավորապես վերաբերվում էր Ա. Չոպանյանին, որի հետ այս հարցում Արփիարյանը տարաձայնություններ ուներ) պատմության ցավոտ դասերից չխրատվելու համար. «Ըսել կուզենք, որ Եւրոպան մենէ խելք սորվելու ցանկացող չէ: Եթե ռուս և թիւրք պատերազմեն ի վեր ի նպաստ հայոց եղած եվրոպական միջամտութիւնները մտքերնիս բերենք, առանց դժվարութեան կտեսնենք, որ մեր կարծիքները, փափագները, պահանջումները նկատողութիւն առնելու պետք մը տեսնված չէ»[1]:

Դժբախտաբար այդպիսին էր իրականությունը: Թե՛ կաթողիկոս Մ. Խրիմյանի դիմումները տերություններին, թե՛ Եվրոպայի առաջադեմ մտավորականների կողմից բազմիցս բարձրացված Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի կենսագործման պահանջը կամ մերժվեց կառավարությունների կողմից կամ մնաց անպատասխան:

---

[1] Նույն տեղում, 1906, N 2, էջ 105:

Վկայակոչելով մի շարք Եվրոպական թերթերի հոդվածները, Արփիարյանը գրում էր. «Եւ երբ փրկութիւնը մեծ պետութիւններից կը ակնկալենք, անօգուտ աշխատութիւն մը չէ, երբեմն-երբեմն ալ ականջ դնել Եւրոպական ազդարարութեանց, որոնք մեզի կիմացնեն, թէ Թիւրքիոյ ժողովուրդներուն ու Եւրոպայի ազգերուն շահերը իրարու չեն կրնար համերաշխիլ: Ու մենք հայերս ալ Թիւրքիոյ ժողովուրդներեն մեկն եմք»[1]: «Մեր հոյսը» հոդվածում հրապարակախոսը ուղղակի գրում էր, որ եթե սկսվեն նոր ջարդեր, ապա Եվրոպայից չպետք է օգնություն սպասել[2]:

Արփիարյանը գտնում էր, որ հայերի կողմից ճիշտ քաղաքականությունը կայանում է նրանում, որ առայժմ ձեռնպահ մնան Եվրոպային դիմումներ հղելուց, չդիմեն ակտիվ քայլերի: Հրապարակախոսն ավելի հրատապ ու կարևոր էր համարում հայ քաղաքական կուսակցությունների, և ընդհանրապես, ազգային ուժերի համերաշխության ամրապնդման խնդիրը: Նրա կարծիքով Հայկական հարցի լուծումը կախված լինելով եվրոպական պետություններից, միաժամանակ պայմանավորված էր նաև ազգային միասնական ճակատի առկայությամբ:

### *բ) Արփիարյանը Ռուսաստանի քաղաքականության մասին*

Ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակը նոր հույսեր արթնացրեց արևմտահայերի շրջանում: Այդ տրամադրություններն էր արտահայտում Արփիարյանը՝ գրելով, որ «պատերազմի վերջանալէ յետո որքան փոխուեցան

---

[1] Նույն տեղում, N 3, էջ 191:

[2] «Լուսաբեր», 1905, N144:

Կ. Պոլսո ժողովրդի զգացումներն Ռուսիո նկատմամբ. շատ նախապաշարումներ ցրուեցան»[1]: Այնուամենայնիվ, նա քննադատաբար վերաբերվեց ցարիզմի ազգային քաղաքականությանը՝ ցույց տալով նրա հետադիմական բնույթը: Իր մտերիմներին գրած նամակներից մեկում Արփիարյանն այն միտքն էր արտահայտում, որ Հայաստանը Ռուսաստանին հետաքրքրում է զուտ նրա սեփական շահերի տեսանկյունից: Նա գտնում էր, որ «Ռուսաստանի հայամերձ շարժումը կրնա շատ լուրջ եղած չըլլալ, որովհետև իր հատակագծին մեջ է Հայաստանը գրավիլ»[2]: Արփիարյանի մոտեցումը Ռուսաստանի նկատմամբ միակողմանի չէր: Ինչպես գրում է Ա. Համբարյանը. «Արփիարյանը տեսնում էր երկու Ռուսաստան. բռնապետական-հետադիմական և դեմոկրատական-առաջադիմական: Եթե առաջինին նա դատափետում էր, ապա երկրորդին՝ գովաբանում»[3]:

Քաջատեղյակ լինելով թե՛ Թուրքիայի և թե՛ Ռուսաստանի հայոց կյանքին, Արփիարյանը չէր կարող չկողմնորոշվել դեպի Ռուսաստանը, և երբ արևմտահայ պահպանողական թերթերից մեկում նրան մեղադրում են այն բանում, որ «Հայկակ ամեն ինչ Ռուսաստանի մէջ վարդագոյն կը տեսնէ, իսկ Թիւրքիոյ մէջ սևագոյն., -Արփիարյանը պատասխանում է. - «Խնդրեմ Թիւրքիոյ մէջ վարդագոյն իր մը ցույց տուէք. իսկ Ռուսիոյ մէջ վարդագոյն իրեր պակաս չեն»[4]:

Քննադատաբար վերաբերվելով ինքնակալության մեծապետական շովինիզմի քաղաքականությանը՝ Արփիար-

---

[1] «Մշակ», 1879, N 70:

[2] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 378, թ. 3:

[3] Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին. Եր., 1990, էջ 88:

[4] «Մշակ», 1880, N 28:

յանն, այնուամենայնիվ, ռուսական տիրապետությունն անհամեմատ բարձր էր դասում թուրքականից: Նա լավատեսորեն էր տրամադրված Ռուսաստանի ապագայի նկատմամբ՝ գրելով, որ «շուտով կառավարման ձևի մեջ փոփոխութիւնը շատ հաւանական է»[1]: Սակայն ժողովրդի հավատարմության ու հպատակության վերաբերյալ Արփիար Արփիարյանն ուներ իր ուրույն պատկերացումը: Նա համոզված էր, որ այն չպետք է վերածվի կույր հնազանդության և չպետք է հասցնի ազգային ինքնագիտակցության ու կրոնի կորստին: Ահա այս առումով էր նա գրում, որ հավատարիմ լինելով ռուսական կայսրությանը արևելահայերը պետք է «տոկուն աշխատին, բայց չպետք է խոնարհի լինին ռուսաց առաջ»[2]: Ընդգծելով ինքնակալության հետադիմությունը՝ Արփիարյանը միաժամանակ գրում էր, որ «ռուս ժողովուրդը հական չէ յուր չինովնիկներու հայատեաց քաղաքականութեան: Թեպետև Կատկովներ, Մալշանովներ և ուրիշ խավարամիտներ մերթ ընդ մերթ իրենց հարուածները կը տեղան հայոց դեմ, բայց ողջամիտ, լուսաւորեալ մասը բոլորովին տարբեր կը մտածէ»[3]: Նա աշխատում էր մամուլի միջոցով ամրապնդել արևմտահայերի ռուսական կողմնորոշումը: Այդ նպատակով «Մասիսում» տպագրվում են Պուշկինի, Լերմոնտովի, Միխայլովի ստեղծագործությունների թարգմանությունները: Հրապարակախոսի համոզմամբ Ռուսական դեմոկրատական մշակույթի ավանդույթները պետք է դաստիարակիչ ազդեցություն ունենային արևմտահայ հասարակական մտքի զարգացման վրա:

---

[1] «Մասիս», 1887, N 3868:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, 1878, N 3870:

19-րդ դարի 80-ական թ.թ. Ռուսաստանում ուժեղացավ հետադիմությունը: Ալեքսանդր 3-րդ ցարի օրոք խստացան ազգային հալածանքները, ուժեղացան հետապնդումներն առաջադիմական գործիչների նկատմամբ: Ռուսաստանի վարած հետադիմական քաղաքականությունը քննադատվեց Արփիար Արփիարյանի կողմից «Մարտում» և «Նոր կեանքում»[1]:

«Հայկական խնդիրը և Ռուսիոյ քաղաքականութիւնը» հոդվածում հրապարակախոսը գրում էր. «Ռուսիոյ համար 1881 մարտի 1-ը աղետաբեր օր մը եղավ. Լորիս-Մելիքովի, Միլիութինի և իրենց ընկերներուն ազատական քաղաքականութիւնը կը մեռնէր Ալեքսանդր Բ-ի հետ: Նոր ցարը ուզեց երկաթե ձեռքով խեղդամահ մեռցնել ազատասիրական ամենաթեթև ձգտումն իսկ -քաղաքականութեան մեջ մարդասիրական որևէ նկատում Ռուսիոյ շահերուն դէմ դավաճանութիւն հռչակեց: Ալեքսանդր Բ-ի թէ արտաքին և թէ ներքին քաղաքականութիւնը հիմնական փոփոխութիւններու ենթարկուեցավ»[2]: Նա խարազանում էր Կովկասի կառավարչապետ, իշխան Գոլիցինի հայատյաց քաղաքականությունը[3]: «Ռուսիոյ ներքին քաղաքականութիւնը» հոդվածում Արփիարյանը լուսաբանում է կայսրության մյուս ժողովուրդների նկատմամբ Ռուսաստանի վարած գաղութային քաղաքականությունը[4]: Նա ընդգծում էր այն փաստը, որ տնտեսական մի շարք ցուցանիշներով, այնպիսի երկրներ, ինչպիսիք են Լեհաստանը, Ֆինլանդիան առաջ են անցել գաղութացնող երկրից: Կովկասում ցարիզմի վարած ռուսացման (ռուսիֆիկացիայի) քաղաքականության

---

[1] «Նոր կեանք» 1898, N 8, էջ 119 -120, N11, էջ 164:

[2] «Մարտ», 1897, N 9:

[3] «Նոր կեանք», 1899, N 9, էջ 133:

[4] Նույն տեղում, 1900, N 16, էջ 240 -245:

հարցերն են շոշափված «Կովկասի հայոց հիմնումը» հոդվածում[1]:

Բոլորովին չանտեսելով Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայերի տնտեսական, մշակութային զարգացման փաստը՝ Արփիարյանն այնուհանդերձ գտնում էր, որ ինքնակալության որդեգրած քաղաքական ուղղությունը տանում է դեպի «աշխարհակալող ցեղին տիրապետութեանը»[2]: Ցարիզմի վարած գաղութային քաղաքականության էությունը հասկանալով՝ Արփիարյանը գրում էր. «Բեդրպուրկի կառավարութիւնը թրքահպատակ հայ ժողովրդին կացութիւնը իր քաղաքական ձեռնարկներուն ամենանշանավոր մեկ կռուանը համարած էր միշտ»[3]: Սակայն քննադատելով ցարիզմի հետադիմական քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ, Արփիարյանը երբեմն ընկնում էր ծայրահեղության մեջ, հավասարության նշան դնելով ռուսական և թուրքական տիրապետությունների միջև. «Եթե Ռուսիան գրավե Հայաստանն ու Կիլիկիան, մենք մեր արդի կացութեան մեջ զգալի կորուստ մը ըրած չենք ըլլար, - գրում էր նա, - լուծի փոփոխութիւն միայն. փոխանակ թիւրքին պիտի դառնանք ռուսին ստրուկը»[4]:

Անդրադառնալով ռուս-թուրքական հարաբերություններին՝ հրապարակախոսը գտնում էր, որ «Ռուսիոյ անփոփոխ նպատակը եղած է եւ պիտի ըլլայ Թիւրքիոյ կործանումը, սակայն անոր հասնելու միջոցները փոփոխական են»[5]: Նրա համոզմամբ, եթե Թուրքիայի կործանումը Ռուսաստանի արտաքին քաղաքականության անփոփոխ նպատակներից մեկն էր,

[1] Նույն տեղում, N 20, էջ 308-310:
[2] Նույն տեղում, 1898, N 12, էջ 178:
[3] «Մարտ», 1897, N 7:
[4] «Նոր կեանք», 1898, N 4, էջ 50:
[5] «Մարտ», 1897, N 9:

ապա այդպես չէր Հայկական հարցի նկատմամբ. «օրուան նկատումներուն համեմատ ռուսական քաղաքականութիւնը մերթ մեզի նպաստավոր կմիտի, մերթ աննպաստ»: Ինչու՞ է հայ ժողովուրդը նման կացության մեջ, - հարց է տալիս հրապարակախոսը և ինքն էլ պատասխանում՝ «վասնզի ազգային միաբան քաղաքականութիւն մը և գործունէութիւն մը չունինք»[1]: Արփիարյանը գտնում էր, որ ստեղծված դրությունից ելքը դա «հայ ժողովրդին մտաւորական, յեղափոխական և դրամական ույժերուն միաբանութեան մեջ է, որով պիտի կրնանք փրկել ներկան և ապահովել ապագան»[2]:

* * *

1905թ. սկսված ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխությունը խոր ազդեցություն է թողնում Արփիարյանի վրա: «Շիրակի» ու «Լուսաբերի» էջերում պարբերաբար տպագրում են լուրեր տեղի ունեցող իրադարձությունների մասին: Արփիարյանը հանդես է գալիս հոդվածներով, ուր ակներև է նրա համակրանքը բռնակալության և միահեծանության դեմ պայքարի ելած ժողովրդական մասսաների նկատմամբ: Հրապարակախոսը հավատում է ժողովրդի հաղթանակին և չի վհատվում նույնիսկ հեղափոխության պարտությունից՝ դա համարելով ժամանակավոր երևույթ. «Թող չկարծուի, թէ ռուսական շարժումը ջախջախուեցաւ, լռմեցաւ: Ահեղ պատերազմ մըն է, որ կմղուի միահեծանութեան ու ժողովրդական իրավունքներուն միջև: Յեղափոխությունը կրնայ քանի մը ճակատամարտ կորսնցնել, բայց վերջնական հաղ-

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

թանակը իրեն պիտի մնա երկարատև կռվէ մը յետո»[1]: Արփիարյանը լավատեսորեն էր նայում ապագային և երանի տալիս նրանց, «որ վաղւան համար պիտի ապրին»[2]:

Սթափ հայացքով գնահատելով տեղի ունեցող իրադարձությունները՝ Արփիարյանը ցույց էր տալիս, որ հեղափոխական պայքարի դասակարգային բովանդակությամբ էր պայմանավորված նրա համաշխարհային ազդեցությունն ու պատմական նշանակությունը: Նա ընդգծում էր հեղափոխական գաղափարների սրընթաց տարածման փաստը, որի դեմ «անզօր պիտի գտնուին թնդանոթը, հրացանը և սուրը»[3]: Արփիարյանը գտնում էր, որ հեղափոխության հաղթանակից հետո երկրում հաստատվող քաղաքական կարգը պետք է լինի ոչ թէ սահմանադրական միապետություն, այլ խորհրդարանական հանրապետությունը, դա համարելով Ռուսաստանի զարգացման ճիշտ և առաջավոր ուղին[4]: «Լուսաբերի» նույն համարում նա գրում էր, որ ինքնակալության տապալումից հետո Ռուսաստանը կարող է դառնալ դաշնային, կամ ինչպես ինքն էր գրում՝ «նիզակակցական հանրապետութիւն»:

1905թ. հեղափոխության ալիքը տարածվեց նաև Կովկասում, ուր հակակառավարական ցույցերից ու գործադուլներից բացի սկսվեցին ազգամիջյան ջարդեր: Տեղական իշխանությունների թողտվությամբ և հրահրմամբ թուրք-թաթարական խուժանը ղեկավարվելով Թուրքիայից եկած գործակալների կողմից, ամենուրեք հարձակումներ է գործում հայերի վրա, որոնք ուղեկցվում են մասսայական կոտորածներով ու կողոպուտով: Ջարդերը տեղի էին ունենում Բաքվում, Գանձա-

[1] «Լուսաբեր», 1906, N 171:

[2] Նույն տեղում, 1905, N 147:

[3] Նույն տեղում, 1906, N 172:

[4] Նույն տեղում:

կում, Նախիջևանում և հայաշատ այլ վայրերում: «Մարսումը» հոդվածում Արփիարյանը սրտի կսկիծով է խոսում իր հայրենակիցների նկատմամբ գործադրվող անմարդկային բարբարոսությունների մասին, որոնք նրան հիշեցնում են Չինգիզ-Խանի և Լենկթեմուրի տիրապետության մռայլ օրերը[1]:

Սակայն հայերի ջարդերը Արփիարյանի մոտ միայն հուսալքություն և խղճահարություն չէ, որ առաջացնում են: Հրապարակախոսը հիանում է իր ազգի արիությամբ: Նա ցույց է տալիս, որ կովկասյան իրադարձությունները չնայած հայերին հանկարծակիի բերեցին, բայց նույնիսկ այդ պայմաններում էլ «անոնք ալ հանկարծ սքանչելի հատկութիւններ կը փայլեցնէն, հոգիի արիութեան, մարմնական կորով, մտքի ոյժ, անձնուիրութիւն և կարգապահութիւն»[2]: «Շիրակի» և «Լուսաբերի» էջերում լուսաբանելով տեղի ունեցող դեպքերը, Արփիարյանը ցույց էր տալիս ռուսական կառավարության մեղսակցությունն այդ գործում: Նա բերում է մի շարք փաստեր ապացուցելու համար, որ թաթարների գործողությունները հովանավորվում էին իշխանությունների կողմից: Կովկասից Արփիարյանին հասցեագրված իր մի բարեկամի նամակում կարդում ենք, որ Նախիջևանի կոտորածը սկսվեց այն ժամանակ, երբ Երևանի փոխնահանգապետ Տարանովսկին իջևանեց Խան-Նախիջևանսկու եղբոր տանը և հայերին սկսեց համոզել բացել խանութները[3]:

Խոսելով հայ-թաթարական կոտորածների մասին հրապարակախոսը նշում էր, որ այն չունի կրոնական պատճառներ, «կռիւը քրիստոնեութեան ու իսլամութեան միջն չի

---

[1] Նույն տեղում, 1905, N 147:

[2] Նույն տեղում, 1906, N 175:

[3] «Շիրակ», 1905, N 7, էջ 19:

մղուիր՝ այլ հայերու և իսլամներու միջեւ, որուն տերը ոչ հայն է, ոչ մահմեդականը: Ռուս կառավարութիւնն է, որ մահմեդականը հայոց դէմ կը գրգռէ»[1]:

«Դաս մը Ռուսիո յեղափոխականներէն» ընդարձակ հոդվածում Արփիարյանը անում է այն եզրակացությունը, որ ազգամիջյան ջարդերը ռուսական կառավարության վարած հետադիմական քաղաքականության հետևանքն էին, մի քաղաքականություն, որի նպատակն էր Ռուսաստանի հեղափոխական ուժերի ուշադրությունը շեղել դասակարգային պայքարից, զբաղեցնել նրանց ազգամիջյան կռիվներով և փրկել ինքնակալությունը վերահաս վտանգից[2]:

«Լուսաբերում» ու «Շիրակում» Արփիարյանը բարձրացնում է Ռուսաստանի հեղափոխական շարժման մեջ հայ հասարակական-քաղաքական ուժերի մասնակցության հարցը: Թեև նա ընդունում էր սոցիալիստական գաղափարների առաջադիմական բնույթը, ողջունում էր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների հեղափոխական պայքարը, բայց միաժամանակ նա դեմ էր հեղափոխական շարժումներին հայերի մասնակցությանը: Արփիարյանը գտնում էր, որ կովկասահայությունը պետք է հեռու մնա հեղափոխական ելույթներին մասնակցելուց, որովհետև դրանով նա հարվածում է կայսրության քաղաքական կառուցվածքին, որը ըստ նրա, բացի վնասից հայությանը ուրիշ բան չի բերի: Արփիարյանը ճշգրտորեն կանխատեսեց, որ հայ սոցիալ-դեմոկրատները, առաջնորդվելով համաշխարհային հեղափոխության ու դասակարգային պայքարի գաղափարներով, կանգ չեն առնի, եթե նույնիսկ ռուսական կառավարությունը հեղափոխության թափից սարսափած

---

[1] «Լուսաբեր», 1905, N 164:

[2] Նույն տեղում, 1906, N 171:

իրականացնի համընդհանուր դեմոկրատական ու տնտեսական բարեփոխումներ: «Բայց այս բոլոր բարենորոգումները պիտի չը գոհացնեն յեղափոխական, ընկերվարական հայերը, որոնք Ռուսիոյ այլևայլ ցեղերու, նամանավանդ ռուսաց յեղափոխական կազմակերպութիւններին միանալով կը ջանան Կովկասեան ալ համառուսական ընդհանուր շարժման մէջ նետել»[1]: Եվ սա գրվում էր 1905 թ., երբ հեղափոխությունը գտնվում էր վերելքի շրջանում:

Արմիարյանի համոզմամբ կովկասահայությունը պիտի առաջնորդվեր ոչ թե դասակարգային պայքարի, այլ ազգային միասնության կարգախոսով: Նա կոչ էր անում հայ սոցիալ-դեմոկրատներին հրաժարվել անիրական ու ծայրահեղական պահանջներից ու պայքարել միայն դեմոկրատական բարեփոխությունների իրականացման համար: Հրապարակախոսը ցույց էր տալիս, որ սոցիալ-դեմոկրատները ներկայանալով որպես «աշխարհաքաղաքացիներ» փաստորեն հրաժարվում են իրենց ազգությունից, երբ մերժում են և «նախապաշարում» համարում «ազգ», «ժողովուրդ» հասկացությունները: Խորապես դատապարտելով այդ ընթացքը նա գրում էր. «Ամէն անոնք, որ մեր մէջ հայ ազգայնութեան գաղափարեն կամ զարգացումեն հրաժարելու քարոզը կը կարդան, չեն տեսներ, թէ ուրիշ ցեղեր, և ի՞նչ ցեղեր, Ռուսիոյ, Ֆրանսայի նման երկրներ ու ժողովուրդներ հիմակ աւելի քան երբեք ուժգնապես կը փարին Ազգութեան, Հայրենիքի, Ցեղի գաղափարին»[2]:

Մեկ անգամ ևս հիշեցնելով հայ հեղափոխականներին ազգամիջյան կոտորածների մասին, հրապարակախոսը զգուշացնում էր, որ հեղափոխական ելույթներին հայերի մասնակ-

---

[1] «Շիրակ», 1905, N 7, էջ 22:

[2] «Լուսաբեր», 1907, N 372:

ցությունը չի բացառում իշխանությունների կողմից նոր հակահայկական քայլերի ձեռնարկումը[1]: Նա կոչ էր անում լինել ողջամիտ և իրատես, գտնելով որ ռուսահպատակ հայերը պետք է այնպիսի հեռատես ուղղություն վերցնեն, որպեսզի «Ռուսիոյ ընդհանուր բարգավաճման էական մեկ տարրը համարուին», որովհետև հակառակ դեպքում ըստ նրա «Ռուսիոյ հայոց կողմէն «յառաջադիմական» ծայրահեղ պահանջումներ, քաղաքական խև-խօլ հանդգնութիւններ չափազանցօրեն պիտի վնասեն մեր դատին, որ մանավանդ Ռուսիո ձեռքերուն մեջ է»: Այս նկատառումներով Արփիարյանը փափագում էր Կովկասում «չափավորների հզորացմանը»[2]:

1906թ. «Անահիտ» հանդեսում Արշակ Չոպանյանը հանդես է գալիս ընդարձակ հոդվածով՝ «Ռուսիա և հայերը», որտեղ հեղինակը փորձում է շաղկապել և ընդհանրություններ տեսնել հայ հասարակական-քաղաքական ուժերի ծավալած գործունեության և Ռուսաստանի հակահայկական քաղաքականության միջև[3]: Այդ առթիվ «Շիրակում» Արփիարյանը հանդես է գալիս երեք հոդվածներով՝ «Հակահայ փուրսիշ», «Ամուձան», «Ռուսիոյ հետ», որոնց մեջ արտահայտում է իր անհամաձայնությունը Չոպանյանի մի քանի տեսակետների վերաբերյալ:

«Հակահայ փուրսիշ» հոդվածում Արփիարյանը համամիտ չէ Չոպանյանի այն մտքին, թե Ռուսաստանի հակահայկական քաղաքականությունը պայմանավորված էր հայ քաղաքական կուսակցությունների՝ հնչակյանների և դաշնակցականների գործունեությամբ: Արփիարյանն անհերքելի ապա-

[1] «Շիրակ», 1905, N 7, էջ 25:
[2] «Լուսաբեր», 1907, N 322:
[3] «Անահիտ», 1906, N 345, էջ 33-68:

ցույցներով ցույց է տալիս, որ Ռուսաստանը այդպիսի քաղաքականություն որդեգրել էր ավելի վաղ, դեռևս Ալեքսանդր 2-րդ ցարի սպանությունից հետո: Որպես օրինակ նա բերում է 1884թ. հայկական դպրոցների փակումը կառավարության կողմից, ցույց է տալիս, որ Ռուսաստանը հետևողական քաղաքականություն էր վարում Կովկասում հայերի տնտեսական դրությունը քայքայելու համար: «Պ. Զոպանյան ազգին իբր մեղաւորներ մատնանիշ կընէ քաղաքական կուսակցութիւնները՝ Հնչակեան և Դաշնակցական, որոնք մոտ քան տարի է Թիւրքիոյ հայոց վիճակին բարվոքմանը համար կը կովին: Բայց ոչ մեկ և ոչ մյուս կուսակցութիւնը գոյութիւն ունեին 1884-ին, երբ «հայակերութեան» թվականը բացուեցավ դպրոցներու գրաւմամբ»[1]:

Արփիարյանը գտնում էր, որ Ռուսաստանի հակահայկական քաղաքականությունը պայմանավորված չէր դաշնակցականների հակաթուրքական գործունեությամբ կամ հնչակյանների ծրագրին սոցիալիստական դրույթներով, այլ որ այն ավելի խոր արմատներ ուներ և բխում էր Ռուսական տերության աշխարհաքաղաքական շահերից:

Զոպանյանը սխալ էր համարում Բեռլինի վեհաժողովին հայ պատգամավորության դիմումը: Ըստ նրա, դա խթանեց Ռուսաստանին հայ դատի պաշտպանությունից հրաժարվելուն: Հակադրվելով այս տեսակետին, Արփիարյանը քննադատում էր բոլոր նրանց, ովքեր փորձում էին հայ ժողովրդի դժբախտությունների պատճառը փնտրել Բեռլինի վեհաժողով մեկնած Խրիմյանի պատգամավորության մեջ: Զոպանյանը դա համարում էր Ռուսաստանից հեռացման, մեկուսացման պատճառը: Բայց կա նաև մեկ ուրիշ խումբ՝ Օսմանյան պե-

[1] «Շիրակ», 1906, N 2, էջ 93-94:

տության մեջ բարձր դիրքեր ու պաշտոններ զբաղեցնող հայ էֆենդիների խավը, որոնք պատվիրակության դիմումը վեհաժողովին համարում էին դավաճանություն հանդեպ Օսմանյան պետությանը, իբր դրանով հայերը ձգտում էին Եվրոպական պետությունների օգնությամբ իրենց համար ինքնավարություն ստեղծել:

Հրապարակախոսը վճռական կերպով հայտարարում էր, որ Հայկական հարցի ծագումից ի վեր թուրքահայերի հանրային կարծիքը և նրանց բոլոր պահանջները ամփոփված են «կեանքի, ինչքի, պատուի ապահովութեան համբաւավոր բանաձեւին մէջ»: Նա ցույց էր տալիս, որ հայերը առաջ չեն քաշել քաղաքական պահանջներ, հետևաբար «ոչ մեկ պետութիւն չեն կարող ունէ պատրուակ մը գտնել մեր դատին դէմ իրաւամբ հակառակելու համար»[1]:

Արփիարյանը խորապես համոզված էր հայկական հարցի օրինականության և արդարացիության մեջ և գտնում էր, որ նույնիսկ Օսմանյան կայսրությունը «մեր պահանջումներուն դէմ քաղաքական միտումներու ամբաստանութիւնը չի կրնար յարուցանել»[2]: Հրապարակախոսի կարծիքով բոլորովին այլ հարց է, երբ որևէ Եվրոպական պետություն օգտագործում է Հայկական հարցը իր շահերի համար, որին հայերն անկարող են ընդդիմանալ[3]:

Չոպանյանի մյուս դրույթը, որին հակադրվում էր Արփիարյանը, այն էր, որ հայերը չօգտագործեցին իրենց անկախության համար պայքարի ելած երկրների փորձը: Տվյալ դեպքում խոսքը վերաբերվում էր Իտալիային: Արփիարյանը

---

[1] «Շիրակ», 1906, N 3, էջ 164-165:

[2] Նույն տեղում, էջ 166:

[3] Նույն տեղում, էջ 167:

գտնում էր, որ նման կարծիք հայտնելու համար նախևառաջ անհրաժեշտ է համեմատել երկու ժողովուրդների քաղաքական կացությունը: Ի՞նչ վիճակում էր Իտալիան և ի՞նչ վիճակում 19-րդ դարի վերջին Հայաստանը: Վերջինիս վիճակը անհամեմատ ավելի վատթար էր: Արփիարյանն իրավացիորեն ցույց էր տալիս, որ իտալական ազատագրական շարժման հայտնի գործիչ Կավուրը ինչքան էլ մեծություն լիներ, հաղթանակի չէր կարող հասնել, եթե ստիպված լիներ գործելու այնպիսի քաղաքական պայմաններում, ինչպիսին որ տիրում էր դարավերջի Արևմտյան Հայաստանում: «Քավուր մը իր ձեռքին տակ ունէր հանրային գանձարան մը, բանակ մը, թագաւոր մը, իշխանութիւն մը իր ամբողջ կազմուածքով: Չեմ գիտեր, թէ Ներսես պատրիարք մը, Իզմիրլեան պատրիարք մը ի՞նչ կրնային ընել աղերսելուց զատ»[1]:

Արփիարյանն իհարկե, կողմնակից էր այն բանին, որ փորձ ձեռք բերելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել այլ երկրների ազգային ազատագրական պայքարի պատմությունը, բայց երբեք չպետք է անտեսել տվյալ երկրի քաղաքական պայմաններն ու առանձնահատկությունները: «Ռուսիոյ հետ» հոդվածում շարունակելով բանավեճը Չոպանյանի հետ, Արփիարյանը ժխտում է Չոպանյանի առաջ քաշած արևմտահայերի «ռուսատեացութեան» մասին տեսակետը և հիմնավոր փաստերով ապացուցում, որ չհաշված Կ.Պոլսի հայ մեծատուններին և բարձրաստիճան հոգևորականության մի մասին, արևմտահայությունը իր հիմնական զանգվածով եղել և մնում է ռուսասեր[2]:

---

[1] Նույն տեղում, էջ 169:

[2] Նույն տեղում:

Իր կյանքի վերջին տարիներին Արփիարյանը խորապես համոզված էր, որ հայ ժողովրդի ճակատագիրը սերտորեն կապված է Ռուսաստանի ու նրա վարած քաղաքականության հետ։ Խոսելով ռուս-ճապոնական պատերազմում Ռուսաստանի կրած պարտության մասին Արփիարյանը գտնում էր, որ դա հարված էր նաև հայությանը։ Նա ճիշտ էր եզրակացնում, որ արտաքին քաղաքական ասպարեզում Ռուսաստանի կրած «ամեն մէկ հարուածը կամրացնէն մեր թրքական շղթաները»[1]։

«Շիրակում» և «Լուսաբերում» Արփիարյանն անդրադառնում է նաև Ռուսաստանի հանդեպ հայ հասարակական մտքի դիրքորոշման հարցին։ Ռուսաստանի նկատմամբ նրա հայացքները կրում են զգալի փոփոխություններ քաղաքական նոր իրադարձությունների ազդեցության տակ։ Եթե 19-րդ դարի վերջին «Նոր կեանքի» էջերում հրապարակախոսը խարազանում էր Ռուսաստանի հետադիմական քաղաքականությունը, ապա «Շիրակում» արդեն նկատելի է նրա շրջադարձը Ռուսաստան։

«Կովկասէն» հոդվածում Արփիարյանը ցույց է տալիս, որ Ռուսաստանը երբեք չի ձգտել նպաստել իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդների զարգացմանը, ընդհակառակը՝ նրա նպատակն է եղել երկրների գաղութացումն ու ազգերի ձուլումը, բայց հայ ժողովուրդը միշտ եղել է ռուսասեր և կողմնորոշվել է դեպի Ռուսաստանը, որովհետև ռուսական տիրապետությունը անհամեմատելի էր թուրքականի հետ[2]։ «Հայաստան և Ռուսիա» հոդվածում հեղինակը ընդգծելով ցարիզմի արտաքին քաղաքականության նվաճողական բնույթը ցույց էր տալիս, որ Ռուսաստանի ձգտումը դեպի Միջերկրա-

---

[1] Նույն տեղում։

[2] Նույն տեղում, 1905, N 7, էջ 25։

կան ծով և Պարսից ծոց օբյեկտիվորեն համընկնում էր հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին[1]:

Անհրաժեշտ է նշել այն կարևոր հանգամանքը, որ թեն Արփիարյանի գաղափարական շրջադարձի վրա ռուսական առաջին հեղափոխությունը նկատելի ազդեցություն ունեցավ, սակայն չի կարելի այն սպայմանավորել միմիայն հեղափոխության գործոնով: Առավել ևս, որ հրապարակախոսի հոդվածները «Շիրակում» մեզ նման ենթադրության հիմք չեն տալիս:

## *գ) Արփիարյանը արևմտահայերի փրկության ուղիների մասին*

Արփիարյանի համար պարզ էր, թե ինչպես էին հայոց հարցին վերաբերվում եվրոպական դիվանագիտությունը և թուրքական կառավարությունը: Ինչպես գրում էր Լեոն. «Առաջինը թոյլ եւ յեղհեղուկ, սկզբից ի վեր նաև վաճառվող և խաբեբա Սոլսբերի-Գլադստոնյան ոճով, երկրորդը՝ հայոց հարցը հայերի բնաջնջումով լուծելու վճռականութեամբ լցված»[2]: Պարզ էր, որ 61-րդ հոդվածին վիճակված չէր իրականանալ, և որ ցնորք էր սուլթանից բարենորոգումներ հուսալը:

Հակառակ ժողովրդի կրած տառապանքներին՝ պոլսահայ երևելիներից շատերը գտնում էին, որ հնազանդությունն ու համբերությունը միայն կարող են մեղմել սուլթանի դաժանությունը. «Մենք այնչափ հիմար եմք, որ կը կարծենք թէ թրքաց ոտքերը յամբուրելով, շողոքորթիչ ածականներ տալով

---

[1] Նույն տեղում, N 4, էջ 293:

[2] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, էջ 124:

այդ զազանը պիտի կարենանք ընտելացնել, - գրում էր Արփիարյանը»[1]:

Պախարակելով բոլոր նրանց, ովքեր քարոզում են խոնհեմություն, հնազանդություն իշխանությանը, Արփիարյանը կոչ էր անում սթափության՝ մեջբերելով մի թուրք պաշտոնյայի հայերին ուղղված հետևյալ խոսքերը. «Եթէ դուք թուղթերու ապաւինած էք, իսլամք սուրի կռթնած են»[2]: Շարունակելով միտքը՝ նա հանգում է հետևյալ եզրակացության. «Չեն ըսեր մեզ թէ մինչև հիմա խելօք կենալէն ի՞նչ շահեցանք. և ո՞վ կրցաւ Թիւրքիոյ մէջ առանց երկիւղ ազդելու հանգստութիւն գտնել»[3]:

Այսպիսով, Արփիարյանը հանգեց այն եզրակացության, որ Բեռլինի կոնգրեսից հետո թուրքական սաստկացող բռնությունները ոչ թե միջոց էին հայերին զսպելու համար, որպեսզի նրանք հնարավորություն չունենան պաշտպանելու իրենց դատը, այլ հայաջինջ քաղաքականության նպատակի գործադրում: Այդ նպատակի խորը ըմբռնումով է Արփիարյանը գրել. «Մենք պիտի արթուն ըլլանք և հսկենք, որովհետև մեր ազգային գոյութիւնը բնաջինջ ընել Դրան յատակագիծն է»[4]:

Այստեղից Արփիարյանի մոտ ընդհանրանում էր այն համոզմունքը, որ իր ազատության համար մղվող պայքարում հայ ժողովուրդը հույսը միմիայն սեփական ուժերի վրա պետք է դնի: Պաշտպանելով այս գաղափարը՝ Արփիարյանը քաղաքական բանավեճի մեջ մտավ Ծերենցի հետ, որովհետև «տոքթոր Շիշմանեան կարծեցեալ հակառակորդ մը հանդիսացած էր Նալբանդեանի, Րաֆֆիի, Արծրունիի, Նիկողոսյանի և

[1] «Մշակ», 1882, N 69:

[2] Նույն տեղում, 1881, N 109:

[3] Նույն տեղում, N 117:

[4] Նույն տեղում, N 33:

անոնց գաղափարակիցներու...»[1]: Ծերենցը գտնում էր, որ հայ ժողովուրդը պետք է հրաժարվի ապստամբության մտքից և հույսը դնի «վերևից» իրականացվող ռեֆորմների վրա[2]:

Հիասթափվելով եվրոպական խարդախ դիվանագիտությունից և տեսնելով սուլթանական Թուրքիայի վարած հայակործան քաղաքականությունը, հատկապես Բեռլինի վեհաժողովից հետո Արփիարյանն առաջ էր քաշում «Ինքնօգնության» գաղափարը: «Ի՞նչ ընենք պարոն դիպլոմաթներ, միշտ լանք ու ձեր գթութեանը սպասենք, - գրում էր հայրենասեր գործիչը, - ալ քիչ մ՚ալ մենք մեր գլուխն ճարը պիտի մտածենք»[3]:

Ցանկանալով ընդգծել պայքարի զինված ուղու արդյունավետությունը, նա բերում է հետևյալ օրինակը. «Զէյթուն իրեն ինքնաւարութիւնը ունեցաւ, ամուր լեռներ, քանի մը հրացան և քիչ մը արիւն շատ ավելի արդյունաւոր եղան քան վեհաժողովներ, անթիվ բողոքներ, կառավարութեանց միջամտութիւններ»[4]:

Արփիարյանը հասկանում էր, որ արևմտահայությունը չունի պայքարի փորձ, գործողությունների հստակ ծրագիր, սակայն նա համոզված էր այն բանում, որ «Փորձութիւնը գրքի մէջ չեն սորուիր. ինչպես մարդ մը նույնպես ժողովուրդը մըն ալ իյնալով ելլալով փորձառու կըլլա»[5]: Նա գտնում էր, որ ժողովրդի մեջ պետք է արմատավորել ինքնապաշտպանության գիտակցությունը: Արփիարյանը ցույց տվեց, որ ժողովրդի փրկությունն արտաքին միջամտության մեջ չէ, որ ուժի ազդե-

---

[1] Երեմեան Ս., նշվ. աշխ., էջ 381:

[2] Գևորգյան Ս., Հայ ազգային-ազատագրական պայքարի խնդիրները Րաֆֆու հրապարակախոսությունում, Եր., 1990, էջ 89:

[3] «Մշակ», 1881, N 117:

[4] Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820-1920), Եր., 1982, էջ 2:

[5] Նույն տեղում, էջ 298:

ցությամբ միայն ժողովուրդները կարող են իրենց համար մարդկային կյանք ապահովել, անշուշտ այդ ուժը իմաստությամբ գործադրելով:

Մերժելով ահաբեկչության, ցաք ու ցրիվ զինված խմբերով գործելու տակտիկան՝ Արփիարյանը նախապատվությունը տալիս էր համաժողովրդական ապստամբությանը: Այս առումով նա միշտ բարձր է գնահատել քաջարի զեյթունցիներին. «Այդ լեառն մեր ազգի համար յուսոյ ապաստարան մը է. ամեն հայ, որ այդ անունն լսած է, պանծանօք և ուրախութեամբ կհիշէ զայն»[1]: Արփիարյանը խորապես համոզված էր, որ ինչպես Զեյթունի, այնպես էլ հայ ժողովրդի ազատագրական պայքարի մյուս հերոսական դրվագները լինելու էին իր ազատության համար ոտքի ելած ժողովրդի ոգեշնչման աղբյուրը:

Արփիար Արփիարյանը գտնում էր, որ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանը, որը կոչված էր լինել արևմտահայոց ղեկավար մարմինը և անձամբ պատրիարքը պետք է զգույշ ու ճիշտ քաղաքականություն վարեն: Չնայած բարենորոգումների խնդրի վերաբերյալ Սոլսբերիի և Լեյարդի վերջին ելույթները դառնացրել էին պատրիարքարանին, սակայն ըստ Արփիարյանի՝ հարաբերությունների սառեցումը անգլիական դեսպանատան հետ ճիշտ չէր: Պարզաբանելով իր միտքը՝ նա գրում է. «Արդեն Բ.Դռան նկատմամբ մեր ընթացքը բարեկամական լինելէ շատ հեռի է եւ թուի թէ հետզհետէ այնպիսի պարագաներ պիտի պատահին, որք դեսպանաց միջամտութիւնը անհրաժեշտ պիտի ընծային»[2]:

Արփիարյանը պատկանում էր արևմտահայ այն գործիչների թվին, որոնք գտնում էին, որ պետք է լինել զգոն և

[1] «Մշակ», 1879, N 98:

[2] Նույն տեղում, N 77:

պատրաստ քաղաքական կտրուկ շրջադարձներին: Նա գտնում էր, որ արևմտահայությունը չպետք է բավարարվի միայն սպասիվ դիտողի, սպասողի դերով և միամտորեն հուսա թե Անգլիան կամ որևէ այլ տերություն շուտափույթ կլուծեն իրենց խնդիրը: Կանխատեսելով հարցի ողջ բարդությունը, Արփիարյանը գտնում էր, որ ժողովուրդը պետք է պատրաստվի երկարատև փորձությունների շրջանն անցնելու համար, միաժամանակ ցուցաբերելով ակտիվություն, նախաձեռնություն. «Սակայն երբ Հայկական հարցը կը սկսի օրուան խնդիր ըլլալ, պետք չէ, որ մենք հանգիստ կերպով նստենք և լսենք. «Անգլիան կաշխատի մեզ համար, հանգիստ կենանք և վայելենք»: - Ոչ, մենք պետք է ուշադիր ըլլանք և ձեռքներնուս եկածը մեր կողմէ ընենք, որպէսզի գործը դիւրացնենք: Կրնայ պատահել, որ քաղաքականութեան մէջ այնպիսի դէպքեր առաջ գան, որով Անգլիա պարտաւորի նորէն ետ քաշուել. մեր ջանքը պէտք է ըլլայ գետինը, հողը պատրաստել. եթէ այսօր ըլլայ, լավ, եթե չըլլայ, միշտ պատրաստուինք»[1]:

Արփիարյանը բարենորոգումների հարցը չէր դիտում որպես զուտ արևմտահայերի խնդիր: Նա գտնում էր, որ կովկասահայությունը պետք է ակտիվորեն աջակցի իր թուրքահայ եղբայրներին և այս հարցում հատկապես կարևորում էր ամենայն հայոց կաթողիկոսության դերը. «Եւրոպայէն մեծ բան մը չը յուսալու համոզումն կընդհանրանայ, - գրում էր Արփիարյանը, - և յուսամք, թէ Էջմիածին ևս ըմբռնէ, որ ինքն ալ կոչումն ունի հայ աշխարհի քաղաքական շարժումներու մէջ»[2]:

Նա գտնում էր, որ եվրոպական թերթերը հայերին վերաբերվող նյութերի խիստ կարիք են զգում, այդ պատճառով

---

[1] Նույն տեղում, 1883, N 68:

[2] Նույն տեղում,1879, N 69:

առաջարկում էր ունենալ մի անձնավորություն թեկուզ միայն Անգլիայում, որն անկախ լինելով Պոլսի հայ «վսեմաշուքների ու ազնուաշուքների» ազդեցությունից կկարողանա անձամբ տեսակցել պառլամենտի անդամների, նախարարների, խմբագիրների և այլոց հետ ու տրամադրել նյութեր հայերի և հայկական հարցի վերաբերյալ[1]:

Բացի դրանից Արփիարյանը գտնում էր, որ հայոց հարցի միջազգայնացման համար պետք է Եվրոպայում տպագիր օրգան ունենալ: Նա համոզված էր, որ այդ ձեռնարկը ազգօգուտ նշանակություն կունենա: Որպես օրինակ Արփիարյանը բերում էր թուրքերին, որոնք կաշառքի միջոցով գնել էին որոշ եվրոպական թերթեր և իրենց խոսքն էին տարածում Եվրոպայում[2]:

Արփիարյանը խորապես համոզված էր, որ հայկական հարցը արևմտահայ իրականության ծնունդ էր և ուներ իր օբյեկտիվ պատճառները: Այս հարցը նա մանրազննին ուսումնասիրության է ենթարկել «Ծագում հայկական խնդրին» հոդվածաշարում[3]:

Հրապարակախոսը փաստերով ցույց է տալիս, որ թուրքահպատակ հայ ժողովրդի արդար բողոքը պատրիարքների ու արևմտահայերի Ազգային ժողովի միջոցով բազմիցս ներկայացվել է կառավարության քննությանը. «Քսան տարուան մէջ 537 թաքրիր գրուած է գաւառներէ եկած տեղեկագիրներու պարունակութեանց համեմատ», բայց և ոչ մի քայլ չի ձեռնարկվել հայերի դրութիւնը լավացնելու ուղղութեամբ[4]: Ըստ դրա 1870թ. արևմտահայերի Ազգային ժողովը կազմում է «Հայաս-

---

[1] Նույն տեղում,1883, N 68:

[2] Նույն տեղում,1882, N 46:

[3] Հոդվածաշարը լույս է տեսել «Նոր կեանք»-ի 1900թ. N10, 12, 14, 16-ում:

[4] «Նոր կեանք», 1900, N 11, էջ 169:

տանի հարստահարութեանց քննիչ հանձնաժողով» կազմված 4 հոգուց (2 աշխարհական, 2 եկեղեցական)։ Հանձնաժողովը մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկում արևմտահայերի հարստահարությունների մասին բոլոր բողոքները, որի հիման վրա կազմում է «Տեղեկագիր»։ Այն ներկայացվում է 1872թ. փետրվարի 18-ի Ազգային ժողովի նիստում։ «Տեղեկագիրը» Արփիարյանն իրավամբ համարում է «Հայկական խնդրի հիմնաքարը»[1]։ Նա խորին երախտագիտության խոսք է ուղղում Խրիմյան հայրիկին՝ «Մեծ հայրենասերին, որ ցնցեց ու խռովեց հայութիւնը, իրականութիւնը ամենուն աչքերուն առջև դնելով»[2]։ Չնայած «Տեղեկագիրը» և հարցի լուծման միջոցառումների իր ծրագիրը Ազգային ժողովը ներկայացրեց կառավարությանը, բայց այն ևս մնաց անպատասխան։

Հայկական հարցին նվիրված Արփիար Արփիարյանի հոդվածներում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ Օսմանյան կայսրության մեջ արևմտահայերի դրությունը մազաչափ անգամ չի փոփոխվել, և որ ինչպես դարի կեսերին, այնպես էլ դարավերջին թուրքական կառավարությունը անխոտր կերպով շարունակում է տիրապետող ցեղի ձգտումը՝ քրիստոնյաներին իր բնիկ հայրենիքում բարոյապես ու նյութապես քայքայելու քաղաքականությունը[3]։

Արփիարյանն իրավացիորեն ծրագրված քաղաքականություն է համարում այն, որ չնայած տասնամյակներ շարունակ կառավարության մեջ իրար հաջորդել են քաղաքական տարբեր համոզմունքների տեր անձնավորություններ, այնուամենայնիվ նրանցից ոչ ոք պատրիարքարանի բազմաթիվ

---

[1] Նույն տեղում, N 10, էջ 148։

[2] Նույն տեղում , N 12, էջ 180։

[3] Նույն տեղում։

խնդրագրերից գեթ մեկին դրական լուծում չի տվել: «Երկրին սատրազամը Մահմուտ Նէտիմ փաշային պէս Հին թիւրք մը ըլլայ թէ Միտհատ փաշայի նման Երիտասարդ թիւրք մը, քրիստոնէից վիճակը երբեք փոփոխութեան չը ենթարկուիր: Օսմանեան քաղաքականութեան առաջնորդող գաղափարն է՝ քրիստոնէին վրայ իսլամին գերիշխանութիւը անխախտ և ամուր պահելը..»[1]:

Հրապարակախոսը ցրում է հայ ազգային շրջաններում տարածված պատրանքները բարվոք թուրքական վարչություն հաստատելու վերաբերյալ գրելով, որ Հայաստանի նկատմամբ թուրքական կառավարության վարած նենգավոր քաղաքականության մեջ «ո՛չ հին թիւրք կայ, ո՛չ նոր թիւրք, ո՛չ երիտասարդ թիւրք, ո՛չ ծեր թիւրք, այլ՝ թիւրք միայն: 1895-ի քաղաքականութիւնը շարունակութիւնն է եւ կատարելագործութիւնը 1875-ի հայաջինջ քաղաքականութեան»[2]:

Արփիարյանը, հիմնվելով հարստահարությունները քննող հանձնաժողովի տեղեկագրի վրա, արևմտահայերի բազմաբնույթ բողոքների շարքում հատկապես առանձնացնում է երկուսը: Նախ ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրության քրիստոնյաների համար «մեծագոյն աղետ» էր դատարաններում նրանց «վկայութեան մերժումի օրենքը»: Այդ հարցի լուծումը ըստ վերոհիշյալ հանձնաժողովի եզրակացության այն էր , որ «քաղաքային, առեւտրական եւ ոճրագործական բոլոր դատերը» պետք է հանվեին շարիաթի իրավասությունից և տրվեին քաղաքացիական ատյաններին:

Հաջորդը վերաբերում էր քրդերին ու չերքեզներին, որոնք, Արփիարյանի պատկերավոր բնորոշմամբ, «Հայ ժո-

---

[1] Նոյն տեղում, N 14, էջ 215:

[2] Նոյն տեղում, N 16, էջ 246:

ղովրդին համար ճշմարիտ պատուհասներ են» դարձել: «Այս բարբարոսները միշտ զինուած են», - գրում էր Արփիարյանը: «Ունէ տուրք չեն վճարեր, զինուորական ծառայութենէ ազատ կը մնան, և բացէիբաց ապստամբ վիճակի մէջ են»: Բացի թուրքական կառավարությունից հայ ժողովուրդը «ծանրածանր տուրքեր» է վճարում նրանց: Վկայակոչելով քննիչ հանձնաժողովի եզրակացությունը՝ Արփիարյանը ցույց է տալիս, որ թուրքական կառավարությունը կա՛մ պետք է զինաթափի նրանց, կա՛մ պետք է թույլ տա, որ հայերը նույնպես զենք կրեն[1]:

Արփիարյանն արծարծում է այն միտքը, որ Հայկական հարցի ծնունդը դրսից ներմուծված չէր: Ցանկանալով «ստանձնել իր օրինաւոր, արդար, անփոխելի իրավունքներուն պաշտպանութիւնը հայ ժողովուրդը չմտաբերեց օտար պետութիւններու ոտնձգութիւնը հրավիրել հայ ազգին և օսմանեան իշխանութեան միջև»[2]:

Խոսելով այս հարցի մասին՝ Արփիարյանը ցույց է տալիս, որ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո որոշ «խելահաս» թուրք փաշաներ բազմիցս «մտերմօրէն յայտնած են հայերէն ոմանց թէ՝ Հայոց Պատրիարքարանը օսմանեան կայսրութեան ճշմարիտ եւ խելացի բարեկամն է» ու դրա ապացույցը համարում էին 1872թ. վերոհիշյալ տեղեկագիրը: Ըստ նրանց, եթե թուրքական կառավարությունը այդ տեղեկագրում մատնանշված տարաբնույթ կամայականությունները հետևողականորեն վերացներ, ապա «այսօր ոչ Ռումելին ձեռքերնուս կերթար, և ոչ ալ այսքան աղետ մեր գլխուն կուգար:Այդ տեղեկագրին մէջ ո՛չ մեր անձնասիրութիւնը վիրաւորող կէտ մը կար, ո՛չ սուլթանին վեհապետական իրաւունքնե-

[1] Նույն տեղում, N 12, էջ 181-182:

[2] Նույն տեղում, 1898, N 14, էջ 211:

րուն քննաքարում մը, ո՛չ եւրոպական միջամտութեան մը իրաւերը»[1]:

Արփիարյանը, Հայկական հարցի լուծումը կապելով Եվրոպական երկրների հետ, գտնում էր, որ այդ հարցը չի կարող փակվել առանց Հայաստանում Եվրոպական վարչության հաստատվելու: Խոսելով Օսմանյան կայսրության վարչական բարեկարգության հարցի մասին՝ Արփիարյանն այն համոզմունքն էր հայտնում, որ «ամենալաւ տրամադրութիւններով օժտուած խելացի սուլթան մը զահակալէ, դարձեալ անկարելի է պետութիւնը միայն իսլամներու միջոցավ բարեկարգել»[2]:

«Թիւրքիո բարեկարգումը» հոդվածում Արփիարյանը բացահայտում է այն պատճառները, որոնք անհնարին են դարձնում երկրում բարենորոգումների իրականացումը: Նա իրավացիորեն նշում էր, որ գլխավոր արգելքներից մեկը իսլամն էր, մի կրոն, որը չի հանդուրժում տիրապետող թուրքի հավասարությունը քրիստոնյա «ռայաների» հետ: Մյուս կողմից, Արփիարյանը թերահավատորեն էր նայում թուրքերի մտավոր կարողություններին, ժողովուրդ, որը «միայն քանդումի, աւերումի համար ստեղծուած է: ...Թիւրքերուն երեւումը ոևէ օգուտ չունեցաւ մարդկութեան վնասէ զատ»[3]: Դրանցից ելնելով՝ Արփիարյանը գտնում էր, որ Օսմանյան կայսրության քրիստոնյաների ազատագրումը միայն եվրոպական զենքով կարելի է ապահովել[4]:

Ազատագրական պայքարի հետագա ճիշտ ուղին գտնելու համար Արփիար Արփիարյանը շատ կարևոր խնդիր էր համարում հայ բազմադարյան ազգային-ազատագրական

---

[1] «Նոր կեանք», 1900, N 12, էջ 182:

[2] Նույն տեղում, 1898, N 4, էջ 49:

[3] Նույն տեղում, 1899, N 5, էջ 66 -67:

[4] Նույն տեղում, N 4, էջ 49:

շարժման, նրա անհաջողությունների պատճառների քննությունն ու իմաստավորումը: «Երեք դարու յարատեւ աշխատութեան ու յարատեւ անյաջողութեան պատճառները քննել, իմաստասիրել եւ անոնցմէ խրատուիլ, թերեւս էն գործնական միջոցը ըլլայ մեր գաւակներուն իբր Հայ լաւ ապրելու սպագայի մը պատրաստութեան»[1]:

Մտորելով այս հարցերի մասին, հրապարակախոսը գտնում էր, որ ազատագրական շարժման անհաջողությունների գլխավոր պատճառը դա ժողովրդի կողմից իր իսկ փրկությունը իրենից դուրս փնտրելու մեջ էր: Ինչու՞ ազատագրական շարժման նշանավոր գործիչների՝ Իսրայել Օրու, Հովսեփ Արղությանի, Ներսես Աշտարակեցու, Մկրտիչ Խրիմյանի և այլոց կազմած Հայաստանի ազատագրության ծրագրերը չիրականացան, ծրագրեր, որոնք կազմված էին ժամանակի պահանջներին ու հանգամանքներին համեմատ, «Սակայն ոչ մեծ ծրագիրը իրականացաւ, ոչ ալ պզտիկը, - գրում էր Արփիարյանը, - որովհետեւ արտաքին հույսերեն զատ իրեն ուրիշ ապավեն պատրաստելու պետքը չզգաց հայ ժողովուրդը»[2]:

Արփիարյանը եվրոպական երկրներին դիմելը սխալ չի համարում, հասկանալով, որ միայն հայոց ուժը բավարար չէր երկրի ազատագրության համար. միաժամանակ նա համոզված էր, որ օտարին դիմելուց զատ պետք էր մտածել «սեփական ապաւենի», ստեղծման մասին, որը կդառնար «փոքր ամրակառոյց ամրոց մը, ուրկէ կարելի էր ապազան պատրաստել»[3]:

---

[1] Նույն տեղում, 1898, N 18, էջ 273:

[2] Նույն տեղում:

[3] «Նոր կեանք», 1898, N 18, էջ 273:

Ազատագրական շարժման անհաջողության պատճառներից մեկն Է Արփիարյանը համարում էր հայ ունևոր խավերի կողմից շարժմանը նյութապես աջակցելուց հրաժարվելը: Նա ունևորներին կոչ էր անում օրինակ վերցնել հրեաներից, որոնք չնայած ցիրուցան են ողջ աշխարհով մեկ, բայց միավորվում են ազգային պետություն ստեղծելու գաղափարի շուրջը, իսկ հրեա հարուստները չեն խնայում իրենց նյութական միջոցները ներդնել այդ նպատակի իրագործման համար[1]: Այս կապակցությամբ հրապարակախոսը դատապարտում է արևմտահայ-առևտրական դասին պատկանող «խումբ մը հայերի», որոնք մտահոգված միմիայն սեփական բարօրությամբ քննադատում են անցյալի ազատագրական շարժումները, ոճիր են համարում «ազատագրութեան ոնէ խորհուրդէ և դրանով «հայ ազգը հուսահատութեան կը մղեն»[2]:

Շարունակելով միտքն՝ Արփիարյանը գրում է. «Միայեցանք, երբ Եւրոպա նստող յեղափոխական վարիչներու վրայ չափազանց համարում ունեցանք, եւ անոնց ապաւինելով պէտք չտեսանք գոնէ առժամեայ ընդդիմադրութեան մը նախապատրաստութիւնները ընելու»[3]: Այստեղից նա հանգում է այն հետևությանը, որ միայն անձնվիրությունը բավական չէ հաղթանակի համար, և անհրաժեշտ է ավելի լրջախոհ ուղղություն որդեգրել:

* * *

1905թ. հուլիսի 21-ին Հայ հեղափոխական դաշնակցության կողմից Կ.Պոլսում մահափորձ կատարվեց սուլթան Հա-

---

[1] Նույն տեղում, N 20, էջ 306:

[2] Նույն տեղում, 1900, N 2, էջ 17:

[3] Նույն տեղում, էջ 18:

միդի դեմ: Չնայած մանրակրկիտ մշակված պլանին, այնուամենայնիվ սուլթանը պատահական դիպվածով կենդանի մնաց: Դեպքը մեծ արձագանք գտավ միջազգային քաղաքական կյանքում: Մամուլը հեղեղվեց բազմաթիվ, նույնիսկ իրարամերժ ու հակասական տեղեկություններով: Ի՞նչ դիրք բռնեց Արփիար Արփիարյանն այս հարցում: Եթե ազատագրական պայքարի որոշ հարցերի նկատմամբ նա վերանայեց իր տեսակետները, ապա ահաբեկչության հարցում միշտ դրսևորեց բացասական վերաբերմունք: Անհատական տեռորի տակտիկան նա ոչ միայն սխալ, այլև վնասակար էր համարում: Արփիարյանը համոզված էր, որ ազգի դժբախտությունները չեն պայմանավորված այս կամ այն սուլթանի հետ, և եթե Համիդին փոխարինելու գան սուլթան Ռեշադը կամ Յուսուֆ Իզեդդինը, ապա հայերի վիճակը դրանից չի փոփոխվելու դեպի լավը, «Խնդիրը անձի վրա չէ, այլ դրութեան, հիմնովին փոփոխութեան»[1]: Նա ցույց էր տալիս, որ սուլթանի դեմ մահափորձը կառավարությունն օգտագործում էր Թուրքիայի մահմեդականներին հայերի դեմ գրգռելու և մամուլի միջոցով Եվրոպայի հանրային կարծիքը նոր ջարդերի նախապատրաստելու համար: «Մինչ մեկ կողմեն Ելտըզը ռումբերու պատմութիւններով Թիւրքիոյ մահմեդականութիւնը մեզի դէմ կը գրգռէ, միւս կողմեն մեզի դէմ կը նախապաշարէ Եւրոպայի հանրային կարծիքը»[2]:

Արփիարյանը տագնապով է խոսում այն մասին, որ կայսրության ծայրամասերը տարածվող թուրքական թերթերը

---

[1] «Լուսաբեր», 1906, N 176:

[2] Նույն տեղում, 1905, N 138:

բացահայտորեն զրզռում են մահմեդական ամբոխի մոլեռանդությունը[1]: Հրապարակախոսի մտահոգությունը անհիմն չէր:

Նա հիշեցնում է, որ 1894-1896թթ. հայկական ջարդերին նախորդեցին և պատրվակ ծառայեցին Փոքր Հայքի տարբեր քաղաքներում հրապարակված հնչակյանների կոչերն ուղղված Թուրքիայի մահմեդականներին, որոնցում բնակչությանը հրահիրում էին ապստամբել սուլթանական բռնակալության դեմ[2]:

Հրապարակախոսը նույնիսկ էական չէր համարում մահափորձի հաջողվելու կամ չհաջողվելու հանգամանքը՝ գտնելով, որ երկու դեպքում էլ այն առիթ էր դառնալու նոր հայկական կոտորածների. «բայց վերջապես ընդունինք, որ հաջողման պարագային ալ հայը պիտի կոտորուի, անհաջողութեան պարագային ալ: Խնդիրը միշտ հայուն գլխուն վրա է»[3]:

Արփիարյանը զգուշացնում էր չխաբվել և չհավատալ Օրմանյան պատրիարքին տված սուլթանի այն հավաստիացումներին, թե հայերի հանդեպ ինքը բարյացկամ է տրամադրված: «Առենք գայլն ալ ոչխարներուն անանկ ապահովութին մը տված էր: Մինչև իսկ երդումով: Անվրդով մնա՞նք: Այսօրուա համար թերևս: Վա՞ղը: Վաղուան համար պատմութեանը դիմենք»[4]:

Այնուհետև հրապարակախոսը անդրադառնալով 1890-ական թվականների կոտորածների պատմությանը, ցույց էր տալիս, որ ամեն մի կոտորածից հետո սուլթանը հերթական ապահովության երաշխիք էր տալիս, բայց Սասնո կոտորածին

---

[1] Նույն տեղում, N 150:

[2] Նույն տեղում, N 137:

[3] Նույն տեղում, N 151:

[4] Նույն տեղում, N 136:

հաջորդեց Վանը, հետո Ակնը, Եվդոկիան ու այդպես շարունակ:

Արփիարյանի կողմից անցյալի պատմության վերաքննումը և ներկայի հետ համեմատությունը պատահական երևույթ չէր: Իր ողջ հրապարակախոսական, կուսակցական, հասարակական ու գրական գործունեության ընթացքում նա առաջնահերթ համարեց անցյալը վերաիմաստավորելու, պատմությունից դասեր քաղելու խնդիրը. «Պատմութիւնը գրուածք մը չէ, բան մը կսորուեցնէ: Եվ մենէ ավելի ո՞վ պետք ունի բան սորուելու: Ինքնաքննութեան պարտականութիւնը անխուսափելի հարկ է»[1]:

Արփիարյանը ցույց էր տալիս, որ ահաբեկչությունը սուլթանի դեմ ոչ միայն վատթարացնում էր արևմտահայերի վիճակը, այլև չէր նպաստում հայկական հարցին: Նա գրում էր, որ թուրքերն այն օգտագործում են Եվրոպային համոզելու, թե հայկական շարժումը ոչ այլ ինչ է քան ամենաառվորական անարխիզմի դրսևորում: «Հեռագիրները, թղթակցութիւնները ամեն օր Եւրոպայի ու Ամերիկայի կը հաղորդեն «հայոց անիշխանական ծրագիրները», որոնք կը առաջադրեն «Թիւրքիոյ մէջ Եւրոպական շահերը վտանգելէ պանքաները օդ թռցնելով և հիւպատոսարանները հողին հարթեցնելով»[2]: Քննադատելով ազգային կուսակցությունների նման գործելակերպը Արփիարյանը գրում էր. «Մեզի համար ազգային դժբախտութիւն մըն է, որ հայկական դատը, հայկական յեղափոխութիւնը աշխարքին աչքին առջև համախ անիշխանականութեան հետ կը շփոթուի կարգ մը ցույցերու պատճառով. ոմբաձգութիւններ

[1] «Լուսաբեր», 1906, N 244:

[2] Նույն տեղում, 1905, N 138:

մարդու սպանութիւններ, որոնք բոլորուին օտարոտի մնալու են Հայաստանի բարեկարգութեանց գործերուն»[1]:

Արփիարյանը գտնում էր, որ ստեղծված պայմաններում պետք է աշխատել եւ չմնալ թուրքերից և մամուլով ու բոլոր հնարավոր այլ միջոցներով հերքել տարածված կեղծ լուրերը, այսինքն «կռուել հայ անիշխանականութեան ամբաստանքին դէմ»[2]:

* * *

20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանը տնտեսական և քաղաքական ծանր իրավիճակում էր, արձանագրվում էին միայն հայդուկային պայքարի առանձին հերոսական դրվագներ: Սակայն այն համոզմունքը, թե հայդուկային շարժումներով հնարավոր է ազատագրական պայքարի մղել ողջ հայ ժողովրդին, իրեն չարդարացրեց[3]: Հայ ազգային-ազատագրական պայքարի անհաջողությունները ստիպեցին ազատագրական շարժման առանձին գործիչներին, ազգային կուսակցություններին վերանայելու իրենց գործելակերպն ու հայացքները:

1906թ. մայիսին թուրքական աքսորավայրից փախած նշանավոր հնչակյան գործիչ Համբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրատ), հրապարակեց իր հայտնի կոչը ուղղված հնչակյան և դաշնակցական կուսակցություններին, որով առաջարկում էր վերջ տալ ներկուսակցական և միջկուսակցական պայքարի

---

[1] Նույն տեղում, 1906, N 303:

[2] Նույն տեղում, 1905, N 138:

[3] Հայոց պատմություն, հտ. 3, գիրք երկրորդ, Եր., 2015, էջ 52:

արատավոր ու վնասակար գործելակերպին և միավորել ուժերը միասնական ճակատով հանդես գալու համար։

Մուրադի կոչը ջերմ ընդունելություն գտավ Արփիար Արփիարյանի մոտ։ «Լուսաբերում» նա ցույց էր տալիս, որ հայ ժողովրդի բոլոր խավերի կողմից այն ջերմ հավանության է արժանացել, որովհետև ըստ հրապարակախոսի «կուսակցական երկպառակութիւնը Թիւրքիոյ հայոց այնքան աղէտաբեր եղաւ, որ յեղափոխականն ալ, հակայեղափոխականն ալ, չէզոքն ալ, ամենքն ալ «համաձայնութիւն, միութիւնն կը աղաղակէն»[1]։ Ի դեմս Մուրատի Արփիարյանը տեսնում էր այն անհատականությանը, որը «իր բարոյականովը արժանաւոր է ազգին քուէն ստանալու», և որը կարող է դառնալ նոր համընդհանուր շարժման կազմակերպիչն ու առաջնորդը[2]։

Անհրաժեշտ է նշել այն կարևոր հանգամանքը, որ դեռևս մինչև Մուրադի հայտնի կոչը Արփիարյանը «Լուսաբերի» մի շարք համարներում արդեն բարձրացրել էր համազգային միասնության խնդիրը։ Եգիպտահայությանը նախազգուշացնելով մոտալուտ հայկական ջարդերի հավանականության մասին՝ նա առաջարկում էր գումարել համահայկական միտինգ Կահիրեում և սպասվող արհավիրքին դիմակայելու համար խորհել սեփական անելիքների մասին։ Հրապարակախոսը հորդորում է չհապաղել և չեզոք չմնալ, քանզի «կռուի պահուն չեզոք մնացողները վատեր են»[3]։ Արփիարյանը եգիպտահայության առաջնորդներին կոչ էր անում մի կողմ թողնել ներքին տարաձայնությունները և համախմբվել, որը նա կար-

[1] «Լուսաբեր», 1906, N 299։

[2] Նույն տեղում, N 310։

[3] Նույն տեղում, 1905, N 149։

նոր քայլ էր համարում համազգային միասնության հաստատման գործում:

Խոսելով ազգային կուսակցությունների միասնության ու համերաշխության մասին՝ հրապարակախոսը նախ և առաջ անհրաժեշտ էր համարում կուսակցական հակամարտությունների դադարեցումը:

Դրվատելով կուսակցությունների՝ հատկապես դաշնակցության կատարած մեծ գործը հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, Արփիարյանը միաժամանակ ցույց էր տալիս, որ միջկուսակցական բախումները Կովկասում շարունակվում են, մի բան, որը ձեռնտու էր իշխանություններին[1]: Դա պարզորոշ երևում էր Ռուսաստանի ոստիկանական (ժանդարմական) դեպարտամենտի դիրեկտորին 1905 թ. գեներալ Շիրինկինի՝ Կովկասից ուղարկված հեռագրից, որտեղ գեներալը, տեղյակ պահելով հայ-թաթարական բախումների ընթացքի մասին, միաժամանակ խոսում է հայ ազգային կուսակցությունների՝ հնչակյանների ու դաշնակցականների միջև տեղի ունեցող միջկուսակցական ընդհարումների և իրար կազմալուծելու ու վարկաբեկելու նպատակաուղված գործունեության մասին[2]:

Միության անհրաժեշտ պայմաններից մեկն էլ Արփիարյանը համարում էր ներկուսակցական պառակտումների վերացումը, որն ավելի խորացավ ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության տարիներին: Հեղափոխությունը մեծ ազդեցություն թողեց հայ հասարակական-քաղաքական ողջ կյանքի վրա: Դաշնակցության մեջ առաջացավ այսպես կոչված ձախ անջատականների հոսանքը, որոնք

[1] «Լուսաբեր», 1906, N 177:

[2] ՀԱԱ, ֆ.1456, ց.2, գ.330, թ.1:

սկսեցին պահանջել, որ կուսակցության կովկասյան հատվածը հրաժարվի արևմտահայերի ազատագրության ծրագրից և այն թողնելով արևմտահայերին՝ բացառապես նվիրվի համառուսական հեղափոխական շարժմանը։ Դրան հակառակ աջ անջատականները՝ գլխավորապես արևմտահայեր, դժգոհելով կուսակցության որդեգրած սոցիալիստական աշխարհայացքից, ռուսական հեղափոխական շարժմանը նրա մասնակցությունից, պահանջում էին, որ կուսակցությունն իր շարքերից վտարի բոլոր այսպես կոչված ընկերվարականներին և նվիրվի միմիայն արևմտահայերի ազատագրության գործին[1]։ «Դժգոհ դաշնակցականները» հոդվածում խոսելով դաշնակցության սոցիալիզմի մասին, Արփիարյանը պաշտպանում էր արևմտահայ դաշնակցականներին։ Նա գտնում էր, որ ՀՅԴ-ն «ընդունելով ընկերվարական ուղղութեան աշխարհայացքը և այդ ուղղութիւնը ստիպողական դարձնելով նաև Տաճկահայաստանի համար»՝ բռնում է անիրատես ու վնասակար ուղղություն։ Հրապարակախոսի այս դիրքորոշումը պայմանավորված էր այն մտավախությամբ, որ ընդունելով սոցիալիզմը, դաշնակցությունը կարող էր Արևմտյան Հայաստանում առաջ մղել դասակարգային պայքարի գաղափարը և իրար դեմ հանել արևմտահայության տարբեր խավերին։ «Եվ երբ այդ ուժերէն մեկը միւսին հակառակի, - գրում էր Արփիարյանը, - իր այս թշնամութեամբը իսկ զորութիւն մը կը աւելացնէ թիւրքին ձեռքը և տկարացում մը առաջ կը բերէ հայ ազգին մէջ»[2]։

Կարծում ենք սակայն, որ Արփիարյանի այս մտավախությունը անհիմն էր և այս հարցում ավելի հակված ենք

---

[1] Վարանդյան Մ., Հայ հեղափոխական դաշնակցության պատմություն, Եր., 1992, էջ 402։

[2] «Լուսաբեր», 1907, N 438։

Մ.Վարանդյանի այն տեսակետին, ըստ որի, եթե դաշնակցությունը Կովկասում հանդես էր գալիս «ընկերվարութեան նշանին տակ», և առաջ էր քաշում արմատական հեղափոխական ծրագրեր, ապա «Թուրքաց Հայաստանի մեջ նա կմնար պարզ ազգային, հեղափոխական, դեմոկրատիկ կուսակցություն մը, վասնզի այնտեղ, թուրք-քրդական տիրապետության աշխարհում, չկային ոչ գործարաններ ու գործադուլներ, ոչ ալ որևէ ընկերվարական, նույնիսկ ռամկավար հոսանք»[1]: Խոսելով սոցիալիզմի մասին՝ Վարանդյանը գտնում էր, որ դաշնակցության մեջ այն «առհասարակ մնացեր է տեսական մարզանքներու աշխարհում, ծրագրի ու գրականության մեջ և շատ քիչ անգամ իջեր է հայ կյանքի ալեծուփ հրապարակը, այն պարզ պատճառով, որ այդ կյանքը խիստ սակավ է առիթ ընծայեր ընկերվարական վարդապետության գործնական կիրառումներուն համար»[2]: Իրականության մեջ հայ հեղափոխական դաշնակցությունը մնաց գրեթե բացառապես արևմտահայերի ճակատագրով մտահոգված ու նրա ազատագրական պայքարի կազմակերպման գործին նվիրված կուսակցություն:

Հեռու մնալով կուսակցություններից՝ Արփիարյանը բնականաբար չէր կարող լիովին տեղյակ լինել ազգային կուսակցությունների, մասնավորապես դաշնակցական կուսակցության ներքին տարաձայնություններին: Դա հաստատում էր և ինքը, գրելով, որ «դաշնակցական կուսակցութեան ներքին պառակտումներուն վրա կարծիք մը չեմ կրնար հայտնել, և ոչ ալ խորհուրդ մը տալու ձեռնհասութիւնը ունիմ արդի հանգամանքներուն մէջ: Այդ մարմինը մոտերս ընդհանուր ժողով պի-

---

[1] Վարանդյան Մ., նշվ. աշխ., էջ 398:

[2] Նույն տեղում:

տի գումարէ և ինքը հայ ազգին ինչ կերպարանքի ներքև ներկայանա, մամուլն ալ ըստ այնմ կրնայ զիտակցօրեն խոսիլ»[1]:

Ինչ վերաբերում էր հնչակյան կուսակցությանը, ապա Արփիարյանի կարծիքով այն «ոնէ ժողովէ սպասելիք մը չունի իր ապազային համար. որոշ վիճակի մեջ կը գտնուի: Այդ վիճակին ինչ ըլլալը հայտնի է»[2]:

Դարասկզբին հնչակյան կուսակցությունը գտնվում էր խոր ճգնաժամի մեջ: Ներկուսակցական սուր պայքարի հետևանքով նրա ուժերը բաժան-բաժան էին եղել: Իսկ պառակտումը գնալով խորանում էր: 1905թ. սեպտեմբերին Փարիզում տեղի ունեցած հնչակյան կուսակցության հինգերորդ համագումարից հետո, կուսակցությունից հեռացան Ա.Նազարբեկը, Ռ.Խանազատը և ուրիշ ղեկավարներ: 1906թ. հուլիսին ԱՄՆ-ի Ֆիչբուրգ քաղաքում տեղի ունեցած վերակազմյալ հնչակյան կուսակցության պատգամավորական ժողովում պառակտվեցին նաև վերակազմյալները[3]: Համեմատելով ազգային երկու կուսակցություններին, Արփիարյանն ավելի համախմբված էր համարում դաշնակցությանը և դրա հիման վրա գրում, որ «ինչպէ՞ս կարելի է պահանջել, որ միացեալ զանգուածը միաբանի կամ համերաշխի բաժան-բաժան հնչակեան մարմնի մը հետ»: Նման պայմաններում, ըստ հրապարակախոսի եզրակացության «կուսակցութիւններին «ընդհանուր համաձայնութեան մը անհրաժեշտ պայմանը հնչակեան բաժանումներուն ի մի ձուլման մեջ փնտռելու է»[4]:

---

[1] «Լուսաբեր», 1907, N 331:

[2] Նույն տեղում:

[3] Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրեզնո, 1930, էջ 120:

[4] «Լուսաբեր», 1907, N 331:

Ուշի-ուշով հետևելով միջազգային քաղաքական անցուդարձին, հրապարակախոսը հանգեց այն եզրակացության, որ օրեցօր սրվող հակասությունները Թուրքիայի ու Ռուսաստանի միջև, վաղ թե ուշ հանգեցնելու են պատերազմի: «Ի՞նչ պիտի ըլլայ Հայաստանի վիճակն այն ատեն, երբ մարտափողը հնչէ», - տագնապով հարցնում էր Արփիարյանը և ինքն էլ պատասխանում, որ այդ ժամանակ թուրքերն առիթը անպայման կօգտագործեն «հայութիւնը իր երկրին մէջ բնաջնջելու քաղաքականութիւնը շուտով գլուխ հանել»: Դատապարտելով ազգային կուսակցությունների դանդաղկոտ ընթացքը նա հորդորում էր հնչակյաններին, դաշնակցականներին, արմենականներին արագ համախմբվել ու մշակել արևմտահայերի ինքնապաշտպանության ծրագիր: «Համագումար նիստ մը ընելով խորհիլ և խորհրդակցիլ Հայաստանի համար ռուս և թիւրք պատերազմի մը հավանական հետևանքներուն վրայ», - սա էր Արփիար Արփիարյանի գրած վերջին հոդվածի իմաստը: Նրա լույս տեսնելուց մի քանի օր առաջ հրապարակախոսն արդեն չկար[1]:

* * *

Արևմտահայության ազատագրության գործում Արփիար Արփիարյանը չէր սահմանափակվում միայն ազգային շրջանակներով: Գիտակցելով, որ ազատագրության համար մղվող պայքարում հայ ժողովուրդը միմիայն սեփական ուժերով դժվար թե կարողանա հաջողության հասնել, նա մեծ տեղ էր հատկացնում Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդների հետ հայ ժողովրդի համագործակցությանը: 19-րդ դարի 70-80-ական թվականներին Արփիարյանից բացի որպես հայ, քուրդ,

---

[1] Նույն տեղում, 1908, N 485:

հույն և ասորի ժողովուրդների միասնական պայքարի ջատագովներ հանդես եկան Րաֆֆին, Մ.Խրիմյանը, Գ.Սրվանձտյանցը, Ա.Թոխմախյանը, Ս.Տնկյանցը և շատ ուրիշներ:

Արփիարյանը հատկապես կարևոր էր համարում հույն և քուրդ ժողովուրդների հետ համագործակցությունը, որոնք հայերից հետո մեծ դեր էին խաղում Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կյանքում: Նա գտնում էր, որ հայ-հունական կապերի զարգացումը կարող էր հնարավորություն ստեղծել այդ ժողովուրդների ձեռքում կենտրոնացնելու Թուրքիայի առևտրաարդյունաբերական հզորությունը, այսինքն՝ տնտեսական համագործակցությունը ըստ Արփիարյանի՝ կհանգեցներ քաղաքական համագործակցության և միասնական հզոր ուժի ստեղծմանը, որին և ձգտում էր հրապարակախոսը: «Ուրեմն աշխատենք, որ ամեն կերպով ամրապնդի յունաց և հայոց մէջ բարեկամական կապերը», - գրում էր Արփիարյանը[1]: Նա վրդովմունք էր արտահայտում, երբ թուրքերի կողմից քրիստոնյաների կրթական գործերին միջամտելու պատճառով հունական պատրիարքը բողոքում էր Բ.Դռանը, իսկ հայ պատրիարքը՝ լռում: Արփիարյանը գտնում էր, որ հայերի ու հույների միջև պետք է լինի գաղափարի ու գործի միասնություն: Ըստ նրա՝ քրիստոնյա այդ երկու ժողովուրդների շահերը պահանջում են, որ միաբան ընթանան «այն ամեն խնդիրներու մէջ, որք կը վերաբերին քրիստոնեաներուն վայելած իրավունքներուն»[2]:

Արփիարյանը նշում էր, որ թուրքական կառավարությունը վախենալով այդ մերձեցման հեռանկարից, ամեն կերպ աշխատում էր սեպ խրել հայերի ու հույների միջև, որովհետև «երբ երկու եկեղեցիները միաբանած բողոքեն, յայտնի է, որ

---

[1] «Մշակ», 1881, N 234:

[2] Նույն տեղում, 1883, N 63:

իրենց բողոքը մեծ արձագանք կը գտնէ Եւրոպայի մէջ և իրենց դիմադրութիւնը արդիւնաւոր կըլլայ, սակայն երբ մէկը միւսէն բաժնուի, բնական է, որ մենակ մնացողն ալ տկար կը մնայ և բան մը չը կրնար ընել»[1]:

Միասնական ճակատի ստեղծման ճանապարհին հայ գործիչներն, անշուշտ, կարևորում էին քրդերի հետ միություն կազմելու, թուրքական իշխանություններին սատարող նրանց ցեղապետներին իրենց կողմը գրավելու և ընդհանուր ուժերով թուրքական իշխանության դեմ մարտնչելու անհրաժեշտությունը: Նահապետական կենցաղով ապրող, հետամնաց, բայց ռազմատենչ ու մեծաքանակ այդ ժողովրդի հետ համագործակցությունը կարող էր վճռորոշ դեր խաղալ ռազմական տեսանկյունից:

Արփիար Արփիարյանը ևս մեծ դեր էր հատկացնում հայ-քրդական համագործակցությանը: Նա այդ միության կողմնակիցն էր ու ջատագովը: Հայ-քրդական համագործակցության հարցը Արփիար Արփիարյանն արծարծում էր «Շիրակում»[2]: Խոսելով քրդերի կողմից հայերի հալածանքների մասին Արփիարյանը գրում էր. «Քրդերը երկրին մէջ հայ ցեղը տկարացնելու հետամտելով քաղաքական մեծ սխալ մը գործած են, վասնզի թիւրքը քիւրտին ձեռքով հայը փճացնելէ յետոյ իր բոլոր զօրութիւնը քիւրտին դէմ պիտի դարձնէ բնականաբար»[3]: Այսօր Թուրքիայում քրդերի ազգային իրավունքների ու շահերի ոտնահարումը, նրանց դեմ հալածանքների ուժեղացումը Արփիարյանի վաղեմի կանխատեսության վառ ապացույցներն են: Թուրքական կառավարությունը զգալով հայ-քրդական համա-

---

[1] Նույն տեղում:

[2] «Շիրակ», 1905, N 5, էջ 368:

[3] «Լուսաբեր», 1907, N 454:

գործակցության վտանգը՝ եռանդով ձեռնամուխ եղավ խանգարելու այդ գործին և թշնամացնելու երկու դրացի ժողովուրդներին: Հայ-քրդական հարաբերությունները բարելավելու համար, հայ ազգային կուսակցությունները մեծ աշխատանք կատարեցին, սակայն ցավոք, էական արդյունքի չհասան, մի հանգամանք, որը խիստ բացասաբար անդրադարձավ արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի ողջ ընթացքի վրա: Ինչ վերաբերում էր հայ և թուրք ժողովուրդների համերաշխությանը, ապա Արփիարյանի համոզմամբ քաղաքական հարցերում թուրքերի հետ որևէ համաձայնությունը թվում էր անհնարին: Նա «միամիտներ» ու «երևակայողներ» էր համարում նրանց, ովքեր գտնում էին, որ հայերը պետք է միաբանվեն մահմեդականների հետ և ապստամբու-թյուն բարձրացնեն: Խոսելով Էրզրումում հարկային ճնշումների հետևանքով կառավարության դեմ տեղի մահմեդականների ելույթների մասին, հրապարակախոսը ցույց էր տալիս այն պատճառները, որոնք անհնարին են դարձնում այդ միասնությունը: Նախ, նա նշում է, որ մահմեդականների շարժումը միշտ եղել է «ամբոխային, դիպուածական, րոպեական հուզում մը և չի կրել կանոնաւոր, կազմակերպուած բնոյթ և որպեսզի տևէ, պետք է հեռաւոր նպատակ մը առաջադրած ըլլայ ուր ժամանէ»[1]: Բացի այդ Արփիարյանը նշում է, որ իրենք՝ մահմեդականները, երբեք էլ չեն ցանկացել ունենալ հայերի աջակցությունը ընդդեմ իշխանությանը, ընդդեմ սուլթանին, որը լավ թե վատ, այնուամենայնիվ մնում էր որպես համայն «իսլամներու խալիֆան»: Եվ հետո, ըստ հրապարակախոսի, «զինակցութիւն մը միշտ դաշնակիցներու հավասարութիւնը կը ենթադրէ, իսկ մամեդականը սիրայոժար հանձն կը առնէ տուրքերու անտանելի ծանրութիւնը, քան թէ

---

[1] Լուսաբեր, 1906, N 295:

թեթևացում մը, որու գինը պիտի ըլլայ Քրիստոնեին հետ հավասարութիւն»[1]: Ահա այս նկատառումներից ելնելով Արփիարյանը գրում էր, «թէ ինչքան դժուար է, ըսե՞նք անհնարին մահմեդականներուն հետ յեղափոխական նպատակով ռևէ միաբանութիւն հաստատել, ինչպես հիմակ երևակայողներ կը գտնուին»[2]:

* * *

19-րդ դարի վերջին, Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազգային ազատագրական շարժման վերելքի շրջանում, սուլթանական բռնապետության դեմ ծավալվեց նաև թուրքական ընդդիմադիր ուժերի՝ երիտթուրքերի շարժումը: Երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը (Իթթիհադ վե թերաքքի) Թուրքիայի հետագա զարգացումը տեսնում էր սահմանադրական կարգերի հաստատման մեջ և ձգտում էր համագործակցել ընդդիմադիր մյուս կուսակցությունների ու կազմակերպությունների հետ:

Ա. Արփիարյանը, որն ուշադիր հետևում էր տեղի ունեցող իրադարձություններին «Նոր կեանքում» հանդես եկավ «Երիտասարդ թիւրքերը» խորագրաշարով, ուր պարզաբանեց իր դիրքորոշումն այդ շարժման նկատմամբ: Նա գտնում էր, որ եթե Թուրքիան ղեկավարեն երիտասարդ թիւրքերը, ապա «միշտ զորավիգ են լինելու իսլամին և ամուր են պահելու նրա դիրքերը»:[3] Խոսելով 1896թ. Փարիզում երիտթուրքերի առաջնորդների հետ հնչակյանների հանդիպումների մասին, որոնց

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

[3] «Նոր կեանք», 1900, N 21, էջ 323-326:

մասնակցել էր նաև ինքը, Արփիարյանը գրում էր, որ ընդհանուր համաձայնություն չկայացավ այն պատճառով, որովհետև ցանկանալով հայերի հետ համագործակցել, երիտթուրքերը հայտարարում էին, որ հայերը պետք է հրաժարվեն բարենորոգումների պահանջից[1]։

Անդրադառնալով երիտթուրքերի հետ իրենց անհամաձայնության պատճառներին, Արփիարյանը գրում էր. «Երիտասարդ թիւրքերը մենէ 61-րդ յօդուածին ուրացումը կը պահանջեն և Միդհատեան սահմանադրութեան անպայման ընդունելութիւնը»[2]։ Դառնալով սահմանադրությանը, նա նշում էր այն կարևոր հանգամանքը, որ եթե նույնիսկ այն գործադրվի, ապա «իր օգուտները կրնայ ունենալ պայմանաւ, որ օսմանեան կայսրութեան նահանգները իրենց պատմական կեանքին պահանջումներուն համեմատ տեղական ինքնավարութեամբ կազմակերպուին»[3]։

Խորապես ճանաչելով թուրքական իրականությունը Արփիարյանը հասկանում էր, որ «վարչական միօրինակ դրութիւն մը անգործադրելի է Թուրքիո մէջ, վասնզի նահանգները իրարու բոլորովին օտարօտի են իրենց ազգագրական և պատմական կեանքերովը»[4]։ Արփիարյանի վկայությամբ վերոհիշյալ հանդիպումների ժամանակ երիտթուրքական առաջնորդները նույնիսկ չէին ցանկանում քննարկել այս հարցերը և հայերից պահանջում էին «կոյր հնազանդութիւն, որով կհաստատեն, թե մեզի հետ վիճաբանելու համար հավասարութեան սկզբունքը չեն ընդունիր»[5]։ Արփիարյանը կոչ էր անում հայ ազգային կու-

---

[1] Նույն տեղում։

[2] Նույն տեղում, 1901, N 9, էջ 116։

[3] Նույն տեղում, էջ 117։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում։

սակցություններին լինել իրատես, չոգևորվել և վերացական գաղափարների հետևից չընկնել[1]: «Մարտ» թերթում նա գրում էր, որ «Երիտասարդ թիւրքերը քրիստոնեաներուն ավելի թշնամի են, քան թէ հին թիւրքերը»[2]:

1907թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցավ Թուրքիայի ընդդիմադիր ուժերի համագումարը, որին մասնակցեցին նաև դաշնակցականները: Այդ կապակցությամբ Կահիրեի «Լուսաբեր» թերթում Արփիարյանը հանդես եկավ մի քանի հոդվածներով և պարզաբանեց իր վերաբերմունքը երիտթուրքեր-Դաշնակցություն համագործակցության մասին:

Ընդհանրապես, հակաապետական շարժման ծավալման, ապագա հզոր Թուրքիայի ստեղծման վերաբերյալ խոսելիս, Արփիարյանը նշում էր, որ ինքը դրանից հայերի համար ոչ լավ բան չի ակնկալում: Հետադարձ հայացք նետելով պատմությանը՝ նա ցույց էր տալիս, որ իր համար նպաստավոր քաղաքական պայմաններում Թուրքիան միշտ աշխատել է ճնշել փոքր ժողովուրդներին, ամենաբիրտ մեթոդներով խեղդել նրանց ազատասիրական ձգտումները[3]:

Արփիարյանը ոչ միայն չողջունեց դաշնակցականների մասնակցությունը Փարիզի համագումարին, այլև գրեց, որ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդները թող ոչ մի դրական տեղաշարժ չսպասեն այդ համաժողովից[4]:

Նա մոլորություն էր համարում այն մտայնությունը, ըստ որի Թուրքիայում ընդհանուր բարենորոգումների իրականացումը դրական տեղաշարժեր կմտցնի արևմտահայերի դրության մեջ: Արփիարյանը գտնում էր, որ ոչ սուլթանները և

---

[1] Նույն տեղում, 1900, N 14, էջ 209-210:

[2] «Մարտ», 1897, N 7:

[3] «Լուսաբեր», 1907, N 325:

[4] Նույն տեղում, 1908, N 476:

ոչ էլ սահմանադրությունը երբեք հնարավորություն չեն ստեղծի բարելավելու համար քրիստոնյա բնակչության վիճակը: Նա համոզված էր, որ անկախ իրենց քաղաքական հայացքներից, թուրքը երբեք չի հանդուրժի քրիստոնյաների ու մուսուլմանների իրավահավասարությունը[1]:

Քաջատեղյակ երիտթուրքական գաղափարներին ու ճանաչելով նրանց ղեկավարներին՝ Արփիարյանը դեռ 1890-ական թվականներին հասկացել էր, որ այդ շարժումը հայերի համար վտանգավոր հետևանքներ է ունենալու: 1907թ. Եգիպտոսում նա հանդիպում է երիտթուրքական պարագլուխներից մեկի՝ Ահմեդ Ռզա բեյի հետ: Այդ և նախորդ հանդիպումներից Արփիարյանը հանգում է այն ճիշտ եզրակացությանը, որ «երիտասարդ թիւրքերուն ծրագրին համեմատ Կ. Պոլիս կազմված վարչութիւն մը մեր հայկական շահերուն մահաբեր պիտի ըլլայ: Աւելի աղետաւոր, քան սուլթան Համիդին վարչութիւնը»[2]: Նա գտնում էր, որ ընդհանրապես «բարեկարգիչ թիւրքական վարչութիւն աշխարհիս երեսին չի կարող գոյութիւն ունենալ»,[3] հետևաբար հայերը չպետք է կառավարության կողմից որևէ բարենորոգում հուսան և պետք է մտածեն միայն սեփական ապահովության մասին:

Արփիարյանի կանխատեսումներն, ավաղ, շատ շուտով իրականացան: 1908թ., հեղաշրջումից դեռ մեկ տարի էլ չանցած, թուրքերը կազմակերպեցին կիլիկիահայության կոտորածը: «Համաթուրքական ընդհանուր հեղափոխությունից» մեծ ակնկալիքներ ունեցող գործիչների հույսերը չարդարացան:

---

[1] Նույն տեղում, N 473:

[2] Նույն տեղում, N 478:

[3] Նույն տեղում:

## ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1880-ական թվականների վերջին հնչակյան կուսակցության ղեկավարությունը կուսակցության գործունեությունը Թուրքիայում ծավալելու նպատակով Տրապիզոնում ստեղծում է հնչակյան կենտրոն և Կ.Պոլիս է ուղարկում իր նշանավոր գործիչներից մեկին՝ Ռուբեն Խանազատին[1]: Խանազատն անմիջապես կապ է հաստատում Արփիարյանի հետ, որը բացի արևմտահայերի շրջանում ունեցած մեծ ժողովրդականությունից ու հեղինակությունից խանդավառվել էր նաև հնչակյաններով:

Խանազատը հաղորդում է նրան կուսակցության ծրագրերն ու խորհրդակցում Կ. Պոլսում ձեռնարկվող գործունեության մասին: Սակայն կուսակցության ծրագրային դրույթների քննարկման ժամանակ երևան են գալիս տարաձայնություններ, որոնք հատկապես լուրջ բնույթ են ստանում սոցիալիզմի հարցի կապակցությամբ:

Արևմտահայ իրականության պայմաններում սոցիալիզմի քարոզչությունը Արփիարյանը համարում էր խիստ վաղաժամ ու անիրագործելի: Իր հիշողություններում Խանազատը գրում էր. «Հայկակը սօցիալիզմի մասին հիմնաւոր հասկացութիւն համարեա թէ չունէր, բայց նա բնազդով միայն դատելով այն կարծիքը յայտնեց, թէ սօցիալիզմը շատ հեռաւոր

---

[1] Հիսնամեակ սոցիալ-դեմոկրատական հնչակեան կուսակցութեան, Փրովիդենս, 1938, էջ 46:

ապազայի խնդիր կարող է լինել»: Արփիարյանը հայտարարում էր, որ Հայաստանի մեջ «սոցիալիզմի խնդիրներով պարապիլը շատ կանուխ է. նախ պետք է Հայաստանը ազատել օսմանեան լուծէն և ապա երբ գէթ Բուլղարիայի վիճակին ազատ Հայաստան կունենանք, այն ժամանակ կրնանք և սոցիալիզմի մասին խորհիլ»[1]:

Խանազատը փորձում է Արփիարյանին համոզել այն բանում, որ «սոցիալիզմը բոլորովին կախումն չունի տեղի ու ժամանակի պահանջից, որ այն կարելի է մտցնել թէկուզ Աֆրիկայի ամենայետընկած անկյուններում, դրա համար հարկաւոր է միայն, որ այդ գաղափարները տարածողներ լինեն»[2]: Սոցիալիզմի հարցի շուրջը սակայն, համաձայնություն չի կայանում, բայց Խանազատը նշում է, որ Արփիարյանն այդ խոսակցությանը կարևորություն չտվեց այն պատճառով, որ սոցիալիզմը հնչակյանների ծրագրում հայտնվում էր իբրև հեռավոր նպատակ, իսկ մոտակա նպատակն էր Հայաստանի ազատագրությունը[3]: Շատ չանցած Հակոբ Մեղավորյանի բնակարանում տեղի է ունենում ժողով, որին մասնակցում էին Խանազատը, Կաֆյանը, Արփիարյանը, Բաշալյանը և էլի մի քանի հոգի: Այստեղ ծրագրային հարցերի շուրջ վիճաբանությունից հետո, դրվում է կազմակերպական հարց, թե ի՞նչ անձնավորություններից է կազմվելու Կ. Պոլսի հնչակյան կազմակերպության վարչական խորհուրդը: Արփիարյանը, Բաշալյանը և ընկերները չեն կամենում բավականանալ այն դերով, որ առաջարկել էր Մեղավորյանը, այն է՝ մնալ սոսկ նյութապես օժանդակող խումբ և չխառնվել կուսակցության ներքին գործերին:

---

[1] «Մշակ», 1908, N 35:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

Մեղավորյանի առաջարկից վիրավորված՝ Արփիարյանը, Բաշայյանը գտնում էին, որ լինելով թուրքահայերի կյանքի տոն տվողները, պետք է բնականորեն լինեին նաև ազատագրական շարժման ղեկավարները: «Նրանք անկարող էին հասկանալ անգամ, որ ազատագրական շարժումներ ղեկավարելու համար բոլորովին բավական չէ դեռ գրականագետ լինելը, այլ ամենից առաջ հարկավոր է ունենալ յեղափոխական ջիղ», - գրում էր Խանազատը[1]: 1890թ. հուլիսի 15-ին Ռ. Խանազատը, Հ. Ճանկյուլյանը, Հ.Պոյաճյանն ու Մ.Տամատյանը կազմակերպեցին Գում-Գափուի բողոքի ցույցը թուրքական կառավարության դեմ, որին մասնակցեց մոտ 5000 մարդ[2]: Ցույցից հետո Արփիարյանն ու Բաշայյանը ստեղծում են գաղտնի խմբակ և սկսում են հնչակյաններին օգնել «Մասիսի» վաճառքից ստացված հասույթի մի մասը տրամադրելով կուսակցությանը[3]: Խմբակի անդամները հավաքվում էին «Արևելքի» խմբագրատան սենյակներից մեկում: Ցույցից քիչ անց, Արփիարյանը, ցանկանալով կապվել հնչակյան ղեկավարների հետ, մեկնում է Տրապիզոն:

Հնչակյան կենտրոնը որպես կուսակցության ներկայացուցիչ Կ. Պոլիս էր ուղարկել Հակոբ Վարդպատրիկյանին (Վարդո), բայց Արփիարյանը նրան կարևորություն չէր տվել: «Կովկասէն հանձնարարուած ու Տրապիզոնի «կեդրոնէն» մեզի խրկուած գերագոյն Առաքյալը Թիւրքիոյ հայոց վիճակին ընդհանրապես անգիտակ կերևար», - գրում էր Արփիարյանը Վարդպատիկյանի մասին[4]: Կրակոտ, գործունյա Վարդոն, որը նոր էր մուտք գործել արևմտահայության մեջ և դեռ բավակա-

[1] «Մշակ», 1908, N 36:
[2] Հիսնամեակ սոցիալ-դեմոկրատական հնչակեան կուսակցութիւն, էջ 48:
[3] «Շիրակ», 1907, N 9, էջ 524:
[4] Նոյն տեղում, էջ 518:

նաչափ լավ չէր ճանաչում թուրքահայ իրականությունը, կողմնակից էր ցույցերի ու տեռորի տակտիկային: 1890թ. հոկտեմբերին նա ձերբակալվում է և բանտարկվում: Բայց շատ չանցած ռուսական դեսպանատան միջնորդությամբ Վարդըն, որպես ռուսահպատակ ազատվում է և հեռանում Թուրքիայից:

Գնալով Տրապիզոն՝ Արփիարյանը փորձում է ազդել տեղի հնչակյանների վրա, ծրագրից հանելու համար սոցիալիզմի մասին դրույթը, բայց Տրապիզոնի հնչակյանները համառորեն պաշտպանում են ծրագրային այդ կետը: Այնտեղից Արփիարյանը մեկնում է Թիֆլիս և հեռագրում Երևան՝ Խանազատին հրավիրելով հանդիպման: Սակայն վերջինիս հիվանդության պատճառով Արփիարյանը ստիպված է լինում ինքը մեկնել Երևան: Ո՞րն էր նրա այցի նպատակը: Կրկին պետք է դիմենք Խանազատին, ըստ որի Արփիարյանը մեծապես ազդված Գում-Գափուի ցույցից առաջարկում է նոր, ավելի հզոր ցույց կազմակերպել և ինքն էլ ներկայացնում է նրա իրագործման մանրամասնությունները: Դա ըստ էության ոչ թե սովորական ցույց էր, այլ Կ.Պոլսի գրավման ծրագիր: Չնայած Արփիարյանի բոլոր հավաստիացումներին, թե Կ.Պոլիսը ինքը լավ գիտե և ծրագիրն իրագործելի է, այնուամենայնիվ, Խանազատը, խորհրդակցելով Գր.Արծրունու հետ, այն համարում են խիստ հանդուգն, վաղաժամ ու անիրագործելի[1]: Արծրունին սակայն, Խանազատի վկայությամբ Արփիարյանին տալիս է 1000 ռուբլի՝ նոր ցույցի կազմակերպման համար[2]: Կ.Պոլիս վերադառնալով Արփիարյանը ձերբակալվում է և բանտարկվում:

1890թ. քաղաքական պայքարի թատերաբեմ մտավ Հայ հեղափոխականների դաշնակցություն կուսակցությունը: Շու-

---

[1] «Մշակ», 1908, N 50:

[2] Նույն տեղում, N 57:

տում հնչակյանների ու դաշնակցականների միջև լուրջ տարաձայնություններ առաջացան արևմտահայության ազատագրության ուղիների ու պայքարի միջոցների ընտրության հարցում, որոնք գնալով ավելի ու ավելի խորացան: Հնչակյանների կողմից քննադատվեց Հայկական հարցի լուծման համար դաշնակցականների կողմից կատարած անմենափոքր գործերն անգամ «Դրօշակի» մեջ շռնդալից վերտառություններով հայտարարելը, «բան մը, որ ավելի շատ գաղտնիք պետք է պահուեր»[1]: Դաշնակցականների նման գործելակերպի քննադատությամբ հանդես եկավ նաև Արփիարյանը, գտնելով, որ պայքարի այդ ձևերը անօգուտ լինելուց զատ նորանոր փորձանքներ կբերեն ազգին: Արձագանքելով «Դրօշակում» սուլթանի հասցեին ուղղված սպառնալիքներին՝ Արփիարյանը գտնում էր, որ անկախ այն բանից սուլթանը կսպանվի թե ոչ, հետևանքը կլինի հայության չտեսնված կոտորածը «մինչ ոչ Եւրոպան հոգ կընէ և ոչ ալ հայերը ինքնապաշտպանութեան ամենատկար միջոց մը ունին»[2]:

Արփիարյանը գտնում էր, որ արևմտահայության ազատագրությունը թուրքական լծից դյուրին գործիչ չէ, անհրաժեշտ է: երկարատև նախապատրաստվածություն, ուժերի համախմբում: Նա մերժում էր թեթևամիտ վերաբերմունքն այդ գործին և այդ գիտակցությամբ էլ գրում էր. «Մեզի ճղակտոր մահուան կառաջնորդէ այն թեթեւամտութիւնը, որով բացագանչութիւնը՝ հայրենասիրութիւն, գոռում-գոչումը՝ ազատասիրութիւն, ունայնամիտ յոխորտանքը՝ զօրութիւն եւ իրարանցումը՝ յեղափոխութիւն կը համարինք ու այս պատրանքներէն խելամոլոր կը հաւատանք, թէ քանի մը հարուած կը բաւեն,

[1] Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութիւն, Պէյրութ, 1962, հտ. 1, էջ 295:
[2] «Մարտ», 1897, N 6:

եթէ շատ ալ չեն, փրկել մեզի բազմադարեան ստրկական վիճակէն»: Արփիարյանը համոզված էր. «Ճշմարիտ հայրենասերները պարծենկոտ չեն ըլլար: Հայրենիքի ճշմարիտ հայրենասերները միշտ համեստ են: Նոյնը պետք է խոսիլ և կուսակցութեանը համար ալ»[1]:

Ստեղծվելով Կովկասում՝ դաշնակցությունն արագորեն իր գործունեությունը տարածեց Արևմտյան Հայաստանում: Շուտով Կ.Պոլսում ստեղծվեց ՀՅԴ կոմիտե: Դաշնակցական գաղտնի կազմակերպություններ ստեղծվեցին նաև Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում: Նորաստեղծ կուսակցությունը ձգտում էր իր դիրքերն ամրապնդել և հեղինակությունը բարձրացնել հատկապես Կ.Պոլսում ուր մեծ էր հնչակյանների ազդեցությունը: Այս առումով ՀՅԴ Պոլսի կոմիտեին խոչընդոտում էր նաև Արփիարյանի գործունեությունը: Այդ պատճառով Պոլսի կոմիտեն ամեն կերպ ձգտում էր հաղթահարել Արփիարյանի հակաազդեցությունը և դաշնակցության ու Արփիարյանի միջև եղած գաղափարական տարաձայնությունները վերածվում էին խուլ թշնամության: Այս կապակցությամբ Ե. Օտյանը գրում էր. «Դաշնակցությունը մեկեն ավելի պատճառներ ուներ Արփիար Արփիարյանի հետ թշնամանալու համար – նախ Արփիարյանը այդ թվականին բացառիկ դիրք մը կվայելեր հեղափոխական շարժման գլուխը: Նմանը չտեսնված ժողովրդական թերթի մը՝ «Հայրենիքի» խմբագրապետն էր, ինչպես Պոլսո կենդրոնին անդամ էր, «Մշակի», «Հնչակի» թղթակիցն էր, երկու թերթեր, որոնք մեծ ազդեցություն ունեին հեղափոխական շրջանակներու մեջ: «Հայրենիքի» հեղինակությունը շատ մեծ էր մանավանդ Պոլսո մեջ: Տարիե մը ի վեր ան էր ազգային քաղաքականությունը վարողը: «Հայրենիքի» ու

---

[1] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 23, թ.16, 17:

անոր խմբագրապետ Արփիարյանի այդ առավելակշռությունն ու հեղինակությունը բնականաբար արգելք մըն էր դաշնակցության, որ չէր կրնար իր դիրքը զորացնել այսպիսի հակառակորդներու հանդեպ»[1]:

1895թ. սեպտեմբերի 18-ին տեղի ունեցավ հնչակյանների կազմակերպած Բաբը Ալիի հայտնի ցույցը: Այն նպատակ ուներ ճնշում գործադրել կառավարության վրա և արագացնել բարենորոգումների ծրագրի իրականացումը: Բայց ցույցը որևէ արդյունք չտվեց և սուլթանը խոստումներից այն կողմ չանցավ: Եվ երբ դեսպանների միջամտությամբ ամեն ինչ ամբողջովին խաղաղվեց, այն ժամանակ Կ. Պոլսի դաշնակցական կոմիտեն սպառնագրերով պահանջեց, որպեսզի մայրաքաղաքի բոլոր հայ թերթերը, ի նշան բողոքի, դադարեցնեն իրենց հրատարակությունը՝ դեսպանների ուշադրությունը գրավելու համար: Հ. Շահնազարն ու Ա. Արփիարյանը դրան դեմ դուրս եկան գտնելով, որ ոչինչ չտալուց բացի այն կհարուցի նոր բռնություններ ու հալածանքներ: Այս կապակցությամբ Ա. Խառատյանը գրում է. «Անխոհեմ այդ ձեռնարկումը որևէ հեռանկար չունենալուց բացի հղի էր թերթերի խմբագիրներին բանտի ու աքսորի ենթարկելու իրական վտանգով»[2]: Օտյանը գրում էր. «Այդպիսի ցույց մը թե անիմաստ ու ապարդյուն պիտի ըլլար և թե միանգամայն այնպիսի տագնապալից ժամանակ մը պիտի վտանգեր թերթերու արտոնատերերու խմբագիրները, որոնք կառավարության կողմե իբրև հայտնի հեղափոխականներ ու խռովարարներ պիտի նկատվեին»: Այս մերժումից հետո Կ. Պոլսի դաշնակցական կոմիտեի ներկայացու-

---

[1] Օտյան Ե., Երկերի ժողովածու, հտ. 4, Եր., 1962, էջ 50:

[2] Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Եր., 1989, էջ 238:

ցիչ Հովի. Յուսուֆյանը Շահնազարի ու Արփիարյանի հետ հանդիպման ժամանակ սպառնաց ասելով. «Ձեզի կզարնենք»[1]: Դաշնակցականները ծավալեցին նաև «Հայրենիքը» բոյկոտելու գործնթաց, բայց այն էական արդյունք չտվեց: Դրանցից հետո տարածվեցին զրպարտություններ, թե Արփիարյանը, Շահնազարն ու Բաշայանը ոստիկանության նախարար Նազմ փաշայի մարդիկ են, թե ամեն շաբաթ Նազըմի տանն են ճաշում և այլն: Ա. Չոպանյանը գրում էր. «Զրույցը հանուղները զայն կուղղեին ոչ միայն Արփիարյանի անձի դեմ, այլ ամբողջ «Հայրենիք» լրագրին դեմ և ամբողջ Հնչակեան կուսակցութեան դեմ: Այդ միջոցին հնչակեան կուսակցութիւնը միակ ազդեցիկ ու հռչակաւորն էր Տաճկաստանի, ինչպես նաև Եվրոպայի մեջ և մանավանդ Պոլսո մեջ: Արփիարեան Պոլսո դաշնակցական վարիչները ամենեն ավելի նեղող մարդն էր, աղարտելով Արփիարյանը կուզեին կործանել նաև «Հայրենիքը» և ամբողջ հնչակեան կուսակցութիւնը»[2]:

Արփիարյանի շուրջը գնալով թշնամությունը խորացավ այն աստիճան, որ 1895թ. դեկտեմբերի 25-ին դաշնակցականները մահափորձ կազմակերպեցին նրա դեմ: Օտյանը գրում էր. «Արփիար հակառակ իր ստացած ծանր վերքերուն կրցած էր սակայն մինչև տուն հասնել ուր և կորցնում է գիտակցությունը: Տոքթոր Զոհրապը, որ մոտերը կբնակեր, իսկույն կանչված էր և նախնական դարմանները տված»[3]: Մահափորձից հետո Արփիարյանի հեղինակությունը խիստ բարձրանում է հնչակյանների շրջանում, նամանավանդ Պոլսում, որտեղ Խանազատի վկայությամբ կուսակցության գործերը համարյա ամ-

---

[1] Օտյան Ե., նշվ. աշխ., էջ 52:

[2] «Անահիտ», 1901, N 2, Ա.Չոպանյան, Դեմքեր, Ա, Արփիարեան:

[3] Օտյան Ե., նշվ. աշխ., էջ 48:

բողջությամբ գտնվում էին Արփիարյանի ձեռքում: Իր դեմ կատարված մահափորձից քիչ առաջ, 1895թ. նոյեմբեր-դեկտեմբերին, Արփիարյանը մտել էր հնչակյան կուսակցության շարքերը[1]: Արփիարյանը ձգտում էր արևմտահայերի ազատագրության գործը վերցնել միմիայն արևմտահայերի ձեռքը: Խանազատը գրում էր. «Ճիշտ այդ իմաստով և ուղղութեամբ նա մի ծրագիր ու կանոնադրութիւն է մշակում ու ներկայացնում Կ.Պոլսի հնչակեան վարչութեանն ու շրջանային մասնաճիւղերին: Այդ ծրագրից դուրս էր գցված և սոցիալիզմը»[2]:

Արփիարյանի դերի ու հեղինակության աճը Կ. Պոլսում առաջացնում է հնչակյան կենտրոնի մտահոգությունը: Նազարբեկ ամուսինները ու նրանց կողմնակիցները ձգտում են նրան հեռացնել կուսակցական գործերից, բայց չեն կարողանում, որովհետև Արփիարյանի դիրքերը բավական ամրացել էին: Խանազատի վկայությամբ հնչակյան կենտրոնը սկսում է Արփիարյանի մասին զրպարտություններ տարածել նրան վարկաբեկելու և վարչական գործերից հեռացնելու համար[3]: Նրանց հրահրանքով և կուսակցական մասնաճյուղերին ուղղված շրջաբերականներով Արփիարյանի հասցեին սկսում են սպառնալիքներ տեղալ: Նրան մեղադրում են դավաճանության, մատնիչության, դրամաշորթության և այլ չեղած հանցանքների մեջ: Այս առումով ուշագրավ է կուսակցության Ռուսչուկի մասնաճյուղին ուղղված շրջաբերականը[4]: Նման գործելակերպով հնչակյան կենտրոնը կամա թե ակամա ուժ էր տալիս և թեժացնում ՀՅԴ Պոլսի կոմիտեի կողմից Արփիարյա-

---

[1] «Հնչակ», 1896, N 18:

[2] «Մշակ», 1908, N 67:

[3] Նույն տեղում:

[4] ՀԱԱ, ֆ.1456, ց.1, գ.25, թ. 2:

նի դեմ սկսված նրան զրպարտելու և չեզոքացնելու անսյատ-վաբեր գործելակերպին:

Արփիարյանի դեմ կատարված մահափորձից հետո թուրքական ոստիկանության համար պարզ դարձավ Արփիարյանի կուսակցական պատկանելությունը, որից հետո նրա Պոլսում մնալը դարձավ շատ վտանգավոր: Այդ պատճառով ապաքինվելուց հետո հարազատների ու բարեկամների խնդրանքով 1896թ. մարտին նա անցավ արտասահման: 1897թ. Լոնդոնում նա մեծ դժվարությամբ հիմնեց «Մարտ» թերթը, իսկ 1898թ. հունվարին՝ «Նոր կեանք» երկշաբաթյա հանդեսը:

Արփիարյանը ձգտում էր լոնդոնյան պարբերականների միջոցով նպաստել արևմտահայերի ազատագրական գաղափարախոսության և պայքարի գործին: Դրա համար նաև կարևոր էր համարում հայ ժողովրդի քաղաքական դաստիարակության զարգացումը, որովհետև ըստ Արփիարյանի «հայ ազգը չունի իր ազգային քաղաքականութիւնը ղեկավարող նախարարութիւն մը»[1]: 1897թ. իր բարեկամ Գարեգին Չիթչյանին ուղղված նամակում նա գրում էր. «Ես այս գործին մէջ թերթ հրատարակելու համար չէ, որ մտած եմ. քանի տարի է, որ կը գրեմ և դարձյալ կրնամ ինքնիրենս թերթ հրատարակել: Իմ նպատակս էր մասնակցել մեծ գործի մը, թերթը այդ նպատակին հասնելու միջոցներէն մեկը պիտի ըլլայ. բայց եթէ մյուս միջոցներուն մէջ չի հաջողինք, թերթով ի՞նչ կրնանք ընել»[2]: Այստեղ «գործ» ասելով Արփիարյանը նկատի ուներ ակտիվ ազատագրական պայքարի ծավալումը Թուրքիայում:

«Նոր կեանքը» լուսաբանելու էր թե՛ ազգային ժամանակակից կյանքը, թե՛ եվրոպական երկրների քաղաքականու-

---

[1] «Նոր կեանք», Լոնդոն, 1898, N 1, էջ 1:

[2] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 114, թ. 78:

թյունը։ Արփիարյանն առաջադրում էր մամուլի միջոցով բացասական երևույթները վեր հանելու խնդիրը, որովհետև նրա համոզմամբ «ցեղ մը կը ջլապնդի, կը զորանայ իր կեանքին ամենախիստ քննադատութեամբը»[1]։

1896-ականի սկզբին Լոնդոնում էին հավաքվել հնչակյան կուսակցության մի շարք նշանավոր անդամներ՝ Միհրան Տամատյանը, Անտոն Ռշտունին, Լևոն Մկրտչյանը, Աղասին, Ապահը և ուրիշներ։ Սակայն շուտով նրանք ընդհարվում են Լոնդոնում գտնվող կուսակցության կենտրոնի անդամների, հատկապես նրա ղեկավարներ Ավետիս և Մարո Նազարբեկյանների հետ։ Ընդհարումը ուներ մի շարք լուրջ պատճառներ։ Նախ՝ Արփիարյանին, Տամատյանին ու արևմտահայ մյուս հնչակյաններին մտահոգում էր Արևմտյան Հայաստանում կուսակցության ծավալած գործունեության եղանակը։ Նրանք մեղադրում էին Նազարբեկին ու նրան կողմնակիցներին իրենց անհեռատես գործողությունների մեջ։ Մեղադրում էին այն բանում, որ չխորհելով ժողովրդի ինքնապաշտպանության մասին կազմակերպում էին փոքր զինված ելույթներ ու աննշան շարժումներ, դրանով գրգռելով թուրքերին ու նոր ջարդերի ու բռնությունների տեղիք տալով։ Նազարբեկյաններին քննադատում էին այն բանում, որ «Հնչակում» նրանք Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում տեղի ունեցած «փոքրիկ դեպքերն ու շարժումները մեծադղորդ ռեքլամներով ներկայացուցած էին հայ ժողովրդին իբրև յեղափոխական մեծ գործ»[2]։ Արփիարյանն ու իր համախոհները իրավացիորեն գտնում էին, որ դա ապակողմնորոշում էր հայությանը և սխալ պատկերա-

---

[1] «Նոր կեանք», 1898, N 1, էջ 1։

[2] Պատմութիւն Ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրեզնո, 1930, էջ 33։

ցում տալիս իրականության մասին: Նրանք Նազարբեկից պահանջում էին, որ կուսակցության գործունեությունը պահվի խիստ գաղտնապահության պայմաններում և չհրապարակվի մամուլում: Արփիարյանին, Տամատյանին և մյուսներին լրջորեն մտահոգում էր նաև Նազարբեկ ամուսինների չափից ավելի մեծ իշխանությունը: Դա պարզորոշ երևում է Ապահի, Տամատյանի ու Ռշտունու նամակներից[1]: Հետագայում անդրադառնալով այս հարցին՝ Արփիարյանը գրում էր. «Երբ Լոնդոն հավաքուեցինք, տեսանք թէ դեպքերը, զոր քննելու հարկին մէջ կգտնուեինք, մեծ մասամբ դժբախտ հետևանքներն էին միապետական սանձարձակ դրութեան: Անհատ մը կրցած էր ամեն բան ընել առանց պատասխանատվութեան, առանց վերահսկումի: Արկածաբեր այս դրութեան շարունակութիւնը աղետաբեր վտանգալից երևաց ապագային համար»[2]:

Դեմ լինելով Նազարբեկյանների միանձնիշխանությանը՝ Արփիարյանը բողոքում է և այդ մասին տեղեկացնում Կ. Պոլսի հնչակյան վարչությանը: Դրանից հետո Նազարբեկյանները սկսում են Արփիարյանի դեմ լարել կուսակցության անդամներին[3]: 1896թ. հուլիսի 18-ին Արփիարյանին ուղարկված նամակում Լևոն Մկրտչյանը գրում էր. «Եթէ տիկին Նազարբեկը չըլլար, Ավոյին հետ թերևս, կարելի էր լրջորեն ու համերաշխութեամբ գործել, բայց մինչև հիմա ամեն կարգի խնդիրներուն մէջ տիկինին անխորհուրդ համառութիւնը պատճառ եղած է շատ մը չարիքներու»[4]:

Կուսակցության առաջնորդների հետ տարաձայնության պատճառներից մեկը սոցիալիզմի հարցն էր: Արևմտա-

---

[1] ՀԱԱ, Ապահ Պետրոսյանի ֆ.453, ց.1, գ.6, թ. 1:

[2] «Լուսաբեր», 1907, N 443:

[3] Շահպազ Ստ., Արփիար Արփիարեան, Պէյրութ, 1988, էջ 174:

[4] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 376, թ.5:

հայ ինչակյանները դեմ էին, որ հեղափոխութեան անունով հավաքված դրամը ծախսվի «ընկերվարական պրոպագանդին համար»[1]: Արփիարյանը գտնում էր, որ պետք է հրաժարվել սոցիալիզմի գաղափարից, որը վնասակար էր Հայ դատի համար, պետք է հրաժարվել հայ ժողովրդին դասակարգերի բաժանելու գաղափարից, քանի որ այն ջլատում է ազգային ուժերը, արհեստականորեն տարանջատում և վնասում ազատագրական պայքարին և բոլոր ուժերը կենտրոնացնել միմիայն արևմտահայության ազատագրության խնդրի վրա: Նա ձգտում էր ազգային համերաշխությանը և ազգային բոլոր ուժերի միավորմանը: «Յեղափոխութեան բնաջնջումը» հոդվածում նա գրում էր. «Մենք մեր մեջէն պետք է տարհանինք ինչ որ ընդհանուր ազգային հանգամանք չունի: Կրոնական խնդիր, տնտեսական հարցեր պետք է ջնջիլ. վասնզի կուսակցական են»: Արփիարյանի այն համոզմունքին էր, որ օտար լծի տակ գտնվող ժողովրդի համար կրոնական, տնտեսական, սոցիալական և մյուս ներքին հարցերը պետք է ստորադասվեն գլխավոր խնդրին՝ ազգային ազատագրությանը: «Ազատ երկրի մը մէջ իսկ կրոնական խնդիրները միշտ գոյութիւն ունին, կը վիճաբանին, կը հալածին իրար: Տնտեսական խնդիրները նմանապէս: Անգղիացին, օրինակի համար, ամենաջերմ հակառակորդ կրնայ ըլլալ դրամատէրներուն, և ընկերավարական, բայց հայրենիքին համար միշտ անգղիացի է: Ընկերուարութիւնը մասնական խնդիր և ծրագրէն դուրս նիւթ կը համարուի»[2]: Արփիարյանին գաղափարակից էին Միհրան Տամատյանը, Լևոն Մկրտչյանը, Լևոն Բաշալյանը, Վահրամ Գրիգորյանը, Վահե Արզույանը և ուրիշներ:

---

[1] Շահպազ Ստ., նշվ. աշխ., էջ 174:
[2] ԳԱԲ, Ա. Արփիարյանի ֆ., N 23, թ.14:

1896թ. մայիսի 21-ին Արփիարյանը Լոնդոնից նամակ է գրում հնչակյան կուսակցության Կ.Պոլսի վարչությանը, ուր նա շարադրում է կուսակցության նորովի կազմակերպման ու կենտրոնի վերակառուցման իր տեսակետները: Նա գտնում էր, որ ազատագրական պայքարում հնչակյանների կրած պարտության գլխավոր պատճառներից մեկը դա գործողությունների տարանջատվածությունն էր, այդ պատճառով թուրքական կառավարությունը «ամեն տեղ զատ-զատ իր ամբողջ ուժը մեր վրա թափեց, վասնզի ամեն տեղ առանձին-առանձին գործեր կատարուեցան առանց մեկը միւսի հետ կապուելու, առանց մեկը միւսին տեղեկութիւն ունենալու»[1]:

Միւս կարևոր հանգամանքը, որի մասին գրում էր Արփիարյանը, կուսակցական գաղտնապահությունն էր: Այնուհետև նա շարադրում էր, թե այդ հարցում ինչ սխալներ են թույլ տրվել. «ժողովուրդը չը զինուած պոռացինք թէ ժողովուրդը պետք է զինուի, Սասունի ապստամբութենէն շատ առաջ հրատարակեցինք թէ Սասուն պիտի ապստամբի եւ թիւրքը մենէ առաջ անցավ: Կիլիկիայի մեջ ամենպզտիկ պատրաստութիւն մը չը տեսած հրատարակեցինք թէ «Կիլիկիա որոտում է»: Այս հրատարակութիւնները ամենամեծ հարուած տուին մեր գործերուն»[2]: Նա գտնում էր, որ վճռական գործողություններից առաջ անհրաժեշտ է նախ «ինքնապաշտպանութեան միջոց հայթհայթել ժողովրդին» և ոչ թե բարձրագոչ հայտարարություններ անել, որոնցով գործն առաջ չի գնա[3]: Նրա համոզմամբ ինչպես հնչակյան, այնպես էլ դաշնակցական կուսակցությունները պետք է աշխատեն, որ «ապագային մէջ կա-

---

[1] Նույն տեղում, ֆ. N 71, թ.2:

[2] Նույն տեղում, թ.3:

[3] Նույն տեղում:

տարուելիք ոնէ գործողութիւն ավելի «ազգային» դրոշմ կրէ քան «կուսակցական», քանի որ այդ են պահանջում ժողովրդի շահերը: Դա Արփիարյանը հիմնավորում էր հետևյալ կերպ. «Արդարև ամեն գործ, որ զուտ ազգային, ժողովրդական է ավելի մեծ կարևորութիւն կրնայ ունենալ աշխարհի աչքին քան թէ կուսակցական գործ մը: Թէ թիւրք կառավարութիւնը եւ թէ մեզ թշնամի օտար կառավարութիւնները կրնան և միշտ ալ այսպես ըրած են, պնդել, թէ հայ ազգը իր ամբողջութեամբ շարժում չըներ թիւրք իշխանութեան դէմ, այլ խումբ մը «խռովարարներ», կուսակցութիւններ կազմելով ազգը կը գրգռեն և կուզին շինծու կեղծ ըժգոհութիւն կամ շարժում յառաջ բերել»[1]: Այնուհետև Արփիարյանը կոնկրետ փաստերով ցույց էր տալիս թե «որչափ վնասակար եղած է ամեն գործ կուսակցութեան մը վերագրելը»: Նա գրում է, որ ինքը վճռականապես դեմ է եղել հնչակյանների կազմակերպած 1895թ. սեպտեմբերի 18-ի Բապը Ալիի ցույցին կուսակցական բնույթ տալը և իր համախոհների հետ միասին փորձել է համոզել հնչակյան կենտրոնին «զայն ներկայացնել իբր ժողովրդային ընդհանուր շարժում մը: Սակայն կենդրոնը մեզի համամիտ չգտնուեցաւ և մեզի ալ հանդիմանութիւն ղրկեց թե ինչու ուզած ենք զուտ ազգային ընծայել այդ ցոյցին և ոչ կուսակցական»[2]:

Այնուհետև Արփիարյանն անդրադառնում է հնչակյան կուսակցության ժողովրդի մեջ ունեցած հեղինակության հարցին և ցույց տալիս, որ այն լրջորեն խախտված է. «Նախ և առաջ եղաւ շատ պարծենկոտութիւն կամ ավելի ճիշտ անապարծութիւն: Այնպես ցույց տրուեցավ, որ «Հնչակ» անունէն առաջ ոչ

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

ազգային ազատագրութեան գաղափարը ծնունդ առած էր, ոչ յեղափոխական շարժում մը պատրաստուած էր»[1]:

Արևմտահայերի ազգային ազատագրական պայքարի հաջողության համար Արփիարյանը կարևոր էր համարում ազգային կուսակցությունների միջև համաձայնության կայացումը: Նա իրավացիորեն նշում էր, որ «կուսակցական բաժանումը շատ վնասակար եղած է ազգային դատին համար և ազգին զլուխն եկած փորձանքներուն մեկ մեծ մասը այդ պառակտումին պատճառով է»[2]: Նա կողմնակից էր դաշնակցության հետ, կամ ինչպես ինքն էր արտահայտվում «դրոշակեաններուն հետ համաձայնութեան կայացմանը»[3]:

Արփիարյանը գտնում էր, որ հայ ազգային կուսակցությունները պետք է ձգտեն կապ հաստատել Եվրոպական երկրների հատկապես Անգլիայի «քաղաքական ու օրագրական աշխարհներուն հետ» և կարողանան ձեռք բերել «քաղաքական անձնավորութիւններու բարեկամութիւնը»[4]: Նա առաջ էր քաշում այն տեսակետը, ըստ որի կուսակցության ղեկավարներ կարող են դառնալ միայն այն անձնավորությունները, որոնք լավ են ճանաչում արևմտահայ կյանքը և Թուրքիան ընդհանրապես:

1896թ. ապրիլի 21-ին Արփիարյանի կուսակցական հակառակորդները Նազարբեկի գլխավորությամբ որոշում են ընդունում նրան կուսակցությունից հեռացնելու մասին: Սակայն կենտրոնի վճռին դեմ են դուրս գալիս կուսակցության մասնաճյուղերը և պաշտպանում Արփիարյանին[5]:

---

[1] Նույն տեղում, թ.4:

[2] Նույն տեղում, թ. 6:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, թ.7:

[5] Շահպազ Ստ., նշվ. աշխ., էջ 170:

1896թ. սեպտեմբերին Լոնդոնում տեղի է ունենում Հնչակյան կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովը: Այստեղ Արփիարյանը, Տամատյանը, Մկրտչյանը և մյուսները դատապարտում են կուսակցության ղեկավարության բռնած ընթացքը, պահանջում են հրաժարվել ղեկավարման կենտրոնացված ձևից, պարբերաբար հաշվետու լինել կուսակցության համագումարին, հրաժարվել մասնակի ցույցերի ու կռիվների գործելակերպից, պահպանել խիստ գաղտնապահություն: Նրանք ավելորդ վնասակար են համարում սոցիալիզմի քարոզչությունը արևմտահայության մեջ և պահանջում են ծրագրից հանել այդ կետը[1]:

Արփիարյանի ու նրա կողմնակիցների տեսակետներն իրենց արձագանքն են գտնում կուսակցության լայն շրջաններում: Այս առումով ուշագրավ է մի խումբ հնչակյանների թռուցիկ-դիմումը կուսակցության մասնաճյուղերին: Դիմումում ասված է, որ «յեղափոխութեան գործերը շտկելու և ուղիղ ճանապարհի վրա դնելու միակ ճարն է ընդունիլ շուտափոյթ և անպայման ապակենդրոնացում»[2]: Կուսակցության հաջողության գրավականը նրանք տեսնում են ազգային մյուս կուսակցությունների, հատկապես դաշնակցության հետ միավորման և մեկ կուսակցության ստեղծման մեջ: Սակայն համագումարում Նազարբեկյանները չեն ընդունում և ոչ մի փոփոխություն կուսակցության ծրագրում: Նրանք հատկապես դեմ էին Դաշնակցության հետ միավորման առաջարկին: Դա պարզորոշ երևում է հնչակյաններ Լևոն Մկրտչյանի, Ապահ Պետրոսյանի և այլոց նամակներից: 1896թ. նոյեմբերի 11-ի Ապահի նամա-

---

[1] Պատմութիւն Ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, Ֆրեզնո, 1930, էջ 572:

[2] ՀԱԱ, ֆ.1456, ց.1, գ.35, թ. 1:

կում կարդում ենք. «Այդ թշուառականները (իմա՝ Նազարբեկյանները - Գ.Հ.) որոշած են մինչև վերջը համառիլ և արգելքներ հարուցանել մեր առաջ: Նրա հաջողութիւնը անկարելի կդառնա և միշտ կջախջխվի եթէ դաշնակցականներու հետ մեր միութիւնը իրագործվի»[1]: Ապահը հատկապես կարևորում էր հնչակյան-դաշնակցություն միությունը գրելով, որ «առանց անոր կարելի չէ որևէ գործ ընել»[2]:

Արփիարյանը դատապարտեց կուսակցական անհանդուրժողականությունը՝ դա անհարիր համարելով ճշմարիտ հայրենասերներին: Նա ազգային աղետ էր համարում կուսակցական եսասիրությունը: «Ես»-ը թէ անհատական կեանքի մէջ անտանելի է, հանրային և հասարակական կյանքի մէջ ալ նվազ անտանելի չէր, - գրում է Արփիարյանը: - Այդ կուսակցական «ես»-ը ազգին աղետաբեր եղաւ և յեղափոխութիւնը և ազգային տունը օրհասաբեր վիճակի հասցուց»[3]:

Լոնդոնի համագումարում Նազարբեկյանների ճնշման տակ կուսակցության շարքերից վտարվեցին նաև Մ. Տամատյանը, Մ. Սվազլյանը, Ա. Ռշտունին, Աղասին և այլոք[4]:

Ուժեղացող տարաձայնությունները ի վերջո հանգեցրին բախման հնչակյան երկու թևերի միջև: Ընդդիմադիրները բաժանվեցին Նազարբեկյաններից ու ստեղծեցին իրենց հնչակյան կուսակցությունը: 1896թ. հոկտեմբերի 16-ին Լոնդոնից գրած իր նամակում Ապահը հայտնում է իր բարեկամ Իսրայելին, որ բաժանվելով Նազարբեկյաններից իրենք ստեղծել են «հինգ անձերէ բաղկացած կեդրոնական վարչութիւն մը»[5]: Նո-

[1] ՀԱԱ, Ապահ Պետրոսյանի ֆ.453, ց.1, գ.53, թ. 7:

[2] Նույն տեղում:

[3] ԳԱԹ. Ա. Արփիարյանի ֆ. N 23, թ,1:

[4] «Հնչակ», 1898, N 18:

[5] ՀԱԱ, ֆ.453, ց.1, գ.7, թ. 2:

ընտիր վարչության անդամներ են ընտրվում Ա. Արփիարյանը, Մ.Մվազյանը, Ս.Սուրենյանը, Լ.Մկրտչյանը, Մ.Տամատյանը[1]: Հետագայում «Լուսաբերում» Արփիարյանը գրում էր. «Լոնդոնում գումարուած հնչակեան առաջին պատգամաւորական ժողովը միապետական վարչութիւնը թէ հայ ազգին և թէ հնչակեան կուսակցութեանը մահաբեր համարելով զայն ջնջեց և հինգ անդամէ բաղկացած կեդրոնի մը դրութիւնը ընդունեց»[2]: Նորընտիր վարչությունը պետք է հաշվետվություն ներկայացներ կուսակցության համագումարներում իր գործունեության համար:

1896թ. աշնանը, հնչակյան երկու թևերի միջև սուր պայքար է ծավալվում «Հնչակ» թերթի շուրջը, բայց Նազարբեկը Լոնդոնի դատարանի միջոցով պահպանում է «Հնչակի» նկատմամբ ունեցած սեփականության իր իրավունքը[3]:

Նոր հնչակյանները 1898թ. հոկտեմբերի (9-11-ը) Ալեքսանդրիայում գումարում են իրենց երկրորդ պատգամավորական ժողովը: Նազարբեկյաններից տարբերվելու համար ժողովում որոշում է ընդունվում կուսակցությունը կոչել Վերակազմյալ հնչակյան[4]: Ալեքսանդրիայի ժողովը որդեգրում է զուտ ազգայնական ծրագիր: Կուսակցությունը որոշում է հետամուտ լինել միայն «տաճկահայ դատին»: Սոցիալիզմի ուսմունքի ու քարոզչության մասին դրույթները ծրագրից հանվում են, որովհետև ըստ վերակազմյալների «ընկերվարութիւնը կը նկատուի ավելորդ ու վնասակար Տաճկահայ դատի համար, քանի որ Թիւրքիոյ մէջ Եվրոպական իմաստով ոչ քափիթալ և

---

[1] ՀԱԱ, ֆ.1456, ց.1, գ.33, թ.1:

[2] «Լուսաբեր», 1907, N 438:

[3] Պատմութիւն Ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, Ֆրեզնո, 1930, էջ 66:

[4] Տեփոյեան Պ. Մ. Տամատեան, Պեյրութ, 1964, էջ 104:

ոչ ալ պրոլետարիատ գոյութիւն ունեին, այլ կային տաճիկը և հայը դեմ առ դեմ, մեկը տիրող, կոտորող ու թալանող, մյուսը ստրուկ, կոտորվող ու նահատակվող»[1]: Վերակազմյալների պաշտոնաթերթ են դառնում «Մարտ» թերթը և «Նոր կեանք» հանդեսը՝ Արփիարյանի խմբագրությամբ[2]: Ընտրվում է նոր կենտրոնական վարչություն, որի անդամների թիվը հինգից հասնում է յոթի: Նպատակը մեկն էր՝ «թոյլ չտալ, որ մեծամասնութիւնը վարչութեան մեկ անդամին ձեռքը կոյր գործիք մը դառնա», - գրում է Արփիարյանը[3]: Վարչության մեջ ընտրվում են Միհրան Սվազլյանը, Լևոն Մկրտչյանը, Ասպահը, Կարապետ Փափազյանը, Հովհաննես Շահնազարը (հրաժարվելուց հետո նրա փոխարեն ընտրվում է Ալեքսան Արզույանը), Փ.Ադամյանը[4]: Վերակազմյալների կողմն է անցնում նաև կուսակցության Կ.Պոլսի մասնաճյուղը Արզույանի ղեկավարությամբ: Վարչության ատենադպիրը Ա.Արփիարյանն էր:

Վերակազմյալները ստեղծեցին իրենց մասնաճյուղերը Ամերիկայում, Պոլսում, Կիլիկիայում, Բուլղարիայում, Կիպրոսում: Նրանք «Մարտից» ու «Նոր կեանքից» բացի հրատարակում էին «Ազատ բեմ», «Ձայն հայրենեաց» թերթերը և նախապատրաստվում համընդհանուր ապստամբության[5]: Նրանք ձգտում էին ապստամբության կենտրոն դարձնել Կիլիկիան: Վերակազմյալները կազմակերպում են դրամի հանգանակություններ, գնում են զենք ու զինամթերք, տեղերում ստեղծում գաղտնի կազմակերպություններ ու զինված խմբեր: Դա պար-

---

[1] Պատմութիւն Ամերիկահայ.... էջ 67:

[2] Նույն տեղում:

[3] «Լուսաբեր», 1907, N 443:

[4] ՀԱԱ, ֆ.453, ց.1, գ.70, թ. 31:

[5] Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Եր., 1990, էջ 184:

զորոշ երևում է Միհրան Տամատյանի, Լևոն Մկրտչյանի, Ապահ Պետրոսյանի, Աղասու միմյանց գրված նամակներից[1]:

Սակայն դրամի հանգանակության հարցում վերակազմյալների մեջ առաջացավ երկու ուղղություն՝ չափավոր և արմատական: Արփիարյանի և Տամատյանի կողմնակիցները գտնում էին, որ այդ գործի հիմքում պիտի դրվի կամավորության սկզբունքը: Գործիչների մյուս մասը՝ Արզույան, Լարենց և նրանց համախոհներն ընդունելով կամավորության սկզբունքը, կողմնակից էին նաև բռնի մեթոդների կիրառմանը[2]:

Ալեքսանդրիայի ժողովի ավարտից հետո վերակազմյալներից հեռացավ Միհրան Տամատյանը: Նորաստեղծ կուսակցության հիմնադիրներից մեկի նման քայլը հասկանալու համար նախ և առաջ պետք է լուսաբանել ժողովին նախորդած շրջանում նրա և Արփիարյանի փոխհարաբերությունները: 1896թ. բաժանումից հետո նորընտիր կենտրոնի անդամներից Լոնդոնում մնացին միայն Արփիարյանն ու Տամատյանը, որտեղ էլ մարտավարական հարցերի շուրջ նրանց միջև տարաձայնություններ առաջացան: Տամատյանը դեմ էր, որ «Մարտի» հրատարակությունից հետո Արփիարյանը ձեռնարկի նոր պարբերականի հրատարակությունը՝ պատճառաբանելով, որ «կեդրոնը խմբագրատուն մը չէ, այլ յեղափոխական կուսակցութեան մը պատասխանատու ղեկավար մարմինը»[3]: Դրան հակառակ Արփիարյանը գտնում էր, որ «Նոր կեանքը» և՛ շահութաբեր կլինի և՛ կոզնորի կուսակցության անդամներին: Պ. Տեփոյանը նշում է, որ նոր պարբերականի հրատարակության հարցում Արփիարյանին աջակցում էր Չոպանյանը: Հակա-

---

[1] ՀԱԱ, Ապահ Պետրոսյանի ֆ.453, ց.1, գ.236, թ,1:

[2] «Զարթօնք», Պէյրութ, 1971, N 80.:

[3] ԳԱԹ․, Պ. Տեփոյանի ֆ. գ.2, թ.41:

ության հանգուցալուծումը տեղի ունեցավ Ատոմ Ասլանյանի տանը տեղի ունեցած պատգամավորական ժողովում, ուր գործիչների մեծ մասը պաշտպանեց Արփիարյանին[1]:

* * *

Կազմակերպչորեն բաժանվելով Նազարբեկյաններից և ստեղծելով իրենց կուսակցությունը վերակազմյալները սկզբից նեթ աշխատում են միավորվել Հայ հեղափոխական դաշնակցության հետ: 1897թ. սեպտեմբերի 11-ի ԱՄՆ-ի հնչակյան նահանգային վարչությանն ուղղված նամակում Արփիարյանը գրում էր, որ միության խնդրի առթիվ վերակազմյալները տեսակցություն են ունեցել Արմեն Գարոյի, Վահանի, Ռուստոյի հետ[2]: 1897թ. այդ բանակցությունները տեղի էին ունենում Հ. Ճանկյուլյանի միջնորդությամբ, 1900-ին Հովհ. Շահնազարի, իսկ 1901թ. վերակազմյալների կենտրոնը ինքն է ուղիղ բանակցությունների մեջ մտնում Դաշնակցության հետ[3]: Չնայած վերակազմյալների կողմից մեծ էր միավորվելու ձգտումը, սակայն այդ բանակցությունները անարդյունք վերջացան, որովհետև ՀՅԴ-ն դրել էր Արփիարյանին կուսակցությունից վտարելու հարցը պատճառաբանելով, որ չի կարող միավորվել մի կուսակցության հետ, որի ղեկավարներից մեկը մեղադրվում է լրտեսության ու մատնիչության մեջ: Դժբախտաբար ՀՅԴ-ի առաջնորդները ընկել էին մոլորության մեջ առաջ տանելով կուսակցության Կ. Պոլսի մասնաճյուղի ղեկավարների կողմից ներկուսակցական նպատակների համար հորինված ու տա-

---

[1] Նույն տեղում, թ.43:

[2] ԳԱԹ, Ա.Արփիարյանի ֆ. N 67, թ.17:

[3] Պատմութիւն Ամերիկահայ .... էջ 107:

րածված կեղծիքը: Այնուամենայնիվ, 1897թ. երբ Ճանկյուլյանը Արփիարյանին առաջարկեց հանուն կուսակցությունների միության հրաժարական տալ, Արփիարյանն առանց հապաղելու տվեց իր հրաժարականը: 1897թ. հունիսի 23-ին կենտրոնական վարչության անդամներին ուղղված Արփիարյանի գրության մեջ կարդում ենք. «Պարոն Լ.Մկրտչեան, Մ.Սվազլեան, Մ.Տամատեան, Ս.Սուրենեան, այս գրութեամբ կուզամ յայտարարել ձեզի, որ յառաջիկա հուլիս 31-ը պիտի կարենամ պաշտոնավարել, այդ թվականէ ետքը. զիս հրաժարեալ պետք է համարեք Կենդրոնական վարչութենէ»[1]: Սակայն վարչության անդամները չեն ընդունում նրա հրաժարականը և հանդես են գալիս ՀՅԴ այդ որոշման դեմ:

Դաշնակցության դեմ Արփիարյանի մղած հզոր գաղափարական պայքարի հակաազդեցությունը չեզոքացնելու համար դեռևս 1895թ. սեպտեմբերի 15-ին «Դրօշակը» գրեց, որ ձեռք է բերել 1890թ. հուլիսին Գում-Գաբուի ցույցին մասնակցած շատ անձնավորությունների, այդ թվում նաև իբր Արփիարյանի մատնիչությունն ապացուցող նյութեր, որոնք պետք է հրատարակվեն հետագայում: «Դրօշակը» հենվում էր ՀՅԴ Կ.Պոլսի կոմիտեի «ծանոթագրութեան» վրա, որտեղ ասված էր. «1890թ. հուլիս ամսո 15-րդ օրը Կ.Պոլսո Գում-Գափուի նշանաւոր ցույցին մասնակցող ծանոթ դեմքեր ի վերջո ուղղակի կամ անուղղակի կերպով դարձան մեկ մեկ վնասակար մատնիչներ. մենք ապագային այդ անձնավորութեանց գործերը ճշմարտապես երևան հանելու նպատակով ամենամեծ զոհողութիւններով հաջողած եմք ձեռք բերել յուրաքանչիւր խոստովանութեան պաշտոնական թղթերը և կարգավ թարգմանե-

[1] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 114, թ 26:

լով պահած եմք ապազային»[1]: Այս տեղեկագիրը չէր կարող անաչառ լինել, որովհետև ինչպես ասվեց, Կ.Պոլսի դաշնակցականները ուժեղ հակամարտության մեջ էին հնչակյանների, մասնավորապես Արփիարյանի հետ: Այն նպատակ ուներ հանրությանը նախապատրաստել նրան մատնիչության մեջ մեղադրելու համար:

1899թ. դեկտեմբերի 15-ի «Դրօշակ»-ի հավելվածում Արփիարյանը հայտարարվեց որպես դավաճան և թուրքական ոստիկանության լրտես: Այնտեղ հրատարակվում են նյութեր, ըստ որի բանտում գտնված ժամանակ Արփիարյանը մատնել է մի շարք անձանց՝ Ազգային երեսփոխանական ժողովի ատենապետ Հարություն Թիրաքյանին, Խորեն Նար-Բեյին, Մինաս Չերազին, Տատյան Վահրամ և Տրդատ բեյերին և ուրիշների: «Դրօշակի» 1899թ. ապրիլի 15-ի հավելվածում գրված է. «Արփիարեանը 1890-ին գնում է Կովկաս Խորեն Նա-Բեյին լրտեսելու պաշտոնով և յեղափոխութեան պատրուակով ձեռք է բերում և կլանում 2000ռ.»[2]:

Մեղադրանքներից մեկն էլ կապված էր Արփիարյանի գրած հանրածանոթ «Մեղայագրի» հետ:

Գում-Գափուի ցույցից հետո 1890թ. նոյեմբերի 9-ին շատերի թվում ձերբակալվեց նաև Արփիարյանը: 1891թ. հունվարի 5-ին 76 հոգի ազատ արձակվեցին, որոնց թվում Հ. Թիրաքյանը, Տատյան Վահրամ և Տրդատ Բեյերը: Բանտից դուրս գալուց հետո նրանք տարվում են Կ.Պոլսի Սուրբ Խաչի եկեղեցին, որտեղ ոստիկանության նախարար Նազմ բեյի և Պատրիարքի ներկայությամբ հենղիսավոր կերպով հավատարմության երդում են տալիս և արտասանում «Հրաժարիմք ի սատանայէ և

---

[1] «Դրօշակ», 1895, N 13:

[2] Հավելված «Դրօշակի», 1899թ., ապրիլի 15:

համենայն խաբեութենէ նորա»: Հունվարի 6-ին բանտից ազատվում է նաև Արփիարյանը, իսկ մի քանի օր անց «Արևելքում» հրատարակվեց նաև նրա ստորագրությամբ «Մեղայագիրը»՝ «Երախտագիտական արտայայտութիւն առ վեհափառ սուլթանին»[1]: Այստեղ մեծադղորդ բառերով գովերգվում են սուլթանի «բարեմասնությունները»:

Ընդհանրապես, Թուրքիայում սուլթանների գովերգումը, նրանց մեծարումը հպատակների կողմից նորություն չէր: Բռնատիրական կարգերն այս երկրում պարտադրում էին բոլորին հպատակվել և փառաբանել սուլթանին ամեն առիթով: Հետևաբար, զարմանալի չպետք է թվար այն, որ Արփիարյանի բանտից ազատվելու պայմանը լիներ վերոհիշյալ «Մեղայագիրը», ինչպես մնացած 76 հոգու տերության տված հավատարմության երդումը: Ինչևէ, «Մեղայագիրը» ծանր տպավորություն գործեց հանրային կարծիքի վրա: Բանտից ազատվելուց հետո Արփիարյանի համար ստեղծվել էր բավականին ծանր կացություն: Ե. Օտյանը գրում է. «Արփիար բանտեն ազատվելէն ետքը «Արևելքի» մէջ կորսնցուցած էր իր առաջին դիրքն ու հեղինակութիւնը և տեսակ մը շնորհազրկութեան մէջ ինկած»[2]: Այդպիսի ծանր պայմաններում նրան օգնության ձեռք մեկնեց «Հայրենիքի» արտոնատեր Հովի. Շահնազարը իր համարձակ հրավերով՝ ստանձնել թերթի խմբագրապետի պաշտոնը:

Չնայած Արփիարյանի հակառակորդների բոլորը փորձեցին «Մեղայագիրը» ներկայացնել որպես նրա մատնչությունն ապացուցող փաստաթուղթ, այնուամենայնիվ, ինչպես գրում է Ստ. Շահպազը «իրականութեան մէջ «մեղայագիրը» փառաբանութեան ամենէն ճապաղ գրութիւն մըն է, որուն մեկ

---

[1] «Արևելք», 1891, N 2092:

[2] Օտյան Ե., նշվ. աշխ., էջ 24:

հապճեպ ընթերցումն իսկ ցույց կուտա թէ ան դավաճանութեան ունէ մտածում, արարք չի պարունակեր, այլ սուլթանին ավելի քան չափազանցուած ներբողը կընէ միայն»[1]:

Արփիարյանին մեղադրում էին, թե նա իբր թուրքական ոստիկանության նախարար Նազմ բեյի լրտեսն էր և նրանից ամսական 30 ոսկի վարձ էր ստանում, թե իբր դրամական յուրացումներ է կատարել Արարատյան ընկերությունից, թե յուրացրել է նաև Զեյթունի ապստամբներին օգնելու համար Գր. Արծրունու տված 10 ոսկին և այլն և այլն: «Դրօշակի» հավելվածում հրատարակված «փաստաթուղթը» ժամանակին առաջադեմ մտավորականության մի շարք ներկայացուցիչների կողմից որակվեց որպես կեղծիք և ենթարկվեց սուր քննադատության: Գր. Զոհրապը, Տ. Կամսարականը, Ե. Օտյանը, Հ. Առաքելյանը, Ա. Չոպանյանը և շատ ուրիշներ իրենց ձայնը բարձրացրեցին այդ խայտառակ զրպարտությունների դեմ և պաշտպանեցին Արփիարյանին:

Արփիարյանի դեմ պայքարում դաշնակցությունն օգտագործեց «Հայրենիքի» աշխատակիցներից մեկին՝ Մելքոն Կյուրճյանին «Հրանդ» կեղծանունով: Արփիարյանը գրում է. «Կովկասից հրահանգուած էր «սնացնել Արփիարին», որի համար գործիք մը պետք էր իրենց. Մելքոն Կիւրճյանը՝ մտերիմ ընկերնին, նպատակահարմար դատուեցավ»[2]: Արփիարյանի ու Կյուրճյանի միջև տեղի էր ունեցել վիճաբանություն և Արփիարյանը Կյուրճյանին վռնդել էր «Հայրենիքի» խմբագրությունից: Զայրույթից, վրեժխնդրությունից կուրացած, Կյուրճյանը դարձավ այն անձնավորությունը, որն օգտագործվեց ՀՅԴ Կ. Պոլսի կոմիտեի կողմից: Ո՞րն էր վեճի պատճառը: Արփիարյա-

---

[1] Շահպազ Ստ., նշվ. աշխ., էջ 257:
[2] «Մարտ», 1897, N6:

նը գրում է. «Պոլսոյ հայերէն թերթերը Թութունճիէֆի գրքերուն ծանուցումները ներբողականներով մեկտեղ հրատարակեցին: Այդ թշվառականին գրական համբաւ մը շինելով ժողովրդականութիւն վաստկցնելու ծրագրին միայն «Հայրենիք» մերժեց ծառայել: (Թութունջեր լրտես էր, որը հետագայում աւհարեկվեց դաշնակցականների կողմից – Հ.Գ.): Օրին մեկը Կիւրճյան կներկայանա մեր խմբագրատունը և կը խնդրէ Թութունճիէֆի մեկ վիպասանութեան ծանուցումին հրատարակութիւնը, յայտարարելով որ «մերժողական պատասխանը մահաբեր պիտի ըլլա ուղղակի Արփիարի անձին»: Այս սպառնալիքին առջև նաև ինծի կմնար կարծիքս հայտնել խմբագրութեան մէջ: Բերած ծանուցումին ձեռագիրը պատռելով նետեցի տխուր միջնորդին երեսը՝ վերջապես վռնտելով զինքը մեր գրասենյակէն. դուրս ելաւ կորագլուխ, վրեժը սիրտը»[1]: Այն հանգամանքը, որ Կյուրճյանը միջնորդել է Թութունջևի համար, ինքնին վկայում է վերջինիս հետ նրա մտերմության մասին: Այնուամենայնիվ, դաշնակցականները փորձում էին ժխտել այդ իրողությունը, որն, իհարկե, անպատվաբեր էր կուսակցության համար:

Քրիստափոր Միքայելյանն այդ մասին գրում է. «... Ի՞նչ է նշանակում պարոն Շահնազարի իբր թէ «կարևոր յայտարարութիւնը, թէ Թութունջևն է տվել մեզ Արփիարի քննութիւնը, - այն Թութունջևը, որին մենք սպանել ենք ինքներս: Դրանո՞վ պետք է հաստատեն կեղծիքը: Ո՞վ կարող է այդպիսի թղթեր ձեռք բերել ոստիկանական դիվանատներից եթե ոչ լրտեսը... Որքան ինձ գոնե հայտնի է մերոնք այդ թուղթը ստացել են Գյուրջյանից և ոչ ոք իրենցից որևէ հարաբերութիւնների

---

[1] «Մարտ», 1897, N 6:

մեջ չէ եղել Թութունջեի հետ»[1]: Սակայն Արփիարյանի, Չոպանյանի և այլոց ուղղակի վկայությունները հաստատում են Կիւրճեանի և Թութունջեի մտերմության փաստը: «Մտերիմներ էին Կյուրճյան և Թութունճիեֆ, - գրում էր Արփիարյանը: - Կիւրճեանի ամուսնութեան հանդեսին Նազըմի կողմէն պատվո ներկայացուցիչը Թութունճիեֆն էր: Լրտեսին սատակումէն հետո անոր վրա տածած համակրանքն ու հարգանքը Կիւրճեան կը փոխանցեր անոր կնոջն ու աղջկանը, որոնց սպասնջականը կը հանդիսանար: Իր անձնասիրութեանը մէջ ծանրապես վիրավորուած, իր շահերուն մէջ մեծապես վտանգուած, Կիւրճեան կը մնար վրեժխնդիր մը ընդհանրապես «Հայրենիքի» և մասնավորապես ինծի դէմ: Այդ վիրավորուած անձնասիրութեան, այդ վտանգուած շահասիրութեան մեջ կարծեցին իրենց յարմարագոյն գործիքը գտնել Յուսուֆեան և իր ընկերը «Արփիարին սնացնելու» դաւին հաջողութեանը համար»[2]: Ա.Չոպանյանը վկայում է, որ Կիւրճեանը իրեն ևս առաջարկում է համագործակցել ընդդեմ Արփիարյանի ու ինչակյանների: Նա գրում էր. «Երբեք չը պիտի մոռանամ այդ ծիծաղելի ու գռեհիկ մարդուկին հետ այդ օրը ունեցած տեսարանս, որը կաս կարմիր կտրած կը գոչեր. «Հայրենիքով» ահագին փարա կը վաստակին կոր և մեզի չեն ի տա կոր. հարձակինք իրենց վրա, կոտորենք այդ թերթին վարկը, որ խախտած է արդեն, «Ծաղիկը» «Հայրենիքին» տեղը պիտի բռնէ և հազարավոր բաժանորդներ պիտի ունենանք. բոլոր դաշնակցականները մեզի հետ պիտի ըլլան...: Մերժեցի այդ աղտոտ հաշիվին մասնակը ըլլալ: Այդ օրեն մեկ կամ երկու ամիս հետո էր, որ մատնիչին պատմութիւնը մեջտեղ նետուեցավ... Հրանդ զրույց հանեց,

---

[1] «Հայրենիք», Բոստոն, 1924, N 8, էջ 135:

[2] «Մարտ», Լոնդոն, 1897, N 6:

թէ Թութունճիեֆին միջոցով ձեռք զցած է Արփիարեանի հարցաքննութեան թղթերը, որոնք կապացուցանեին, թէ Արփիարեան մատնած ըլլայ Վ.Տատեանը, Հ.Թիրաքեանը և ուրիշներ»[1]:

Թե ինչու էր ՀՅԴ Կ.Պոլսի կոմիտեն հատկապես Հրանդին ընտրել այդ գործի համար, Արփիարյանը հետևյալ կերպ է պարզաբանում. «Մ.Կիւրճեան 1890-ին ինծի հետ մեկտեղ կանդամակցեր հինգ ընկերէ կազմված յեղափոխական մասնախմբի մը: Հուլիս 15-ի դեպքերէն ետքը յետզհետէ փախան կամ բռնուեցան մոտէն կամ հեռուեն յեղափոխական կազմակերպութեան բոլոր մասնակցողները.... Յուսուֆեան և իր ընկերը հուսացին, թէ Կիւրճեան կրնար 1890-ին ինծի հետ ունեցած գործակցութենէն պահած յիշատակները խարդախելով իրենց գործիք ըլլալ կեղծարարութեան դավի մը, որմէ միայն կը ակնկալեին իմ կործանումս»[2]: Այնուհետև Արփիարյանը գրում է, որ իրեն մատնել էր դավաճան Մամբրեն, որը հայտնի հնչակյան գործիչ Համբարձում Պոյաճյանին գրած Տրապիզոնի հնչակյան կենտրոնի մի քանի նամակները հանձնել էր Նազըմին: Այդ նամակներում «անունս յիշատակուած էր զանազան պարագաներով», - գրում է Արփիարյանը: - Յեղափոխական շատ մը գաղտնիքներ երևան եկան այդ նամակներէն: Այս ամենապարզ ու ամենայայտնի եղելութիւններէն կեղծարարութիւն մը հորինել և յաջողացնել անկարելի էր, և բնական էր, որ հիմարամիտ դավադիրները խայտառակուեին, ինչպես որ ալ եղան»[3]: Արփիարյանի պատիվը պաշտպանողներից թերևս ամենահամարձակն ու գործունը Արշակ Չոպանյանն էր: Հնարավորություն չունենալով մամուլում բացեիբաց խոսել այդ

---

[1] «Անահիտ», 1901, N 2, Ա. Չոպանեան, «Արփիարեան»:

[2] «Մարտ», 1897, N 6, Կեղծարարները:

[3] Նույն տեղում:

մասին՝ նա ընդհատում է իր դասը Պոլսի Կենտրոնական վարժարանում և մերկացնում Արփիարյանի զրպարտիչներին, որի համար Կյուրճյանը սպառնում է հաշվեհարդար տեսնել Չոպանյանի հետ[1]: Չնայած այդ ժամանակ Արփիարյանի ու Չոպանյանի հարաբերությունները բավականին սրված էին գաղափարական տարաձայնությունների պատճառով, բայց լինելով ազնիվ ու համարձակ անձնավորություն՝ վեր է բարձրանում նեղ, անհատական վեճերի մակարդակից և ցույց տալիս Արփիարյանի դեմ ծավալված պայքարի ողջ անբարոյականությունը: «Եվ աhիկա բացուեց որպեսզի մեր հասարակութիւնը ամենաստուար մեծամասնութեամբ հավատք ընծայեր այս քստմնելի ամբաստութեան: Բոլոր դաշնակցականները և անոնց հետ բոլոր տիրացուները, էֆենտիները, միմոսները, որոնք Արփիարյանի խայթոցը կրած էին ամբաստանութեանը ամրացումին ոյժ տուին: Եվ սակայն իմացա զրոյցը, որ կը ձգտեր մրոտել Արփիարեանը, զզուանքով բողոքեցի զայն հրապարակ հանողներու դեմ: Հակառակ իր բոլոր թերութիւններուն, այդ մարդը մեր մէջ ամենէն նշանակալից դերերէն մեկը կատարած էր, Միացեալ ընկերութեանց գլխավոր հիմնադիրներէն մեկը և «Մշակի» Հայկակը եղած էր, երեսփոխանական ժողովին մէջ էֆենտիներու կուսակցութեան դէմ հանդուգն պայքար մը մղած էր, «Արևելքի» և «Մասիսի» իր հոդուածներովը մեր մամուլը և գրականութիւնը վերանորոգողներէն մեկն եղած էր և Շահնազարին հետ հիմնողն էր «Հայրենիքին»: Ցավ զգացի, որովհետև մտածեցի, թէ մեր ժողովուրդը խորապես անբարոյականացած ըլլալու էր ուրեմն՝ քանի որ ամենէն սիրուած գործիչներէն մեկուն ոճրագործ մը ըլլալուն կարելիութիւնը մեկ օրեն և առանց դժվարութեան կընդունէր....

[1] «Հայրենիք», Բոստոն, 1932, N7, Մ.Կյուրճեան, «Ա.Արփիարեան», էջ 115:

Մասնիչի խնդիրը հրապարակ ինկաւ այնպիսի պայմաններու, որ Արփիարեանի ամենէն կատաղի հակառակորդներն անգամ, բաւական է, որ պարկեշտ մարդիկ ըլլային, մղում ու նոյնիսկ պարտականութիւն ստիպուած էին զգալ Արփիարեանը պաշտպանելու»[1]: Երբ ամբաստանությունները սկսում են արագորեն տարածվել և Կյուրճյանը այդ թղթերը ներկայացնում է կենդրոնական վարժարանի աշակերտներին: Համբերությունից դուրս եկած Արփիարյանը Կյուրճյանից պահանջում է կազմել անկողմնակալ պատվո ատյան և այնտեղ ապացույցներ ներկայացնել: Նա գրում է. «անմիջապես օճիքեն բռնեցի և պահանջեցի, որ այդ թղթերը ներկայացնէ երկու կողմեն կազմված պատուոյ ատեանի մը: Կենդրոնական վարժարանի տնօրեն պ. Հարություն Մոստիչեան պաշտոն ստացավ «Հայրենիքի» տնօրեն պ. Շահնազարի կողմեն, պահանջել Կիւրճեանէ այդ թուղթերը ցույց տալ պատուոյ ատեանի մը: Իմ կողմէ ալ արձանագործ պ.Հակոբ Արապեան հատկապես գնաց այդ պահանջումը ըրաւ: Պատասխանը փախուստ»[2]: Երբ Կյուրճյանից վճռականորեն պահանջում են, որպեսզի ներկայացնի բնագիրը, որովհետև թարգմանության տակ չկար Արփիարյանի ստորագրությունը, վերջինս ստիպված խոստովանում է, որ «ես ինծի պատուած մը կրկնած եմ հարազատորեն - ճիշտ ըլլալու հանգամանքը ունի կամ չունի, ատիկա իմ գործս չէ»[3]:

Բոլորովին անհիմն է նաև Կյուրճյանի պատվո ատեան չներկայացնելու պատճառաբանությունը, ըստ որի. «մերժելով պատուոյ ատեանին առաջարկը ազատած կըլլամ հինգ-վեց

---

[1] «Անահիտ», 1901, N 2, էջ 39-40:

[2] «Մարտ», 1897, N 6, Ա.Արփիարեան, «Կեղծարարները»:

[3] «Հայրենիք», Բոստոն, 1932, էջ 113:

անձնաւորութիւններ, որոնք պ. Արփիարի ծուղակի մէջ պիտի իյնային»[1]: Եթե Արփիարյանն իրականում մատնություններ կատարած լիներ, ապա այդ անձինք նոր չէ, որ ծուղակի մեջ պիտի ընկնեին, այլ վաղուց բանտում կամ աքսորում պիտի գտնվեին: Միայն Արփիարյանի եղբոր և մոր նամակները բավական են հերքելու համար այն զրպարտությունը, թե իբր նա թուրքական ոստիկանության լրտես էր: Քննարկենք դրանցից մի քանիսը. 1898թ. եգիպտոսից Պոլիս վերադարձավ Տիգրան Արփիարյանը: Թեև նա թուրքական կառավարությունից զգուշանալու կամ թաքնվելու պատճառ չուներ, որովհետև պահպանողական հայացքների տեր հրապարակախոս էր և քաղաքական գործունեությամբ չէր զբաղվել, բայց Պոլիս հասնելուն պես ձերբակալվում է: Պատճառը պարզաբանում է մյուս եղբայրը՝ Ալեքսան Արփիարյանը 1898թ. մայիսի 12-ին Արփիարին ուղղված նամակում. «Տիգրանը տակաւին բանտն է 6-7 օրէ ի վեր. բանտարկութեան գլխաւոր պատճառը կը փաստուի 12-13 օր Աղեքսանդրիա մնալն, ուր կը գտնուէիր և դու: Տիգրանին վրա ունէ ամբաստանութիւն մը չը կայ այլ լոկ կասկած մը թէ քեզի հետ տեսնուած ըլլայ: Բարեկամները կաշխատեն կոր իր համար և մասնաւորապես Զոհրապը, Հրանտ Ասատուր և Ֆելեքյան Տիրանը»[2]: Մեկ այլ նամակում Ալեքսանը խնդրում է եղբորը. «Չըլլայ, որ ունէ անխոհեմութիւն մը ընես, որևէ բան մը գրես կամ Պոլիս վերադառնաս, վիճակնիս կծանրանա»[3]: 1900թ. մարտի 15-ին Արփիարին ուղղված նամակում մայրը հորդորում է որևէ բան չգրել և իր գտնվելու տեղը գաղտնի պահել: Միայն այն փաստը, որ թուրքական ոստիկանությունը

---

[1] Նույն տեղում, էջ 112:

[2] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 163, թ. 3:

[3] Նույն տեղում, թ.4:

նույնիսկ հարազատների տեսակցությունը Արփիարյանի հետ վտանգավոր էր համարում, արդեն վկայում է այն մասին, որ նա չէր կարող լրտես լինել: Վերջապես եթե դա նույնիսկ այդպես էր և նա ամսական 30 ոսկի վարձ էր ստանում իր լրտեսության համար, ապա առնվազն անտրամաբանական է այն, որ արտասահմանում անցկացրած իր ողջ կյանքը Արփիարյանն ապրեց ծայր աղքատության մեջ: Իր և կուսակցության մի շարք անդամների նամակները դրա վառ ապացույցներն են: 1897թ. մարտի 18-ին Լ.Բաշալյանին ուղղված նամակում Արփիարյանը գրում էր. «Սիրելի Լևոն... դրամապես ամենածանր կացութեան մ!ջ կը գտնուինք, ահա 15 օր է, որ անտանելի տառապանքներու մէջ եմք. կեանքիս մէջ տակաւին աասնկ փորձանքի հանդիպած չունեի»[1]: 1897թ. հոկտեմբերի 21-ին Մ.Սվազլյանին ուղղված Ապաhի նամակից երևում է, որ Արփիարյանը գտնվում էր նյութական ծանր դրության մեջ և Ապահը խնդրում է օգնել նրան դրամով[2]:

Արշակ Չոպանյանը գրում էր. «Արփիարեանի ներքին կեանքը զիտեի բաւական և ան հերիք էր այդ զրույցը քանդելու համար. ժուժկալ ու պարզունակ կեանք մը կը վարեր, միշտ թափթփուած հագուստներով, միշտ զրպանը պարապ: Ինչպե՞ս կարելի էր ասոնք համաձայնեցնել Նազըմ փաշայէն լեցուն ամսական մը առնող լրտեսի մը հեքիաթին հետ»[3]:

Իր հուշերում Ե.Օտյանը նույնպես հերքում է Արփիարի դեմ ուղղված մեղադրանքները[4]:

. . ՀՅԴ կողմից Արփիարյանի դեմ գլխավոր մեղադրական փաստաթուղթը դա այն «հարցաքննութեան ատենագրու-

---

[1] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 51, թ. 2:

[2] ՀԱԱ, Ապահ Պետրոսյան ֆ. N 453, ց.1, գ.18, թ. 1:

[3] «Անահիտ», Փարիզ, 1901, N 2:

[4] Օտյան Ե., նշվ. աշխ., էջ 171:

թյունն» էր, որ հրատարակվեց 1899թ. դեկտեմբերի 15-ի «Դրօշակի» հավելվածում: Ստ. Շահսյազը, որը բավական լավ է ուսումնասիրել այդ հարցը գրում է. «Վերոհիշեալ ատենագրութեան հեղինակը տեղեակ չըլլալով խնդրո առարկա եղող օրինական, անհրաժեշտ պայմաններուն մասին գործած է այնպիսի թերիներ, որոնք կը հաստատեն իսկոյն ու անհերքելի կերպով իր կեղծութիւնը: Չկա բնագիրը ատենագրութեան թուրքերեն տարբերակը: Չկա հարցաքննողի ստորագրութիւնը, որը հարցաքննութեան պարտական պայման էր: Երեք հարցաքննու-թյունների տակ կը, որոնք թուագրված են 1890թ. նոյեմբերի 11, 22 և դեկտեմբերի 12, միայն Արփիարյանի ստորագրութիւնն է: «Այս հարցմունքի առթիվ «Դրօշակի» բացարձակ լռութիւնը արդեն կասկածելի է»[1]:

- Արդարև սովորական է, անշուշտ, - գրում է Շահսյազը ձերբակալեալի մը սպառնալիքներ ընելը, վարձատրութեան խոստումներ տալը, բայց այդ տեսակ սպառնալիքներն ու խոստումները երբեք չեն արձանագրեր ատենագրութեանց մէջ»[2]: Մինչդեռ ատենագրության մեջ պարզորոշ նշված են սպառնալիքներն ու վարձատրության խոստումները: Մի կարևոր հանգամանք ևս. քննիչը չէր կարող չհետաքրքրվել, թե բանտարկվածներից բացի ովքեր են մնացել ազատության մեջ: Հարցաքննության ատենագրության մեջ այդ մասին ոչինչ չի ասված: Եթե իրականում Արփիարյանը մատնել էր Վահրամ բեյ Տատեանին, բժիշկ Հ. Թիրաքեանին, Մ.Չերազին, Նար-բեյին և մյուսներին, ապա առնվազն զարմանալի է, որ նրանցից ոչ ոք չի հարցաքննվում: «Եվ ինչ որ երբեք բնական չի թուիր, Նազմ բեյ այս բանտարկեալները չի կանչեր, մանավանդ զա-

[1] Շահսյազ Ստ., նշվ. աշխ., էջ 272:

[2] Նույն տեղում, էջ 272:

նոնք Արփիարեանին հետ դէմ դիմաց հանելու: Պատժական հարցաքննութեան մէջ շատ սովորական միջոց մըն է այս: Այս անտարբերութիւնն ու անշարժութիւնը աննորմալ են մանաւանդ համիտեան ռեժիմին ոստիկանութեան կողմէ»[1]:

Երրորդ հարցաքննությունը, թվագրված 1890թ. դեկտեմբերի 12-ին կարճ է. մատնություններ Արփիարյանին չեն վերագրված: «Բայց ան կը յայտնէ զոնէ անուղղակի կերպով բան մը. թէ հակառակ անոր, որ երկրորդ հարցաքննութիւնէն ի վեր 20 օրեր անցած են, այս երկար ժամանակամիջոցին մէջ ոստիկանութիւնը տեղեն չէ շարժած Արփիարյանի «մատնած», «զրպարտած» հայերու դեմ»[2]:

Բացի հիշյալ արձանագրությունից «Դրօշակի» խմբագրությունը հրատարակում է զանազան երկար «ծանոթութիւններ»: Շահպազը «ձանձրալի գործ» է համարում Արփիարյանի դեմ ասված այդ «վկայութիւնները» մեկ առ մեկ հերքելը, որովհետև «այնքան տղայական, հաճախ ծիծաղելի, ինչպես նաև յայտնօրեն պառավական են դրանք»[3]: Բայց հեղինակների մտայնությունն ու կուսակցական կաղապարը ցույց տալու համար անդրադառնում է մի քանիսին: «Դրօշակն» իր «ծանոթութեան» մեջ գրում է. «Բժիշկ Հայրութիւն Թիրաքեանի ձերբակալութեան պարագաները, որ ինքն իսկ պատմած է մեր ընկերներէն Գ-ին, յայտնօրեն կը ցուցնեն, թէ մատնութեան զոհ եղած է ինքը... կասկածներ ունի պ. Արփիարեանի իր անձին նկատմամբ ըրած մատնութեան վրա, բայց խոհեմութիւն չի համարեր խզել իր բարեկամական հարաբերութիւնները Արփիարեանի հետ, վախենալով իր գլուխն նոր փորձանք մը բերել»[4]:

---

[1] Շահպազ Ստ., նշվ. աշխ., էջ 279:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] «Դրօշակ», 1899, դեկտեմբերի 15-ի հավելված:

Թե ով է Գ-ն, անունը չկա: «Կբավե՞ դրոշակեան «ընկեր մըե ըլլալը, որ բոլորս ալ ստիպուինք իրեն հավատալու», - գրում է տարակուսանքով Ստ.Շահպազը: Նա նշում է, որ Թիրաքյանի ու Արփիարյանի հարաբերությունները եղել են բարեկամական և «անշուշտ ավելի քան սուտ է Թիրաքեանին բերանը դրուած այն խոսքը, թէ ինք խոհեմություն չի համարեր խզել բարեկամական հարաբերությունները Արփիարեանի հետ վախենալով իր գլուխն նոր փորձանք մը բերելէ»[1]: Ինչ վերաբերվում է Արփիարյանին, ապա Լ.Մկրտչյանին ուղղված նամակում նա գրում էր. «Ըստ դաշնակցականներու պ.Թիրաքեան ինծի դէմ գլխավոր մեղադրողն է. Իրենց պարտքն է ինծի դէմ բերել պ. Թիրաքեանին: Եթէ կարող են թող բերեն»[2]: Շահպազը նշում է, որ Արփիարյանի կապակցությամբ Չոպանյանը հանդիպել է Թիրաքյանի հետ: Վերջինս ասել է «թէ չի կրնար Արփիարին վերագրել զինքը մատնած ըլլալու դերը, որովհետև անձնապես փաստ չունի այդ մասին»[3]:

Ցավոք, չնայած մամուլի, հասարակության, բարեկամների ու ընկերների խնդրանքներին ու պահանջներին, այնուամենայնիվ Թիրաքյանը երբեք հրապարակայնորեն հանդես չեկավ ոչ Արփիարյանին մեղադրելով, ոչ էլ այն հերքելով: «Տոքթոր Թիրաքեանին կեցուածքին մէջ արիութեան պակասը կար անշուշտ, գրում է Շահպազը, - ան նույնիսկ պարտատր էր Արփիարեանը ամբաստանելու եթէ երբեք ճիշտ էր ըստ իրեն անոր վերագրուած մատնիչութեան ոճիրը: Բայց Թիրաքեան չը վկայեց այս կամ այն իմաստով: Չնայեցաւ Արփիարյանին աչքերուն մէջ ուղղակի: Իր անունին վարկը չը գործածեց արդա-

---

[1] Շահպազ Ստ., նշվ. աշխ., էջ 280:

[2] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 115, թ.148:

[3] Շահպազ Ստ., նշվ. աշխ., էջ 281:

րութեան պաշտպանութեանը համար: Կրնար Արփիարեանին մեկ պաշտպանը համդիսանալ, բայց անոր զրպարտիչներուն ծառայեց: Իր անունը շահագործեցին»[1]:

Երբ հրապարակվեց «Դրօշակի» հավելվածը, ամեն կողմից պահանջեցին Պատվո ատյան կազմել անկողմնակալ ձևով ճշմարտությունը վեր հանելու համար: Պաշտոնական հայտարարություններով հանդես եկան վերակազմյալ հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունը, կուսակցության մասնաճյուղերը, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Կիպրոսի հայ համայնքները, նամակներ ուղղելով «Դրօշակին» ու «Մարտին»[2]: Արփիարյանն ինքը պատրաստակամություն է հայտնում ցուցմունքներ տալու Պատվո ատյանում: Ավելին, վստահ իր անմեղության վրա նա առաջարկում է նրա անդամներին ընտրել հենց դաշնակցականներից: «Պատւո ատեանը զուտ դաշնակցականներէ կազմելու գաղափարը ունիմ», - գրում էր նա Լ.Մկրտչյանին ուղղված նամակում[3]:

Վերակազմյալ հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությանն ուղղված նույն կուսակցության Ամերիկայի նահանգային վարչության 1900թ. ապրիլի 5-ի նամակում կարդում ենք. «Դրօշակի» հավելուածը Ամերիկայի մէջ ցուրտ ընդունելութիւն գտաւ: Հիշեալ հավելուածի նկատմամբ Ձեր բոլոր թելադրութիւնները մեր կողմէ կարգադրուած են ու բազմաթիվ քաղաքներուն մէջ ժողովրդային շարժումը առաջ բերած է, ուր միթինկներ տեղի կունենան և պատվո ատեանի մը կազմութեան մասին պահանջագիր կը խրկուին երկու կուսակցութեանց: Դաշնակցականք այդ նպատակով կազմուած ժողովնե-

---

[1] Նույն տեղում, էջ 282:

[2] «Մարտ», 1900, N 24, 25, 26:

[3] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 115, թ. 125:

րը խանգարելու մտոք տկար փորձեր կընին ու կը խայտառակուին: Դաշնակցականաց այս անպատշաճ վարմունքը կասկածիլ կուտա մեզ, թէ այդ մարդիկները չը պիտի համարձակուին պատվո ատեանի առջև ելնիլ»[1]: Նամակի վերջում այն միտքն է արտահայտված, որ կուսակցությունը պետք է կարճ ժամանակում բացահայտի և անարգանքի սյունին գամի կեղծարարներին: 1900թ. ապրիլի 12-ին Ամերիկայի վերակազմյալ հնչակյան նահանգային վարչությանը գրած նամակում Արփիարյանի բերած փաստարկները կասկած չեն թողնում, որ հարցաքննության ատենագրությունը կեղծիք է. «իբր իմ հարցաքննութեանս հրապարակուած կեղծութեան մէջ իմ բերանս դրված է թէ ես «Օրթագեղ ծնած եմ», - գրում է նա: - Ես այդպիսի բան չեմ ըսած այն պարզ պատճառով, որ ես չէի կրնար Օրթագեղ ծնած ըլլալ, քանի որ Պոլսեցի չեմ: Ես Սամսոն ծնած եմ: Եթէ Մելքոն Կիւրճեան և ընկերները տեսած ըլլային հարցաքննութեան թուղթերը, անշուշտ, Սամսոնը պիտի չը կարդային Օրթագեղ: Կեղծարարութեան այս անպարփակելի սխալումին պատճառն այն է, որ ես շատոնց ի վեր Օրթագիւղ կը բնակեմ: Հետևաբար կարծեր են, թէ Օրթագիւղ ծնած ըլլամ և առանց փնտռտուք մը ընելու անխոհեմաբար ալ այդպես գրած են իրենց հնարած թուղթին մէջ»[2]:

1900թ. մայիսին «Մարտում» Արփիարյանը գրում է, որ ինքը երկու անգամ պահանջել է պատվո ատյանի կազմությունը՝ 1895 և 1897 թվականներին, սակայն նրա պահանջները մնացել են անպատասխան:[3] Կ.Փափազյանին ուղարկված 1900թ. ապրիլի 10-ի նամակում Արփիարյանը գրում է, որ եթե

---

[1] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 874, թ. 8:

[2] Նույն տեղում, ֆ. N 115, թ. 2-3:

[3] «Մարտ», 1900, N 24:

դաշնակցականները իսկապես միության կողմնակիցներ են, ապա թող առանց բարդություններ ստեղծելու ընդունեն պատ-վո ատյանի սկզբունքը, այնուհետև «այս խնդիրը փակուելէն յե-տո կարելի է նկատողութիւն առնիլ միութեան խնդրին սկզբունքը»[1]: Նույն նամակում Արփիարյանը գրում է, որ եթե «միութիւնը հաջողուի, ես բոլորովին կը քաշուիմ կուսակցու-թենէն»[2]:

Հետագայում, երբ Արփիարյանը դուրս եկավ կուսակ-ցությունից, անդրադառնալով այս հարցին, նա հիշեցնում էր դեռ վաղուց արտահայտված իր այն միտքը, որ միության ճա-նապարհին իր անձը չէր գլխավոր խոչընդոտը, որ պնդում էր դաշնակցությունը: 1901թ. օգոստոսին Լ.Բաշալյանին ուղղված նամակում նա գրում էր. «Սիրելի Լեոն ահա 8 ամիս է հրաժա-րեցա, սակայն միութիւն եղա՞վ, շահ մը եղա՞վ»[3]:

Չնայած վերակազմյալ հնչակյանների, առաջադեմ մի շարք մտավորականների, արտասահմանյան երկրների հայ համայնքների դիմումներին, դաշնակցականները մերժեցին որևէ վկայություն տալ պատվո ատյանում: «Դրօշակի» խմբագ-րությունը հայտարարեց, որ «մերժում է այս կամ այն անհատի դատարանի խնդրով զբաղվելու առաջարկը»[4]:

1900թ. մայիսի 15-ին ԱՄՆ-ից Արփիարյանին ուղղված նամակում վերակազմյալ Արամ Ասքանազը գրում էր. «Դաշ-նակցականները իրենց բոլոր ուժով կը դիմադրեն Պատւո ատեանի պահանջը արգելելու համար... Մեր մէջ տիրող ընդ-հանուր համոզումը այս է, թէ Պատւո ատեանի կազմութիւնը զուցե անկարելի ըլլայ, բայց վերջապես հաղթանակը մեր կող-

---

[1] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 115, թ.11:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, ֆ. N 51, թ. 7:

[4] «Դրօշակ», 1900, N 79:

մը կը մնայ, քանի որ ժողովրդին ողջամիտ մասը պիտի տեսնէ, թէ դաշնակցութիւնը քաջութիւն չունեցաւ զրպարտութիւնը օրինաւոր միջոցով հաստատելու»[1]:

Վերակազմյալները բավական ճիգեր գործադրեցին ճշմարտությունը պարզելու համար: Նույնիսկ դաշնակցության կողմից սպառնալի ատյանի մերժումից հետո էլ նրանք այդ հարցը փակված չէին համարում կուսակցության համար և աշխատում էին պարզել բոլոր մանրամասնությունները: Սակայն կուսակցության շարքերում օրըստօրե ուժեղացող տարաձայնություններն ու ներկուսակցական վեճերը հնարավորություն չտվեցին ընթացք տալու այդ գործին:

Պետք է նշել այն կարևոր հանգամանքը, որ Արփիարյանի հարցում դաշնակցության առաջնորդները տարակարծիք էին: Գառնիկ Մազմանյանը գրում էր. «1900-ին Փարիզեն ժնև եկած էի Պուլկարիա վերադառնալու համար: Հոն մնացի քանի մը օր: Օր մը հանրային պարտեզը Ակնունին հետ նստեր կը խոսէինք: Այն ատենները հրապարակուած էր Արփիարի հարցաքննութիւնները: Հարցուցի Ակնունիին, թէ կը հավատա՞ր այդ հարցաքննություններուն, և թէ իրոք Արփիարը մատնիչ կնկատէ՞: Հստակ բառերով ան հետևյալը պատասխանեց. - «Ես ինքս չեմ հավատար, բայց մեր ընկերները այդպես համոզուեր են»[2]:

1900թ. հոկտեմբերի 29-ի Արփիարյանին ուղղված նամակում Հ.Առաքելյանը գրում էր. «Մի քանի օր առաջ խոսեցի պ.Մալումյանի հետ ձեր մասին և նա շատ ցավեց, որ դուք այդպիսի կարծիք ունեք նրա մասին, թէ նա ձեր դէմ է. նա շատ հա-

---

[1] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 150, յթ. 3:

[2] «Ծիածան», Պէյրութ, 1947, N 1-6, Գ.Մազմանեան. Արփիար Արփիարեանի մատնիչութեան առասպելը, էջ 90:

կառակ է եղել «Դրօշակի» հավելուածի տպման և աշխատել է թույլ չտալ, բայց չէ կարողացել»[1]:

1903թ. մարտի 29-ին Վենետիկից Լեոյին հասցեագրված նամակում Արփիարյանը հետևյալն էր գրում. «Իմ ծանոթ խնդրիս առթիվ ալ կը գրեմ: Պարոն Մալումյանը ինքն ալ Ժնև ս-ն Շահնազարին յայտարարած է ու նամակով ալ գրած է, որ ինք երբեք չի հավատար ըսվածներուն»[2]: Գրեթե նույն կարծիքին էր նաև Միքայել Վարդանյանը, որը Արփիարյանի հարցում իր տարակարծությունն է հայտնում Քրիստափոր Միքայելյանին: 1900թ. Ժնևում «Հայրենիք» թերթի նախկին տնօրեն Հովհ.Շահնազարը ինչակյան և դաշնակցական կուսակցությունների միության հարցով տեսակցում է Քր. Միքայելյանի հետ և միության խնդրին կից առաջարկում է պատվո ատյան կազմել և քննել Արփիարյանի հարցը: Բայց Միքայելյանը մերժել է այդ առաջարկությունը, որովհետև ինչպես գրում էր Վարանդյանը. «դաշնակցութեան առաջնորդի աչքում Արփիարը վերջնական դատապարտեալ էր, որի մասին Քրիստափորը կարծիք էր կազմել «Մեղուակից» և «Դրօշակում» Վռամյանի ձեռքով հրատարակուած ամբաստանագրից հետո»[3]: Վարանդյանն արդարամիտ չի համարում դաշնակցության հետևյալ ձևակերպումը՝ «Արփիար դավաճան է, մահուան պատժի արժանի և ոչ պատվո ատեանի»: - Այստեղ է, որ ես ցավ ունեցա իբրև կրտսեր ու խոնարհ ընկեր ընդհարվելու Քրիստափորի հետ, ինչպես նաև Յուսուփեանի ու Վռամեանի հետ, - գրում է Վարանդյանը[4]: Այդ կապակցությամբ Միքայելյանը Ժնևից մի

---

[1] Գ.ԱՖ, Ա. Արփիարյանի ֆ. N 138, թ.15:

[2] Նույն տեղում, ֆ. N120, թ.70:

[3] «Հայրենիք», Բոստոն, 1924, N 8, Մ.Վարանդեան, Քրիստափոր Միքայելեան, էջ 133:

[4] Նույն տեղում, էջ 134:

երկար նամակ է գրում Փարիզ՝ Վարանդյանին, որտեղ հանդիմանում է վերջինիս այն բանում, որ հեշտությամբ է ընկճվում և հավատում հակառակորդի պատճառաբանություններին: Քրիստափորի նամակից հետո Վարանդյանը եզրակացնում է. «Հնարաւոր է, որ չէր սխալվում Քրիստափորը, որ չէին սխալվում Յուսուփեանը, Վռամեանը և Պոլսո մեր Կ.Կ.-ի մյուս անդամները, հնարավոր է, որ Արփիարը իրոք դավաճան, լրտես, մատնիչ էր., արժանի միայն յեղափոխական վրիժառու գնդակի և անարժան պատվո առեանի... հնարաւորութենէն մինչև իրականութիւնը տարածութիւն կա: Արփիար կարող էր իր անօրինակ հայկական կրքի զորութեամբ այս կամ այն հանցաւոր վրիպումը գործել... Սակայն Յուսուփեանի, Վռամեանի բազմաթիվ վկայութիւններին ու բացատրութիւնները բավականաչափ համոզիչ չէին և դժվար էր միայն նրանց վրա հենուելով հայ սերունդներու առջեւ հավիտենական անարգանքի ենթարկել մի անուանի գրողի ու հասարակական գործչի, առանց գէթ նրա ինքնարդարացման խոսքը լսելու, դժվար էր հայրենավաճառ ու հայրենադավ լրտեսի ու մատնիչի անունը դրոշմել մի մարդու ճակատին որ ամբողջ կեանքը սպասաւորել էր հայրենիքին, արտակարգ եռանդով ու տաղանդով, իբրև գրող ու հրապարակագիր, իբրև աշխատակից «Մշակի» ու այլ թերթերի, իբրև կազմակերպիչ հայրենանուեր ընկերութեանց, դեռ 70-ական թվականներեն, հանդիսանալով թուրքահայ վերածնութեան ու հայկական դատի ամենախանդավառ ռահվիրաներեն մին»[1]: Վարանդյանը բարեբախտություն էր համարում, որ գոնե տարիների անարդարացի թշնամությունից հետո Արփիարյանի ողբերգական սպանությունը չիրագործվեց դաշնակցականների ձեռքով: Վարանդյանը գրում էր նաև, որ հին

---

[1] «Հայրենիք», Բոստոն, 1924, N 8, էջ 136:

հնչակյանները ևս դատապարտեցին Արփիարին որպես Նազըմի լրտեսի. «այդպես ըրին, սակայն Հնչակեան պառակտումէն յետո, երբ Արփիարը այլևս կուսակցական ընկեր չէր, այլ հակառակորդ: Տեղիք կար ուրեմն բացարձակ հավատ չընծայելու «Հնչակի» մեղադրանքների անաչառութեան», - շատ ճիշտ եզրակացնում էր Վարանդյանը[1]: «Իր հոդվածներում Արփիարյանը որոշ մերկացումներ էր արել Կ.Պոլսի հնչակյանների գործունեության մասին: Նրա գրածներն օգտագործելով մայրաքաղաքի ոստիկանապետ Նազըմ բեյը ձերբակալել էր մի քանի հնչակյանների: Սա բավական եղավ, որ «Հնչակը» մատնիչության մեջ մեղադրեր արևմտահայ ականավոր գրողին և իր համախոհներին նշավակեր որպես «նազըմականների», այսինքն՝ թուրք ոստիկանության վարձկանների[2]: Արփիարյանի հարցում սակայն հին հնչակյանների մեջ ևս տարակարծություններ կային: Օրինակ, Ռ.Խանազատը, որը շատ լավ էր ճանաչում Արփիարյանին, իր հիշողություններում գրում էր, որ Արփիարյանի նկատմամբ «կասկածները լոկ կասկածներ էլ մնացին, ես զոնէ ոչ մի դեպք չգիտեմ, որի համար ասեին, թէ դա Արփիարի մատնութեան գործն է»[3]:

Թեև Արփիարյանի մահից հետո նրա դեմ պայքարը վերջացավ, սակայն հետագայում էլ դաշնակցական մամուլում երբեմն լույս էին տեսնում հոդվածներ, ուր շարունակվում էին հարձակումները Արփիարյանի հասցեին:

Այդպես. 1931թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում «Արփիար Արփիարեան» հոդվածով հանդես է գալիս Սիմոն Վրացյանը: Նա Արփիարյանին «մատնիչ» է համարում, չբերե-

---

[1] Նույն տեղում, էջ 135: Տես նաև «Հնչակ», «Լոնդոն», 1896, N 18:

[2] Հովհաննիսյան Ա., «Հնչակյանների կազմավորման գաղափարական արմատները», Պատմա-բանասիրական հանդես, 1968, N 2:

[3] «Մշակ», 1908, N 67, Ռ.Խանզատ «Հիշողութիւններ»:

լով սակայն ոչ մի փաստ, կուսակցության շրջանակներից դուրս որևէ անձի վկայություն: Վրացյանը կրկնում է միայն «Դրօշակի» հին մեղադրանքները[1]:

1932թ. մայիսին նույն ամսագրում հրատարակվում է Մելքոն Կյուրճյանի «Արփիար Արփիարեան» հոդվածը: Հայհոյանքներով լի այդ հոդվածում արտահայտված է հեղինակի ատելությունը Արփիարյանի նկատմամբ: Այստեղ ևս Կյուրճյանը ոչ մի նոր բան չի ասում, կրկնելով հին մեղադրանքները: Թերևս միակ արժեքավորն այն է, որ հեղինակը կամա թե ակամա հաստատում է, որ իր ձեռքում հայտնված Արփիարյանի «հարցաքննութեան ատենագրութիւնը», ոչ թե բնագիրն էր այլ թարգմանությունը: «Խոսակից ծանոթներս ինծի հարցուցին ատետրի մասին ու ես համոզուեցա, որ իմ տեսածս հարցաքննութեան թարգմանութիւնն էր, ոչ թէ իսկական բնագիրը», - գրում էր Կյուրճյանը[2]: Սակայն Վրացյանի ու Կյուրճյանի հոդվածներն անպատասխան չեն մնում. «Անահիտում» հերքումով հանդես է գալիս Ա.Չոպանյանը[3]: Վրացյանի և Կյուրճյանի հոդվածների քննադատությամբ ու Արփիարյանի պաշտպանությամբ հանդես են գալիս Լ.Բաշալյանը Փարիզի «Le Foyer» թերթում և Վահան Թեքեյանը «Ապագայում»[4]:

* * *

Վերակազմյալ հնչակյան կուսակցության ներսում գաղափարական միասնությունը երկար չտևեց: Ազատագրական պայքարի ուղիների ու միջոցների ընտրության հարցում տարաձայնությունները նրա անդամների միջև գնալով խորանում

---

[1] «Հայրենիք», Բոստոն, 1931, N 11, էջ 79-95:

[2] Նույն տեղում, 1932, N 7:

[3] «Անահիտ», Փարիզ, 1931, N 3-4, էջ 175-186:

[4] Շահպազ Ստ., նշվ. աշխ., էջ 362:

էին և ավելի սուր բնույթ էին ընդունում: Վերակազմյալների շարքերում ավելի ու ավելի էր մեծանում պայքարի ահաբեկչական ուղու և զինված ելույթների կողմնակիցների թիվը: Վերակազմյալների Կ. Պոլսի կոմիտեն Ալեքսան Արզույանի գլխավորությամբ նախապատրաստվում է կազմակերպելու սուլթանի սպանությունը: Արփիարյանը կտրականապես դեմ էր այդ պայքարին: Արզույանին գրած իր նամակներում 1898-1900 թվականներին, նա հանգամանորեն ցույց էր տալիս այդ քայլի անդառնալի ծանր հետևանքները արևմտահայության համար: Նա գտնում էր, որ մահափորձը հայոց դեմ է հանելու մահմեդական բազմամիլիոն, խավարամիտ ու մոլեռանդ մասսաներին և տեղիք է տալու համատարած կոտորածների[1]:

1900թ. հունիսի 8-ի Արզույանին հասցեագրված նամակում Արփիարյանը գրում էր. «իմ կարծիքս գիտես: Ինչ որ ալ ըլլան կուսակցական նկատումները ու շահերը, պետք չէ երբեք ազգի շահերը ստորադասել կուսակցական շահերուն»[2]: Կուսակցական յուրաքանչյուր որոշում կամ ձեռնարկում նա դիտարկում էր միայն ազգի ապահովության և օգտակարության տեսանկյունից, որովհետև Արփիարյանի խորին համոզմամբ «կուսակցական շահերուն հակառակող գործ մը կրնանք դարմանել, բայց ինչ որ ազգին կը վնասէ, անդարմանելի է»[3]: Նա հնվատարիմ մնաց կուսակցության Լոնդոնի և Ալեքսանդրիայի համագումարներում ընդունված որոշումներին և պաշտպանում էր համաժողովրդական ապստամբություն կազմակերպելու գաղափարը: Այդ նպատակին էին ծառայում նաև «Մարտի» ու «Նոր կեանքի» հրատարակությունները:

---

[1] ԳԱՖ, Ա. Արփիարյանի ֆ. N 46, թ.3-4:

[2] Նույն տեղում, N 115, թ.115:

[3] Նույն տեղում:

Անհամաձայնության մյուս պատճառը պատրիարքի նկատմամբ վերաբերմունքի հարցն էր, որն արծարծվում էր Արզույանի ու Արփիարյանի միմյանց գրված նամակներում: Պատրիարք Մաղաքիա Օրմանյանի բռնած զգուշավոր ընթացքը դուր չէր գալիս վերակազմյալներին և Կ. Պոլսի կոմիտեն ուզում էր ճնշում գործադրել նրա վրա: Ընդ որում Արզույանը և իր կողմնակիցները փորձում էին դա անել բացեիբաց՝ ձգտելով դրանով ցույց տալ իրենց ուժը: Արփիարյանը, որը նույնպես դժգոհ էր պատրիարքի բռնած ընթացքից, բացատրում էր, որ ճիշտ չէ պատրիարքի հետ ապառնալիքներով խոսելը: Իր տեսակետը նա շարադրում է Ամերիկայի ինչակյան նահանգային վարչությանն ուղղված 1900թ. ապրիլի 12-ի նամակում: Այստեղ նա գրում է, որ ներքուստ ցանկանալով պատրիարքի հրաժարականը, որպես բողոքի մի արտահայտություն ընդդեմ թուրքական բռնությունների, այնուամենայնիվ կուսակցությունը պետք է հեռատես լինի և ձգտի նկատել տալու, որ պատրիարքի բողոքը ոչ թե կուսակցական սպառնալիքի հետևանք է, այլ դա «Նորեն խաբուած հայ ազգի բողոքն է»: Նա ցույց էր տալիս, որ հակառակ դեպքում դա կարող էր ունենալ այն արձագանքը, թե «պատրիարքը զոհ էր ազգի կացութենէ ու միայն յեղափոխական վախի առջև տեղի տուած»[1]: Նա կյանքից վերցված օրինակներով ապացուցում էր, որ թուրքերը հենց այդպես էլ վարվել էին, աշխատելով ամեն ինչ բարդել հեղափոխական ուժերի վրա:

Արփիարյանը դեմ էր նաև կուսակցության շրջանակներում տեղ գտած պատրիարքին հրապարակայնորեն քննադատելու, մերկացնելու, պախարակելու առաջարկներին: Ընդգծելով Օրմանյանի պահպանողական հայացքները, այնուամե-

---

[1] Նույն տեղում, թ.5:

նայնիվ, հանձին նրա, Արփիարյանը տեսնում էր նշանավոր անհատականության և հակված չէր պատրիարքի գործունեությունը ամբողջության մեջ որակելու որպես հակաժողովրդական։

Տարաձայնության մյուս հանգույցը դա դրամի հանգանակության խնդիրն էր։ Իրենց ծրագրերի իրականացման համար կուսակցությունը դրամի խիստ կարիք էր զգում։ 1901թ. հուլիսի 5-ին Ապահին ուղղված Անտոն Ռշտունու նամակում խոսվում է կուսակցության խիստ սուղ դրամական վիճակի մասին[1]։ Սակայն դրամի հանգանակության իրականացման գործում առաջացան լուրջ բարդություններ։ Միշտ չէ, որ այն ընթանում էր հարթ ու խաղաղ։ Երբեմն էլ հավաքված դրամը ծախսվում էր այլնայլ նպատակների համար, որը ժողովրդական մասսաների շրջանում առաջացնում էր զայրույթի արդարացի պոռթկումներ։ Օրինակ, դա երևում է Արփիարյանին հասցեագրված իր բարեկամ ու կուսակից Արշակ Սուրիատի նամակում, ուր խոսելով դրամի հանգանակության գործում թույլ տրված սխալների ու թերությունների մասին՝ հեղինակը գրում է. «ցավալի է ըսել, որ կեղտոտ ու ավազակ անհատներ ալ եղան և անկէ անկէ դրամ շորթեցին»[2]։

Բացի դրանից վերակազմյալների մի մասը Արզույանի գլխավորությամբ հակված էր հարուստներից բռնի ուժով դրամ հավաքելու մտքին, իսկ մյուս մասը դեմ էր դրան։ Արփիարյանը վերջիններիս թվում էր։ Դա պարզորոշ նկատվում է վերոհիշյալ նամակի հետևյալ տողերից. «Անշուշտ, կըմբռնիս, թէ սպառնալիօք դրամ ձեռք բերելու վրա է խնդիրն, որու դուն ալ

[1] ՀԱԱ, Ապահ Պետրոսյանի ֆ.453, ց.1, գ.116, էջ 1, Տե՛ս նաև գործ N 70։
[2] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ., N 502, թ.1։

հակառակած էիր ցույցէն վերջ»[1]: Սակայն տարաձայնությունները զնալով խորանում էին ու սպառնում կուսակցության միասնությանը:

1901թ. սկզբին Արզույանը մեկնեց ԱՄՆ և շուտով Լոնդոն վերադարձավ որպես վերակազմյալ հնչակյան կուսակցության կենտրոնի լիազոր: Լոնդոնում նա սկսեց ճնշում գործադրել Արփիարյանի վրա՝ պարտադրելով «Նոր կեանքում» անցկացնել ազատագրական պայքարի տակտիկայի վերաբերյալ իր տեսակետը: Արփիարյանի շուրջը ստեղծվեց բավական ծանր մթնոլորտ և հանդեսի հրատարակությունը դարձավ անհնարին:

«Նոր կեանքը» Արփիարյանի խմբագրությամբ գործում է մինչև 1901թ. մայիսի 15-ը, որից հետո այն անցնում է վերակազմյալ հնչակյաններ Արզույանի ու նրա համախոհների ձեռքը, որոնց հետ Արփիարյանի գաղափարական տարաձայնությունները ակնհայտ էին: 1901թ. թիվ 10-ից սկսած հանդեսը կտրուկ փոխում է իր բնույթը և դառնում ուժեղ շեշտված մարտական օրգան: Նրա անստորագիր հոդվածներն ուղղվում էին անխտիր հայ ժողովրդի բոլոր խավերին: Հայության մարտական ոգին բարձրացնելու մղումով «Նոր կեանքը» երբեմն դիմում էր ծայրահեղությունների: Օրինակ, «Խոսք և գործ» խիստ հռետեսական հոդվածի հեղինակը ոչ մի լավ բան չի տեսնում հայ ժողովրդի անցյալի մեջ միմիայն «ընդվզումի խոսքը՝ գործը», որը տվյալ դեպքում բաղդատվում է չափ ու սահման չճանաչող, հարատև ու ինքնանպատակ կռվի հետ[2]:

Արփիարյանի հետ հանդեսին դադարում են աշխատակցել Օտյանը, Բաշալյանը, Չոպանյանը, որոնց հեռանալուց

---

[1] Նույն տեղում:

[2] «Նոր կեանք», 1901, N 11, էջ 162-167:

հետո «Նոր կեանքը» կորցնում է իր դեմքը, հեղինակությունը, կորցնում է բաժանորդների մեծ մասին և 1902թ. ի վերջո փակվում է:

1901թ. հունվարի 15-ին Արփիարյանը հրաժարական տվեց կուսակցությունից: Հրաժարականի տեքստը մանրամասնորեն շարադրված է Ամերիկայի հնչակյան նահանգային վարչությանն ուղղված 1901թ. հունվարի 15-ի նամակում, Ընդարձակ այդ նամակը ավարտվում է հետևյալ տողերով. «իմ միակ փափագս է բոլորովին գրականութեան տալ ինքզինքս եւ անոր միջոցով ծառայել թէ կուսակցութեան, թէ ազգին, թէ հեղափոխական դատին»[1]:

Հեռանալով հնչակյան կուսակցությունից Արփիարյանի նյութական կացությունը էլ ավելի վատացավ: Երվանդ Օտյանն իր հուշերում պատմում է Լոնդոնում նրա անմխիթար վիճակի մասին[2]: Օտյանի հրավերով Արփիարյանը մեկնում է Փարիզ: Այստեղ չունենալով ապրուստի որևէ միջոց իրեն հատուկ համառությամբ նա ձեռնամուխ է լինում նոր պարբերականի հիմնելուն: Սակայն Փարիզում դա նրան չի հաջողվում:

1902թ. Արփիարյանը մեկնում է Վենետիկ և հիմնում է «Հայ հանդեսը»: Հանդեսի առաջին համարը լույս տեսավ 1902թ. օգոստոսի 1-ին: Վենետիկից Արփիարյանը նյութեր էր ուղարկում «Մշակին», ինչպես նաև թղթակցում էր Պետերբուրգի «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսին և «Գեղունիին»: «Հայ հանդեսի» էջերում լույս են տեսնում նրա հրապարակախոսական, գրականագիտական հոդվածները: Հանդեսում լույս տեսավ Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակը: Վիպակի հերոս Տեր-Հուսիկի կերպարում ամփոփված է գրողի

---

[1] ԳԱԱԹ, Ա. Արփիարյանի ֆ., N 114, թ.27:

[2] Օտյան Ե., նշվ. աշխ., էջ 171:

հասարակական-քաղաքական հավատամքը: Թերահավատորեն վերաբերվելով տերություններից սպասվող օգնությանը, հայրենասեր քահանան կարևոր է համարում սեփական ուժերին ապավինելու եղանակը և ի վերջո հանգում է ինքնօգնության գաղափարին: Վիպակի հերոսն ըմբոստանում է ոչ միայն սուլթանական բռնապետության այլ նաև նրան հաճոյացող ու ժողովրդի ազատագրական զարթոնքին մեծապես խանգարող ազգային-հետադիմական ուժերի ստրկամիտ քաղաքականության դեմ:

Վենետիկում էլ աղքատության ուրվականը շարունակում էր հետնել Արփիարյանին: Ինչպես «Կարմիր ժամուցը» այնպես էլ իր մյուս գրական ու հրապարակախոսական հոդվածները նա գրեց ամենադժվար պայմաններում: Արփիարյանի վիճակն էլ ավելի ծանրացավ նրանով, որ նա ստիպված էր հոգ տանել նաև իր եղբորորդի Ֆիլիպի մասին, որը նկարչություն էր սովորում Վենետիկում: Ոչ «Հայ հանդեսը» և ոչ էլ նրա թղթակցություններից ստացվող գումարները չեն թեթևացնում նրա վիճակը: Իր վաղեմի բարեկամ Վահան Մալեզյանին գրած նամակում կարդում ենք. «Սիրելի Մալեզեան, վերջին նամակդ առած եմ: Պատասխանին հապաղմանը կը ներես անշուշտ, եթէ գիտնաս, որ երկու ամսէ ի վեր մտաւորական տագնապի մը մէջ եմ, ըսել կուզեմ՝ մտատանջութեան: Պատճառը միշտ նիւթականն է: Դժբախտաբար ահա երրորդ ամիսը մտանք, և տակավին ինծի և ոչ իսկ ֆրանք մը ղրկվեցավ այն գումարեն, որուն կը սպասեի, իբր եղած, վերջացած աշխատութեան փոխարինութիւն: Չեմ գիտեր երբ պիտի կատարուեին ինծի եղած խոստումները, որոնք նվեր չեն, այլ վեց ամսվան աշխատանքի վարձ»[1]: Նյութական կացությունը ստիպում է նրան հրաժար-

[1] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 121, թ.1:

վել մի շարք պլաններից ու առաջարկություններից: Այս առումով ուշագրավ է Համբարձում Առաքելյանին ուղղված իր նամակներից մեկը: Նամակից երևում է, որ Առաքելյանն առաջարկել էր Արփիարյանին գրելու 19-րդ դարի արևմտահայոց պատմությունը, սակայն Արփիարյանը հրաժարվում է, պատճառաբանելով, որ «ինծի նիւթապէս անհնարին է ժամանակ նվիրել այդպիսի աշխատութեան մը»[1]:

1903թ. հունվարի 9-ին Լեռյին հասցեագրված նամակում նա գրում էր. «Քիչ մը ծանր է, որ գրողը մը օրը 15 ժամ անդադար աշխատելով հանդերձ կարող չըլլա գոնէ սենեկի մը վարձքը հայթհայթել»[2]: Վենետիկում Արփիարյանի ապրած կյանքը ամբողջությամբ պատկերացնելու համար անհրաժեշտ է կարդալ նրա հուշատետրը. «Շիրակին» հոդուածը պիտի գրեի. բայց ձեռքս կը դողայ անօթութենէ, ոտքերս կը կտրտին և գլուխս կը դառնայ», - գրում է Արփիարյանը: - Պյուշինթոր, դեկտեմբերի 1: Մառախլապատ առտու մը. բան մը չունինք, ոչ ուտելիք, ոչ դրամ մը, ոչինչ: Ժամը 11-ին Փիլիկը վանքէն եկավ: Հայր Ստեփանեն 20 ֆրանք առեր է, հանձնարարութեամբ, որ վանքէն չիմանան: Դեկտեմբերի 2: Կը շարունակեմ հոդուածս. ձեռք կառնեմ կես ձգած տեղս, - աչքերս կը փակուին անօթութենէս: Սոսկալի բան է երկուքնուս վիճակը»[3]:

Արփիարյանն արդարացի զայրույթով է խոսում Վենետիկի Մխիթարյան միաբանության վանական հայրերի մասին, որոնք ունենալով հնարավորություն ու միջոցներ, այնուամենայնիվ հրաժարվում են օգնել իրեն և նույնիսկ «պատառ հաց մը կլնայեն»[4]: Հուշատետրն ամբողջությամբ հրա-

---

[1] ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆ. N 401, թ.2:

[2] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ. N 120, թ. 1:

[3] «Կաւափնատ», Կ.Պոլիս, 1910, N 41:

[4] Նույն տեղում:

տարակվում է Օտյանի խմբագրությամբ լույս տեսնող Կ.Պոլսի «Կառափնատ» թերթի թիվ 41-ում և 44-ում:

* * *

Դարասկզբին հնչակյան կուսակցության երկու ճյուղերը՝ հին հնչակյաններն ու վերակազմյալները հասկանալով, որ առանձին-առանձին մեծ հաջողությունների չեն կարող հասնել, լուրջ քայլեր կատարեցին նորից միավորվելու համար: Հնչակյանների միության բանակցությունները սկսվում են Լոնդոնում 1901թ. սեպտեմբերին և ավարտվում են 1902թ. մարտին: Իսկ 1902թ. մայիսի 17-ին Բոստոնում տեղի ունեցավ միության ճոխ հանդիսությունը[1]:

Միության պայմանները հանգամանորեն տրված են հին հնչակյանների կուսակցության կենտրոնի մասնաճյուղերին ուղղված 1902թ. ապրիլի 12-ի շրջաբերականում, ըստ որի նորընտիր կենտրոնական վարչությունը կազմված էր 6 հոգուց (երեքական հոգի երկու կողմից): Հայտարարվում է, որ կուսակցության երկու հատվածները պահպանում են իրենց ինքնուրույն ծրագրերը «առանց միմյանց խանգարելու» մինչև նոր համագումարի գումարումը: Կուսակցության մասնաճյուղերը ազատ են իրենց ընտրության մեջ և կարող են ըստ ցանկության հարել այս կամ այն թևին: «Հնչակը» զբաղվելու էր զուտ մարտավարական հարցերով: Շրջաբերականում հայտարարվում էր, որ սոցիալիզմի ուսմունքից չեն հրաժարվում, սակայն «անհրաժեշտաբար ելնելով ստեղծված իրադրությունից սո-

---

[1]Պատմութիւն Ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրեզնո, 1930, էջ 75:

ցիալիստական բոլոր ձգտումները մնում են գաղափարային վիճակի մեջ և նիւթական ու բարոյական բոլոր ուժերը անհրաժեշտօրէն ուղղվում են հայրենիքի ազատագրութեան գործին»[1]:

Հնչակյան միությունը մեծ ոգևորություն առաջացրեց հայ հասարակության բոլոր խավերի մեջ: Բայց կուսակցական ներքին տարաձայնությունները իսպառ չվերացան և շատ չանցած նորից սրվեցին՝ վերածվելով արյունահեղ բախումների, փոխադարձ սպանությունների: Վերաժխնդրության զոհը դարձան կուսակցության նշանավոր գործիչներ Մխո Շահենը, Գաբրեզին Չիթչյանը, Արամ Գրիգորյանը: Արփիար Արփիարյանը չնայած դուրս էր կուսակցությունից, բայց խորապես ազդվելով կատարվածից, կոչ էր անում դադարեցնել եղբայրասպան կռիվները: Վ.Մալեզյանին գրած իր նամակում նա ափսոսանքով ու միաժամանակ զայրույթով էր խոսում վերակազմյալների կողմից հնչակյան Սագունու սպանության մասին[2]:

Հանուն ճշմարտության պետք է նշել, որ միության ձախողման պատճառը ոչ միայն գաղափարական տարաձայնություններն էին, այլև առաջնությունը զիջելու կուսակցության մի շարք ղեկավարների մտավախությունը, մի հանգամանք, որը շատ տխուր հետևանքներ ունեցավ ազատագրական պայքարի գործում:

1902թ. վերջին Արփիարյանը վերստին դատապարտեց վերակազմյալ հնչակյանների բռնած ընթացքը: Շատ չանցած, 1903թ. փետրվարի 15-ին Վենետիկում, Արփիարյանի դեմ կատարվեց երկրորդ մահափորձը: Ծանր վիրավորված Արփիար-

---

1 ՀԱԱ, ֆ.1445, ց.1, գ.40, թ.1-3:

2 ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ., N 121, թ.9:

յանին տեղափոխում են հիվանդանոց, ուր նա բուժվում է շուրջ մեկ ամիս:

Մահափորձի կապակցությամբ նա իտալական ոստիկանությանը տվեց միակ ու անփոփոխ պատասխան՝ ասելով, որ «իրեն դեմ կատարուած մահափորձը հավանորեն Աբդուլ Համիդի կողմէն սարքուած էր»[1]:

1903թ. մարտի 18-ին Օտյանին գրած նամակում Արփիարյանը հայտնում էր. «ինչպես որ արդեն գրած էի Վահեի գործն է: Առաջին տպավորությունս հաստատվեցավ կարգ մը իրողություններէ, որոնք անծանոթ էին ինծի»[2]: Մեկ ուրիշ նամակում էլ նա հայտնում էր, որ քայլեր են կատարվել նաև Լևոն Բաշալյանին սպանելու համար[3]: Ապաքինվելուց հետո իր բարեկամները՝ Օտյանը, Մալեզյանը, Արփիարյանին հրավիրում են Եգիպտոս: Բայց նրա համար որքան հաճելի, այնուամենայնիվ հեշտ բան չէր մեկնելը: «Սիրելի Երվանդ, Եգիպտոս գալու գաղափարը ինծի հաճելի է, բայց կախում ունի «Փիլիկի խնդրեն», վասնզի Փիլիկի խնդիրը մը ունիմ», - գրում էր Արփիարյանը Օտյանին[4]: Այդ նամակից երևում էր նաև, որ բացի իր հովանավորությանը հանձնված եղբորորդի Ֆիլիպի հոգսից, Արփիարյանի համար լուրջ դժվարություն էր նաև դրամ ճարելը: Ինչևէ, իր բարեկամների անմիջական օգնությամբ 1905թ. Արփիարյանը մեկնում է Եգիպտոս և վերջնականապես հաստատվում այնտեղ: Իր հուշերում Վահան Մալեզյանը գրում էր. «Մեր հինավուրց բարեկամութիւնը շեշտուեցաւ, երբ որ Վենետիկեն Գահիրե փոխադրեցինք ինքը և մեր սիրալիր մտերմութեամբը կեանք տվինք իրեն, քանզի խղճալի վիճակի

---

[1] «Կառափնատ», Կ.Պոլիս, 1910, N29:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, N 23:

[4] Նույն տեղում, N 32:

մը մատնուած էր հոն, անճանաչելի ըլլալու աստիճան»[1]: Բայց նույնիսկ հակառակ իր բարեկամների ցանկության ու հորդորների Արփիարյանը Եգիպտոս մեկնեց ոչ թե հեռանալու, մեկուսանալու ազգային կյանքից, այլ ընդհակառակը, իր հետ տարավ նոր հույսեր, նոր նախագծեր, որոնց իրականացումը վիճակված էր «Շիրակ» և «Լուսաբեր» պարբերականներին:

* * *

1905թ. Արփիար Արփիարյանը հաստատվեց Կահիրեում: Այստեղ նա իր վաղեմի բարեկամներ Միքայել Կյուրճյանի, Վահան Թեքեյանի, Երվանդ Օտյանի հետ մասնակցում է «Շիրակ» հանդեսի հրատարակությանը, որին նա աշխատակցում էր դեռ Վենետիկից: Շատ չանցած Արփիարյանը դառնում է «Լուսաբեր» թերթի խմբագիրը: Արփիարյանի համար ծրագրային ուղենիշներ են դառնում «հայրենիքին մշտահեծ ցավերուն» անդրադառնալը, արտասահմանում հայեցի կրթության ու դաստիարակության գործի զարգացումը: Նա հայտարարում էր, որ «Շիրակը» լայն պիտի բանա իր էջերը բոլոր ճշմարիտ և վաւերական գրագետներուն առջև. պիտի ընէ ազգային գրականութիւն մը առանց մտնելու կուսակցական նկատառումներու և մասնավորութեանց մէջ»[2]: Եգիպտոսից նա ակտիվ նամակագրական կապ էր պահում մի խումբ հայ մտավորականների հետ, ուշադիր հետևում տեղի ունեցող քաղաքական անցուդարձին և արձագանքում մամուլի էջերում: Լեոյին ուղղված նամակներից մեկում նա գրում էր. «Սիրելի բարեկամ պ.Լեո «Մշակին» մէջ Կովկասին վերաբերմամբ Ձեր հոդուածները

[1] Մալէզեան Վ., նշվ. աշխ., էջ 278:
[2] «Շիրակ», 1905, N 1, էջ 1-2:

մեծ նշանակութիւն ունեին և անոնցմէ ներշնչուած է, որ «Շիրակին» քաղաքական տեսութիւնները կը գրեմ նորագոյն ուղղութեամբ մը»[1]:

Ստանձնելով «Լուսաբերի» խմբագրությունը Արփիարյանը հանդես է գալիս «Լուսաբերին շուրջը» ընդարձակ առաջնորդողով, ուր պարզաբանում է, որ թերթի ծրագրային նպատակներից մեկն է լինելու եգիպտահայության ուշադրության հրավիրումը արևմտահայության վիճակի վրա. «Դուն ան երկիրը կճանաչնա՞ս, ուր մահուան ծառը կը ծաղկի»[2]:

Հավատարիմ իր որդեգրած սկզբունքին հրապարակախոսը «Լուսաբերում» և «Շիրակում» հրապարակում է արևմտահայերի վիճակի մասին բազմաթիվ տեղեկություններ: Պարբերականների էջերից եգիպտահայությունը տեղեկանում է Վանի, Մուշի, Խարբերդի, Տիգրանակերտի և Արևմտյան Հայաստանի բազմաթիվ այլ վայրերում տեղի ունեցող հայերի հարստահարությունների, նրանց նկատմամբ կիրառվող բռնությունների մասին: Նկարագրելով փաստերը հրապարակախոսը միտում ունի ընդգծելու, որ դրանք պատահական երևույթներ չեն, այլ կրում են սիստեմատիկ բնույթ, իսկ դրանց զգալի մասը կազմակերպվում և հովանավորվում են տեղական իշխանությունների կողմից: «Հողվրտիքը» հոդվածում խոսելով Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնություններ մասին, Արփիարյանը իրավացիորեն նշում էր, որ բազմաբնույթ հալածանքները եղել են նրանց նկատմամբ վարվող քաղաքականության անբաժան ուղեկիցը:

Գնահատելով ազգային կուսակցությունների կատարած դրական մեծ գործը, հրապարակախոսը քննադատում էր

---

[1] ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆ., N 121, թ.3:
[2] «Լուսաբեր», 1905, N 133:

նրանց գործելակերպի սխալները։ Նրանք խորապես մտահոգում էին վերակազմյալ հնչակյան կուսակցության տարբեր խմբավորումների միջև չդադարող բախումները։ Արփիարյանը շատ ճիշտ նշում էր, որ միջազգային հանրությունը տարբեր երկրներում գործող հայ ազգային կուսակցությունների գործելակերպից կարծիք է կազմում հայ ժողովրդի մասին։ Այդ պատճառով նա զգուշացնում էր, որ արտասահմանյան մամուլում հրատարակված «հայոց ծեծկռտուքներուն, սպանութեանց, դավաղրութեանց, ամեն տեսակ խարդախութեանց պատմութիւնները» պատիվ չբերելուց բացի հայոց դեմ են տրամադրում միջազգային հասարակական կարծիքը։ «Պետք է աշխատել, որ զուտ անհատական բնույթ ունեցող հանցանքները, ոճիրները չշատանան արտասահմանի հայոց մեջ, - գտնում էր հրապարակախոսը, - վասնզի միշտ հայ անունն է, որ կարատաւորուի»[1]։ Խոսելով այս հարցի մասին՝ Արփիարյանը գրում էր, որ տարաձայնությունները դեռևս 1896թ. պատճառ դարձան հնչակյանների պառակտմանը, և որ «կրքերն այն ատեն շատ ավելի բորբոքեալ էին, քան թե 1903թ. հնչակեան «միութեան» քայքայումին օրերին։ Բայց երկու կողմն ալ խոհեմութիւն ունեցան անձերու չը դիպչել և մամուլի վեճերու սահմանեն դուրս չելլել»[2]։ Սպանութիւններու և մահափորձերու համար ամենախստալեզու կրնամ գործածել, վասնզի հակառակորդ եղած եմ այդ տեսակ ոճրագործութեանց, - գրում է հրապարակախոսը[3]։ Արփիարյանը հատկապես Ամերիկայի վերակազմյալներին կոչ էր անում խոհեմության և սթափության, ազգի պատիվն ու արժանապատվությունը վտանգի չեն-

---

[1] «Լուսաբեր», 1907, N 334։

[2] Նույն տեղում, N 340։

[3] Նույն տեղում, N 433։

թարկելու համար։ Արփիարյանը խիստ դատապարտեց նաև հայ հարուստներից բռնի միջոցներով դրամ ստանալու գործելակերպը։ Նա ցույց էր տալիս, որ դաշնակցականների կողմից Պալեոզյանի ու Ժամհարյանի, վերակազմյալ հնչակյանների կողմից Գարակյոզյանի, Ունճյանի ու Թավշանճյանի սպանություններից «ազգը, հեղափոխական դատը, Հայաստանը ոչինչ չը շահեցան հայ հարուստներու կոտորումէն»[1]։ Հրապարակախոսը հիշեցնում էր, որ դեռ 1896թ. հնչակյան կուսակցության պատգամավորական ժողովում որոշվեց «բռնի դրամ չպահանջել ոչ-ոքէ»։ Արփիարյանը խոստովանում է, որ չնայած Ավ.Նազարբեկի հետ ունեցած գաղափարական տարաձայնություններին, այս հարցում ինքը համամիտ էր Նազարբեկին, որը «ճիշտ կանխատեսեց այն բոլոր աւռելի չարիքները, որոնք բռնութեամբ դրամ հավաքելէ պիտի ժայթքեին»[2]։ Հրապարակախոսը ճիշտ էր, երբ արտահայտում էր այն միտքը, թե «Ունճեանին ու Թավշանճեանին սպանման նախապատրաստումները դեռ 1901-ին Լոնդոն սկսան տեսնուիլ «Նոր կեանքով»[3]։ Եվ իսկապես, երբ 1901թ. սկզբին Արփիարյանը դուրս մղվեց այդ հանդեսի խմբագրությունից, «Նոր կեանքը» իր սուր ծայրը ուղղեց հայ ունևոր դասակարգի դեմ։ «Լուսաբերի» մի շարք համարներում նա հանդես է գալիս վերակազմյալների «Ձայն հայրենեաց» և «Ազատ բեմ» թերթերի դեմ, որոնք «անդադրում հաւատնութեամբ շարունակում են հարուստներու դեմ մտքերու գրգռման աշխատանքները»[4]։ Սակայն դատապարտելով ազգային կուսակցությունների այդ գործելակերպը, Արփիարյանը միաժամանակ քննադատում էր հայ ունևորներին։ Նա պա-

---

[1] Նույն տեղում, N 402։

[2] Նույն տեղում, N 403։

[3] Նույն տեղում, N 411։

[4] «Լուսաբեր», 1907, N 411։

հանջում էր և խորդորում չանտեսել ազգային խնդիրները, մտահոգվել ազգի ճակատագրով և իրենց նյութական աջակցությունը բերել ազգանպաստ ձեռնարկումներին. «Եվրոպայի, Ամերիկայի, Եգիպտոսի հայ հարուստները տասը տարուան աղետաւոր շրջանին մէջ երբեք չուզեցին իրենց աչքերը չորս կողմերնին շուռ ածել: Հարաբերութեան մէջ չմտան հայ ժողովրդին իրաբուղխ դասակարգին հետ, որմէն կը ժայթքին Ունճեանները, Թավշանճեանները ոչնչացնող իրաբորբոք միամիտները»[1]: Հիշելով արևմտահայ մեծահարուստ Գարակյոզյաններին, Արփիարյանը ցույց է տալիս, որ «իրենց ահագին հարստութեան մէջ Գարակյոզյանները վերին աստիճանի կղպուկ ձեռք մնացեր էին ազգին համար ոնէ նվիրատվութեան մէջ»[2]: Սակայն դրան հակառակ, հրապարակախոսը երախտագիտության խոսք է ասում սպանված Աբիկ Ունճյանի մասին և ընդգծում, որ իր կենդանութեան օրոք այս բարերարը ազգօգուտ մեծ գործ կատարեց»[3]:

Արփիարյանը հրապարակային պայքար էր մղում մասնավորապես վերակազմյալ Արզույանի և նրա խմբի դեմ, որոնց գործունեությունը, ինչպես Օտյանն էր գրում «զզվանք ու զայրույթ առաջ բերած էին բովանդակ հայության մեջ: Արփիար «սովալլուկ գայլերու ոհմակ» անունով մկրտած էր զանոնք իրավամբ ալ չափազանցություն չի կար այս որակումին մէջ»[4]: Հրապարակախոսի համարձակ ելույթները կրկին իր դեմ են հանում երեկվա դավադիրներին, որոնք սպառնում են հաշվեհարդար տեսնել նրա հետ: «Լուսաբերի» մեջ Վահեի ու անոր խմբակին դեմ պայքարը հետզհետե կսաստկանար, -

[1] Նույն տեղում, N 402:
[2] Նույն տեղում, N 433:
[3] Նույն տեղում, N 257:
[4] Օտյան Ե., նշվ. աշխ., էջ 394:

գրում է Օտյանը, - և ամենքս ալ կզգայինք, թե Արփիարի փորձանք մը կպատրաստեր իր գլխուն»[1]:

Արփիարին չներեցին իր նախկին կուսակցական ընկերները ու կազմակերպեցին երրորդ մահափորձը նրա դեմ: Իր հուշերում Վահան Մալեզյանը գրում է. «Շուրջ երեք տարի Գահիրեի մեջ վերակենդանացած, գիշեր-ցերեկ աշխատեցավ, «Լուսաբերի» ու «Շիրակի» խմբագրապետութիւնը ստանձնեց և հազուրդ տալով իր անդիմադրելի կոչումին և ձգտումներուն ուխտեալ դիմակազերծողի մը բուռն հավատքովն շատ մը խնդիրներ հուզեց թաքուն ճշմարտություններ հրապարակելով և դաժան իրողութիւններ երևան հանելով, այնպես որ, թեև իր գաղափարակիցներուն շրջանակը օրէօր լայնացավ ու արտասահմանի մեջ ողջամիտ հայութիւնը իրմով զարթում ունեցավ, սակայն իր երեկի ընկերները, որոնցմէ հեռացած էր, հին ոխերով ոռոգված վրեժխնդրութեան ամենէն արմատական միջոցը նկատեցին, չի կարենալով գաղափարը սպաննել, սպաննել մարդը»[2]:

Արփիար Արփիարյանը սպանվեց 1908թ. փետրվարի 12-ին Կահիրեում[3]: Օտյանի վկայությամբ «Արփիարի սպանուած պահուն քովեն հացի կտոր մը, քանի մը լրագիր և 6-7 դրուշ գտնված էր միայն: Իր ամբողջ հարստությունը»[4]: Արփիարյանի սպանությունը առաջ բերեց համայն հայության խոր վիշտն ու զայրույթը: Փետրվարի 14-ին տեղի ունեցավ հուղարկավորությունը: Մարտի 1-ին Կահիրեի հայկական եկեղեցու բակում տեղի ունեցավ եգիպտահայության բողոքի հուժկու միտինգը, որտեղ ելույթ ունեցան Միհրան Տամատյանը, Վա-

[1] Նույն տեղում:

[2] Մալէզեան Վ., Ճամբուս ծայրը, էջ 279:

[3] Նույն տեղում, էջ 278: Տե՛ս նաև Գ. Ստեփանյանի, նշվ. աշխ., էջ 283:

[4] Օտյան Ե., նշվ. աշխ., էջ 444:

հան Մալեզյանը, Վահան Թեքեյանը, բժիշկ Տաղավարյանը, Տիրան Քելեկյանը, որոնք դատապարտեցին ոճրագործներին և արտահայտելով միտինգի մասնակիցների միահամուռ կամքը՝ իշխանություններից պահանջեցին վճռական միջոցներ ձեռք առնել ու ձերբակալել դավադիրներին։

«Լուսաբերի» 1908թ. փետրվարի 18-ի, 20-ի, 22-ի համարներում ի պաշտպանություն Արփիարի իրենց հոդվածներով հանդես են գալիս Վ. Թեքեյանը, Մ. Նաթանյանը, Ե.Սրմաքեշխանլյանը[1]։ Թերթի մի շարք համարներում հրատարակվում են Արևմտյան Հայաստանի բազմաթիվ վայրերից եկած ցավակցական հեռագրերը։ Հատկապես զգայացունց է Վասպուրականի հայության ցավակցական հեռագիր-հոդվածը, ուր խորին երախտագիտության խոսք է ասվում դավադրաբար սպանված հրապարակախոսի մասին՝ մի մարդու, որն այնքան աշխատեց Վասպուրականի հայոց բարգավաճման համար[2]։ Արփիարյանի սպանությունը մեծ իրարանցում առաջացրեց նաև կովկասահայության մեջ։ «Մշակի» խմբագրությունը առաջինն է արձագանքում՝ ցավակցական հեռագիր ուղարկելով Թիֆլիսից[3]։ «Մշակում» հոդվածներով հանդես են գալիս Հ.Առաքելյանը, Ա.Քալանթարը, Սարուխանը և ուրիշներ, որոնք դատապարտում են եղեռնագործներին և Արփիարի մահը կորուստ համարում ողջ հայ ժողովրդի համար։ Արփիարյանին հատկապես բարձր է գնահատում Հ. Առաքելյանը, գրելով. «Թուրքահայերի ամբողջ գրականության և մամուլի մեջ Արփիարը իբրև հրապարակախոս իր նմանը չունեցավ և չունի մինչև այսօր»։ Առաքելյանը նրան դասում է հայ նշանավոր

---

[1] «Լուսաբեր», 1908, N 484, 485, 486։

[2] Նույն տեղում, N 514։

[3] «Լուսաբեր»-ի հավելված, 1908, 14 փետրվարի։

հրապարակախոսների՝ Ստ.Նազարյանցի, Մ. Նալբանդյանի, Գր.Արծրունու, Րաֆֆու շուրջին[1]: Այդ օրերին «Մշակի» խմբագրությունը բազմաթիվ ցավակցական հեռագրեր է ստանում, որոնք վառ վկայությունն են այն բանի, որ Արփիար Արփիարյանը՝ «Մշակի» Հայկակը, խոր հետք էր թողել ողջ կովկասահայության մեջ իր հրապարակախոսական հոդվածներով: Ապրիլի 14-ին Թիֆլիսում գումարվում է մի խումբ նշանավոր մտավորականների խորհրդակցություն, որի մասնակիցները արտահայտում են «բուռն զայրույթի ու նողկանքի զգացմունք թէ այդ սպանութիւնը կատարող ոճրագործների նկատմամբ և թէ այն բոլոր անձանց ու հասարակական խմբագրութիւններին, որոնք գրչի մշակի և ազատ խոսքի դէմ գործ են դնում բռնի միջոցներ»[2]:

Հին հնչակյաններից Արփիարյանի սպանությունը դատապարտեց Հարություն Ճանկյուլյանը: Նա հերքեց ազգանվեր գործչին վերագրվող բոլոր մեղադրանքները և կատարվածը որակեց որպես «պարզ եղբայրասպանութիւն, որ ինքնին նողկալի և դատապարտելի էր»[3]:

Արփիարի սպանությունը խոր վիշտ է պատճառում նրա վաղեմի և մտերիմ բարեկամ Լևոն Բաշալյանին, որը հոդվածով հանդես է գալիս «Լուսաբերի» ապրիլի 16-ի համարում: Բաշալյանը բարձր է գնահատում Արփիարյանի կատարած գործը և իրավացիորեն նշում, որ «Թիւրքիոյ հայոց հանրային կեանքի ամենէն նշանաւոր արտահայտութիւնները Արփիարի սերտ մասնակցութեան կնիքը կկրեն»[4]:

---

[1] «Մշակ», 1908, N 26:

[2] «Լուսաբեր», 1908, N 502:

[3] Ճանկիւլեան Յ., Յիշատակներ հայկական ճգնաժամէն, Մասն Ա և Բ, Կ. Պոլիս, 1913, էջ 236-237:

[4] «Լուսաբեր», 1908, N 509:

Արփիարյանի դեմ մահափորձ կատարողը ձերբակալվել էր հենց սպանության վայրում, մի արաբ դռնապահի կողմից: Չնայած հանցագործը հետաքննության ժամանակ ներկայանում է Պետրոս Հյուսնյան անունով, սակայն նրա ինքնությունը հենց սկզբից կասկածների տեղիք է տալիս: Ամեն ինչ պարզվում է միայն այն բանից հետո, երբ Հյուսնյանի լուսանկարը տպվում է «Լուսաբերում»: Նրան ճանաչում են ամերիկաբնակ իր հայրենակիցները, որոնց նամակը հրապարակվում է «Արմենիայի» հունիսի 6-ի համարում: Նամակում կարդում ենք, «Տարաձայնություններ շատ եղան նրա ինքնության մասին, մի քանի անուններ իրար հետ շփոթելով, սակայն «Լուսաբերի» 1908 (թիվ 501) -ում այդ «Ճիվաղի» պատկերը հրատարակելով՝ մեր՝ Ուեստ Հոպքընի տիգրանակերտցիներու տարակույսը փարատուեց: Մենք կրցանք ճանչնալ այդ դեմքը՝ Հովսէփ Ալիփունարյանը, Տիգրանակերտի Ալիփունար գիւղէն, 27-28 տարեկան անուս ու անմշակ երիտասարդը»[1]: Հետագա շարադրանքից պարզվում է, որ նա երկար ժամանակ բնակվել է ԱՄՆ-ում, Նյու-Յորքում նպարեղենի խանութ է ունեցել: Թավշանճյանի սպանությունից մեկ ամիս անց, ոստիկանների կողմից խուզարկվում է և նրա խանութը, որի նկուղից հայտնաբերվում են զենքեր, պայթուցիկ նյութեր: Ալիփունարյանը խուսափելով հետապնդումներից՝ փախչում է ԱՄՆ-ից և հետքը կորցնում: Վարձվելով հունական մի նավում, նա հասնում է Եգիպտոս, որտեղ և նրան օգտագործում են Արփիարյանի սպանության կազմակերպիչները՝ Ալեքսան Արզումանը, «Ազատ բեմ» թերթի խմբագիր Լևոն Լարենցը և նույն թերթի տնօրեն Զարեհ Գոչյանը: Հարցաքննություններից մեկում մարդասպանը հայտարարում է, որ Արփիարյանի սպա-

[1] «Արմենիա», 1908, N 43:

նությունը որոշվել էր դեռ ԱՄՆ-ում և այդ որոշումը ամերիկյան «ընտիր բեւռլվերի մը հետ մեկտեղ Եգիպտոս բերեր է եղեր Արտաշես Քեոլեյան անուն անձ մը, որ այժմ մեկնած է Եգիպտոսեն»[1]: Ինքը՝ Հովսեփ Ալիփուրյանը, իր խոստովանությամբ Արփիարյանին չի ճանաչել, «Արփիարեանը զոր սպանեցի, չէի ճանչնար և երբեք չէի տեսած: Ինծի ըսին, որ հայ յեղափոխական գոմիթեններուն գործերը կը քննադատեր և թէ բռնակալին ծախուած էր: Զինքը սպանեցի հայ ազգը ազատելու համար թշնամիէ մը, բայց չէի գիտեր, որ ընդհակառակը, պարկեշտ մարդ մ'էր»[2]:

Արփիարյանի սպանության հանգամանքները լայնորեն լուսաբանեց Մարսելում հրատարակվող «Արմենիան», որի խմբագիր Մ.Փորթուգալյանը դատապարտեց ոճրագործությունը՝ գրելով, որ ազգի նվիրյալների սպանության ցավալի իրողությունները ոչ այլ ինչ են, քան «թուրքի հացին եղ քսել»[3]:

Հանցագործը դատապարտվեց մահվան, որից առաջ խորապես զղջաց: Սպանության կապակցությամբ ձերբակալվել էր նաև Զարեհ Գոչյանը: Նա մեղադրվում էր որպես սպանության մեղսակից: Չնայած հանցագործի այն հայտարարությանը, թե «Գոչեան տվեր է իրեն ըեւռլվերը և 2 ոսկի ալ», այնուամենայնիվ դատավարության ընթացքում նա արդարացվեց և ազատ արձակվեց[4]: «Լուսաբերի» 1908թ. ապրիլի 4-ի համարում զետեղվում է սպանության կազմակերպիչներից մեկի՝

---

[1] Նույն տեղում, N 41:

[2]«Հուշարձան ողբացյալ Ա. Արփիարյանի մահարձանին բացման առթիվ» Կահիրե, 1911, էջ 21: Տե՛ս նաև «Արմենիա», 1908, N 6:

[3]Սարգսյան Ս., «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Երևան, 2014, էջ 132:

[4] «Արմենիա», 1908, N 41:

Ալեքսան Արզույանի լուսանկարը[1]: Վաղինակ Բյուրատը իր հուշերում գրում է, «Արփիարեան Պողոս փաշա Նուպարին մասնաւորապես զգուշացուցած էր փող չտալ բախտախնդիր Վահէ Արզոյանին: Արզոյան տեսնելով, որ Եգիպտոսի հարուստներուն գրած իր սպառնական նամակներով ոչինչ չստացաւ, քանի որ իրեն հուժկու հարուածներով դիմակազերծ ըրած էր Ա.Արփիարեան, ասոր վրա տիգրանակերտցի դատարկապորտի մը ձեռքը 200 դոլլար դնելով կուղարկի Կահիրե, խոստանալով 5000 դոլար տալ, եթէ կարողանա զայն սպանիլ և եթե ձերբակալուի, որպես ամերիկեան քաղաքացի պիտի ազատին»[2]:

Սպանության մյուս կազմակերպիչ Լեոն Լարենցը փախավ Եգիպտոսից: «Լուսաբերի» ապրիլի 9-ի համարում տպվում է Լարենցի լուսանկարը. «Հոս կզետեղենք Լեոն Լարենցի պատկերը: Այս տխրահռչակ ասպետը մեկն է դրամաշորթ խմբակի զործոն անդամներէն և արդեն կառավարութեան վճիռով խարանուելէ վերջ աներևութացած է Եգիպտոսեն, Մելքոնեան եղբայրներուն ըրած իր հանդուգն դիմումեն ետք»[3]:

Ոչ Արզույանը, ոչ Լարենցը չփորձեցին հերքել այս մեղադրանքները մամուլի կամ հրապարակային ելույթների միջոցով: Գառնիկ Մազմանյանը գրում է. «Ժամանակներ անցան և Արփիար սպանուեցավ իր իսկ պատկանած կուսակցության մեկ հատվածին կողմէ, որուն գլխավոր ղեկավարներէն և այդ սպանության վճիռը տվողներեն մին էր Լեոն Լարենցը: Հուրիեթէն տարի մը վերջ ես Ռուսչուքէն Պոլիս գացեր էի: Օր մը

---

[1] «Լուսաբեր», 1908, N 504:

[2] ՀԱԱ, Վաղինակ Բյուրատի ֆ.314, ց.1, գ.3, թ.19:

[3] «Լուսաբեր», 1908, N 506

Պալենց զրատունը հանդիպեցա հիշեալ Լարենցին։ Իմ առաջին խոսքս եղավ իրեն. «պարոն Լարենց, ձեր անունը կապուած է Արփիարի սպանութեան հետ, կը փափաքեյի, որ կամ անկեղծորեն հերքեիք ձեզի եղած վերագրումը և կամ արդարացնեիք այդ ոճիրը, որպեսզի ձեր մասին կազմած հոռի գաղափարս և այդ պատճառով ունեցած զզացումս փոխուի»։ Լարենց կակազեցավ, գույնը առավ, տուավ և ըսաւ, թէ չպիտի պատասխանէ հարցումիս, և սակայն դիտեցի դեմքը, որ այլեկոծ ու խղճահար հոգի մը կը պատկերացնէր»[1]։

[1] «Ծիածան», 1947, N 1-6, էջ 91։

# ՎԵՐՋԱԲԱՆ

Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ իր արժանավոր տեղն ունի նշանավոր գրող, հրապարակախոս, հասարակական և կուսակցական գործիչ Արփիար Արփիարյանը: Ապրելով արևմտահայերի համար բախտորոշ մի ժամանակաշրջանում՝ Արփիարյանն ականատես եղավ սուլթանական բռնություններին, իսկ Բեռլինի կոնգրեսից հետո նա մի շարք առաջադեմ ու հայրենասեր մտավորականների շարքում հասկացավ, որ թուրքական հալածանքների սաստկացումը ոչ թե միջոց էր արևմտահայերի ինքնավարության ձգտումը խափանելու համար, այլ սուլթանի հայակործան ծրագրերի իրականացման սկիզբ: Այդ պայմաններում Արփիարյանը հանգեց այն եզրակացությանը, որ արևմտահայությունն իր ազատագրության համար հույսը պետք է դնի ոչ միայն Եվրոպական երկրների օգնության այլ նաև սեփական ուժերի վրա: Ինքնօգնության գաղափարը կարմիր թելի նման անցնում էր նրա բազմաբեղուն հրապարակախոսության միջով: Նա գտնում էր, որ ազատագրական պայքարում անհրաժեշտ էր ոչ միայն ազգային բոլոր ուժերի համախմբումը, այլև համագործակցությունը սուլթանական տիրապետության տակ գտնվող մյուս ժողովուրդների հետ:

Արփիարյանը ձգտում էր արևմտահայության ազգային խնդիրներով մտահոգել նաև արևելահայությանը, նրանց ևս ներգրավել այդ գործում: «Մշակի» միջոցով նա կենդանի կապ հաստատեց հայության երկու հատվածների միջև: Իր հարուստ, կենդանի, հրատապ խնդիրներ արծարծող հրապարակախոսության շնորհիվ նա գրավեց ժամանակակիցների սերն ու համակրանքը:

Արփիարյանը դարձավ 19-րդ դարի 80-90-ական թ.թ. հայ հրապարակախոսության ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկը, իսկ նրա խմբագրած «Արևելք», «Մասիս», «Հայրենիք», «Մարտ», «Նոր կեանք», «Շիրակ», «Լուսաբեր» պարբերականները դարձան հայ մամուլի առաջադիմական օրգանները:

Չբավարարվելով գրական-հրապարակախոսական գործունեությամբ՝ Արփիարյանը նետվեց հասարակական-քաղաքական պայքարի հորձանուտը: Ընտրվելով Կ.Պոլսի Հայոց ազգային ժողովրդի երեսփոխան՝ Արփիարյանը հանդես եկավ գավառահայության շահերի պաշտպանությամբ: Լինելով առաջադիմության ջերմ պաշտպան՝ նա սուր պայքար ծավալեց կղերա-ամիրայական դասի հետադիմական գաղափարների դեմ, մամուլի էջերում և ազգային ժողովի ամբիոնից խարազանեց պոլսահայ վերնախավի ստրկամտությունն ու հաշտվողականությունը: Քննադատելով հոգևորականության շրջանում տեղ գտած արատավոր երևույթները՝ Արփիարյանը միաժամանակ գիտակցում էր, որ դարերով պետականությունից զրկված ժողովրդի համար եկեղեցին ստանձնել էր նրա թե՛ հոգևոր և թե՛ քաղաքական առաջնորդի դերը և այդ առումով նա կարևորում էր հոգևորականության դերը ազգապահպանության գործում:

Մ. Փորթուգալյանի, Մ. Չերազի և իր մյուս համախոհների հետ Արփիարյանը ձեռնամուխ եղավ «Արարատեան ընկերութեան» ստեղծմանը, որը գավառահայության շրջանում ծավալելով կրթական ազգանվեր գործունեություն, իրական նպատակ էր հետապնդում լուսավորության տարածման միջոցով արթնացնել ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, նրա միջից դուրս մղելու ստրկամտությունը, դաստիարակելու հայ ազգային-ազատագրական պայքարի ոգով:

Արփիարյանը պայքարում էր օտարամոլության դեմ. նա հայեցի դաստիարակության ջերմ պաշտպանն էր:

Արևմտահայ իրականության մեջ նա առաջիններից էր, որ հանդես եկավ անկախ հրապարակախոսության,, պարզ, մաքուր ու հասկանալի ոճի օգտին, պայքարեց արևմտահայ մամուլում տիրապետող փքուռույց ոճի դեմ՝ մերժելով «ազնվաշուք», «վսեմաշուք», «վսեմափայլ» և նման հոռջորջումները:

Արփիարյանը հանդես եկավ նախապետական, հետամնաց կապանքներից գավառահայ կնոջ ազատագրման, նրա կրթության գործի կազմակերպման և խրախուսման օգտին:

«Բայց նույնիսկ գրական-հրապարակագրական բուռն գործունեությունը չէր բավարարում Արփիարյանի անսահման եռանդին: Միայն գրչի ասպարեզը նրա համար այլևս նեղ էր հագուրդ տալու իր ազգային ձգտումներին, - գրում է Հ. Սիմոնյանը,- ուստի նա մխրճվեց քաղաքականության մեջ՝ դառնալով հնչակյան շարժումների աչքի ընկնող գործիչներից մեկը Կ.Պոլսում»[1]: Ազգային-ազատագրական պայքարում նա մերժեց ահաբեկչության և փոքր զինյալ խմբերով գործելու մեթոդները՝ գտնելով, որ օգուտ չտալուց բացի նման գործելակերպը ավելի էր ծանրացնում արևմտահայության վիճակը, նոր կոտորածների առիթ տալիս: Արփիարյանը համոզված էր, որ արևմտահայության ազատագրական պայքարի հաջողության գրավականը համընդհանուր ժողովրդական ապստամբության մեջ է: Նա չընդունեց նաև դասակարգային պայքարի տեսությունը՝ գտնելով, որ հայ ժողովրդի ուժերը ջլատելուց բացի այն ոչ մի լավ բանի չի հանգեցնի: Հայ ժողովրդի փրկությունը, նրա ապագան Արփիարյանը տեսնում էր ազգային միանական մշակված ծրագրի շուրջ, նրա բոլոր խավերի՝ «մտաւորա-

---

[1] Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 272:

կան, յեղափոխական և դրամական ուժերուն միաբանութեան մէջ»[1]: Նա լավատես էր հայութեան ապագայի նկատմամբ և երանի էր տալիս «վաղուա Հայաստանի ապրողներին»[2]:

Ապրելով նյութական ծանր պայմաններում՝ նա անձնական ոչինչ չակնկալեց և միշտ մնաց ազնիվ ու անկաշառ: «Իբրև մարդ, իբրև ազգանվեր հայ, իբրև գրագետ և գործիչ, Արփիարեան որքան բարձր այնքան ալ բարդ էր,- գրում էր Վահան Մալեզյանը: - Իր փոթորկալից կեանքը և իր արդիւնաշատ գործը ունեցան գուցէ թերութիւններ, բայց կարելի չէ չի հիանալ այդ անվեհեր հայուն վրա, որ իր կեանքին վերջին տարիներուն երկու սուրին մեջ ապրեցավ,- լռե՞լ թէ գրել, քանզի լավ գիտեր թէ իր գրիչը պիտի փութացներ իր մահը»[3]:

Անդրադառնալով նշանավոր հրապարակախոսի կյանքի վերջին ամիսների գործունեությանը, Հ. Սիմոնյանը գրում է. «Արփիարյանը մոլեգին նվիրումով հրապարակ հանեց բազմաթիվ հոդվածներ, որոնք ընթերցողին զարմացնում էին դրանց հեղինակի մտքի խորությամբ, քաղաքական բարդ երևույթների վերլուծության և սթափ գնահատման տաղանդով: Նա ճշգրտությամբ կռահում էր դեպքերի հետագա զարգացման ընթացքը և զգուշացնում գալիք ահավոր վտանգներից»[4]:

Ընդհանուր նպատակի շուրջ ազգային բոլոր ուժերի համախմբման և համերաշխության, հասարակության ներսում արատավոր երևույթների մերժման և դրանց դեմ վճռական պայքարի անհրաժեշտության, Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ տերությունների վարած քաղաքականության վե-

---

[1] «Լուսաբեր», Կահիրե, 1905, N 147:

[2] Նույն տեղում:

[3] Մալեզեան Վ., նշվ. աշխ., էջ 280:

[4] Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 275

ռաքերյալ Արփիարյանի տեսակետներն իրենց հրատապու-
թյունը չեն կորցրել նաև մեր օրերում:

Դժվարին եղավ նրա անցած ուղին. լի զրկանքներով ու անարդար մեղադրանքներով: Արփիարյանի գործունեության մեջ եղան թե՛ վերելքի թե՛ անկման պահեր, սակայն նա ոչ միայն դիմացավ դաժան փորձություններին, այլև արհամարհելով նյութական ու բարոյական հարվածները, ստեղծեց արժեքավոր ու մնայուն գրական ստեղծագործություններ և խոր հետք թողեց հայ հրապարակախոսության ու ազատագրական գաղափարախոսության մեջ:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1\. Սկզբնաղբյուրներ

Ա) *Արխիվային նյութեր*

1.1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), Ապահ Պետրոսյանի ֆոնդ. 453, ցուցակ 1, գործ 6, 7, 18, 53, 70, 116, 230:
1.2. ՀԱԱ, Վաղինակ Բյուրատի ֆոնդ. 314, ցուցակ 1, գործ 3:
1.3. ՀԱԱ, Հայկական Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան Կուսակցության փաստաթղթերի հավաքածու 1456, ցուցակ 2, գործ 330:
1.4. ՀԱԱ, հավաքածու 1456, ցուցակ 1, գործ 25, 33, 35, 40:
1.5.Ե. Չարենցի անվան գրկանության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) արխիվ: Մ. Արփիարյանի ֆոնդ N 23, 24, 25, 46, 51, 67, 71, 114, 115, 120, 121, 138, 150, 167, 168, 376, 378, 502, 874:
1.6. Հ. Առաքելյանի ֆոնդ N 394, 401, 407, 414:
1.7. Պ. Տեփոյանի ֆոնդ, գործ 2:

Բ) *Տպագիր սկզբնաղբյուրներ*

1.8. Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820- 1920), Երևան, 1982:
1.9. Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի ատենագրութիւնները, 1884, Ե նիստ, 1885, Է նիստ, 1889 Ե նիստ, 1890 Գ նիստ, 1890 ԺԴ նիստ, 1891 Բ նիստ:
1.10. Տեղեկագիր Արարատեան ընկերութեան, Կ. Պոլիս, 1878-1879:
1.11. Տեղեկագիր Արարատեան ընկերութեան, Կ. Պոլիս, 1879:

1.12. Տեղեկագիր Միացեալ ընկերութեանց հայոց, Կ. Պոլիս, 1880-1882:
1.13. Տեղեկագիր Միացեալ ընկերութեանց հայոց, Կ. Պոլիս, 1882-1883:

## 2. Աշխատություններ

2.1. Ալպոյաճեան Ա., Գրիգոր Զօհրապ, Կ. Պոլիս, 1919:
2.2. Ալպոյաճեան Ա., Մինաս Չերազ, Կահիրե, 1927:
2.3. Ասատուր Հ., Դիմաստուեր, Կ. Պոլիս, 1921:
2.4. Արփիարյան Ա., Երկեր, Երևան, 1987:
2.5. Արփիարեան Ա., ժամանակակից պատմութեան էջեր, Բոստոն, 1979:
2.6. Արծրունի Գ., Թուրքաց հայերի տնտեսական դրութիւնը, Թիֆլիս, 1894:
2.7. Գևորգյան Ս., Հայ ազգային-ազատագրական պայքարի խնդիրները Րաֆֆու հրապարակախոսությունում, Երևան, 1987:
2.8. Ղալլաքյան Կ., Արշակ Չոպանյան, Երևան, 1987:
2.9. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947:
2.10. Երեմեան Ս., Ազգային դեմքեր, գրագետ հայեր, Վենետիկ, 1913:
2.11. Զոհրապ Գ., Ծանոթ դեմքեր ու պատմվածքներ, Փարիզ, 1932:
2.12. Լեո, Գրիգոր Արծրունի, հատոր 2, Թիֆլիս, 1903:
2.13. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատոր Ա, Երևան 1994:
2.14. Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Երևան, 1989:
2.15. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Երևան, 1980:

2.16. Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց, Երևան, 1979:
2.17. Հակոբյան Ս., Արփիար Արփիարյան, Վիեննա, 1922:
2.18. Հայրապետյան Ս., Հրանտ Ասատուր, Լոս Անջելես, 1979:
2.19. Հայ ժողովրդի պատմություն, հատոր 6, ԳԱ հրատ. Երևան, 1981:
2.20. Հայոց պատմություն, հատոր III, գիրք առաջին, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2010:
2.21. Հայ նոր գրականության պատմություն, հատոր 4, Երևան, 1972:
2.22. Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան, 1965:
2.23. Համբարյան Ս., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990:
2.24. Հիսնամեակ սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան, Փրովիդենս (ԱՄՆ), 1938:
2.25. Յուշարձան ողբացեալ Արփիար Արփիարեանի մահարձանին բացման առթիվ, Կահիրե, 1911:
2.26. Ճանկիւլեան Յ., Յիշատակներ հայկական ճգնաժամէն, Մաս Ա և Բ, Կ. Պոլիս, 1913:
2.27. Մալէզեան Վ., Ճամբու ծայրը, հատոր Ա. , Փարիզ, 1954:
2.28. Մանուկյան Ս., Լևոն Բաշալյան, Երևան, 1969:
2.29. Մարգարյան Հ., Տիգրան Կամսարական, Երևան, 1964:
2.30. Մուրադյան Լ., Արփիար Արփիարյան, կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1991:
2.31. Շահպազ Ստ., Արփիար Արփիարյան, Պեյրութ, 1988:
2.32. Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրեզնո, 1930:
2.33. Պատմութիւն սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան, հտ.1, Պեյրութ, 1962:

2.34. Սարգսյան Ս., Արմենիա պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Երևան, 2014:
2.35. Սիմոնյան Հրաչիկ, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3-րդ, Երևան, 2009:
2.36. Ստեփանյան Գ., Արփիար Արփիարյան, Երևան, 1955:
2.37. Վարանդյան Մ., Հայ հեղափոխական դաշնակցության պատմություն, Երևան, 1992:
2.38. Վարդիվառեան Յակոբ, Մեծ երազի ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն ռամկավար ազատական կուսակցութեան, Բ հատոր, Նիւ Ճըրզի, 2016:
2.39. Տեփոյեան Պ. Միհրան Տամատեան, Պեյրութ, 1964:
2.40. Օտյան Ե., Երկերի ժողովածու, հատոր 4, Երևան, 1962:

3. Պարբերական մամուլ

Ա) *Ամսագրեր*

3.1. «Անահիտ», Փարիզ, 1901, N 2, 1905, N 12, 1906, N 345, 1931, N 3-4:
3.2. «Ծիածան», Բեյրութ, 1947, հ. 1-6:
3.3. «Մասիս», Կ. Պոլիս, 1884, N 3734, 1887, 3858, 3866, 3867, 3868, 3869, 3870, 3875, 1888, N 3919, 1889, N 3959, 1890, N 3934, 3937, 3941, 3943:
3.4. «Նոր կեանք», Լոնդոն.
1898, N 1, 2, 3, 4, 6, 8, 10, 12, 14, 15, 16, 18, 20
1899, N 4, 5, 9, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 22,
1900, N 2, 4, 6,10, 11, 12, 14, 16, 18, 20, 21, 22,
1901, N 9, 11:
3.5. «Հայրենիք», Բոստոն, 1924, N 8, 1931, N 11, 1932, N 7:

3.6. «Շիրակ», Կահիրե, 1905, N 1, 4, 5, 7, 140, 147:
3.7. Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1968. N2:

Բ) *Թերթեր*

3.8. «Արևելք», Կ. Պոլիս,
1884, N 3, 39, 128, 129, 139, 159, 166, 170, 176, 219, 239,
1885, N 305, 1891, N 2092:
3.9. «Դրօշակ», Թիֆլիս, 1895, N13, 1900, N 79:
«Դրօշակի», հավելված, 1899, 15 ապրիլի
1899, 15 դեկտեմբերի:
3.10. «Զարթօնք», Բեյրութ, 1971, N80
3.11. «Լուսաբեր», Կահիրե,
1905, N 134, 136, 137, 138, 143, 144, 149, 164,
1906, N 171, 172, 175, 176, 177, 236, 244, 295, 299, 303, 310:
1907, N 257, 322, 325, 330, 331, 334, 340, 352, 372, 380, 402, 403, 411, 433, 438, 443, 454, 458:
1908, N 473, 476, 478, 484, 485, 486, 502, 504, 506, 509, 514:
«Լուսաբերի», հավելված, 1908, 14 փետրվարի:
3.12. «Կառափնատ», Կ. Պոլիս, 1910, N 29, 32, 33, 41:
3.13. «Հայրենիք», Կ. Պոլիս,
1891, N1, 40, 57, 60, 83, 101, 146, 166:
1892, N121, 191, 231, 244, 261, 267, 272, 273, 286, 298, 306, 307, 325:
1893 N 355, 446, 557:
1894 N 758, 759, 917, 938:
3.14. «Հնչակ», Լոնդոն, 1896, N 18:
3.15. «Մարտ», Լոնդոն,
1897, N 6, 7, 9:
1900, N 24, 25, 26:

3.16. «Մշակ», Թիֆլիս,

1878, N 147, 193, 196, 206:

1879, N, 26, 44, 70, 77, 81, 97, 98, 102:

1880, N 7, 28, 51, 60, 122, 135, 158, 178:

1881, N 27, 33, 109, 117, 177, 205, 234, 243:

1882, N 46, 59, 69, 154, 163, 168:

1983, N 15, 30, 63, 68, 80, 110, 129:

1984, N 8, 1886, h. 44, 1888, h. 31, 1889, h. 19, 176:

1908, N 26, 31, 33, 35, 36, 44, 50, 57, 67:

3.17. «Արմենիա» Մարսել, 1908, թիվ 6, 41, 43:

GEGHAM HOVHANNISYAN

# ARPIAR ARPIARIAN: HIS PUBLIC-POLITICAL VIEWS AND ACTIVITIES

Summary

Famous writer, orator, public and party figure Arpiar Arpiarian has a worthy place in the history of Western Armenians national-liberation movement. Living in a fatal time for Western Armenians, Arpiarian witnessed the sultanic violence, and after the Berlin congress, among a number of progressive and patriotic intellectuals, he realized that the intensification of Turkish persecution was not a means of preventing western Armenians from seeking autonomy, but the beginning of implementation of the sultan's Armenian-destructive program. Under these conditions, Arpiarian came to the conclusion that for their liberation Western Armenians should put their hopes not only on the aid of European countries but also on their own strength. The idea of self-help, like a red thread, passed through his multicolored orations.

Arpiarian sought to concern Eastern Armenians with the Western Armenian problems and to involve them in that process too. Through "Mshak", he established a live connection between the two parts of Armenians. Due to rich, vibrant, urgent problems discussed in his orations, he captured the love and sympathy of the contemporaries.

Arpiarian became one of the most prominent representatives of Armenian oration of the 80s and 90s of the 19th century and his edited periodicals "Arevelq" ("The East"), "Masis", "Hayreniq"

("Fatherland"), "Mart" ("Battle"), "Nor kyanq" ("New Life"), "Shirak" and "Lusaber", became the progressive organs of the Armenian press.

Not satisfied with literary-publicist activity, Arpiarian was thrown into a whirlpool of public-political struggle. Electing as the deputy of the Armenian National Assembly of Constantinople, Arpiarian acted in defense of the provincial Armenians' interests. Being a vigorous advocate of advancement, he fiercely struggled against retrospective ideas, on the press pages and from the tribune of the National Assembly he scourged Constantinople Armenian elites' servility and spirit of compromise.

Criticizing the vicious phenomena in the clergy, at the same time, Arpiarian realised that for the people deprived of the statehood for centuries, the church had assumed the role of both its spiritual and political leader and in that sense he attached importance to the role of clergy in the preservation of national identity.

Arpiarian together with M. Portugalyan, M. Cheraz and his other supporters betook the creation of the "Araratian Company", which promoting educational patriotic activities among provincial Armenians, pursued a real purpose, through the spread of enlightenment to awaken the national self-consciousness of the people, to remove the slavery from them, to educate the spirit of the Armenian national liberation struggle.

Arpiarian was fighting against foreignism, he was a warm protector of Armenian upbringing.

Arpiarian spoke in favor of liberation of provincial Armenian woman from patriarchal, backward ties and the organization and promotion of her education.

In the national-liberation struggle, he denied the methods of terrorism and the use of small armed groups, considering that,

besides not benefiting, such working style was more aggravating the state of the Western Armenians giving rise to new massacres.

Arpiarian was convinced that the pledge of success of the Western Armenians liberation struggle was in the universal democratic rebellion. He also did not accept the theory of class struggle, finding that besides ruining the forces of the Armenian people, it would not lead to anything good.

Arpiarian's views on the consolidation and solidarity of all national forces around the common goal, the rejection of vicious phenomena within the society and the need for the decisive struggle against them, the policy of the powers over Armenia and the Armenian people have not lost their urgency in our days too.

His past path was difficult, full of deprivation and injustice. There were moments of both rise and decline in Arpiarian's activities, but he not only endured severe trials, but also ignoring material and moral blows, created valuable and long-lasting literary works and left a deep trace in Armenian oration and liberation ideology.

ГЕГАМ ОГАННИСЯН

# АРПИАР АРПИАРЯН: ОБЩЕСТВЕННО ПОЛИТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ И ДЕЯТЕЛЬНОСТЬ

Резюме

В истории западно-армянского национально-освободительного движения своё достойное место занимает известный писатель, публицист, общественный и партийный деятель Арпиар Арпиарян. Проживав в эпоху, роковую для западных армян, Арпиарян был очевидцем султанских насилий, а после берлинского конгресса среди передовой и патриотической интеллигенции понял, что главная цель усиления турецких угнетений было не препятсвие стремлению самоуправления западных армян, а началом осуществления планов султана, истребляющих армян. В таких обстоятельствах Арпиарян пришёл к выводу, что западные армяне для освобождения должны полагаться не только на помощь европейских стран, а также на свои собственные силы. Идея самопомощи, как красная нить, проходила через его плодотворную публицистику.

Арпиарян стремился национальными проблемами западных армян озабочивать и восточных армян, их тоже вовлекать в это дело. С помощью «Мшака» он установил живое общение между двумя частями армянского народа. Благодаря богатой, отображающей реальные и актуальные проблемы публицистике, он завоевал любовь и симпатию современников.

Арпиарян стал одним из самых известных представителей армянской публицистики 80-90-ых годов 19-ого века, а газеты

«Аревелк», «Масис», «Айреник», «Март», «Нор кйанк», «Ширак», «Лусабер», возглавленные им, стали передовыми органами армянской прессы.

Не удовлетворяясь литературно-публицистической деятельностью, Арпиарян вступил в общественно-политическую борьбу. Выбравшись как депутат западноармянского национального собрания в Константинополе, Арпиарян выступил защитой интересов провинциальных армян. Будучи истенным защитником прогресса, активно боролся против регрессивных идей, на страницах газет и с трибуны национального собрания критиковал раболепство и примиренчество армянской верхушки Константинополя. Критикуя порочные явления среди духовенства, Арпиарян в то же время осознавал, что для народа, веками лишенного государственности, церковь брала на себя роль и духовной, и политической главы, и в связи с этим он подчеркнул важную роль духовенства в сохранении нации.

С М.Португаляном, М.Черазом и другими единомышленниками, Арпиарян предпринял создание «Араратского общества», которое осуществляя образовательную патриотическую деятельность среди провинциальных армян, преследовал цель с помощью распространения просвещения пробудить национальное самосознание народа, вычеркнуть раболепство и воспитать духом армянской национально-освободительной борьбы.

Арпиарян выступал за освобождение провинциальной женщины от старых, отсталых взглядов, за организацию и вдохновению её воспитания.

В национально-освободительной борьбе он отвергал методы террора и действия маленькими вооруженными группами, считая, что такой подход не только не приносил

пользу, но и всё ухудшал состояние западных армян, давал повод для новой резни. Арпиарян был уверен, что залог успеха освободительной борьбы западных армян состоит во всенародном восстании. Также он не принимал теорию классовой борьбы, считая, что кроме обессиления армянского народа не приведет к чему-то хорошему.

Взгляды Арпиаряна на объединение и солидарность всенародных сил вокруг общей цели, на отвергание порочных явлений общества и необходимость решительной борьбы против них, политику государств по отношению Армении и армянского народа актуальны и в наши дни.

Прошёл он трудный путь, полный лишениями и несправедливыми обвинениями. В деятельности Арпиаряна были и взлёты, и падения, но он не только преодолел жестокие испытания, а игнорируя материальные и моральные удары, создал ценные литературные произведения и оставил глубокий след в армянской публицистике и освободительной идеологии.

# ՀԱՎԵԼՎԱԾ

# Շիրակ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

Բ. ՏԱՐԻ — 1 ՕԳՈՍՏՈՍ 1907 — ԹԻՒ Ը



ԳՐԱԴԱՐԱՆ
1921—1922
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ


## ՔԷՕՍԱՆ

(ՏԱԽԱԳՂԱՆԱՑ ՍԻՐԵՆ)

Ա.

Է ... 1896 Հոկտեմբերի 20ին ... [illegible]

[illegible]

# Ծաղիկ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱԿԱՆ
ԿԻՍԱՄՍԵԱՅ

Բ. ՏԱՐԻ — 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907 — ԹԻՒ 9


[illegible] ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐ[illegible] 7XI—1922 [illegible]

2900

# ՀԱՅՐԻԿ

Ա

[illegible]

[illegible] Հայրիկը [illegible] Հայրիկ [illegible]

[illegible] Հայրիկ [illegible]

[illegible]

# ՇԻՐԱԿ



ԱՅՍ ԹԻՒԻՆ ԱՇԽԱՏԱԿՑԱԾ ԵՆ

Մ. ԻԹ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ — * * * — Ա. ԱՐՓԻ-ԱՐԵԱՆ — ԱՏՐՈՒՇԱՆ — ՀՐԱԶԴԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ-ՏՆՕՐԷՆՔ
ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ
ՄԻՔԱՅԷԼ ԿԻՒՐՃԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ
ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ | 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ | ԹԻՒ 9

1907
ԿԱՀԻՐԷ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԻՍ (Վերամարտ, Վարդանիս, Եղիշեապատ) . . . ՄԻՔ. ԵԼԱԹԱԼԵԱՆ
ՄԻԱԲԹԵԱՆ ՍԵՊՏՈՒՆԸ . . . . . * * *
ԴԷՊԻ ՀԱՄՈՍՓՈՎՈՒ . . . . . Ա. Ա.
ՓՈՒՐԵՐԸ . . . . . ԱՏՐՊԵՏԵԱՆ
ՀՈՎՎԸՏԻԿԸ . . . . . ՀՐԱՉԴԱՆ
ՆՈՐ ԹԵՐԹ ՄԸ . . . . . Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

## ԱՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Անցեալներէն ի վեր «Շիրակի» խմբագրութիւնը ստացած է բազմաթիւ գրքեր, որոնց վրայ խօսելու առիթը պիտի ունենանք։ Այդ նոր հրատարակութիւններէն հետեւեալները կը յիշատակենք.

ԱՐՏԱՇԻՐ ԲԱԲԱՅԱՆ — «Կարնավալ» — Գաղղ. բնագրէն թարգմանեց Տրդ. Թիրեաքեան. Բարիզ.

Հ. Ա. ԵՓՐԻԿԵԱՆ — «Բնաշխարհիկ Բառարան» — Բ. Հատոր. Պատկերազարդ. Վենետիկ.

Հ. ԱԹԱՆԱՍ Վ. ՏԻՐՈՅԵԱՆ — «Համադրութիւն եւ Համագայրին գրութեան նոր ձեւ մը». Վենետիկ.

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ — «Միքայէլ Պէշիկթաշլեան, իր կեանքը և գործերը». Բարիզ.

ԱՐԱՆՁԱՐ — «Փրկիչներ». Թատերախաղ. Աղեքսանդրիա.

ՄԵԹՐՕ — «Մտահրճնքը Բանաստեղծութիւն».

ԱՍՕ — «Կարմիր օրեր». Նիւ-Եօրք.

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ — «Շամբիներ». Պոսթըն.

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ — «Պատանեկան յոյզեր». Պոսթըն.

ՏՐԹ. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ — «Մանրէաբ». Կահիրէ.

ԴՈԿ. ԱՐԹԻՆԵԱՆ — «Տունկերը և անոնց հայերէն անունները». Բարիզ.

Զ. Գ. Մ. — «Հին օրեր». Կ. Պոլիս.

[illegible]

ակցումը հետզհետէ մինչեւ իսկ մեր գործակցութիւնը.

Յեղափոխական կոմիտէներու մէջ առաջին անգամ ըլլալով Երիտասարդ Թուրքերը Հայոց ազգային դիմում ըրին։ Մուրատ պէյին հրաւէրը կ'ընէր մեզի մօտենալ իր նախորդ խօսքերը։ Այնպէս մը որ ալ ըլլալ եւ այնպէս Երիտասարդ Թուրքերուն հետ ընկերութեան մեր վրայ շատ փափկանկատութեան պարտաւորութիւն կը դնէր։ Մեծ զգուշաւորութեամբ պէտք խօսէինք Թուրքերը իրենց անձնասիրութեան մէջ չվիրաւորելու համար։

Երիտասարդ Թուրքերուն հետ մեր յարաբերութեանց հետեւողականութիւնը ընելու համար Հայկ ստանձնեցաւ այս ընկերներն ալ մեզ լինելով ժամանակին.

Պարզ ըսելու համար, 1896էն, այս խնդիրը նկատառութեան առնուեցաւ։ Ռիզա պէյ Ֆրանսերէն նամակով մը կը պարզէր Երիտասարդ Թուրքերուն առաջարկները, որոնք մեր միջոցաւ գործակցութեան ծրագիրը պէտք կազմէին։ Ահմետ ժամանակ գրած էր նաեւ Հայերէն առաջին անգամ բայց Թուրքերէն լեզուով խնդրագիր մը ընդունած ազգ. այդ զգացում մը վրայ։

Իսկական կուսակցութեանը իր նամակովը կը պարզէր Միջհատական Սահմանադրութեան գաղափարը, որ երէ մենք ընդունէինք քանի մը, Ռիզա պէյ անձամբ լինելու պէտք չէր ժողովրդականութեան քանակցութիւններուն համար։ Մենք առկայծ այդ առաջարկներուն ոչ հասարակական, ոչ մերժողական պատասխան մը տալ պատշաճ։ Երիտասարդ Թուրքերուն հետ միասին առանձնական կարգութեան հարցութիւնը հիմնովին քննել կրնալ ծրագիր մը պատրաստել աւելի նպատակայարմար համարեցինք։ Եւ մեր այս համոզումները ընդարձակօրէն բացատրելու համար Հայկ ստանձնեցաւ մեկնիլ անձամբ Բարիզ երթալ։ Այս պաշտօնը յանձնուեցաւ կեդրոնին անդամներէն Գ. Սուրէն Սուրէնեանին, որ յաջորդ օրը իսկ Բարիզ գնաց, եւ Ռիզա պէյին ու ընկերներուն հետ տեսակցելէ յետոյ երեք օրէն վերադարձաւ։

Նոյն օրերը ներքին խնդիրներ ծագելով, այլ եւս մոռցուեցաւ Երիտասարդ Թուրքերուն հետ յարաբերութեանց գործը։

* * *

Եր 1896 յունիսին Բարիզ վերադարձայ, տեսայ թէ Ֆրանսական լրագիրներու մէջ այլ մեծ յառաջդիմութիւն ըրած է Հայ եւ Թուրք համաձայնութեան մը գաղափարը, յառաջ գալով Գ. Պիլեմանսի պաշտպանութեամբ։ Այդ միջոցին Ռիզա պէյ անցած էր Լոնտոն, ուր Անգլիոյ քաղաքական անձնաւորութեանց աջակցութիւնը խնդրած էր Երիտասարդ-Թուրքերու գործին։ Իրեն, կարծեմ, թերթերուն տուած էր Հայոց հետ համաձայնիլ. վասն

զի վերադարձին Զօպանեանի հետ տեսակցութեամբ մը փափաքեցաւ մեզի հետ բանակցութեանց վերականգնման։ Զօպանեան այս առաջարկը ինծի հաղորդեց։ Օգտուելով մեր ընդհանուր ժողովը պէտք գումարուէր Լոնտոն, ուստի Երիտասարդ Թուրքերու հետ համաձայնութեան մը) ծրագիր մը կրնայինք պատրաստել եւ ներկայացնել ժողովին։ Պատգամաւորներէն միայն Գ. Աշոտեան Լոնտոն կը գտնուէր այդ ժամանակ. իսկ ես ինքնիս Բարիզ գալ, եւ եկայ։

Զօպանեանի միջնորդութեամբ գումարում մը կազմակերպուեցաւ, որուն ներկայ կը գտնուէին մեր կուսակցութեան աւագագոյն ներկայացուցիչները եւս։

Օգոստոսի սկիզբը մենք երեք առանձին ժամադրավայրը գտնուեցանք։ Մինչ կոզմէն եկաւ նաեւ Մուրատ պէյ, որուն ծանօթացանք Գ. Աշոտեանի միջոցաւ։ Միւզանջի խորհուրդին հետ ըսել ըմբռնած էինք։ Մեկնումի մէկ չար գէշ գաղափար մը կազմեցի այդ հեղինակը հրապարակագրին ընկերութեան հոգին վրայ։ Խօսակցութեան մը պահուն հեռանալ յայտարարութիւնը ըրաւ իր ընկերակիցներուն համար.

— Անոնք թէ՛ եւ. Բեն կը հասկնան քաղաքական խնդիրներէ եւ վարչական գործերէ. ես անոնց պէս չեմ, վասն զի Տաղստանցի եմ.

«Թուրքերը անոնք արհամարհական ակնյին ձեռքով մը պատասխանեց։ Այսչափ ասացի։ Մենք Հայ եւ բոլորովին, կրնանք իրաւ եւ մեծ տարբեր ցեղերու պատկանողներ, ներելի է Երիտասարդ-Թուրքի մը առաջին տեսակցութեան մը մէջ—նոյն իսկ քաղաքավարի տեսակցութիւններէ հեռու ալ—մեր առջեւ արհամարհանքով խօսիլ իր ընկերակիցներուն վրայ։ Բնականաբար այդ արհամարհական յայտարարութիւնը կրնայինք աղացոյց մը համարիլ Երիտասարդ-Թուրքերուն միջեւ ներքին պառակտութեանց։ Որովհետեւ շատ զգուշաւորական ընթացք մը պարտաւորիչ էր։

Հետզհետէ եկան Ռիզա պէյ եւ ուրիշ երեք երիտասարդ եւս։ Մենք Հայերս ալ թուով հինգ էինք։ Տեսակցութիւննիս շատ քաղաքավարական եղաւ եւ յաջողեցաւ։ Բայց չունեցայ անդրադառնալու թէ համաձայնութիւն մը անկարելի պիտի ըլլար։ Մենք գործնական հասանք մը վրայ կը պնդէինք, իսկ Երիտասարդ-Թուրքերուն պահանջումները անկրակտանալի կը նկատէինք. ու անոր պարագայի մէջ, մեր համաձայնութեանն վեր էր անոնց գոհացում տալ։ Կը փափաքէին որ միացեալ եւ Միջհատական Սահմանադրութեան գործադրութիւնը պահանջենք, միանգամայն յայտարարելով որ Հայ ազգը ինքնավար Հայաստան մը պահանջելէն կը հրաժարի։ Մեր պատասխանը եղաւ. «Հայաստանի ինքնավարութեան գաղափարը ամբողջ Հայ ազգին սեփականութիւնն է։ Մ'չ պատրիարքը, ո՛չ Ազգային ժողովը, ո՛չ ալ կուսակցութիւն կրնանք անոր, առանց մերժել ազգին արտօնութեան, յանձն առ-

[illegible]

ԱՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

# ՕՐԱԳՐՈՂԻ ՅԻՇՈՒՄՆԵՐ

[illegible]

[illegible]

1. [illegible]

2. [illegible]

3. [illegible]

4. [illegible]

5. [illegible]

6. [illegible]

7. [illegible]

8. [illegible]

[illegible]

[illegible]

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐ

---

## ԾԱԳՈՒՄ
### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻՆ

Երբ վերջերս Լոնտոն Գ. [illegible]

[illegible] 1870ին, [illegible]

* * *

[illegible]

Հայաստանը խորապէս ճանչցող եկեղեցականն է Սրբազան Եպիսկոպոսը՝ Բաղէշի, Մուշի, Խարբերդի առաջնորդը։ Հայկական ցեղին նախանձախնդիրը։ Հայ աշխարհին մէջ Հայ կրօնաւորի խոհականութիւնը [illegible]. Կաթողիկէ քրիստոնեայ, բայց Հայ քրիստոնեայ եւ ոչ թէ լոկ քրիստոնեայ։ Օր մը, այդ 1870 թուականին էր որ Գա-[illegible] միջոցին, երբ կը մնար [illegible], որ այն ատեն Պալատին կից [illegible] մէջ էր, Հոն գործի մը համար բանի մը թերթը [illegible] Հաւաքուած տեսնելով, առանց ոչ մէկը բարեւելու [illegible] կը նստի [illegible] մը վրայ. [illegible] կը [illegible] բարեկամ ու եպիսկոպոսը Հայերէն [illegible] կը [illegible] երբ [illegible] բարեւ։ [illegible] մեկնելէն յետոյ [illegible]՝ Սրբազան [illegible] [illegible] ձայնով [illegible] կը գոչէ.

— Հանդիպա՞ր, սրբազան, Հանդիպա՞ր [illegible]։

— Ա՛. Ինչ կայ. Ինչ է եղեր.

— Ինչ պիտի ըլլայ. տեսա՞ր ինչ գալ ատեն քեզի. [illegible] մը չբարեւեց. [illegible] քեզի [illegible] բարեւելուն.

— Ա՛. Ինչ է եղեր. ատ էր պակաս որ Հայոց Պատրիարքարանին մէջ [illegible] բարեւ պիտի տամ. Հա՛։

[illegible] որ [illegible] Հայրենիքը [illegible] անցած կը [illegible]. [illegible] կը [illegible] վրայ [illegible] Հայրենասէր կը [illegible] [illegible] Սուրբ Աստուածածնի [illegible] Սուրբ Աստուածածնի [illegible] [illegible] որ [illegible] [illegible].

Զօրաւոր եկեղեցականն էր [illegible] [illegible] Սարգսեան Վարդապետը։ [illegible] երկրագործութեան [illegible] [illegible] էր. [illegible] [illegible]. բայց իր [illegible] կեդրոնին մէջ մեծ պահանջքներ [illegible] [illegible] եղաւ, յետոյ 1879ին Կովկաս [illegible] 2,000 [illegible] Խարբերդ [illegible] [illegible] մը [illegible] [illegible], բայց [illegible] այս [illegible]. [illegible] Հայ ազգին համար [illegible].

Եւրոպականներու կարգին մէջ էր նաեւ [illegible] Պարոնեան [illegible]. [illegible] Պարոնեան [illegible]. Այս երեւելի [illegible] գործերու համար [illegible] [illegible] [illegible] էր, [illegible] [illegible] վրայ [illegible] մեծ [illegible] մը պիտի [illegible]. [illegible] ազգային գործերուն մէջ [illegible] [illegible] [illegible] էր. Ազգային [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] Ազգային [illegible] իր [illegible] [illegible] այս [illegible].

[illegible] [illegible] յետոյ [illegible] Հայ [illegible] համար [illegible]. [illegible] [illegible], [illegible] [illegible] Ազգային [illegible] մէջ [illegible] [illegible] [illegible] Ա[illegible] եւ [illegible] [illegible] [illegible]. [illegible] Հայ [illegible] [illegible] [illegible] Ամերիկացիներուն [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] Հայ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Ազգը [illegible] մէջ կը եւ [illegible] [illegible] կը [illegible]. [illegible] Գոլոյ [illegible] վրայ. Առանց [illegible] մէկ [illegible] [illegible] [illegible] [illegible] կը [illegible] էին իրենց համար. [illegible] մեծ [illegible] [illegible] մը [illegible] [illegible] [illegible] էին. [illegible] [illegible], [illegible] Ամերիկ[illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] էին. Ազգը այս [illegible] [illegible] վրայ [illegible] կը [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] Հայ [illegible] [illegible] [illegible] ազգային գործերու [illegible] մէջ. [illegible] Գարակէօզեան [illegible] [illegible] մը, եւ [illegible] [illegible] [illegible] այս Համբարձում Յովհաննէսեանին.

[illegible] [illegible] մէջ [illegible] Հայերէն [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] մէջ [illegible] [illegible] էր. [illegible] [illegible] [illegible] եկեղեցականներու [illegible] ազգային [illegible] էին.

[illegible] էր [illegible] [illegible], [illegible] [illegible]. [illegible] [illegible] մը, [illegible] [illegible], բայց [illegible] [illegible]. Իր [illegible] թէեւ [illegible] [illegible] մը [illegible] չէին կրնար բայց [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] մը եւ [illegible] մը [illegible] կը [illegible]. [illegible] [illegible] մէջ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] է. [illegible] [illegible] մը [illegible] [illegible] կը [illegible] [illegible] մը [illegible] համար, եւ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] մը, այն կը [illegible] [illegible] [illegible], բայց այդ [illegible]

կը յիշէ այդ անձնաւորած անհատի կերպարները․ [illegible] դրականութիւնը մեծապատիւ կը թուի, և անոնք [illegible] կը [illegible] ժամանակակիցներու մէջ [illegible] խմբագրական այդ կարգի գրութիւններէն մէջ քանին չէ մնացած․ Միայն թէ Օսմանը, և անոր յաջորդող Նշանին ու Նոր-Դարը յանդուգն կը համարուէին բացառապէս Մասիսին կամ նման ուրիշ թերթերու․ բայց երբ հոս է ասոնց արգիլել․ [illegible] կառավարութեան առջեւ [illegible] բան խմբագիր կը կորսնցնէ․ Խմբագրականին արտած աթուր կը հաստատէ թէ Հայրաստ-Հայրութեանց խնդիրներուն մէջ ձեռնհաս և կարող կը համարուէր։

Տնտեսական աշխարհական երկու անդամներն էին՝ Կրթիասատուր Ղազարոսեան և Յակոբան Փափազեան․ Այս երկու անձինքը հետզհետէ աւելի երևան [illegible] ծագին, և ազգին մէկ մեծ մասին մէջ, Գոլեա, աւելի հակերմանք ազդած են քան թէ համակրանք․ Յակոբանը Փափազեանին գէմ ես ալ կասկած մը եղած եմ, բայց կ'ընդունիմ թէ ազգին մատուցած իրենց ծառայութիւնները ամէնքն չընդհանրացան այլ և անանց ալ եղան․ Մեծ թեթևամտութիւն Փափազեանի գէմ էր․ Ճառ խանդաւ անուն չառ կրքոտ աղիտանն էր․ Իր անձնութիւնները յուսահատին պարզելու և իր գաղափարները ազգին մէջ թափանցել տալու [illegible] և պաշտպանին [illegible], [illegible] անտարբերութիւնները անպատասխանի կը մնային, մանկութ մէջ չափաւորութեան [illegible]․ Աւարտելուս ընդդէմ Խրիմեանի ու Ներսէսի նման մեծագործական պատրիարքներու, որոնց առաջինին տաղանդը, ու երկրորդին՝ ախրացմանը չառ ծառայեց իր ծառայութեամբը․ Այդ երկու պատրիարքներուն [illegible] պաշտպաններ անձերուն դըրուեցան Փափազեանի․ Հիմակ այդ անցեալին առաւելնախաչաութեան [illegible] չէ հոս, բայց կարծեմ թէ Խրիմեանին առաջարկը չառ ձևական եղաւ ազգին, ու մեր պատմութիւնը [illegible] ընթացք մը կը հանէր 1877–78ի [illegible] պատերազմին առեն Խրիմեանի նման Հայաստանը ճանչցող պատրիարք մը ունեցած ըլլալնուս։

Կրթիասատուր Ղազարոսեան ուսեալ մըն էր, ազգասէր, աղքատ, կարծիք [illegible] դաւանական, մաքուր կեանքով, Սահմանադրութեան և Ազգային Ժողովին համար հոգի տուող [illegible] սահմանադրութեան անձերու․ Ու եղական գէմք մը Հայաստանի կրթութեան գործին մէջ․ Այդ ժեռուին կեանքին մէկ մասը, հայ պանդուխտներուն կրթութեանը նուիրուեցաւ․ Ամէն կիրակի, օր մը [illegible]․ Կրթիասատուր Ղազարոսեան Դպրոցի վարժարան էր․ Հոն կարդալ, գրել, հաշուել, Քրիստոնէութիւն և մինչև իսկ ազգային խմբագրութիւն կը սորվեցնէր հարիւրաւոր հայ պանդուխտներու․ Աւելի քան երեսուն տարի անընդհատ չարունակեց այս մեծ աշխատութիւնը այդ պատուական մարդը, որուն յիշատակը անմոռաց կ'ըն- [illegible] պահենք, զի ազգին մեծ երախտաւոր մըն է։

Յակոբան Փափազեան 1870ին գէմ իր [illegible] ընկերութեան [illegible] եղած էր, ազգային [illegible] պաշտպանած կը հանդիսանար, և պաշտպան մեծ մասն ու մանկավարժ Պրուսիոյ [illegible] զորս համաամբերը․

[illegible] Հայաստան [illegible] ատենի համար քանի մը տարեկան բարեկարգութեանց [illegible] մինչև Հայաստանի ինքնավարութեան պահանջումին բարեկանոն, ամբողջ հայութեան ազգային ծրագիրը պէտք ներկայացնէին․ Գաղափարը Ղալաթիոյ մեր եկեղեցին [illegible] մինչև [illegible] պէտք առանց [illegible]․ Երեքը այդ Յանձնաժողովին անդամներն՝ Ներսէսեան Հայրիկ, Վարժապետեան Ներսէս, Փափազեան Յակոբան Ազգային ժողովին իրականացման պէտք աշխատէին ամսուրի յետոյ, բայց առանց յաջողութեան․ կամ աւելի ճիշդը՝ առանց անմիջական յաջողութեան [illegible]․ Բայց իրենց հաւատքը փոխանցեցին նոր սերունդին․ Ազգ մը նախ իր ճակատագրին վրայ անդարձելի հաւատք պէտք է ունենայ որ ապրի․

Հայրաստ-Հայրութեանց քննիչ Յանձնաժողովը 1870 դեկտեմբեր 15ին գումարուեցաւ, ու [illegible] Հրաւիրագիրն ալ իր [illegible] հրատարակուեցաւ․ [illegible] նոր [illegible] էր, և քանի մը ամիս [illegible] Ղալաթիոյ ժիրը անցուց․ Այդ կարճատեւ ժամանակամիջոցը արտակարգ եղաւ իմացական հրապարակաւոր կեանքին համար․ Այն բոլոր անձնաւորութիւնները որոնք երեսուն տարիէ ի վեր մեր հանրային կեանքին մէջ առաջնակարգ կամ երկրորդական դեր մը կատարելով հետզհետէ կ'անհետանային, անոնք մեծ մասամբ [illegible] իրենց [illegible] թողեցին․ իրենց [illegible] Դերասանները մեծ [illegible] գրել և կամ արտագրել․ այդ [illegible] է որ Հրատարակիչները գրեցի․

Կ․ Պոլսոյ Ազգային պաշտօնական կեանքը այդ միջոցին կեդրոնացած էր Ղալաթիոյ եկեղեցին․ [illegible] Գաւառական գրեթէ լռած էր, երթեւեկութեանց [illegible] պաշտօնատար [illegible] Դպրոցներու [illegible] Ղալաթիոյ եկեղեցիին [illegible] մէջ էին․ Հոն կը գումարուէին կրօնական և քաղաքական ժողովները․ [illegible] Ազգային ժողովը շաբաթը կամ երկու շաբաթը մէկ կը գումարուէր․ Հոն կը լսուէին Հայաստանի [illegible]․ Հոն կը փայլէին Պոլսոյ ամեն թաղերէն [illegible]․ Ու այս կեանքը [illegible] [illegible]

ման կեդրոնական վարժարան մը կը բարձրանայ. Ըն-
ծայրէն Ռուսիան փափաքանի գործնական խնդրին եւ
տոկան ուշադրութեանցը. Հան 1870ին ատեան մը բար-
ձր կը բացուէր իր վրայ կրելով ամբողջական բայց մէջ-
նազարեան յարկ մը. Էջմիածինն փակէն քանի մը աշ-
ակերտ թիւով կ'առնէին. որուն պզտիկ փոկ մը
որ խուղերու վրայ կը տարածուէին Հայաստանի ե-
կող խեղճ բնակիչներ, մինչեւ որ անդ մը նորէն.
կամ շարժուեցաւ այլուր փոխադրուէին. Այժ կազմէն Հայ-
ւէ Խրիմյան ատեանս մը կը առնէր փերթերթիր, միակը.
Տաճկական պատկերով շինուած խաւ մը իր Դիւանատան
կը ծառայէր. Ու ճակատը չափաւոր յարմարութեամբ եր-
կու մեծ սենեակներ կային. դուները երկաթէ, փեղկե-
ները երկաթէ, ձեղուններ կամարակապ. Մխիթարեան
շէնք մը. արտաքին յարձակումներէ պաշտպանուելու յա-
տակագծով շինուած. Այդ սենեակներէն մէկը փոխանոր-
դարան էր. միւսը՝ որ կանանչ դարդով ծածկուած պարզ
փայտէ սեղան մը կը պարունակէր. չորս քանի չափ
թիկնաթոռ, յանկարծուած էր զանազան ժողովներու գու-
մարման. Ու դեռ աչքիս առջեւ կը տեսնեմ երկաթագոյ
փափաքեանը, այդ սեղանին դրուած անցած և տաշեր հին
տետրակներու դէզ մը. Հայաստանի մատուռայքի բան
տարեան աստուածներերուն վճռակարական պատմու-
թիւնը այդ տետրակներուն մէջ էր, պաշտօնական թուղ-
թերով. Թիֆլիսէն գիտակցին ազնուութեամբ կը
կարդար Գարեգինեան բառ տարուան մէջ Դուռ
գրկուած շարք թուղթերը, անոնց սրտառ պառա-
խտներ. ամէն ինչ կը բռնէր, կը բաղդատէր. Եւ ծանր
աշխատութեամբ պատրաստեց յաւակ, որուն, անհերքելի
իրողութեանց, թուանշաններու վրայ հիմնուած տեղեկա-
գիր մը որ Հարստահարութեանց բնոյթ մարմին աւելցուց
եղաւ, յետոյ Երեւակայանութեան բանաձեւերեւց. եւ անհէ-
բեխու Հայկական խնդիրը.

Անցորդ թիւէն կը սկսինք անփոփել այս յիշատակա-
րանը որ թէև հին, բայց դեռ օրուան նորութիւնն է, երբ
Հայաստանի բարեկարգութեանց հարցը մեզի յաւէտ
կենսական մեծ խնդիրն է.

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Հետեւեալ նամակը ընդունեցի աղջկան մը իր եղբօրը
գրած է. Արեւելեան ձեւով մէջը. Հրատարակութեան սահ-
մանուած չէր. Ու մեծ բան մըն ալ չպարունակեր. ո՛չ կո-
տորած, ո՛չ աւերում, ո՛չ թալան կը նկարագրէ. ու կար-
դացողին սիրտը կը ճմլէ պզտիկ սրտի մը լացին պէս.
Մարդիկ կ'ըսեն կը մեռնին անօթի. ու նամակ գրողը
սովորած չի զգար այդ զրկանքները. Ա՛լ սովրեցան. գիւղա-
ցութեանց անդադրում չարաչարութիւնը արգելուր կը
շարժէ. Այսպիսի մեծներն այլ եւս բնական երեւոյթ մը
կ'երեւի. Ու որ կը գործանայ երբ տեսնենք մէկին մէկին
կը շարնան, կը թափին. կ'իյնան աչնան. Ու քանի հա-
զարներով են այս միջավայր տառապակիցներու փակշածներ Հա-
յաստանէն բերող թուղթերը. Ո՛վ կրնայ գիտնալ.

* * *

...23 Մարտ 1900

Սիրելի եղբայր

Կարօտակէզ բարեւներս հետ միասին կը յայտնեմ
իմ և մօրս սրտագին շնորհակալութիւնները ձեր այն բա-
րերարութեան, մարդասիրութեան և քաղաքավարութեան
համար, որ ցուցուցած էք. աւելի գրելէ երկու ամիս
առաջ 5 մէճիտ ղրկելով մեզ. ստանալով զայն՝ ամենայն
շնորհակալութեամբ օրհնեցինք եւ համապատ օրհնեց ձեզ
ձեր անձին և ցանկալի կեանքը. միշտ կարօտներ երկնա-
հանգոյն սուրբ աստուծին մէջ ամենօրհնեալ Տիրամայր
կուսին առջև, խնդրելով ձեզ երկար օրեր, առողջութիւն
և գործոց բարի յաջողութիւն.

Սիրելի եղբայր, աշխարհս կ'ըսեմ որ, այն 5 մէճիտը
մեզ մեծ մարդկութեան անցաւ, և շատ օգնեց մեզ. եթէ
ղրկելու չըլլէիր, անօթի նեղութիւն պիտի կրէինք. տու-
նիս սուրբ Աստծոյ նման հասաւ, ցայժմ անով կ'ապ-
րիմք. Մեր բնաւ անակնկալ էինք այդ մասին, այլ միայն
կարօտէինք միշտ եւ օրհնութիւն կը խնդրէինք Տիրամէն
կուսէն, օրհնեալ ըլլան իր կամքը, անմիջապէս ձեր միջո-
ցաւ հասաւ օգնութեան՝ եւ զմեզ մեծապէս յաւատացուց եւ
մխիթարեց.

Այնիս եղբայր իմ սիրելի. ձեր ղրկած 5 մէճիտին
հետ միասին սիրելի հօրեղբօրս ալ երեք ոսկի դարանը
մեզ ղրկելու համար խօսք տալով զմեզ յուսադրած էր, ո-
րով անհամբերութեամբ սպասէ եղանք եւ շնորհակալութեամբ
օրհնեցինք զինքը, և որովհետեւ ալ որ յոյսեր խիստ զգեցին
զայն եւ զձեզ, որ մէկը անմիջապէս 5 մէճիտ կուղարկէք,
միւսն ալ կը խոստանար դարանը հասցնել յղեցած նեղ ա-
տենին մէջ երեք ոսկի ղրկել, այս մասին անձամբ շնոր-
հակալութիւններս կը յայտնեմ եւ և մօրս ձեզ եւ անոր,
որ այդ անկեղծ սէրը եւ գթութիւնը ցոյց տուիք մեզ այս-
պիսի անձուկ միջոցի մը մէջ, այսպիսի նեղ եւ տաղնա-
պալի ժամանակի մը մէջ՝ կարդացեմ եւ կը պաղատիմ
Հօրեղբօրս, եթէ կարելի է իր այնիս բարերարութեամբ
հասնի 3 ոսկի ղրկել, վասն զի անօթի նեղութիւն ունիմք.
գործքեան թէ պարտատէրներուն պիտի տամ որ ցորեան
առած եմ, եւ խիստ կը նեղեն զմեզ, եւ թէ նորէն ցոր-
եան պիտի առնեմ թէ ցանելու և թէ ուտելու համար.
Աստուած երբ կը շնորհէ երկու պզտիկները իրենց աղա-
ւաղան լեզուով ամենէն առաջ հացի՛կ, հացի՛կ կը կան-
չեն. Ինչպէս պիտի դիմանայ ինչուա մայր մը եւ ան-
տարբեր մը այդ եղկելի ձայնին եւ չցիրան իրենց սի-

# ՄԱՐՏ

[illegible]

## ՀԵՇՏԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

[illegible]

## ՀԱՅ ԱԶԳԸ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

[illegible]

## ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

## ԵՒ

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐԸ

## ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

## ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 20 NOR GUIANK. ԼՈՆՏՈՆ. 15 ՀՈՒՆՏՄԲԵՐ 1898

PROF. G. THOUMAIAN, CHIGWELL, LONDON

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՀՐԵԱՆԵՐԷՆ ՕՐԻՆԱԿ

[illegible]

[illegible]

[illegible]

* *

[illegible]

[illegible]

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ ... ՆՈՐ ԿԵԱՆՔ ԼՈՆՏՈՆ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ 1898

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

CHIGWELL, LONDON

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻՆ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

[illegible]

[illegible] NOR GUIANK. 1 ՄԱՐՏ [illegible] 1899

CHIGWELL, LONDON

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԹՈՒՐՔԻՈՅ ԲԱՐԵԿԱԳՈՒՄԸ

Գ

[illegible]

* * *

[illegible]

CHIGWELL, LONDON

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ · ԳԻՏԱԿԱՆ · ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՀԱՅԵՐԸ ԵՒ ՌՈՒՍԻԱ

[illegible]

* * *

[illegible]

* * *

[illegible]

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

## ԺՈՂՈՎՐԴԻՆ ԻՆՔՆՕԳՆՈՒԹԻՒՆԸ

[illegible]

* * *

[illegible]

[illegible]

[illegible]

8 [illegible] 1900

Լ. ԹՈԼԱԹՈՑ

# ՄԵՆՔ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԸ

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

№ 13 Փետրվարի 7 (19) 1880 Փետրվարի 7 (19) № 13

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

[illegible]

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

[illegible]

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

[illegible]

HNTCHAK

# ՀՆՉԱԿ

2013

ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

3452-67 թ.

[illegible]

M. ALFARI,
99, Fairville Gardens,
Shepherd's Bush, London, W.

[illegible]

[illegible]

[illegible]

16901-ИН 210-95

# ՄԱՐՏ

ԱՊՐԻԼ ԹԷ ՄԵՌՆԻԼ

ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ
# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ


Համակարգչային ձևավորումը՝ Ա. Ղազարյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան
Սրբագիրչ՝ Ն. Դավթյան

Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[2500 դր.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ
FL0633273

II
100949

ISBN 978-9939-860-86-2